

ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

ԽՈՍՔԻ ԿՇԻՌԸ

2023 թ.

Գիրքը նվիրվում է «Գրական թերթ»-ի 90-ամյա հոբելյանին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՆՈՒՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԻՆՆԵՐՈՐԴ ԱԼԻՔԻ
2. ՏԱՔԳԼԽՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ
3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՄՐՏԱԳԻՐՆ Է
4. ԵՐԿՈՒ 20-Ը ՋԱՀԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՀԵՄՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ
5. ԵՐԿԱԹԵ ԿԱՄՔ, ՀՐԵ ՈԳԻ (Արցախյան պատերազմի մասին)
6. ՄԵՐ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՔԱՐ Է
7. Երբեմն կարդացեք գրողներին, աշխարհի դեկավարներ
8. ՏՐԱԳԻԿՈՄԵԴԻԱ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-ԳՈՐԻՍ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
9. Հիշենք Չաբենցի հորդորը
10. ՈՆՑ ԵՂԵԼ ԵՆ, ԱՅԴՊԵՍ ԷԼ...
11. ԹԱՔՈՒՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՍ ԷԼԻ ՇԵՔՍՊԻՐՆ Է ՄԵՂԱՎՈՐ
12. Մի բան մտածում, մի այլ բան ասում, մի ուրիշ բան անում, մի խոսքով՝
պիղատոսություն
13. Քո երկիր Նաիրին
14. ԱՆՆԿԱՏ, ԽԱԲՈՒՄԻԿ, ԲԱՑԱՀԱՅՏ ՊԱՏԵՐԱԶՄԸ
15. ԽՈՍՔԻ ԿՇԻՌԸ
16. ՔԱՅԼԻ ԱՐԺԵՔԸ
17. ՀԻՇԵՆՔ, ՊԱՀԱՆՁԵՆՔ ԵՎ ԱՐԱՐԵՆՔ
18. ԲԱՆԳԼԱԴԵՇԻ ԿԻՆՆ ՈՒ ՏԱՂԱՎԱՐԻ ՆԱՐԴԻՍ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԻ ՕՐԵՐԸ
19. Այս խառը, այս դառը աշխարհում (18-ի շարունակությունն է)
20. ԱՇԽԱՐՀԸ ԽՆԴԱ՞, ԹԵ՞ ԼԱ, ԹԵ՞...
21. ԼՌՈՒԹՅԱՆ ՀԱԶԱՐ ԵՐԱՆԳՆԵՐԸ
22. ՀԱԼԱԾՎԱԾ ԹՇՆԱՄՈՒ ԲՈՂՈՔԸ
23. ՍՈՒՐ ԲԱՐՁՐԱՑՆՈՂԻ ՎԵՐՁԸ
24. ՄԵՆՔ ՈՒՆԵ՞Ք ԿՇԵՌՔ ՆԺԱՐԵԼՈՒ ՄԵՐ ՍԽԱԼՄՈՒՆՔՆ ՈՒ
ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
25. ԺՈՂՈՎՈՒՐԴԸ Ո՞ՒՄՆ Է
26. ԿՈՉ 1 (Աշխարհի բարի կամքի տեր մարդկանց, ժողովուրդների անկախության,
ազատության ջատագով մտավորականներին, մշակութային գործիչներին,
գրողներին և արվեստագետներին)

27. ԿՈՉ 2 (Աշխարհի բարի կամքի տեր մարդկանց, ժողովուրդների անկախության, ազատության ջատագով մտավորականներին, մշակութային գործիչներին, գրողներին և արվեստագետներին)
28. ԿՈՉ Աշխարհի գրողներին, հատկապես մանկագիրներին
29. ՀԳՄ ԿՈՉ-ը Լաչինի միջանցքը փակելու առիթով
30. ԿՈՉ ԿՈՉԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԽՈՍՔ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԵՐԿՈՒ ՔԱՐՀԱՆԳՈՒՅՑ ՄԻ ԿՈՇԿԱԹԵԼԻՆ (Վրեժ Իսրայելյանին)
2. ԵՐԿՆՔԻ ԿԱՊՈՒՅՏԸ (Պերճ Զեյթունցյան)
3. ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ
4. ԼԵՎՈՆ ԱՆԱՆՅԱՆ
5. ԵՐԿՐԻ ԱՂԸ (Լևոն Խեչոյան)
6. ՎԱՐԱՆԴ
7. ԱՇՈՏ ՔԵՐՈՒՅԱՆ
8. ՀՐԱՉՅԱ ՍԱՐՈՒԽԱՆ
9. ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԵՍ
10. ԼՈՒՐԹ ԱԶՔԵՐՈՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՔՈՒՐՄԸ (Հրաչյա Թամրազյան)
11. ՎԱԶԳԵՆ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ
12. ԺՊՏԱՅՈՂ ՀՈՒԲԵԼՅԱՆ, ԾԱՆՐԱԽՈՀ ՀՈՒԲԵԼՅԱՆ (Վազգեն Գաբրիելյան)
13. ԾԻԱԾԱՆԻ ՊԵՍ ԿԱՍՈՒՐՁ (Գագիկ Դավթյան)
14. ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ՀՈՒԲԵԼՅԱՆԸ
15. ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – 80
16. ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ (Գրետա մայիկին)
17. 21-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՎԱՏԱՎՈՐԸ (Վազգեն Սարգսյան)
18. ՕՐՀՆՅԱԼ ԾՆՈՒՆԴ (Վազգեն Սարգսյան)
19. ԱՓՍՈ՛Ս, ՀԱԶԱՐ ԱՓՍՈՍ... (Անդրեյ Բիտով)
20. ԼՈՒՐԹ ԱԶՔԵՐՈՎ, ԲԱՐՁՐԱՀԱՍՄԿ ԹՈՒՂԹ ՈՒ ԳԻՐ ԱՐՎԱԾԸ (Ալեքսանդր Թոփչյան)
21. ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
22. ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
23. ՄԵՐ ՔՈՒՅՐ ԱԿԱՅԻԱՆ (Մադվալա Գոնաշվիլի)
24. ԱՆՎԱՆ ՊԱՏԻՎՆ ՈՒ ԳՈՒՆԵՐԱՆԳԸ (Արևշատ Ավագյան)
25. ԲԱՈՒ ՈՐՈՆՄԱՆ ՎԱՅԵԼՔԸ (Հենրիկ Էդոյան)

26. ԱԼԲԵՐՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ՉԻ ՆԿԱՏՈՒՄ ԻՐ ՀՈԲԵԼՅԱՆԸ
27. ՄՆԱՑԱԿԱՆ ԹԱՐՅԱՆ ՄԱՐԴՆ ՈՒ ԳՐՈՂԸ
28. ԲԱՐԻ ԵՐԹ (Ռոլանդ Շառոյան)
29. ԵՐԿԱԿԻ ԽԱՂԻ ՊԱՇՏՊԱՆԸ (Արմեն Շեկոյան)
30. ԱՆՍԱՆՁ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԵԾՅԱԼԸ (Դավիթ Մուրադյան)
31. ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ – 60
32. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ
33. ԳՐՉԻ ՈՒ ԶԵՆՔԻ ԽԱՉՄԵՐՈՒԿԻՆ ԿԱՆԳՆԱԾ (Վարդան Հակոբյան)
34. ՎԱՐԴԱՆԻ ՄԵԾ ՄԻՐՏԸ (Վարդան Հակոբյան)
35. ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ
36. ՄԻՇՏ ԷՈՒԹՅԱՆ ԽՈՐՔՈՒՄ (Շանթ Մկրտչյան)
37. ՊԱՊԱԿԱՆ ՏՈՒՆՆ ՈՒ ԸՆԿՈՒԶԵՆՈՒ ՇԻՎԸ (Զավեն Խանջյան)
38. ՀՐԱՆՏ ԴԻՆՔԸ
39. ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐԴԸ (Զորի Բալայան)
40. ԿՅԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԲԱԶՄԻՄԱՍՏ ԱՖՈՐԻԶՄ (Ազնես)
41. ԶԱՐՄԱՆԱԼԻ ԹԵԹԵՎ (Աշոտ Ալեքսանյան)
42. ՄԻՐՈ ՀՈՒԶԻՉ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (Անահիտ Թաթյան)
43. ՏՈՀՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐՈՎ (Անահիտ Թաթյան)
44. ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՃԱՄՓԱՆ Արտեմ Հարությունյան)
45. ՀԱՐԱԶԱՏ ԵՐԿԻՐ ՈՒ ԵՐԿԻՆՔ (Դավիթ Ավետիսյան)
46. ՄԵՐ ՀՐԱԶՕՆ (Հրաչյա Մաթևոսյան)
47. ԶՎԱՐԹ ԳԾԵՐԻ ԿԱԽԱՐԴԱՆՔԸ (Աշոտ Բայանդուր)
48. ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ – 100
49. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԶՈՂ ՔԱՅԼ (Կարեն Խուրշուդյան)
50. ՏՈՀՄԻԿ ԱՍԱՅՈՂԸ (Արտաշես Արամ)
51. ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ ԴԻՏՈՂԸ (Մերգել Սարիկյան)
52. ՔՈ ԿՅԱՆՔԻ ԴՈՒՌԸ (Վանո Սիրադեղյան)
53. ՈՒՐԻՇ ԵՐԿԻՆՔՆԵՐ ԴԻՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ (Բաղաթեր Արաբուլի)
54. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՐՏԻ ՄԵԶ (Կարեն Խուրշուդյան)
55. ԶՈՒՄՊ ԵՎ ԹԱՓԱՆՅԻԿ (Գուրամ Օղիշարիան)
56. ԷԴՈՒԱՐԴ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՆԿԱՐԻՉ, ԹԱՐԳՄԱՆԻՉԸ
57. ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԱՅԱՅՔԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ (Տրոյան Պոպ)
58. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ (ՀԳՄ – 80)

59. ՀԳՄ 19-ԴԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ (ԲՈԼՈՐԻՍ ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ ՄԵՐ ԳԱԼԻՔ ԳՈՐԾԵՐՈՒՄ)
60. Գրական տեղեկատու (նախաբան)
61. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՏՈՀՄԻ ՖԵՆՈՄԵՆԸ
62. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԸ (Ավիկ Իսահակյան)
63. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ (Անդրանիկ Կարապետյանը)
64. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ – 70
65. ԳԻՐՔ ՀԻՇԱՏԱԿԻ (Խաչիկ Մանուկյանի տղայի մասին)
66. ՍԱՄՎԵԼ ԿՈՍՅԱՆ – 75
67. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԵՐԿԼԵԶՈՒ ՇՈՂԱՐՁԱԿՈՒՄ (Կալինա Զիսլա)
68. ՊՈԵԶԻԱՅՈՒՄ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ ԽԱԶՎՈՒՄ ԵՆ
69. ԻՐ ԹՎԵՐԸ (Ղուկաս Միրունյան)
70. ՌԱՖԱՅԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ ԱՍԱՑՈՂԸ
71. ՖՐԱՆՍԻԱՅՈՎ ՆԵՐՇՆՉԱԾ
72. ԱՄԵՐԻԿԱՆ ՈՒ ՆՐԱ ՄԱՐԴԻԿ ԳՐՈՂՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ
73. ՍԱՀՄԱՆՆԵՐ ՉՃԱՆԱԶՈՂ ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԹՈՉՈՒՆԸ
74. ԴԱՐԵՐԻՑ ԵԿՈՂ ՆԵՐՇՆՉԱՆՔԸ («Իրանի արևը»)
75. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ
76. ԱՄԵՆԱԻՐԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԸ
77. ՅԱՎՈՐՈՎԸ՝ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԱՍՈՒՐԶ ՈՒ ՀԻՄՔ
78. ԽՂՃԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ
79. ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆԻ ՉՈՐՍ ՏԱՄՆԱՄՅԱ ԺԱՄԱՆԱԿԸ
80. ՈՒԺԳԻՆ ՀԱՐՎԱԾԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՄԲ

ՀԱՆՈՒՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԻՆՆԵՐՈՐԴ ԱԼԻՔԻ

Վերջերս նորանշանակ վարչապետ Տիգրան Սարգսյանն իր ծրագրերից խոսելիս հայտարարեց կրթությունն ու մշակույթը պետության հիմնահարցերում առաջնահերթություն համարելու մասին: Ու նաև հատուկ մշակութային հեռուստաալիքի ստեղծման կարևորությունը շեշտեց: Հետևեցին ասուլիսներ, մեր մտավորականներից ոմանք երկրորդեցին նման ալիքի կարևորությունը և կասկածանք հայտնեցին, թե հանկարծ այդ ալիքն էլ չդառնա ջրիկ շոուների, էժանագին աստղիկների ու փուչ գրույցների գերին: Այդպես մտածելն ունի իր հիմքերը, քանզի վերջին 12 տարում հեռուստառադիո դաշտի ընդլայնման հետ սփռվեցին պարզունակ հաղորդումների ու կիսատ-պռատ մշակութային կոչված կիսարժեքների ականջ ու աչք ծակող ձայնապնակները: Սովետական ժամանակներում հաստատված արվեստագետ կուռքերի մի մասին ոտնատակ տվեց Անկախության առաջին տարիների նորաթուխ, մասամբ քաղաքականացված ճաշակը, վերարժեքավորման հորձանքի թափը զարկեց հասարակության ընկալման կարծրատիպերին, ու թվում էր նոր մշակութային արժեքների որոնման ջանքը կպոռթկա, սակայն քաղաքականության գերլարված մթնոլորտում արվեստն ու գրականությունը քշվեցին ետին պլան, իսկ այդ ասպարեզի ճշմարիտ մշակները (հին և նոր) խոհեմաբար իրենց գործը համարեցին լուռ ստեղծագործելը, ոմանք, իհարկե, փորձեցին ահագանգել, հիշեցնել «ոգու սովի», մշակութային ազգ լինելու առաքելության մասին, սակայն գլորվող պարզունակ, գանգվածային կուլտուրա հորջորջված ձնագունդն իր ծանրությամբ ու ուժգնացող ծավալումով մսխեց ու մսխում է եթերաժամանակն ու մեր կյանքի ժամանակը:

Եվ հաճախ կրկնվող նորահայտ ջահել լրագրողների թերահավատ հարցը՝ մենք գրող, նկարիչ, կոմպոզիտոր ունե՞նք, պատասխան չի սպասում, քանզի դժվար է այնքան մանկամիտ լինել ու հավատալ, թե թվարկելով Ադասի Այվազյանի, Պերճ Զեյթունցյանի, Ռուբեն Հովսեփյանի, Վահագն Գրիգորյանի, Լևոն Խեչոյանի, Մարտին Պետրոսյանի, Ռոբերտ Էլիբեկյանի, Վարուժան Վարդանյանի, Արկոյի, Տիգրան Մանսուրյանի, Մարտին Իսրայելյանի, Աշոտ Զոհրաբյանի կամ մի շարք բանաստեղծների ու արվեստագետների անունները, կփակես այն պարապը, որ ստեղծել են այսրոպեական եթերային թովոռցները: Անգամ Հայաստանի պետական ու նախագահական մրցանակների արժանացած լավագույն գործերն ու դեմքերը չեն արժանանում մի փոքրիկ հաղորդման ու վերլուծության: Եվ պատահական չէ, որ նման անտարբեր, զուտ լրատվական թեթևասահ բախտի տիրացած մրցանակաբաշխություններում հանկարծ մրցանակ է շնորհվում հասարակությանը լիովին անհայտ ու կասկածելի մակարդակի

ստեղծագործությունների: Այսինքն՝ մասնագետ, բանիմաց հանձնաժողովներն էլ հանձնվել են համընդհանուր համահարթեցման դանդաղ խորքը քաշող ճահճին: Եվ գնահատման տաճարի դեմ հերթ է գոյանում, ուր լավագույն հատկանիշը տարիքն է: Պետական միջոցներով հրատարակվում են ժամանակակից գրողների քիչ թե շատ հաջողված ստեղծագործությունները: Շնորհանդեսների լրատվական տարափի տակ կորչում են այն գրքերը, որոնք թարգմանվում են տարբեր լեզուներով և, երևի, սպասում ենք դրսում նշանավոր դառնան, նոր երևան տեղական եթերում: դա ոչ թե անհրաժեշտ է գրողին, այլ ընթերցողին, հեռուստադիտողին, որին հարկ է ուղղորդել խիստ վայրենացած ճաշակի թավուտում: Ծիծաղելի է, երբ 10 տարեկան աղջնակը մեր հայտնի հեռուստաընկերություններից մեկի եթերից (հասկացաք՝ որի մասին է խոսքը) Նարեկացի և Սևակ է արտասանում, այն էլ՝ պոեմ ու ողբերգական շեշտադրումով քեզ ստիպում է արագ փոխել ալիքը, գոնե այդ երջանկությունը կա, և ընկնել քիլլերների մի որոգայթ, դա էլ փոխելով մտնել մարտաֆիլմի հորձանուտը, հետո՝ թրիլլեր, ապա հեռուստատեղական ու արտասահմանյան սերիալ, մեկ էլ՝ ռուսական ալիք, նույնքան քիլլերային, սերիալային, շոու-բիզնեսային և գողական ռազբորկանների...

Այս գողական և կենցաղային գզվտոցն ուղղակի մի նոր սերնդի լեզվամտածողություն և վարք ու բարք է ձևավորում: Այն էլ ինչպիսի, որ շատերը վախենում են իրենց երեխաների ու թոռների ապագայի համար: Գողն ու գողականը դրական իմիջով, իր ճշտով դաս է տալիս, թարսի պես հաջողված դերն էլ դա է և փողոցում, դպրոցում, նույնիսկ Ազգային ժողովում լսվում է «հեղինակության» բառապաշարը, գոեհիկ ժարգոնը: «Մեր լեզուն ճկուն է, բարբարոս»: Բայց ասվածն այս «բարբարոսը» չէ, ոչ էլ «բարբարոսն» է գողական փորձանք:

Վերջին բառն էլ մի ուրիշ բանաստեղծի տողից՝ մուտք. «Փորձանք, հալածանք...»:

Այո, գովազդների շշմեցնող կարկուտի անչափելի տևողությունից չի փրկում ալիք փոխելը, հաճախ բոլոր տեղական ալիքներով միաժամանակ նույն կինոֆիլմերն ու զիբիլներն են, հաղորդավարի ջղակծիկ ձայնով դիվադադար անող: Իսկ ֆիլմերի թարգմանության լեզուն բավականին լավ են ներկայացնում ամերիկյան հատակի սեքսամոունչը, լավ տղերքի քֆուր-քյաֆարը:

Սակայն այս ամենից կա փրկություն՝ Ռուսաստանի «Կուլտուրա» ալիքը: Կարծես մի այլ աշխարհ ես ընկնում, ուր քո հարազատ Փելեշյան կինոռեժիսորին են հարգում, ուր հայտնի ապվեստագետների կյանքի գիծը հետաքրքրում է դահլիճում և հեռուստացույցի դեմ նստածներին հավասարապես: Ուր խաղաղ է ռիթմը և ոչ ոք իր էժան խորհրդով չի ապականի քո հազիվ նվաճած լռությունը:

Թվում է մշակույթի մեծագույն ձեռքբերումն այսպիսի լռության արարումն է, որի ավագանում լողում են անցյալի ու ներկայի արվեստական հսկա գունավոր նավերը, նախշուն ձկները, խոհուն ջրիմուռներն ու մարջանները: Դե հիշե՞նք մեր դարերի ժառանգությունը, գոնե մի զարդաքանդակի չափ արժեք ունեցող դեռևս ապրող արվեստի մարդուն, որի բազալտե լռությունը ցավալիորեն լսելի է դարձնում կրակոցը, որը եթերից իջնում է փողոց ու դառնում շատ սովորական մի բան:

Ահա բազմամյա պարտադրվող անհոգի եթերի դառը պտուղը՝ Բթացած ընկալումը ողբերգության, ցավի:

Ով կրակել է, նա պիտի պատժվի, որպեսզի մենք կարողանանք իրար աչքերի նայել պարզ, մարդավայել, թե չէ մեկը մյուսի մեջ մարդասպան որոնելով կրնկենք կախարդական սև շրջանի մեջ: Կիսառնվի թացն ու չորը, հերոսն ու քրեականը, մարտական ճանապարհի անցածն ու այդ ճանապարհը քամահրողը: Այստեղ կցցվի անպատիժ կամայականությունը, որից առաջինը պիտի ձերբագատվի իպավական դաշտը (որոշակի քայլեր ուստիկանության ասպարեզում կան), մեղավորին և անմեղին հասնի հասանելիքը: Եվ ճշմարտությունը հարգելու մշակույթ ձևավորելուն մասնակից լինեն բոլոր քաղաքացիները, և դա իսկապես լինի «մշակույթ» բառին արժանի: Վերում ասացի «սև» և միտքս եկավ սև ու սպիտակի բաժանումը, հասարակության դրամատիկ գոյավիճակը, որին «երկխոսություն» բառը դեռևս չի սոսնձվում: Մարգարեի թիկնոց հագնելու ոչ մի նկրտում չունեմ, բայց ամիսներ առաջ, անցյալ տարվա աշնանը «Իրավունք» թերթի մի հարցազրույցում ասել էի մարդկանց սև ու սպիտակի տարորոշելու վտանգի մասին և համարել էի երփներանգությունը գերադասելի, որում իր մեծ խոսքն ու դերն ունի մտավորականությունը, որին երբեմն պատվում են «ո» տառով: Բայց ստացվեց այնպես, որ տարբեր թևերի մտավորականներն են իրար ձաղկում, մեկը լինի նրանց երկխոսության կանչի: Ես վախենում եմ այն մարտաշունչ ստեղծագործողից, որ թևում էլ լինի, որը վայրի կրքեր է հրահրում, մղում ոչնչացնելու, պառակտելու, սպանելու(այո, եղան և այդպիսիք): Հանկարծ ու այդ մարդուն, որպես լուրջ արվեստագետի, լսեն, ընդունեն ու իրագործեն ասելիքը, արվեստագետն ու արվեստն ունեն ներշնչելու բարի և վտանգավոր կիրք:

Վախենալու մարդիկ են իրենց խոսքի ազդեցությունը չգիտակցող արվեստի ծառաները: Բայց չե՞ որ հենց նրանք են պարտավոր կրել ու սերմանել բարություն, սեր, ներողամտություն, միմյանց լսելու հանճարեղ կարողություն:

Թե՞ այս բառերը հնամաշ քարոզից են: Մեր մշակույթը քրիստոնեացվեց, մեր քրիստոնեությունն էլ մշակութային ոգի ունի: Այս միտքը ապրելու համար է և ոչ պարծենալու:

Պարզունակացված հասարակության հիվանդությունը նախ և առաջ երևում է շրջանառվող լեզվի վիճակից: Հայհոյաբանությունն ու ճամարտակությունը թափվում են հնարավոր բոլոր փողրակներից: Կան դեմքեր, որոնք խոսում են ու չի լսվում ինչ են ասում, ձայնը կա, դեմքը խոհական արտահայտություն է ընդունել, իսկ ասելիքը անլսելի է, խոսքը չի ապրում: Մեռել էլ առօրյա անցուդարձում, երիցս ցավալի է, որ այդպես ելույթ ունեցողը լուրջ հավակնություն ունի երկրիի բնակչության հետ հաղորդվելու եթերից, տաճարում կամ բացօթյա: Այդպես կորսվում է խոսքի արժեքը: Եվ մարդը չի գիտակցում, որ միայն բացուխուփ է անում բերանը: Խոսող գլուխներ:

Երկխոսությունն անհրաժեշտ է: Մենախոսությունն է անհրաժեշտ: Խելոք լռությունն էլ է չափազանց անհրաժեշտ: Սա որ՝ առանց պայմանների: Հայոց լեզվին իր հզոր ուժը ցուցանելու համար՝ ճշմարիտ մտածող ու խոսող բազմակարծիք և միմյանց կարծիք հարգող քաղաքացիների համերաշխության եթեր է պետք: Հավատում ենք, որ դա կլինի նախ և առաջ «Մշակույթ» ալիքի կերպարով: Հեռուստացույցը միացնում ես ու տեսնում, որ Արշակ Բանույանը ներկայացնում է Մատենադարանի նոր ձեռք բերած մագաղաթ շարակնոցը:

Հանուն այս հաղորդման արժե փոխել նրա խափանման միջոցը:

Կառավարությանն էլ՝ ճեպընթացություն, դեմքով դեպի կրթությունն ու մշակույթը լիարժեք շրջվելու գործում, քանզի հաստատապես կհամոզվի՝ մեր մշակույթը գոյում է անանց արժեքներ ստեղծելով, անգամ էլեկտրական եթերի սուղ և վաղանցիկ պայմաններում:

«ԳԹ», N21,13 հունիսի 2008 թ.

ՏԱՔԳԼԽՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Աշխարհը ցնցած Վրաստանի վերջին ողբալի իրադարձությունների ժամանակ Քոբուլեթիում էի: Որևէ խելամիտ մարդու մտքով չէր անցնի, որ Պեկինի օլիմպիական խաղերի բացման օրը կարելի է ոմբակոծել Ցիսինվալին: Հին Հունաստանում օլիպիադաների օրերին ընդմիջվում էին պատերազմները և, ահա, փոխվել են ժամանակները և ոմանց թվաց, թե հնարավոր է և՛ կռվել, և՛ մարզական խաղաղ պայքարի մասնակցել: Այդպես էլ եղավ: Վրացական լրատվամիջոցները շտապեցին տարածել Ցիսինվալիի գրավման լուրը: Ակնհայտ ուրախություն փայլեց վրացիների աչքերում, ոմանք բարձրաձայն խրախուսում և փառաբանում էին սիրելի Միշոյին: Մեկ-երկու օր

անց փոխվեց լրատվության և դրա հետևանքով՝ վրացիների տրամադրությունը: Հաղթողի կեցվածքը թեքվեց նահանջողի, ապա՝ պարտվողի: Իսկապես ցավալի էր տեսնել վրացի տղամարդկանց ընկճված տեսքը և միամիտ արդարացումը՝ ռուսներն են հարձակվում, մենք փոքր ենք, նրանք՝ հզոր:

Ոչ մի լուր երկու կողմերի զոհվածների մասին: Միայն Ռուսաստանի ալիքներից (միայն արբանյակային ալեհավաքով) իմացվեց իրականությանը մոտ պատկերը: Հետո քաջածանոթ Մեթյու Բրայզան «Էխո Մոսկվի» ռադիոկայանին տված հարցազրույցում կասի. «Վրաստանում ռուսական հաղորդումների հեռարձակման դադարեցումը չի համապատասխանում ժողովրդավարության հիմնարար սկզբունքներին»: Կային աջարներ և վրացիներ, որ բացահայտ սկսեցին քննադատել իրենց երկրի պրեզիդենտի վտանգավոր քայլը: Թբիլիսիից եկած հովեկներն արագ ետ վերադարձան: Մի քոբուլեթցի էլեկտրիկ ռուս տղամարդ ոչ այն է չարախնդալով, ոչ այն է մտահոգ ասաց իր հարևան վրացուհուն.

– Մեկ էլ կգարթենք, կիմանանք ռուսները գրավել են Վրաստանը:

Կինը դառը ժպտաց: Ես տարակուսեցի: Անսպասելի էր տղամարդու անդրդվելի հավատը: Հաջորդ օրն իմացանք, որ ոմբակոծվել են վրաստանի մի շարք օդանավակայաններ, ռազմաբազաներ, զործարաններ... Մի հանգստացող հայ տղամարդ ասաց, որ գիշերը լսել է Փոթիի նավահանգստի ոմբահարման դղրոցը: Տաքսիստների մակարդակով տարածվեց, թե Հայաստանի կողմից են հայտնվել Մառնեուլի ռազմական օդանավակայանը ոմբակոծող ինքնաթիռները: Իհարկե, ավելացնելով, թե երևի Հայաստանում տեղակայված ռուսական ռազմաբազայից են թռել: Հասարակության մեջ այս պղտոր լուրերը, ինչքան մեզ թվաց, նստվածք չթողեցին: Նաև հայաստանցի հովեկների շարքերը խարխվեցին: Խուճապ չէր, սակայն անորոշությունն էր գնալով ահագնանում: «Հայլուրի» տարածած հայտարարությունը, Բաթումիում Հայաստանի Հանրապետության հյուպատոսի հետ զրույցները (թեժ հեռախոսակապով) լարեցին հանգստացող-անհանգստացողների ջղերը, չհաշված Հայաստանից անվերջ ետ կանչող բջջային աղաչանք-հրամանքը: Բացօթյա ռեստորանի միջահասակ մի աշխատակցուհի դժվարությամբ թարգմանեց արագախոս ռադիոլուրը՝ Գորին գրավված է ռուսական զորքերի կողմից: Թբիլիսիում հակառուսական միտինգ է:

Ռուսական ալիքները չեն շտապում տեղեկացնել Գորիի վիճակի մասին, նրանք անվերջ ներկայացնում են Ցխենվալիի ողբերգական վիճակը: Աշխարհի գլխավոր լրատուները մտահոգ հաղորդում են ռուսների առաջխաղացման վտանգավոր հետևանքների մասին, նրանց հուզել է վրացական դեմոկրատիայի և երիտասարդ ժողովրդավար նախագահի ճակատագիրը: Մոսկվա և Թբիլիսի (Բաքվով) են ժամանում

կարևոր դիվանագիտական և դեկլարատիվ գործեր: Ռուսաստանը մեղադրում է արևմտյան լրատվամիջոցների միակողմանիությունը:

Վրաստանը մեղադրում է ռուսական լրատվության ոչ օբյեկտիվությունը, իսկ Վրաստանի քաղաքացիները հիմնականում տեղեկանում են վրացական ալիքներով:

Լրատվական պատերազմում մեր հայկական ալիքը դրական չեզոքություն է պահպանում և նորից ետ է կանչում ժամանակավորապես Սև ծովի ափին (Աջարիայի գոտում) սևացող իր ունկնդիրներին:

Մեր ըմբիշ Ռոման Ամոյանը Պեկինում բրոնզե մեդալ շահեց: Այս ուրախալի լուրն ինձ հաղորդեց ավագ տղաս, այն էլ՝ ետ կանչելու մոայլ տոնայնության արանքում:

– Վաղը կփորձենք գալ, – ասացի:

Մենք վաղ առավոտյան Քոբուլեթիի գլխավոր փողոցում տեսանք խմբված հայերի: Պատահական ավտոբուսների վարորդների հետ սակարկում էին: Երևաց մի այլ ավտոբուս, որով և մենք վերադարձանք: Դա օգոստոսի 12-ի առավոտն էր: Իսկ իմ ձեռքին կար գնացքի տոմս, նշագրված՝ օգոստոսի 20: Ավտոբուսում իմացանք (բջիջայինով)՝ մեր ծանրամարտիկը բրոնզե մեդալ է շահել: Երևանում օրեր անց լսեցինք՝ պայթեցվել է Գորիի երկաթուղային կամուրջը: Ճիշտ ժամանակին էր ավտոբուսային վերադարձը, մանավանդ որ տեսանք Բորժոմիի դեռ չհրդեհված անտառները: Եկանք Հայաստան մտնող միակ բանուկ ճանապարհով: Ջավախքում ամպամած էր, սա չեմ ասում փոխաբերական իմաստով:

Վրացական զորքի հրետանու հարվածների հաջորդ օրը (օգոստոսի 9-ին) ինձ մտահոգեց արցախահայության հոգեբանական վիճակը, երբ կիմանան ջախջախված Ցխենվալիի մասին և կամա-ակամա զուգահեռներով կմտածեն իրենց ճակատագրի շուրջ: Թեպետ ես հիշում էի մեկ ամիս առաջ ռուսական մամուլում հրատարակված՝ Չճանաչված Հարավային Օսեթիայի հանրապետության նախագահ Էդվարդ Կոկոյտիի կարծիքը, թե Կովկասում ամենալավ զինված ու փորձառուն ԼՂՀ-ի բանակն է: Նա երևի գիտեր ինչ է ասում և ում ականջների համար:

Ռուսական բանակի առաջխաղացման ընթացքում ինձ մտահոգեց մի այլ հավանական տարբերակ՝ հանկարծ ու մեջտեղ գան ջավախքահայերի հոգսերը խաղաքարտ դարձնող չափազանց հայրենասեր քաղաքական-հասարակական միավորումներ ու խմբավորումներ: Երևանում կարդացի այդպիսի մի միության հայտարարություն:

Վազգեն Սարգսյանը մի թևավոր խոսք ունի.

– Ես վախենում եմ չվախեցողներից:

Այդ «չվախեցողները» երբեք իրենց ջանին ջաֆա չեն տալիս հասկանալու իրավիճակի թակարդները, տարածաշրջանի և աշխարհի հնարավոր զարգացումների ներքին հոսանքները, մեզնով ու մեր ցանկությամբ չպայմանավորված մակընթացություններն ու տեղատվությունները, մեծերի, հաճախ փոքրիկի գիտակցությանը չհասնող, երկար ու կարճ տեղափոխությունները: Հասկապես բարդ ու շարժուն իրավիճակներում անպատրաստ և անիրագրելի մեջտեղ ընկնելու վտանգների հեռանկարը գուցե մեր միջոցով ուրիշներին բան հասկացնելու համար է: Բա հետո՞...

Մեր դարավոր հարևանի և մեր ռազմավարական զինակցի միջև մենք կարող ենք լինել գործուն դիվանագիտական միջնորդ, թող որ չընդունվի մեր ցանկությունը: Այլևս ուրիշների կովում շահելու նպատակը բարոյապես արդարացված չէ, իսկ իրականում խիստ վտանգավոր և քաղաքականապես տհաս է: Նաև այդ ուրիշները ուրիշ չեն, հայեր են ապրում նրանց երկրներում, որոնց ճակատագիրը մերն է:

Անդրկովկասում բաժանարար գծերի ի հայտ գալը նոր առձակատումների տեղիք է տալու և այն էլ տարածման մեծ լիցքով: Թուրքիայից Էրդոդանի բարձրաձայնած կովկասյան տան գաղափարը, աստված տա, բաժանարար գծերի դեմ առնող ցանկությունից լինի: Կապրենք, կտեսնենք: Ցավալին այն է, որ այդ գծերը կմխրձվեն մեր պետության մեջ և կբաժանեն տուն, փողոց, հրապարակ, մարմին, և կունենանք մշտապես քլթթթացող կաթսա, որի մեջ տաքգլուխները կկրծեն իրար ու չեն ըմբռնի, որ միջազգային կառույցներում և մեծ երկրներում առայժմ չի մարել երկակի ստանդարտներով չափելու տենդը, որ փոքրերը խաղաքարտ են ուժեղների բարդ խաղում, իսկ եթե փորձում են մեծ երևալ, պատիժը չի ուշանում (վկա Վրաստանի դեպքերը), որ մեծերն իրար հետ չեն կովի փոքրերի պատճառով, առժամանակ կխռովեն, ինչ-որ հարցեր կլուծեն, ուր շրջապատման մեջ հայտնված երկրում ներսից պիտի չշրջապատեն իրար ծայրահեղ քայլերով, վերջնագրերով, դատ ու դատաստանով, որ միմյանց սխալ տեսնելն ու չարախնդարը անչափահասներին է հատուկ, իրար հետ ճիշտ ուղին գտնելու ջանքն է այսօր կենսական:

Քաղաքագետ և հայտնի ԱԼՄ հեռուստաընկերության տնօրեն Տիգրան Կարապետյանը «Առավոտ» թերթում նշել էր, թեՎրաստանի իրավիճակի վերլուծության, գնահատականի առումով շատ նման են գործող նախագահ Սերժ Սարգսյանի և առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հարցազրույցները: Դժվար է չհամաձայնել: Արտաքին քաղաքականության խնդիրներում գլխավոր նշանակետերը չեն հակադրվում: Ցանկալի է նույնը տեսնել պետության ներքին հոգսերի լուծման դաշտում: Դժվար պահերին համախմբվելու բնագործ իմաստուն է: Բազմաբևեռացվող աշխարհում հընթացս և խիստ

արագ կողմնորոշումների ջղային, հակադրվող խաղը մեր իրավիճակի լավագույն կերպը չէ:

Որքան էլ ումանք ծաղրեն, թե կոմպլիմենտար քաղաքականությունը, իբր ճկուն, բայց թույլ քաղաքականություն է, դա է առայժմ և, կարծում եմ, ապագայում էլ՝ ճշմարիտ ուղին: Այդ ուղիով կարող ես մտնել հարևանի, բարեկամի և հեռավորի տուն: Հուսով եմ, որ նրա կամրջին ռումբ չի ընկնի: Երբ դեռ չէր չորացել վերջին տողի թանաքը, հայտնի դարձավ, որ Ռուսաստանի նախագահը ստորագրել է Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախության ճանաչման հրամանը: Քաղաքական հասունությունը հուշում է մեզ՝ չշտապել ճանաչելու հարցում, մնալ ԵԱՀԿ-ի շրջանակներին վստահող:

Սև ծով են մտել ամերիկյան ռազմանավեր՝ մարդասիրական օգնության հայտարարված նպատակով: Ռուսաստանը կասկածում է և «Մոսկվա» ահեղ նավն է ուղղում գլխավոր իրադարձությունների շրջան: Հիշենք, որ ԱՄՆ-ում սպասվում են նախագահական ընտրություններ և այդ պայքարի լարվածությունից շատ անսպասելի շրջադարձեր կարող են հայտնվել հատկապես մեր տարածաշրջանում, որտեղ ուժեղների շահերի բխման ռեալ թատերաբեմ է, հարակից շոուների ներգրավման գայթակղությամբ:

Նորից հիշենք՝ տասը չափիր, մեկ կտրիր:

Մինչև թանաքը չորանա, տեսնես էլ ի՞նչ կլսվի:

Ահա այսպիսի արձակուրդային օգոստոս:

«ԳԹ», 2008 թ., N29, 5 սեպտեմբերի

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՄՐՏԱԳԻՐՆ Է

Հարգելի գրողներ, ընթերցողներ, լրագրողներ, հյուրեր,

Հարուստ գրականության ժառանգությունը շարունակվելու ջիղ ունի, և 85-ամյա Գրողների միության պատմությունը ժառանգականության ուղու խորացման, դեպի անվերջը գնալու միտումներով է լիցքավորված: Երբ գրականությունը և ստեղծագործական միությունը համատեղվում են, բնականաբար, գրական խնդիրները պիտի առաջնահերթ լինեն:

Միությունը աջակցում է գրողի գրական, սոցիալական, իրավական և այլ հարցերի ապահովմանը: Հաճախ շփոթություն է առաջանում և կարծիք է ձևավորվում, ըստ որի, Միությունն ընդունվում է որպես մեկ դեմք, որն ամեն ինչի հանդեպ պիտի միասնական կարծիք ունենա: Այս թյուրըմբռնումը թերևս արմատակալել է այն ժամանակներում, երբ

քաղաքականությունն էր գերակա, և իշխանական թելադրանքով վերից վար հաղորդվող միասնական կարծիքի պարտադրման կնիքն էր կրում այդ հոգեբանությունը: Հատկապես կուզեի շեշտել 30-ական թվականների կեսերից հետո ժամանակահատվածը, երբ Միություն կազմավորվեց: Այդ ընթացքում եղավ միասնական կարծիքի, միասնական դրսևորման իշխանական պահանջի այդ հոգեվիճակը: Շատ լավ հիշում ենք, թե ինչ ողբերգական հետևանքներ եղան, ինչպես մեծ գրողների ճակատագիրը խեղվեց: Գրողի դեմ «մատերիալ» գրելը ոմանք շփոթում էին գրականության հետ: Նմանների անունները հայտնի են: Բարեբախտություն է, որ Իսահակյանը, Դեմիրճյանը չդարձան զոհ: Վերը նշված հոգեբանությունը հետագա տարիներին թեև մեղմացած վիճակում, բայց շարունակվել է մինչև 50-ականների վերջերը: 60-ականներին՝ արդեն խրուշչովյան ձնհալի օրոք, գրողի անհատականությունը առաջ եկավ, գրողը՝ որպես մտածող, իր կարծիքը, վերաբերմունքը արտահայտող, իր՝ հաճախ նաև վերևներին ոչ հաճո դիրքորոշումները ի ցույց դնող: Եվ ամենակարևորը՝ գրականությունը, կրելով գրողի գեղարվեստական, փիլիսոփայական աշխարհայացքը, դարձավ համաշխարհային բարձր գրականության ուղեկիցը, մասնակիցը: Սրա վառ օրինակն են 50-ականների՝ Սևակի սերնդի որոշակի կերպափոխումը, 60-ականների արձակը և «Գարուն»-ական պոեզիան: Բնականաբար, ամեն միություն անհատների միավորում է: Այդ առումով, վերջին երեսուն՝ անկախության տարիներին, տեսնում ենք, որ հաստատվում է այդ դիրքորոշումը: Եվ յուրաքանչյուր անհատ, անկախ նրանից, թե ինչ հավատ, կուսակցական պատկանելություն, գեղարվեստական մտածողություն ունի, ինքն է իր որոշումների տերը: Այս իմաստով, կարծում եմ, վերջին 30 տարվա փորձը մեզ հուշում է, որ գրողի գլխավոր խնդիրը հիմնականում գրականությունն է: Գրականություն՝ իր մեջ ամփոփած հայոց լեզուն հարուստ շերտերով, ժողովրդի ինքնության պատմություն, ներկա, ապագայի տեսլականներ, մարդու հոգին, մարդկային փոխհարաբերություններ, այն, ինչ որ գրականությունը դարեր ի վեր ամփոփել է, մագնիսական ուժով գրավել է շատ մարդկանց, որոնք փորձել են գրի լեզվով արտահայտել իրենց հոգին: Միությունը նպաստում է այդ ամենը ընթերցողին հասցնելու, հանրահռչակելու, տարածելու և նաև կրթելու ընթերցողական դաշտը, միջազգայնացնելու մեր գրական արդեն առկա լավագույն ստեղծագործությունները՝ օգտագործելով հնարավորությունները, որոնք այսօր տեխնիկական միջոցներով ավելի դյուրինացնում են գրողի գործը: Ամեն գրող այսօր հնարավորություն ունի իր անձնական գործերը կազմակերպելու: Աշխարհի հայտնի գրողների այսօրվա փորձը հենց դա է հուշում: Ժամանակին սպասում էին, որ մի համագումար կամ համաժողով լինի, որպեսզի գրողները, այսպես ասած, սուր խնդիր արձարծեն, իսկ հասարակությունն էլ տեղյակ լինի այդ մասին, ընդ որում հաճախ այդ

խնդիրներն էլ առանձնապես շատ սուր չեն եղել: Սակայն հիմա և՛ համացանցը, և՛ զլմները, և՛ տարբեր հարթակներ, և՛ գրողին, և՛ ընդհանրապես մտավորականին, հնարավորություն են տալիս անդրադառնալու սուր, հետաքրքիր, մտահոգիչ խնդիրների: Այդ հարթակներում մենք տեսնում ենք բազմաթիվ գրողների:

Որևէ միության անդամ նախ ինքը պիտի որոշի իր տեղը, իր դերը:

Միությունը ստեղծագործությունները հրատարակելու գրական մամուլ ունի: Գրական մամուլը աջակցություն է գրողին, մանավանդ՝ երբ տեսնում ենք, որ այլ թերթեր և ամսագրեր գեղարվեստական գործեր չեն հրատարակում, հեռուստաընկերություններն առանձնապես մեծ տեղ չեն տալիս գրականությանը, թերևս ռադիոյով են տարածվում գրական նյութեր: Սոցիալական ցանցերում են հայտնվում որոշակի ստեղծագործություններ, ինչպես նաև գրողներն իրենց կայքէջերում են ներկայանում իրենց գործերով: Սա մեծ հնարավորություն է: Գրողի արած գործը գնահատելու խնդիր կա: Գրողի գնահատականը առաջին հերթին ուզում եմ տեսնել մեր գրական մամուլում: Մեր Միությունը որոշակի հնարավորություններ ունի, որով օժանդակում է գրողին, մասնավորապես՝ հանգստի կազմակերպում Ծաղկաձորի և Սևանի հանգստյան տներում, Մեղլայն բժշկական կենտրոնի հետ ունենք պայմանագիր, և նրանք շատ գրողների օգնել են, բժշկական ծառայություններ են մատուցել: Եթե առիթ է եղել, Միությունը գործողություն է ծավալել նաև գրողների իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:

Միության խնդիրներից է հայ դասական և ժամանակակից գրականությունը տարածելը: Ի՞նչ ենք արել այս տարիների ընթացքում: Երբ երկու տարի առաջ «Գ.Թ.»-ում հրատարակեցինք, թե վերջին հինգ տարում ինչ ստեղծագործություններ են թարգմանվել առանձին գրքերով, հրատարակվել միջազգային մամուլում կամ տպագրվել անթոլոգիաներով, տեսանք, որ պատկառելի ցանկ է գոյանում: Եվ դա գնալով ընդլայնվում է, որովհետև միջազգային կապերի մեջ ընդլայնվում է հայ գրողի դերակատարումը: Այս տարի Թարգմանչաց տոնը միջազգայնացվեց, 7 երկրից 10 գրող մասնակցեց, և սրանք ճանապարհ են ժամանակակից հայ գրականությունը տարածելու: Խնդիրն այն չէ, որ աշխարհում հայտնի գրողներն անպայման հրավիրվեն, մեր հիմնական խնդիրը հայ գրողին տարածելն է, այդ առումով, հրավիրում ենք թարգմանիչների, որ գան, ծանոթանան, կապեր հաստատեն գրողների հետ: Թեև մեր գրական կապերը ընդլայնվել են Ռուսաստան, Իրան, Վրաստան, Չինաստան, Ճապոնիա, Գերմանիա, Ֆրանսիա, Լեհաստան, Սլովակիա, Բելառուս, Ուկրաինա, Լիտվա, Ղազախստան, բազմաթիվ երկրների և՛ անհատ գրողների, և՛ միությունների հետ մեր Միությունն աշխատակցում է: Վրաստանի և Իրանի հետ ունենք ծրագրային

աշխատանք: Իրանի դրամատուրգների հետ կա պայմանագիր, իրանցի դրամատուրգներին ընդունելու, հայ դրամատուրգներին գործուղելու ծրագիր, որ տարիներ շարունակ իրագործել ենք: Այս տարի թարմացվեց պայմանագիրը, նաև Իրանում հրատարակվեց հայ դրամատուրգների ժողովածուն, և Հայաստանում հրատարակեցինք պարսիկ դրամատուրգների գործերը: Սա շարունակական է լինելու: Պետք է առանձնացնել «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի դերը, որի միջոցով ռուսերեն նյութերը ներկայացվում են, և այդ նյութերը հիմք են դառնում, որպեսզի ԱՊՀ երկրներում հրատարակվեն տարբեր լեզուներով: Մեր առջև գրողին Հայաստանում հրատարակելու խնդիր կա: Կարծիքներ կան, թե գրողը եթե լավ է գրում, անպայման կհրատարակեն: Բայց մեզանում հրատարակչական գործը և հրատարակիչները այնքան հնարավորություններ չունեն, որ ընտրեն լավ գործը, տպագրեն, թարգմանեն, տարածեն, գրողին հոնորար տան: Կիսաբենք ինքներս մեզ, եթե ասենք, թե կայացած բազում հրատարակիչներ ունենք: Այդ առումով, ԿԳՄՍ նախարարությունը պետական աջակցության փոխարեն, որը 2017 թ.-ին վերացավ, մի քանի ուղի առաջարկեց, որոնցից մեկը գրողին տրվող դրամաշնորհի մրցույթն է, Դա դրական քայլ է գրողին աջակցելու ուղղությամբ: Մտածում են՝ գրողը չպետք է կախված լինի պետական հովանավորչությունից, բայց հովանավորչության փոխարեն ակնկալում ենք, որ լինեն գուցե պետական մասնաբաժնով որոշակի հիմնադրամներ կամ բարեգործության՝ մեկենասության օրենք, որը որոշակի կաջակցի մշակույթին, գրականության տպագրությանը, տարածմանը: Այս ճանապարհը միջազգայնորեն հայտնի է, որպեսզի գրողը կախված չլինի պետական օդակների բարեկամեցողությունից, և այդտեղ վեճեր չառաջանան՝ ում, ինչպես և այլն: Գրական մամուլին էլ աջակցությունը խրախուսելի է: Կարևորը՝ շարժ կա դեպի գրականությունը, գիրքը: Մենք այս հարցերը ներկայացրել և քննել ենք և՛ ՀՀ մշակույթի, և՛ այժմ ԿԳՄՍ նախարարության ղեկավարության հետ:

Մենք ցանկանում ենք, որ ավելի լուրջ դիտարկվի ժամանակակից գրականությունը, որը մշտապես թերաթեքության բարդույթի է ենթարկվել՝ համեմատած դասական գրականության հետ:

Երեսուն տարում և հատկապես վերջին հինգ տարում գրականությունն ու ճշմարտությունը ձուլվեցին իրար: Վերջին հինգ տարվա քաղաքական, հասարակական անցուդարձերը, հեղափոխական իրավիճակը խորագնին ընթերցողը կտեսներ, կզգար ժամանակակից մի շարք գրողների արձակ և բանաստեղծական ստեղծագործություններում: Իհարկե, հրապարակախոսությանն է հատուկ իրերը կոչել իրենց անուններով՝ կոռուպցիա, կլանային տնտեսություն, հովանավորչություն, մենաշնորհներ, սակայն գեղարվեստական գրականության տիրույթում ևս ներքին

շերտերում, մարդկային հարաբերություններում հերոսների իրավիճակներում արտահայտվել են այդ նեգատիվ դրսևորումները, որոնք դարձան հեղաբեկման, կյանքի փոփոխման պահանջ: Գրական մամուլը միտված էր արտահայտելու, արտացոլելու թվարկված իրողությունները:

Վերջին հինգ տարում կազմակերպել ենք արձակի, պոեզիայի, մանկագրության, թարգմանական գրականության, գրահրատարակչական հարցերի, դրամատուրգիայի լիանիստեր ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, բուհերի բանասիրական ֆակուլտետների հետ միասին:

ՀԳՄ նախագահները, քարտուղարները, անդամները, ամեն մեկն իր չափով, իր ձևով ներկայացրել է Գրողների միությունը աշխարհում, և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում:

Սփյուռքի ճանաչված գրողներն արդեն հինգ տարի Գրողների միության անդամներն են: Ստեղծագործական միությունների մեջ միակն է Հայաստանում: Սփյուռքահայ գրողները և նաև տարբեր լեզուներով գրող հայ գրողները հայոց պատմության, գրականության դերն են բարձրացնում միջազգայնորեն, տարբեր խնդիրներ են ներկայացնում աշխարհին՝ ցեղասպանությունից մինչև ժամանակակից թեմաներ, հատկապես արցախյան, որը մեր գրականության 30 տարվա հիմնական թեմաներից է: Սփյուռքահայ գրողների համաժողովը կազմակերպվեց 2017 թ.-ին, Հայաստանում:

Հատուկ ուշադրություն է դարձվում երիտասարդ ստեղծագործողներին: Ունենք «Գրեթերթ», որը տպագրում է բացառապես երիտասարդների ստեղծագործությունները, հատուկ մրցանակներ են տրվում երիտասարդ գրողներին, ամեն տարի Ծաղկաձորում 4 օր տևող հավաք է կազմակերպվում, որտեղ լինում են քննարկումներ, անցկացվում են վարպետության դասեր: Նրանք հնարավորություն ունեն ԳՄ-ում քննարկումներ անցկացնելու, հանդիպումներ կազմակերպելու, «Ցուլեր» գրական ակումբում բանաստեղծներ Հռիփսիմեն և Արտեմ Հարությունյանն աշխատում են երիտասարդ ստեղծագործողների հետ:

Այն, ինչ անում է Միությունը, մանրամասն թվարկելու հարկ չկա, դրանք տպագրվում են գրական մամուլում: Աշխատանքն ամենօրյա է և ընդգրկում է բազմաթիվ ընթերցողներ: Մենք աշխատակցում ենք բոլոր այն կազմակերպությունների հետ, որոնք իրենց գործառնությունում ունեն գրականության տարածման խնդիրը: Այնպես որ, բոլորիս աշխատանքն է դա: ՀԳՄ յուրաքանչյուր անդամ իր գործունեությամբ, իր խոսքով, իր արածով մի աղյուսիկ պիտի ավելացնի այս շենքին:

Միությունը տասից ավելի մրցանակաբաշխություն ունի: Աշխատում ենք տարբեր նախարարությունների՝ ԿԳՄՄ, ՊՆ, Երևանի քաղաքապետարանի և պետական հիմնարկների, ինչպես նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ: Պիտի շնորհակալ լինենք

այդ համագործակցության համար: Շնորհակալ ենք նաև անհատ նվիրյալներին, որոնք օժանդակել են մեր Միության աշխատանքներին: Մեր «Պատվո տախտակը» սպասում է նոր բարեգործների:

Առանձնապես շնորհակալ ենք ՀԳՄ նախկին ղեկավարներին, աշխատակիցներին և բոլոր նրանց, ովքեր իրենց ջերմությունն ու սերն են հաղորդել Հայաստանի գրողների միությանը:

Շնորհակալություն բոլորիդ, որ ներկա եք այսօր:

«ԳԹ», թիվ 39-40, 2019 թ.

ԵՐԿՐՈՒ 20-Ը ՋԱՀԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՂԵՄՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Վերջերս նայում էի տարվա ամփոփումը. ամեն օր ՀԳՄ-ում կամ որևէ գրադարանում, թանգարանում, ինստիտուտում, դպրոցում, մարզում, նաև արտերկրում գրական միջոցառումներ, քննարկումներ ու հանդիպումներ են եղել, և այդ ամենը իմ հոգում ընդհանուր գրականության և գրական կյանքի կերպար էր երևակում: 2019 թվականը նշանավոր էր հոբելյաններով, գրական միջոցառումներով, հանդիպումներով, որոնք նպաստել են ընթերցողական դաշտի ընդլայնմանը: Մենք շարունակաբար ձևավորելու ենք գրականությունը հարգող, գրականության պահանջը զգացող ընթերցողի: Անցնող տարին, եթե ամբողջական դիտարկենք և գնահատենք, նոր հնարավորություններ է տվել գրականությունն առավել մերձեցնելու ընթերցողին: Մի քիչ գոհանանք այս առումով, բայց ինքնագոհության չհասնենք, որովհետև ամեն քայլից հետո նոր հորիզոններ են բացվում: Այս տարին ապացուցում է ևս մի բան՝ հայ ժամանակակից գրականությունը ունի գրական գործեր, որոնք միջազգային ասպարեզում թարգմանվում, տպագրվում, վերահրատարակվում և գնահատվում են: Եթե ամփոփելու լինենք, հազեցած տարի էր և դրանով հաճելի: 2020 թվականի մասին. ընդհանրապես 20-ը միշտ էլ մեր գիտակցության մեջ պատանեկությունից երիտասարդություն անցնելու մի փուլ է, հիմա երկու 20 իրար կողք երկու ջահել է նշանակում: Ուրեմն՝ ավագները պիտի ջահելանան, ջահելներն էլ առնականանան, մանավանդ՝ գրականության մեջ: Ուզում եմ, որ 2020 թվականին մեր ժողովրդի անվտանգությունը լինի անխաթար, մեր պետությունը՝ առաջնակարգ ռազմական տեխնիկայով համալրված (ինչպես 2019 թվին իրագործվեց), քանի որ Հայոց բանակը պետականության, Հայաստանի, Արցախի, մեր գոյության երաշխավորն է: Այո՛, մեր բանակը ամենակայացած օրգանիզմն է անկախության տարիներին: Կցանկանայի, որ մեր մշակույթն իր նկատմամբ ուշադրությունն ավելի

մեծացներ: 2020 թվից, Չարենցի պատգամի պես, սպասում եմ մեր ջանքերի ամբողջականություն, միասնականություն: Պիտի Հայաստան-Արցախ-Սփյուռք միակամությամբ ամրացնենք մեր ներկան ու ապագայի տեսլականը, նաև մենք՝ գրի անկոտրելի շաղախով ամրացնենք մեր ոգու հիմքերը: 2020 թվականին մեր պետության համար ամեն մարդ նախ ինքն իր մեջ հարկ է համահայկական գաղափարների կրողը լինի և մի քար դնի դրանց իրագործման շենքի պատին: Չաղկելը, խոտորելը շատ հեշտ է, ամենադժվար բաներից մեկը իրար գումարվելու խնդիրն է: Ուժ, կորով, ձգտում գողելով՝ բոլորովս հրե գնդի խոյանքով 2020 թվականը դարձնենք ջահելության և խոհեմության տարի: Երկու 20-ը պարտավորեցնում է երիտասարդ, արի, հույսով, հավատով, նպատակին հասնելու արժվաթոփքով ընթանալու: Սրանով ամփոփեմ և մեր ժողովրդին ցանկանամ հենց այդ ուժը, սերը, հավատը, հույսը:

«ԳԹ», թիվ 43-44, 2019 թ.

ԵՐԿԱԹԵ ԿԱՄՔ, ՀՐԵ ՈԳԻ

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը լայնամասշտաբ հարձակում սկսեց շփման գծի ողջ երկայնքով՝ հրետանային, ավիացիոն ուժերով: Թեև ՄԱԿ-ի 75-րդ տարեդարձի առթիվ Ադրբեջանը Թուրքիայի հետ համատեղ ուժերով Հայաստանին մեղադրում էին հարձակման նախապատրաստվելու մեջ, այնուամենայնիվ պարզ էր, որ հենց նրանք են պատրաստվում հարձակման: Պարզունակ խաբեությամբ, ապատեղեկատվություն տարածելով՝ իրենց կարծիքով փորձում էին մոլորեցնել աշխարհին: Բայց և՛ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պատասխան խոսքը, և՛ հետագայում արդեն տարբեր կարծիքներ պարզաջրեցին, որ նրանք մոտ ժամանակներս պատրաստվում են հարձակման: Եվ ահա սեպտեմբերի 27-ի առավոտյան փորձեցին իրագործել իրենց մտադրությունը, նվաճել Արցախը և շարունակել իրենց ծրագրերը: Մեր բանակը, իհարկե, պատրաստ էր պատասխանելու և, ինչպես լրատվությունն է հավաստում, արժանի պատասխան է տալիս, և եթե շարունակվի, ինչպես ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանն է ասել, մեր պատասխանը շատ կոշտ կլինի:

Ադրբեջանի և Թուրքիայի բոլոր ելույթներում թաքնված է նվաճողականությունը: Հարյուրավոր տարիներ նրանք նվաճողական քաղաքականություն են իրականացրել և 21-րդ դարում՝ իբր քաղաքակիրթ ժամանակներում, նույն կերպ շարունակում են: Գիտեն, որ ամեն նման սրված իրավիճակում կլինեն նաև եվրոպական պետություններ, որոնք ինչ-որ պահի իրենց կողքին կկանգնեն՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական շահերը: Թուրքիան, այդ շահերը խաղարկելով, բազմիցս փորձել է և հաճախ նրան հաջողվել է

նվաճել հարևան պետությունները: Այսօր տեսնում ենք, թե ինչպես է Լիբիայի, Սիրիայի, Հունաստանի, Կիպրոսի և տարբեր ուղղություններով սուր ճոճելով, այսպես ասած Լենկ Թեմուր խաղալով, փնտրում իր հաջողությունները: Քաղաքակիրթ տարբեր երկրներից, Եվրոպայից, Ամերիկայից կիրթ զգուշացումներ լսում ենք, բայց Թուրքիան Թուրքիա է, թուրքը մնում է թուրք:

Երբ հետևում էի ՄԱԿ-ի հիմնադրման 75-ամյակի շրջանակում իրականացված քննարկումներին, իմ մտքով անցնում էր, որ, եթե Թուրքիան Միջերկրածովյան ավազանում բախումներ չսկսի, պիտի գտնի առավել թույլ տեղ իր ուժը ցուցադրելու նպատակով: Եվ ահա Թուրքիան Ադրբեջանի հետ համատեղ գորավարժություններ իրականացնելուց հետո այսօր Արցախի նկատմամբ փորձում է նվաճողականություն իրագործել: Մեր սերունդը 80-90-ականներին տեսել է արցախյան պայքարը, իսկապես համաժողովրդական պայքարը, երբ երկրապահ զինվորները, բանակային ստորաբաժանումները արժանավայել և՛ պաշտպանվել են, և՛ հարձակվել, և ազատագրել են Հայաստանի հողերը: Այս ամենը մեր սերնդի համար ընկալելի է և ճանաչելի: Այս սերնդի երիտասարդներին՝ Ապրիլյան, հուլիսյան մարտերի մասնակիցներին, պետք չէ դասեր տալ. նրանք ունեն հսկա ներուժ, զինվորական հմտություններ, նրանք հայ ոգու կրողներն են:

Տա Աստված, թշնամին հասկանա իր քթին եկած հարվածները, ժամանակին նահանջի և վերջ տա պատերազմի, ուժի, հզորության թևերով հարցերը լուծելու սին վստահությունը, և եթե հնարավոր է, դիվանագիտական ճանապարհով նստեն և կարողանան լեզու գտնել Հայաստանի, Արցախի հետ: Համավարակի այս օրերին պետք է գիտակցեին և առժամանակ դադարեցնեին պատերազմով հարցեր լուծելու մտադրությունը, բայց քաղաքակիրթ աշխարհը վերջապես պետք է ընկալի, որ թուրքերը քաղաքակիրթ լեզուն չեն հասկանում: Նրանք պատերազմի, ուժի թելադրանքով առժամանակ խելքի գալու սովոր պետություններ ու ղեկավարներ են: Եվրոպական և քաղաքակիրթ երկրների քաղաքագետների, պաշտոնյաների խոսքերը օդում կմնան ու եթե Թուրքիան և Ադրբեջանը զգան, որ իրենք կարող են շարունակել և հաղթանակ ունենալ, շարունակելու են անկախ ամեն ինչից: Մեր երեխաներին դեռ մանկուց պիտի սերմանենք, որ ապրելով այսպիսի պետությունների հարևանությամբ՝ միշտ պիտի պատրաստ լինեն ցավալի անակնկալների և պիտի պատրաստ լինեն այդպիսի անակնկալները վերադարձնեն կրկնակի ուժով, բումերանգի ուժով: Մեր բանակը երեսուն տարի կազմավորվել, կազմավորվում է, զինվում է նորագույն տեխնիկայով, և վստահ եմ, որ մեր զինվորները, մեր սպաները իրենց հմտությամբ, խելքով, ճշգրիտ գործողություններով կցուցադրեն, թե որն է հայ զինվորի ոգին:

Ուզում եմ անդրադառնալ լրատվության ոլորտում առկա խնդիրներին: Շեշտեմ, որ Հայաստանում տեղեկատվական դաշտը գրեթե 20 տարի, այսպես ասած, ոչ լիարժեք է գործում. եթե կան երկրներ, որտեղ տեղեկատվությունը կանոնակարգվում է և՛ պետականորեն, և՛ հասարակական, և՛ այլ գործիքներով, ապա Հայաստանում ասես ամբողջ բեռն ընկնում է նախարարությունների լրատվականների ուսերին: Հաճախ եմ նկատում, որ մեր լրատվական կենտրոնները պաշտպանվողի դերում են: Ադրբեջանը, Թուրքիան կեղծ տեղեկություններ են տարածում աշխարհի բարձր ամբիոններից, և մենք անվերջ պաշտպանվում ենք: Կարծում եմ՝ ինֆորմացիայի լայն հնարավորություններ կան, և մենք դա պետք է կարողանանք օգտագործել և՛ պետականորեն, և՛ մասնավոր ընկերությունների միջոցով, տարբեր ուղիներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ ունենք մեծ Սփյուռք: Պիտի կարողանանք օգտագործել տարբեր երկրների հետ կապերը, պետական պաշտոնական մակարդակով շփումները և նախահարձակ լինենք: Մենք պիտի կարողանանք հավաքել մեր ինֆորմացիոն ներուժը և իսկապես ուղղորդված ծրագրային աշխատանք տանենք պետական, հանրային և սեփական լրատվամիջոցների գործողություններով:

Ուզում եմ կոչ հղել ՀԳՄ անդամներին, սփյուռքահայ գրողներին, Արցախի գրողներին, տարբեր երկրների գրողներին, հատկապես այն երկրների, որոնց հետ մենք մշտապես ստեղծագործական կապերի մեջ ենք, որ իրենց ձայնը բարձրացնեն, հրապարակախոսության, գեղարվեստական գործերով, ցույցերով ի ցույց դնեն թուրքական տխրեղծ ծրագրի իրական պատկերը: Միջազգային հարթակներում հարկ է միշտ հիշեցնել, որ Հայոց ցեղասպանությունը և Արցախի խնդիրը տրամաբանորեն կապված են, և սա թուրքական խաղ է, ծրագիր: Այս մասին պետք է մշտապես խոսվի: Ես պետք է շեշտեմ, որ մեր գեղարվեստական ստեղծագործությունները Արցախի պատերազմի վերաբերյալ, պիտի պետական աջակցությամբ հրատարակվեն: Պետական դրամաշնորհները պետք է հատուկ ուղղորդվեն նաև այդ թեմաներով զբաղված գործերը հրատարակելուն և ոչ միայն հայերեն, այլև անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն և մի շարք այլ լեզուներով: Ե՛վ Հայաստանի, և՛ Արցախի մշակույթի նախարարությունները առաջնահերթ իրենց ծրագրում պետք է ներառեն այս գիծը, որպեսզի Արցախին վերաբերող խնդիրները մշտապես արծարծվեն: Համախմբվածությամբ այս չարիքի դեմը առնենք և կարողանանք պաշտպանել մեր սահմանները Հայաստանում, Արցախում: Կրկին կոչ անում համախմբվելու ոչ միայն հայ գրողներին, այլև միջազգային գրողական կազմակերպություններին և գրողին վայել կեցվածք ունենալ, լինել ճշմարտության և խղճի կողմը և կրկին հորդորում եմ աշխարհի տարբեր ծայրերում բնակվող և գործունեություն ծավալող գրողներին հրապարակախոսական, գեղարվեստական և այլ

նյութերի, ինչպես նաև տեղեկատվական ակցիաների միջոցով աշխարհի հանրությանը պատմել Արցախի և Հայաստանի դեմ Ադրբեյջանի և Թուրքիայի սանձազերծած ռազմական գործողությունների մասին ճշմարտությունը:

Հաջողություն էմ մաղթում մեր զինված ուժերին և համախմբում, ուժ, հավատ և հայկական աննվաճ, հաղթող ոգի:

Այս ելույթը ունեցել էմ սեպտեմբերի 27-ին ՖԲ-ում և հետագա ռազմական գործողություններն ապացուցեցին, որ մեր բանակը մեր անցյալի, ներկայի բյուրեղյա հայելին է և արտացոլում է մեր ապրելու կամքը, խիզախությունը:

ՄԵՐ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՔԱՐ Է

Հայոց անկախության 30 տարիների ամենամեծ ձեռքբերումը Հայոց բանակն է, և դա ապացուցվեց Արցախյան պատերազմում, 1990-ական թվականներին Հայաստանի սահմաններում ծավալված պատերազմական իրավիճակներում, ինչպես նաև 2016 թ. մարտական գործողություններում: Իսկ ընդամենը օրեր առաջ Տավուշի դիրքային պայքարում ևս մեր Հայոց բանակն իր սպաներով, զինվորներով, ճշգրիտ գործողություններով փաստեց, որ բանակը ոչ միայն կայացած է, այլև անվերջ կայացման փուլում է և՛ նոր զինատեսակների, և՛ կրթության, և՛ տեխնիկայի՝ նաև Հայաստանում արտադրվող տեխնիկայի՝ ԱԹՍ-ների ու նաև դրանց դեմ պայքարի միջոցների (խոցվել է հակառակորդի 10 ԱԹՍ) առումով: Հիշենք, թե 2016 թ. այդ մի քանի թռչող սարքերի հարվածներից քանի՛ զոհ ունեցանք: Այնպես որ, կարող ենք փաստել բանակի կայացման, զարգացման և հատկապես վերջին երկու տարում նոր տեխնիկայի ձեռքբերման և նոր արտադրություններ հիմնելու մասին: Այսինքն՝ բանակն աշխատող օրգանիզմ է, որ հրնթացս տեսանք հենց բուն գործողության մեջ:

Մեր խոնարհումը կովող բոլոր սպաներին, զինվորներին, փառք ու պատիվ նրանց: Ինչպես նաև՝ մեր ցավակցությունը զոհվածների հարազատներին: Պատերազմն առանց զոհերի չի լինում, չի լինում առանց հաղթողների և առանց պարտվողների: Մենք ցավում ենք, մեծ կսկիծ ենք ապրում զոհվածների համար: Բայց նաև հպարտանում ենք մեր տղաների հաղթանակով: Նրանք իրենց խիզախությամբ, կյանքի գնով, ամեն մետրի համար պայքարելու կամքով ու ջիղով ապացուցեցին, որ հաղթանակը մերն է: Նաև պիտի փաստենք, որ առաջնագիծն առանց թիկունքի այդ ուժը չի ունենա. Տավուշի գյուղերի բնակիչ-

ներից ոչ ոք իր տունը չլքեց, մինչդեռ հակառակորդի գյուղերը ահագնացող թափով դատարկվում էին: Հայ գյուղացին իր հողին, իր սահմանին կպած լինելու ու սահմանը պաշտպանելու կամքով է արիություն հաղորդում ոչ միայն առաջնագծի, այլև թիկունքում գործող մեր գորամիավորումներին:

Մեր բանակը, մեր ժողովուրդը միասնականության հրաշալի դաս տվեցին: Քաղաքական տարատեսակ քաշկրտումները ընկալելի են, երբ սահմաններում հանգիստ է: Բայց այդ վճռորոշ օրերին մի շարք լուրջ կուսակցություններ սատարեցին իշխանությանը, պետականությանը և միացան միասնականության կոչերին: Համախմբվեց հայ ժողովուրդը՝ Սփյուռք, Արցախ, Հայաստան: Այդ պայքարն առանց այդ միասնության, հավաքական ուժի անհնար է պատկերացնել: Նաև ծիրանի հետ կապված մոսկովյան այդ միջադեպը յուրովի ամրագրումն էր այն իրողության, որ Մոսկվայում լինենք թե որևէ այլ քաղաքում, - Հայաստանի հետ ենք և Հայաստանի թիկունքին: Ե՛վ ԱՄՆ-ում, և՛ Ֆրանսիայում, և՛ Գերմանիայում, ամբողջ աշխարհում, որտեղ հայություն է ապրում: Պայքարում էին նաև մեր դիվանագիտական կառույցների, դեսպանատների մոտ՝ դիմագրավելով ադրբեջանցիների հավաքներին: Այսինքն՝ մեր պայքարն ամենուր է: Մեր գոյությունը պայքար է: Գոյապայքար: Մանավանդ այսօր, 21-րդ դարի հարափոփոխ ժամանակի մեջ, երբ մի կողմից կորոնավիրուսի համավարակ է, մյուս կողմից՝ Թուրքիայի, Ադրբեջանի պես հարևանների առկայություն:

Ուզում եմ ուշադրություն հրավիրել Թուրքիայի գործողություններին. տարածաշրջանում նա դարձել է ահավոր պայթյունավտանգ պետություն Իրաքի, Իրանի, Սիրիայի, - Լիբիայի, Եմենի, Հունաստանի, Կիպրոսի, Հայաստանի համար: Սա նրա գիշատչական, արյունարբու կերպն է, հարյուրավոր տարիներ չի հանգստանում և հիմա էլ Օսմանյան կայսրությունը վերականգնելու տեսիլների մեջ է: Եվ, բնականաբար, այդպիսի հարևան ունենալը դժբախտություն է: Պայքարում են մեր Պահանջատիրության դեմ՝ հատուկ կազմակերպություններ ստեղծելով, չեն խորշում զենքեր, փորձագետներ, չի բացառվում՝ նաև վարձկաններ մատակարարել Ադրբեջանին: Նրա ամեն մի արտահայտության տակ պետք է վտանգ տեսնենք: Երբ Էրդողանը հայտարարեց, թե հայերը գրավել են Նախիջևանը, հավանաբար նկատի ուներ Արցախը: Սակայն եթե լեզվաբանական, հոգեբանական վերլուծության ենթարկենք նրա խոսքը, կտեսնենք, որ Նախիջևան բառը հեռակա նպատակների մասին է ակնարկում՝ Նախիջևանը դարձնելու են, թերևս դարձրել են մի հենակետ, որտեղից փորձելու են ռմբակոծել Հայաստանը, ճանապարհները, նաև Երևանը: Երբ Ադրբեջանի նախագահը, բանակը համարում են, որ Երևանն իրենց քաղաքն է, ուրեմն՝ Նախիջևանը մեր ամենավտանգավոր սահմանակից տարածքն է լինելու: Այնպես որ, ամեն խոսքի տակ պետք է տեսնենք ապագա վտանգները: Եվ պատահական չէ, որ

Աղբբեջանը պետականորեն հայտարարում է հայկական ԱԷԿ-ը ոմբակոծելու մասին: - Սա արդեն լրիվ պարզում է նրանց դեմքը՝ անբարո, գիշատչական, աշխարհի կարծիքը չընդունող: Համապատասխան ձևով պետք է հարաբերվենք նրանց հետ՝ ամուր պահելով մեր և՛ ներսը, և դուրսը՝ հայության ոգին, մշակույթը, բանակը՝ միասնականության բոլոր ուղիներով: Հավելեմ, որ շատ սևեռվել Մարգարիտա Միմոնյանի անպարկեշտ խոսքի վրա և պայքարել ենթատեքստերի դեմ, հավելյալ էներգիա կլիլի և կշեղի բուն նյութից: Խնդիրն այն է, որ հայ-ռուսական հարաբերությունները՝ և՛ ռազմական, և՛ տնտեսական, մանավանդ այսօր, այնքան խորացված են, որ վեր են միջանձնային, միջազգային, միջպետական շատ հարաբերություններից: Վերջիններս կարող են շատ ավելի ցածր լինել, քան տարածաշրջանի ընդհանուր շահերի և համաշխարհային շահերի խնդիրն է: Այստեղ, ինչքան զգում եմ, ճանաչում են, հայ-ռուսական և տարածքային շահերը որոշակիորեն համատեղում են՝ նաև աշխարհում պահպանելու մեր կերպը, մեր հարաբերությունները, նաև մեր դիվանագիտական ջանքերը՝ ոչ միայն Ռուսաստանի, այլև հզոր պետությունների, եվրոպական երկրների, բոլորի հետ, ում հետ հնարավոր է: Մեր շահերը և մեր հարաբերությունները մենք պիտի կարողանանք ճշմարիտ կերպով կազմակերպել, աշխատել միշտ այդ ուղղությամբ: Ամեն մեկս պետք է մի աղյուս ավելացնենք մեր բանակաշինության պայքարի և մեր հոգևոր կառույցներին՝ ամրացման, ամրապնդման և հզորացման համար:

Հիշեցնեմ, որ ՀԳՄ-ն Պաշտպանության նախարարության հետ համատեղ ծրագրեր է իրականացնում՝ ի շահ գրականության և ի շահ մեր պետականության հոգևոր ուժի ամրակայման:

«ԳԹ», թիվ 26, 2020 թ.

ԵՐԲԵՄՆ ԿԱՐԴԱՅԵՔ ԳՐՈՂՆԵՐԻՆ, ԱՇԽԱՐՀԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

Ինձ չի ոգեշնչում, որ քաղաքականությունը, տնտեսական հարցերը, սոցիալական բազմաբնույթ խնդիրները փորձում են գրավել գրողական ազատ տարածքը և դառնալ տեր-տիրական, անգամ հրապարախոսական սուր բորբոքումով գրողին դարձնել որևէ կուսակցական, պետական և հասարակական կազմակերպությունների ու խմբերի սպասարկու:

Գրականությունն այս ամենի երկինքն է:

Իսկ գրողը՝

Հատկապես հայ գրողը չի կարող մի կողմ քաշվել աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, Արցախի կարգավիճակի ու Հայաստանի շուրջ բացահայտ և աննշմարելի անցուդարձերից, խոսք ու հայտարարություններից: Մանավանդ, երբ խոսում է Էրդողանը՝ միշտ բաց, ասելիքն ու անելիքը ծրագրված և դրանով սպառնալիք ու երկխոսության «անմեղ» հրավեր հնչեցնելով: Ոչ միայն հարևանների նկատմամբ է կտրուկ, այլև իրենից հզորների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի...

Այսպիսի հարևանն ու նրա փոքր եղբայրը, ինչպես մեկ տարի առաջ համոզվեցինք՝ խոսքը քամուն չեն տալիս, հատկապես այս հարափոփոխ տարածաշրջանում, երբ արդեն Ամերիկան էլ զահլա չի դնում ո՛չ Աֆղանստանի, ո՛չ... ՄԱԿ-ի վերջին համաժողովն էլ ապացուցեց, որ աշխարհը գտնվում է անորոշության և անտերության վերուվարումներում: Այդ կազմակերպությունն էլ վաստակած հանգստի է անցել:

Թուրքիան 44-օրյա պատերազմում շեշտեց, որ ձգտում է գլխավոր խաղացող դառնալ ու երբեմն տրորել հզորների ոտքերը, հաճախ նրանց իրար դեմ հանելով և երկակի խաղի հին ու փորձված ոճը թարմացնելով:

Դա նշանակում է աշխարհի այս շուկայական թոհուրոհում առևտուր առաջարկել, իրեն օգտագործելու ծրագրեր է հրամցնում՝ մե՛րթ ազգային թուրանական ընդլայնման հիմքով, մե՛րթ կրոնական՝ իսլամական: Եվ այս միջոցում մենք հայտնվել ենք մեծ ծրագրի դիմաց, և նա՝ Էրդողանը, ի հակառակ ռուս և հայ պաշտոնական հայտարարությունների, բարձրաձայնում է «կարիդոր» պահանջը, այսինքն՝ Հայաստանից Նախիջևան և ապա Սյունիքով Ադրբեջան ու արևելք ու հյուսիս: Չմանրամասնեմ, բոլորին հայտնի է: Սա հնչել է որպես նախապայման, իսկ թե ինչ հետևանքներ է ունենալու այդ կարիդորը, նա չքմեղորեն լռում է, բայց դրա փոխարեն վտանգի կանխազգացմամբ պաշտոնական դեմքերը և՛ Հայաստանից, և՛ Իրանից, մասամբ Ռուսաստանից ճշգրտում են՝ ապաշրջափակում, ուղիների ապաշրջա-փակում, նոր ուղիների մշակում՝ վկայակոչելով նոյեմբերի 9-ի հայտարարագիրը:

Բայց Էրդողանն ու նրա փոքրը իրենց նման չեին լինի, եթե անվերջ կարիդոր չասեին, և անգամ փոքրը ժամանակին սպառնում էր, թե եթե հայերը չհամաձայնվեն կարիդորի բացմանը, իրենք կստիպեն: Ինձնից լավ գիտես, սիրելի ընթերցող, հիմա ես որպես միամիտ գրող ո՞նց չըմբռնեմ այն հեռագնա նպատակներն ու խարդավանքները, որ փորձում են որպես բարի կամեցողություն փաթաթել մեր երկրի հարավային սահմանների շուրջ: Գորիս-Կապան ճանապարհի թատրոնը մեզ բան չասե՞ց:

Պարոն Էրդողան, այդ «կարիդոր» բառը մոռացեք, զրույցի հրավիրելով՝ առավել բարիդրացիական բառեր գտեք:

Մեզ, որպես ևս մի նախապայման, մի՛ հորդորեք մոռանալ Յեղասպանությունը, մենք էլ Ձեզ հորդորում ենք առերեսվել ձեր պատմության հետ: Ի՞նչ ամոթ է ճանաչել սեփական անցյալը:

Մենք էլ կարիք ունենք ճշմարիտ ինքնաճանաչման, մենք էլ երբեմն չենք գիտակցել բարեկամի և թշնամու, բարեկամության ու թշնամության սահմանները:

Եվ այլ բաներ ևս:

Մեզ հետ մի՛ խոսեք հաղթողի, ուժի դիրքերից, վերջապես ևս մի ոչ պատվաբեր արարք Թուրքիայի կողմից՝ բացահայտ օգնել փոքր եղբորը և միացյալ հարձակվել Արցախի Հանրապետության վրա: Ֆոսֆորային ռումբերով, բայրաքթարներով, որոնց համար միջազգային դատարանների ուշք ու վճիռները պիտի սպասենք: Քրիստոնյա Եվրոպայի և այլ երկրների հայացքը չենք ակնկալում, քանզի նրանք զբաղված են քրիստոնեական արժեհամակարգը վտարելով, վախենում են անգամ Նոր տարվա տոնածառ դնեն իրենց հրապարակներում: Ձեր քաջային կատեգորիայի համապատասխան այլ երկիր փնտրեք, թեպետ հիմնական հարևաններին թշնամի եք դարձնում:

Դժգոհում եք, որ չեք կարողացել լեզու գտնել ԱՄՆ-ի նախագահ Բայդենի հետ, լավ չէ, չէ՞, որ նա ուժի դիրքերից է խոսում Ձեզ հետ: Եթե զրուցելու եք դիվանագիտական ժախտի հետ, մի քիչ էլ անկեղծ ժպտացեք ու մի՛ պնդեք չեղնելիք նախապայմաններ, որոնք հոգեբանական, տարածքային ու տարածաշրջանային հսկա հարվածներ են պարունակում մեր և հարևան երկրների համար:

Տարիներ առաջ Մայնի Ֆրանկֆուրտում գրքի միջազգային ցուցահանդեսի ժամանակ հայկական տաղավարի առջև կանգնեց Օրհամ Փամուկը, ես նրան հրավիրեցի ծանոթանալ մեր գրքերի հետ, սիրով նվիրեցի հայկական մանրանկարչության ալբոմ և հայ ժամանակակից բանաստեղծների անգլերեն անթոլոգիան, որի մեջ հայ ոգու բարության ու գեղարվեստի շառավիղները կան: Ապա նա համաձայնվեց Կարսի մասին պատմող իր «Ձյունը» գիրքը թույլ տալ, առանց հոնորարի ակնկալիքի, հրատարակել Հայաստանում: Հրատարակվեց: Երանի այսպես՝ նրա բաց կանաչակապույտ ու մեր սևադարչնագույն աչքերի ջերմ հասկացողությամբ հասկանանք մեկմեկու, փոխանակենք Աստծո և մարդու ստեղծած լավագույնը այս արևի տակ:

Մեկ-մեկ լսեք և կարդացեք գրողներին, պարոնայք:

27.09.21 թ.

ՏՐԱԳԻԿՈՄԵԴԻԱ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-ԳՈՐԻՍ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Այս էլ երկու օր է, ինչ աղբբեջանցի բնապահպան կոչված դերասանախումբը փակել է Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը և խաղարկում են տրագիկոմեդիա: Նրանց բնասեր դիմակի տակից երևում են գիշատչական մարդասպանների արնակոխ աչքերը: Փակ ճանապարհին սառչում են երեխաները, ծերեր, Արցախում հումանիտար աղետ է մոտենում:

Թուրք-աղբբեջանական տանդեմը դավիթօղլուների և նրանց նմանների հրահանգների կատարմանն են լծված՝ Հայաստանից պոկեն իրենց ուզածը: Ակնհայտ է, որ Ռուսաստանը պատերազմական թոհուրոհում, Թուրքիայի հետ առանձնակի հացահատիկային, գազային և այլ կապերը ամրացրած, չի գորում ուժի դիրքերից ճանապարհի բացել, և խաղաղ խաղաղապահ զինվորները անգոր կանգնել են իրենց բնապահպան համարող աղբբեջանցիների թուք ու մուրի դիմաց, հասկանալով, որ ամեն մի կրակոց կամ կոպիտ շարժում կծնի սադրանքների պատրաստ Բաքվի հակառուսական ալիք: ՀԱՊԿ-ն էլ ի գորում չէր (թեպետ չեն խոստովանում) խստագույնս գնահատելու Հայաստանի սահմանն անցած ազերիներին:

Պուտինը հեռախոսագրույց է ունեցել Ալիևի և Փաշինյանի հետ: Ճանապարհը դեռևս փակ է: ԱՄՆ-ից էլ Պետդեպ-ի մամուլի ծառայության պետ Նեդ Փրայսը երկու կողմերին հորդորում է չսրել լարվածությունը, Աղբբեջանին հորդորում բացել ճանապարհը: Մինսկի խմբից՝ ոչ մի ձայն, եվրապառլամենտից առաքված խմբի ժամկետն էլ չի երկարացվի:

Աղբբեջանը ոչ մեկին էլ բանի տեղ չի դնում: Ալիևը ինքն իրեն համարում է Հարավային Կովկասի տեր ու տիրական: Սա փաստ է և կարծես որևէ մեծ ու փոքր երկիր ու միջազգային կազմակերպություն չեն զսպում նրա ախորժակը: Թքած ունի 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության կետերի վրա: Վկա՝ գերիներին ազատ չարձակելը:

Թղթերը նրա համար քամուց թափահարվող տակաշորեր են, առ ոչինչ են: Խաղաղությունն ասելով Ալիևը հասկանում է Հայաստանի վերացում, իսկ մերոնք մեծագույնս հավատալով խաղաղության տառին ու ոգուն, ամեն օր առերեսվում են կրակոցների, սադրանքների և մշտական հոխորտանքների:

Այս վիճակը շարունակական է լինելու ու Արցախը՝ պատանդ, Հայաստանը՝ միջանցքի վերածելու թուրանական վտանգի տակ:

Թուրքիան՝ ՆԱՏՕ-ի անդամ, Բաքուն՝ նրա դամբաշը: Թուրքիան սրբում է Սիրիայի հյուսիսը, արաբական լիզան դատապարտում է նրան, նա սրբում է, մաքրագարդում Իրաքի քրդերին, քրդերն են աղաղակում տարբեր հորիզոնականներում, հույներին են

հաթաթա տալիս, հայերին են հիշեցնում ցեղասպանությունը և հրեշտակի տեսքով հորդորում բռնել իրենց մեկնած ձեռքը, թե չէ...

Եվ ի՞նչ՝ թուրք-ադրբեջանական դիմակավոր բնապահպանները մարդասպանի, հայասպանի, ցեղասպանի հին բնագոյներով խաղում են տրագիկոմեդիա, իրենց համար՝ ֆարս, մեզ՝ աշխարհի բոլոր հայերի համար՝ ողբերգություն: Մեր ձայնը պիտի հնչի:

Աշխարհում դեռևս կան մշակույթի ու գրականության գործիչներ ու դեմքեր, որոնց խիղճը չի կարծրացել շահախնդիր քաղաքականացվածությամբ և միշտ իրենց խոսքն են ասել՝ որպես Աստծո քարտուղար:

Մի՞թե դիվանագիտությունը, քաղաքական հանդիպումներն ու կեղծ ձեռքսեղմումները նույն տրագիկոմեդիայի դերակատարներն են ու պատվիրատուները: Գրողները եթե լռում են, իրենց փոխարեն գրում է այս դարի առայժմ արյամբ գրոհող համաշխարհային քառսագիրն ու սատանայի ճուտ քարտուղարը:

Էհ, սիրելի Շեքսպիրի հերոս Համլետ, քեզ լսելի ցավով ասենք՝ փոքր պետությունների ու ժողովուրդների համար այս խառնակ ժամանակներում ոչ լինելն է մի բան, ոչ չլինելը: Մնացյալն էլ պատերազմի աստված հրանոթի գոռգոռոցն է և միջուկային ռումբերի խորհրդավոր լռությունը:

Այս 30 տարում մենք պարզ տեսանք աշխարհի մեծերի ու մեծ-մեծ բրդողների իրական՝ շահասեր, կեղծ հումանիստ դեմքը և այլևս փորձենք չխաբվել սուտ խոստումների: Աշխարհի բոլոր հայերի ձայնն ու հոգին պիտի սևեռվի լռության վարագույրը պատռելուն: Աստված մեզ հետ: Մենք էլ մեր ու աշխարհի աստվածասեր ոգիների հետ:

«ԳԹ», թիվ 42, 2022 թ.

ՀԻՇԵՆՔ ՉԱՐԵՆՑԻ ՀՈՐԴՈՐԸ

Աշխարհի, տարածաշրջանի և հայաստանյան ալեկոծ վիճակը, հավատացած եմ, որևէ խելամիտ մարդու հանգիստ չի թողնում: Ամեն մեկն իր վերլուծական ընդունակությունների չափով փորձում է ելքեր գտնել Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունների թավուտում, հատկապես Արցախի ճգնաժամային վիճակի առկայությամբ: Երբեմն այդ ելքերի փնտրտուքը հանգում է վերջնաժամկետների պարտադրանքների և՛ դրսից, և՛ ներսից: Մարդկանց որոշակի մաս հակադրվում է մյուսներին հաճախ թշնամական երանգով: Եվ մշտապես պահանջ է թևածում մտավորականների գործողությունների վերաբերյալ, թեպետ և տարբեր, հակադիր

խմբերում հիմնականում մտավորականներ են գործում: Սակայն շատերը մտավորական ասելով հասկանում են միայն ստեղծագործող խավին: Իմ կյանքի փորձը հուշում է՝ 30 տարվա մեջ այդ ստեղծագործական խավը քշված է երկրորդ, երրորդ շարք, և միայն ալեկոծումների ժամանակ են հիշում նրանց: Մեր գրողներից ոմանք այս թևին են պատկանում, ոմանք՝ մյուս թևին, ոմանք էլ առհասարակ այլ կարծիք ունեն, բայց բնավ չի նշանակում, որ չեզոք են: Յուրաքանչյուրն իր կարծիքն ունի: Ժողեֆ Բարեյի հայտնի հայտարարությունից հետո առավել սաստկացավ հակադրության ոգին: Մանավանդ դիտարկվեց Ռուսաստանին այս շրջանից դուրս մղելու միտումը, որի Ռուսաստանը շտապեց արձագանքել: Իհարկե, մերք բազմաթիվ խոչ ու խութերից, ենթատեքստերից, բանավոր զրույցներից, համաձայնություններից տեղյակ չենք: Դիվանագիտությունը որքան մակերեսին է, առավել ևս՝ աննկատելի խորքերում: Բոլորիս անհանստությունը ահագնացավ Ալիևի վերջին հայտարարություններից՝ Երևանը իրենցն է եղել, Զանգեզուրի միջանցք են բացելու, երբ ուժեղանան, իրենց հողերից դուրս են քշելու թշնամիներին... որին արձագանքեց մեն ԱԳՆ-ն: Բայց, իհարկե, դա չի նշանակում, որ Ալիևը կփոխի իր կարծիքը և չի շարունակի նույն ահաբեկող ելույթները: Պատկերացրեք՝ արցախցիները լսում են, և նրանցից որևէ մեկը կհավատա՞, որ Ադրբեջանի տիրապետության տակ անցնելով՝ այնտեղ չի ենթարկվի վռնդվելու ալիևյան մոլուցքին: Բնականաբար, ինքնորոշման, իրավունքների և անվտանգության խնդիրը անպայմանորեն արցախցիների կարգավիճակի մասին են ստիպելու մտածել: Ովքե՞ր են երաշխավորները. Մինսկի խմբի համանախագահնե՞րը, Եվրախորհո՞ւրդը, Ռուսաստա՞նը... Իհարկե, անվերապահ, Հայաստանը: Մեր հայաստանյան ներկա կացությունը, որքան էլ անտրամաբանական թվա, ինձ դրդում է մտածել, որ հակադիր բոլոր ուժերը, առաջին հերթին՝ իշխանությունն ու ընդդիմադիրները, պատգամավորները, հարկ է մի հայտարարի գան մեր ժողովրդի ճակատագրի վերաբերյալ: Թշնամական կողմերը փոխզիջումներ են փնտրում, բայց մենք մեր ժողովրդի մեջ թշնամի չպետք է ման գանք, այլ համաձայնության եզրեր փնտրենք, ճշմարիտ ոսկե միջինի եզրերը գտնենք, այլապես, շախմատային լեզվով ասած՝ «պատ» վիճակ կառաջանա: Մի՞թե որևէ մեկը կհավատա, որ Արցախը անկլավային վիճակով կարող է պաշտպանված լինել, մի՞թե որևէ հայ տեսնելով Չեպուլուջուլուի՝ գորշ գայլերի ձեռքի շարժումը, կհավատա, ու ցեղասպանության խնդիրը չի դարձնի դիվանագիտական կամ պահանջատիրական օրակարգ:

Բոլորին իմ հորդորն է աշխարհի և տարածաշրջանի այս բուռն, անկանխատեսելի ժամանակներում՝ նստել դեմ-դիմաց և վեճերի ու քննարկումների միջոցով գտնել այն

ճշմարտությունը, այն ուղին, որի փորձը մեր ժողովուրդն ունի և աշխարհի ուժեղներին հավատալու, թո՛ղ որ միամիտ, քաղաքականության կրողն է, բայց սթափվելու պահն է:

Ամենակարևորը՝ մենք մեզ հավատանք և մեր բանաստեղծի՝ Չարենցի ազգային միասնության կոչը ընդհանրական ընդունենք, ո՛չ մաս-մաս, անջատված, թշնամացած և վերջնական փրկչային ինքնապարծությամբ:

Ահա ցանկացած մտավորական ի՛նչ կարող է ասել, և մի՞թե այդպես չի մտածի գեղջուկը, քաղաքագետը, բանվորը, սփյուռքահայը, հայաստանցին և, մասնավորապես, արցախցին:

«ԳԹ», թիվ 19, 2022 թ.

ՈՆՑ ԵՂԵԼ ԵՆ, ԱՅՖՊԵՍ ԷԼ...

Պարոն Չավուշովի, տեսա ցեղասպանությունից փրկված հայերի ժառանգներին՝ ցուցարար ուրուգվահայերին, ուղղված անձամբ ձեր ձեռքի գորշ գայլերի նշանը և ձեր փոխարեն կարմրեցի, գուցե դուք էլ կարմրեցիք, բայց զրահապատ մեքենայում դա, ինչքան գիտեմ, ընդունված չէ:

Այդ նշանով ապացուցեցիք՝ շարունակում եք հպարտանալ ձեր նախորդ գիշատիչների սև գործով, ներկա գորշ գայլերի առաջնորդ Բախչելիի՝ Էրդողանին ներկայացրած Մեծ Թուրանի քարտեզով՝ Ռուսաստանի և Ուկրաինայի տարածքների մե մասն էլ է ընդգրկված սույն քարտեզում: Էլ ինչպե՞ս եք այդ երկրներին հրավիրում Թուրքիա և հաշտության քարոզ կարդում: Էլ չեմ ասում ձեր հարևանների նկատմամբ տարածքային նկրտումները, ագրեսիաները: Պատկերացնո՞ւմ եք՝ ներկա Գերմանիայի արտաքին գործոց նախարարը հրեա ցուցարարներին ֆաշիստական սվաստիկայով ահաբեկի: Յավոք, ձեզ ներում են քաղաքակիրթ կոչված մի շարք հզոր երկրներ, անգամ, երևի, նաև ոգևորում, իրենց աստվածն իրենց հետ: Դա հատկապես պարզորոշ երևաց Արցախի վրա Ադրբեջանի հարձակման ժամանակ, երբ դուք վարձկաններ ու գորշ գայլեր ճամփեցիք՝ շարունակելու ցեղասպանության կիսատ մնացած գործը, և Եվրոպան մի քանի զարմանալի բացականչություններից հետո լրիվ սսկվեց, երևի վախեցավ՝ ձեր ֆոսֆորային ռումբերից ոչ միայն Արախին բաժին հասցնեք, այլև...

Գորշ գայլերի նշանով, խնդրում եմ, չահաբեկեք Հայաստանի բանակցողներին, նրանք իսկապես հավատում են, որ դուք փոխվել եք, խոսում եք խաղաղ գոյակցությունից, հարևանությունից, ճանապարհների ապաշրջափակումից...

Հա՛, եթե Գերմանիայի արտաքին գործոց նախարար Աննալենա Բերբոկը նման կերպով երևար աշխարհին, նրանց կանցլեր Շոլցը, հավատացած եմ, պաշտոնանկ կաներ:

Պարոն Էրդողանը, չգիտեմ, տեսե՞լ է ձեր լուսանկարը, թե ոչ, բայց նա վախեցողը չի և, մեկ տեսար, քաղաքակիրթ աշխարհի աչքը մտնելու համար...

Աշխարհը շատ արագ է փոխվում, սակայն գորշ գայլերը ոնց եղել են, շարունակում են նույնքան ահ ու սարսափ տարածել գլոբալիզացվող և դեմոկրատական քառսային աշխարհում:

«ԳԹ», թիվ 13, 2022 թ.

ԹԱՔՈՒՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԷԼԻ ՇԵՔՍՊԻՐՆ Է ՄԵՂԱՎՈՐ

Լրատվությունը տեղ հասցրեց, որ Ստամբուլում հանդիպել են Էրդողանն ու Ալիևը: Նրանք փակ առանձնագրույցի ընթացքում քննարկել են նաև Ադրբեջանի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման հարցեր:

Դե, առանձնագրույցը թաքուն է, և մենք՝ քերթողներս, ձգտում ունենք բացահայտելու թաքունը, գաղտնին:

Ի՞նչ է ասել Էրդողանը:

Երևի հորդորել է «բնապահպան» բառի տակ թաքնված յաթաղանը փաթաթել մի այլ գույնով, էս անխիղճ աշխարհը թքում-մրում է ու դատապարտում, էդ ոչինչ, խաղեր են տալիս, բայց հարկ է ցույց տանք, որ լսում ենք նրանց կոչերը, ոչերը, հորդորները, դատապարտումները, ուրիշ դեպքում՝ թքած, բայց էս անխիղճ երկրաշարժը ստիպում է ավելի ճկուն լինել, և՛ ռուսներին, և՛ Ամերիկային, և՛ Եվրոպային ու Իսրայելին եղբայր ու զինակից անվանել, որ մեր հիմնական երազանքը քշենք Կասպից ծովից դեպի Չինաստան, հա, ժամանակը չի երևի Իրանին զայրացնել, թող մեր վարիչները մի քիչ համբերեն, թող ռուսներն էլ չանհանգստանան, թե իրենց երկրի մեծ մասը մեր քարտեզում ենք գծել: Հասկացա՞ր, Իլհամ ջան, Չինաստանը, զգացիր մոտ-մոտ է անում պարսիկներին ու ռուսներին: Մեր քավոր ՆԱՏՕ-ն էլ է անհանգիստ: Էնպես արա, որ ռուս խաղաղապահներն ու եվրոպական առաքելության ժանդարմներն իրար պոզահարեն: Այնպես որ ոչ ռուսները բորբոքվեն, առանց էդ էլ ամեն ինչ սպասելի է նրանցից: Ռուսները, ինչպես Զատուլինն է ասել՝ պոնտացի Պիդատոսի պես ձեռքները լվացին, տեր չկանգնեցին Ռուբեն Վարդանյանին, այս մեթոդով գործիր: Իրար հասկացանք, չէ՞:

Ալիևի խոսքն է՝ հա, շեֆ:

Էրդողանը շարունակել է երևի:

Հայերի մեջ կոիվ քից, դա նրանց ավելի է հաջողվում, հիշիր՝ մենք հիմնականում նրանց թշնամի ենք, նրանք էլ՝ մեր, բայց հիմա պիտի ռիսկերիմ մարդասեր խաղանք: Պարզ է, չէ՞: Նրանց պետք է ներշնչել, թե գլխավոր դերակատար են, կարող են և՛ ռուսներին, և՛ Արևմուտքին թելադրել ինչ-որ հարցեր, երկու կողմից էլ գլուխները կշոյեն, մինչև մի օր կապտակեն, մենք էլ՝ կողքից:

Իլհամ ջան, հայերին պետք չէր, կարծում եմ, ասել, թե ՀԱՊԿ-ում ավելի շատ են մեր բարեկամները, քան նրանց, դե, դա պարզ էր, երևի պետք չէ ասել, որ Արևմուտքում էլ են շատ մեր բարեկամները, դա հասկանալի է, թող հայերը միամիտ լսեն նրանց, բայց գլխի չեն ընկնի, թե ինչ են մտածել, ինչ են ասում, և ինչ են անելու, այսպիսին է մեր փորձը, մենք եվրոպացիքին լավ գիտենք, դե, Ամերիկյան էլ մեր փառիշտին է, գիտեք ու գիտենք, թող հայերին թվա, թե մեր բայրաքթարներով Ուկրաինային ենք օգնում, ուրեմն ռուսներն իրենց կպաշտպանեն, թող մտածեն, մենք մեր գործը կանենք՝ ռուսները թող սարքեն մեր ատոմակայանը, նավթն ու գազը, մեր խաբում հավաքենք ու բաշխենք աշխարհին, նրանք մեր ձեռքին կնայեն, հասկացա՞ր, Իլհամ ջան, մեծ առևտուրը չի նայում փոքր երկրների երեսին: Նրանք թող ինքնավստահ մեկ ձախ գարկվեն, մեր՝ աջ, հետո իրար ուտեն, մինչև խելքի գան, մերն է լինելու ժամանակը:

Ալին՝ հա, շեֆ:

Էրդողան՝ կոշտ ուժ, փափուկ ուժ, հարևան-բարեկամ՝ բոլորին առնել, տո էդ թշնամիներին էլ առնել-ծախել, պա՞րզ է:

Ալին՝ հա, շեֆ:

Էրդողան՝ բայց միջանցքը բացելու ենք:

Ալին՝ ո՞րը:

Էրդողան՝ մերը:

Ալինը ժպտաց:

Էրդողան՝ փորձիր ճիշտ հասկանալ. երբ ո՞րը: Պետք է խառնել իրար:

Ալին՝ հա, շեֆ: Որքան սլավոններն իրար ուտեն, Էդքան մենք Թուրանին կհասնենք:

Էրդողան՝ համոզեցիր, որ պտուղը ծառից հեռու չի ընկել: Հեյ գիտի, Հեյդար:

Ալինի խոսքը՝ հա, շեֆ:

Հիմա գանք իմ բացահայտումների պարզունակությանը: Ախր Էրդողանը լավ գիտի, որ իրեն հետևում են ու ամեն բառը լսում, մի օր երեսին կասեն, թե Ալինին ինչո՞ւ ետ պահեցիր կանաչների սրբազան ուխտից, բա նա ի՞նչ կպատասխանի, ասի, թե Իլհամը շատ ինքնավստահ կանաչ է, կարող է մի տեղ սայթաքի, ասենք՝ բանանի կեղևի վրա: Բա

չասե՞մ, որ յաթաղանը պահի լավ օրերի համար, համ էլ հայերը եղեռն են հիշում ու մեզ էլ թույլ չեն տալիս իրենց գլուխը շոյենք:

Բա Ալիսը չի՞ խոսում: Խոսում է, ըստ իս, դժվարությամբ է համաձայնվում յաթաղանը պահել ավելի ծածուկ տեղ, էդ շանորդի կանաչները բավականին անխելք միլլաթ են, արագ ցուցադրեցին, որ իմ ջրած, պահած ոչ թե կանաչ, այլ խակի գույնի ենիչերիներ ու վարձկաններ են: Գուցե իսկական բանակով փակի, վերջացնի էդ Լեոնային Ղարաբաղ կոչվածը:

Էրդողանը, ըստ իս, գլուխը կախել է, ընկել մտքերի մեջ, էդ ժամանակ՝ հեռախոսազանգ Ռուսիայից...

Մինչև զանգին պատասխանելը Ալիսը շնջաց՝ ամեն բան իր ժամանակն ունի:

Հետո զանգ Ամերիկայից, Անգլիայից, Պակիստանից, Եվրախորհրդից... Էրդողանը շրջվում է Ալիսի կողմը և մրմնջում, հայերը մուխանաթ են, մեր վրա սև բիծ են գցում, ցույց տանք մեր օսմանյան իմաստնությունը, ճկունությունը, յաթաղանը իր տեղում:

– Լաչինը բացե՞նք,– հարցնում է Բլիամը:

Էրդողանը բազմանշանակ քթի տակ մրմնջում է.

– Բացե՞լ, թե՞ չբացել, այս է խնդիրը: Էս խառը ժամանակ Շեքսպիրն էր պակաս:

Ալիսը հասկացավ, թե Շեքսպիրն է մեղավոր ամեն ինչի համար: Իր երկիր գնալուց անմիջապես հետո արգելեց առժամանակ նրան չհրատարակել:

Իսկ էս իմ թերի բացահայտումներով եկա միակ եզրակացության՝ աշխարհի վրա ամենամեղավորը իսկապես Շեքսպիրն է, որ չգրեց պետություններին, նրանց ղեկավարներին ու քաղաքացիներին խելքի բերող մի ձեռառնոցի կատակերգություն, թե չէ հա ողբերգություն, դրամա...

Վերջն էլ սա է, թաքուն և բացահայտ:

Հ.Գ.

Երբ ընկած Էրդողան-Ալիս փակ գրույցի մեկնությանն էի, ըստ իս, գրի առնում, առավոտ շուտ Լեոնային Ղարաբաղից գուժեցին հրաշալի բանաստեղծ և ԼՂՀ գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանի մահը: Ցավալի է, նա չտեսավ Լաչինի միջանցքի բացվելը և գիշատիչ բնապահպանների հերթական գոհն է մեր ընկերը, որին չկարողացան օգնել բուժելու հոգու և մարմնի հայրենական ցավը: Դու, սիրելի Վարդան, կձուլվես հայրենի հողին և այն ավելի կգորանա, կդիմանա նենգ հարվածներին ոխերիմ հարևան-մարդասեր կոչված՝ չգիտեմ ինչերին:

«ԳԹ», N5, 2023 թ.

**ՄԻ ԲԱՆ ՄՏԱԾՈՒՄ, ՄԻ ԱՅԼ ԲԱՆ ԱՍՈՒՄ, ՄԻ ՈՒՐԻՇ ԲԱՆ ԱՆՈՒՄ, ՄԻ
ԽՈՍՔՈՎ՝ ՊԵՂԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ**

Էս Պիղատոսը մի կուսակալ մարդ էր օտար բնակչության մեջ և պետք է որոշեր մեղավորության չափ և պատժի ձև, և ահա նա մտածեց, որ եթե ինքը որոշի՝ մեղքի տակ կընկնի, տվյալ քաղաքի բնակչության առջև պատասխանատվություն կկրի և ընտրեց՝ մեղքն ու պատասխանատվությունը գցի հենց այդ քաղաքի բնակչության վրա: Ու գնաց ձեռքերը լվանալու: Խաչվեց Հիսուսը: Անցան դարեր: Շատ երկրների իշխանություններ, դատական մարմիններ, կարևոր հարցեր որոշողներ նմանվեցին Պիղատոսին: Ինչու չէ, նաև միջազգային կազմակերպություններ, որոնք պիտի քննեն ու դատապարտեն մեղավորներին, պաշտպանեն ճշմարտությունը:

Ահա 30-ից ավելի տարի Լեոնային Ղարաբաղի կնճիռը վերուվարում է երկրների ու միջազգային կազմակերպությունների խոհական ճակատներին և...

ԵԱՀԿ Մինսկի խումբը քայքայվել է, համանախագահ երեք երկիր՝ ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա, թշնամացել են իրար հանդեպ: Մեկն ասում է խումբը կա, մյուսը՝ չկա: Ադրբեջանն այդ խմբի անդամներին արցախյան 2-րդ պատերազմից հետո համարյա քշեց Բաքվից: Ռուսաստանի ներկայացուցիչը երևի կանխազգալով Ալիևի ստորացնող քայլը, բացակայում էր: Եվ ի՞նչ, ոչինչ: Ադրբեջանի տիրակալն էլ բոլորին ի լուր հայտարարեց՝ չկա Ղարաբաղի հարց, այն զենքով լուծված է:

Եվ ի՞նչ, ոչինչ:

Նա դա կրկնեց 2020 թվականի նոյեմբերի 9-ի համաձայնագրի կատարման քննարկման ժամանակ Ռուսաստանի նախագահի ներկայությամբ:

Եվ ի՞նչ, ոչինչ:

Հայ գերիները շարունակում են մնալ ազերիների բանտերում, 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո շատ ջրեր հոսեցին, եղավ 2022 թվականի սեպտեմբերյան պատերազմը, ադրբեջանցիք մտան Հայաստանի սահմաններից ներս, եկան եվրոպացի դիտորդներ, ՀԱՊԿ-ի ուսումնասիրողներ, Եվրախորհրդի դատապարտող կոչեր ու ՄԱԿ-ի արդարադատության դատարանի Ադրբեջանին դատապարտող որոշումներ: Եվ ի՞նչ, ոչինչ:

Նավթը հաղթում է արդարադատությանը: Տիկին ֆոն դեր Լյայենը Ադրբեջանին համարեց իրենց կարևոր գործակից, Ամերիկյան ֆինանսապես օգնում է Ադրբեջանին,

Իրանի դեմ հանկարծակի կոնֆլիկտը ծագելու դեպքում իրենց ասելով կօգնի Ադրբեջանին, ազերի օդաչուներ են պատրաստում ԱՄՆ-ում...

Ալիևն անցավ իր նախագծած էթնիկ գտման ծրագրի ցնցող քայլերին՝ փակեց Լաչինի միջանցք-ճանապարհը հավատարիմ վայ-բնապահպաններով: Էլի կոչեր, Էլի հայտարարություններ, գալիս են, գնում փորձագետներ, բարձր պաշտոնյաներ, ճիշտ է, այս անգամ նրանց քամակին չի զարկում, դուրս քշում, բայց բողոքում է, թե Հայաստանն ու արցախցիներն են խախտում հրադադարը:

Բացահայտ ձեռ է առնում բոլորին, անունները չթվարկեմ:

Եվ հիմա էլ անցակետ է դրել, իր ձեռքն առել ռուս խաղաղապահների հսկման գոտին:

Նորից սրտակեղեք կոչեր, հայտարարություններ Արևմուտքից, Ռուսաստանից և այլ տեղերից: Ռուսաստանի փորձագետներն են զայրացել և վերջապես հայտարարում են, որ Ադրբեջանը փորձում է ռուսական ատամի ուժը, Ռուսաստանի ՊՆ-ն է հայտարարություն տարածում: Փոխում է իր խաղաղապահների հրամանատարին: Դեռևս ոչ մի արդյունք: Արևմուտք-Ռուսաստան-Հայաստան-Ադրբեջան իրար մեղադրելու, պատասխանատվությունը միմյանց վրա գցելու է՛լ ֆուտբոլի գնդակ, է՛լ դելիմիտացիա, է՛լ տարբեր թվերի քարտեզների վկայակոչում, է՛լ չգիտեմ ինչ...

Երկակի ստանդարտը վերածվել է եռակիի՝ մի բան մտածում, մի այլ բան ասում, մի ուրիշ բան անում, մի խոսքով՝ պիղատոսություն, ձեռնավա, մեղքը և պատասխանատվությունը ուրիշի վրա գցել: Ալիևը «անցակետ» օպերացիայից հետո երևի կսկսի «վերջակետ» գործողությունը, եթե աշխարհի հայերով միասնաբար չգործենք և՛ Հայաստանում, և՛ Արցախում, և՛ աշխարհի տարբեր երկրներում, ուր հայ է ապրում: Սա չի նշանակում հույսը պիտի դնենք միայն մեզ վրա: Դիվանագիտության բոլոր ձևերը հասու են մեզ, ռազմական ուժը զարգացնելուն ընդհանուր հայության ֆինանսական գործությունը ևս կարող է հասու լինել, եթե մեր միջև սև և կարմիր գծեր չենք դնում:

Նոր արտահայտությամբ ասենք՝ ցանցային մտածողության ժամանակն է:

Միմյանց սիրելով և հավատալով մենք կկանգնենք մեզ ատողների, խաբողների և գլուխներս կեղծաբարո շոյողների ու քմծիծաղողների դեմ:

Այդպես չէ՞, Պիղատոս:

Հ.Գ. – Մինչ Պիղատոսը կպատասխանի, Վաշինգտոնում չորս օր տևած հանդիպումներ տեղի ունեցան Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործոց նախարարների միջև: Նրանց հետ առանձին-առանձին հանդիպեց ԱՄՆ պետքարտուղար Էնտանի Բլինքենը, ապա միասնաբար քննարկեցին խնդիրները:

Էնտոնի Բլինքենն ասաց, որ կայուն և արդար խաղաղության պայմանագրի ճամփին կա լուրջ առաջընթաց: Իսկ Պրահայում ՀՀ վարչապետ Փաշինյանը պարզաբանեց այդ հանդիպումների արդյունքը ստույգ չափի միավորով՝ եթե մեր ճամփան 1000 մետր է, մենք անցել ենք մեկ մետր, 999 մետրը դեռ մնում է:

Ամերիկյան մոդոնով է չափում, մենք՝ մետրով:

Ռուսաստանի խաղաղապահ զորքերի նորանշանակ հրամանատար Լենցովն էլ հանդիպել է Բաքվի համապատասխան ներկայացուցիչների հետ, և ինչպես Արցախի Հանրապետության պետնախարար Գուրգեն Ներսիսյանն է տեղեկացնում՝ ոչ մի առաջընթաց Լաչինի միջանցքի ուղղությամբ:

Պարզ է, Բաքուն շարունակում է ճոճանակային դիվանագիտական քաղաքականությունը, ԱՄՆ-ում Հայաստանին ներկայացնում է որպես ռուսամետ, Ռուսաստանում՝ ամերիկամետ: Իսկ ինքը երկուսի հետ խաղ է անում, մեկի հետ՝ մտերիմ հարևան, գազինավթի և այլ գործարքների առևտրով, մյուսի հետ՝ աշխարհաքաղաքական հարթակ մե՛րթ Իրանի դեմ, մե՛րթ ռուսներին Կովկասից քշելու բացահայտ և թաքուն քամելիոն գործավար:

Բոլոր կողմերը սպասում են մայիսի 14-ի Թուրքիայի պրեզիդենտական ընտրություններին: Թուրքիան իր երկինքն է փակում Հայաստանի դեմ, Էրդողանը հայերին ճնշելու հաշվին փորձում է միավորներ շահել:

Ամեն օր փոխվում է տարածաշրջանային քաղաքական եղանակը:

Մի կողմից էլ Քրլչդարօղլուն էլ հայի թոռ հռչակվեց, էլի հայի անունը բացասաբար գույնով թուրքերին մատուցելու:

Նրանցից սպասել հիմա կամ հետո բարիդրացիություն, բարեկամություն, խաղաղություն՝ դժվար հավատալի է, քանզի նրանք մշտապես Ադրբեջանի հետ պայմանավորված նոր պահանջներ են առաջադրելու, ընդհուպ, երևի ցեղասպանության հուշարձանի կազմաքանդում: Վերոհիշյալ ձգող բառերը, պարզվում է, յուրաքանչյուրն իր նպատակների մակարդակով է ըմբռնում: Ամեն ինչ սպասելի է այս աշխարհաքաղաքական իրավիճակում. ռուսները կռվի մեջ, ԱՄՆ-ը մոտեցող պրեզիդենտական հոսանքներում, Իրան-Ադրբեջան դիվանագիտական ճանկոտոց: Վրաստանում էլ մերթընդմերթ ցույցեր, միտինգներ: Չինաստանում էլ իր եռանդուն քայլերով... Առաջիկա օրերին Մոսկվայում կհանդիպեն Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի ղեկավարները:

Վաշինգտոնից հետո Մոսկվան նորից կփորձի վճռական ցույց տալ, որ ինքն է կարգավորողը:

Տարբեր ուժային կենտրոնների շահերի խաչմերուկում հայտնվելը որքան գայթակղիչ է թվում, այդքան էլ վտանգներով է հղի: Մի բան պարզ է՝ այդ երկրներն ու կենտրոնները նախ իրենց շահին են հետամուտ, և ով առավել է նրանց օգտակար երևում, հակված են նրանց պաշտպանելու: Այսպես է եղել, այսպես է հիմա, և ցավոք, այդպես էլ կշարունակվի: Մենք արդյո՞ք ունենք, և եթե ունենք քաղաքագիտական տակտիկական և ստրատեգիական վերլուծական կենտրոններ, ապա նրանք պիտի համադրեն նաև սփյուռքի ու Արցախի նման միավորների կարևոր վերլուծական, նաև բաղդատեն մեր տարածաշրջանի և մեզնով հետաքրքրվող երկրների նման քննախոսականները: Եվ ապա որոշումներ կայացնեն այս օրերի, գալիք ամիսների ու տարիների ճշմարիտ ուղու վերաբերյալ: Հավատանք, որ մենք օբյեկտիվ, ոչ դրսից թելադրվող, ոչ հուզական, ճակատագրական ճշմարիտ ճանապարհը կընտրենք:

«ԳԹ», N15, 2023 թ.

ՔՈ ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻՆ

Օրեր առաջ Եղիշե Չարենցի տուն-թանգարանում նշեցինք մեծ բանաստեղծի «Երկիր Նաիրի» պոեմանման վեպի 100-ամյակը: Բանախոսներից ոմանք գրքի բովանդակած ժամանակը, գործողությունները, Կարսի անկումը զուգահեռեցին մեր ժամանակի, 44-օրյա պատերազմի, Շուշիի անկման հետ: Ով չի կարդացել, թող կարդա վեպը և ինքը իր խելքով չափի նմանությունը (թեպետ ասվում է՝ ամեն համեմատություն կաղում է), նաև իր մեջ գտնի երկիր Նաիրիի առեղծվածի բանալին՝ բուժվելու սրտի հիվանդությունից և մշտապես անհանգիստ ուղեղային մորմոքից:

Գանք մեր օրերը:

Կուսակցությունների մի մասը արևմուտքին է դիտում Հայաստանի և Արցախի բարեկամ ու հովանավոր, թե ի՞նչ հիմքերով, նրանց ծրագրերում փնտրեք ու համոզվեք, որ ռուսական ռազմավարական բարեկամությունն ու ռազմական բազան երկրից քշելուց հետո քաղաքակիրթ երկրների (Ֆրանսիա, ԱՄՆ) զինվորներն են հայտնվելու մեր սահմաններին: Հակառակ թևից էլ հարց է հնչում՝ նրանք ո՞ր էին 44-օրյա պատերազմի ժամանակ և հետո, բացի կոչերից ու հորդորներից՝ ոչինչ: Եվ այլն...

Արևմտականներն էլ սրանց են բշտում՝ ո՞ր էին ռուսները կռվի ժամանակ, որ ուզեին, կռիվ չէր լինի և այլն...

Չարմանում ես, որքան թեթև, աճապարաի հմտությամբ վեր ու վար են նետում աշխարհաքաղաքական խնդիրներն ու ծրագրերը, հաճախ առանց որևէ հիմքի,

ցանկությունների տիրույթում ձևավորված, և պատահական չէ, որ վեր ու վար նետած խնդիր-գնդակները ժողովրդի գլխին են ընկնում, ինչպես վերջին պատերազմում, ռումբերի տեսքով: Նախկին նախագահներ և որոշ վարչապետեր ինչքան էլ իրար դատափետեն, ռուսական ռազմավարական ընկերոջ հանդեպ միասնական են, հիմնվում են, թույլ տվեք ոչ քաղաքագիտական կատեգորիա հիշել՝ փորձած թանի և անփորձ մածունի առակը: Հումորով ասենք՝ կարող է այդ թանն էլ անփորձ մածունից են գլուխ բերել:

Սա էլ ընդունենք նրանց հակառակորդների կողմից պատասխան հարված: Այս ժխտում չէր խանգարի Բարի հումորը: Կա՞ այս միտքը կիսող թեկնածու կուսակցություն կամ դաշինք: Չկա՞: Ուրեմն մեր գրականությունն ու գրողներն են մեղավոր՝ քիչ են գրել կատակերգական ժանրի գործեր: Դժվար պահին ժպտալը ուժ է:

Ես չեմ ուզում հավատալ, որ դեպի ընտրություններն ընթացող մեր մասնատված, միմյանց հիշոցներով, սարսափներով, հալածանքներով, վրեժով սպառնացող քաղաքական ուժերն ու ընտրազանգվածը կարող են կանգնել մի նոր «մարտի 1-ի» առջև:

Ես հավատա՞մ, թե՞ չհավատամ, վտանգն արդեն շոշափելի է:

Ես չեմ ուզում հավատալ, որ այս թշնամական կեցվածքները (առավել քան թշնամու հանդեպ) սերմանվել է դրսի ուժեր կոչվածների կողմից, որոնց ցանկությունն է տրոհել, քառսի վերածել, ջլատել մեր երկիրը, և, բնականաբար, հարմար վիճակում իրագործել իրենց նպատակները: Չեմ հավատում, որ մեր ներսում ուժեր կան, որոնք ֆինանսավորվում, ուղղորդվում են դրսից, կասկածելի գործակալությունների նախագծերով:

Հավատա՞մ, թե՞ չհավատամ, այս վտանգը շոշափելի է, և երբեմն երևում են նրանց ականջները:

Հիմա եթե ես բոլոր քաղաքական ուժերին ու ընտրողներին դիմեմ աստվածաշնչյան հորդորով՝ սիրեցեք միմյանց, հավատացած եմ, ծիծաղելի վիճակում կհայտնվեմ, նույնիսկ՝ ոմանք վրեժով և ցասամբ կլցվեն նվաստիս հանդեպ, թե ժամանակ գտար հաշտարար քարոզի:

Հավատամ թե չհավատամ՝ մարդկանց մեծ մասը այլևս չի հավատում Բարի հեքիաթների, սիրո և երկնքից ընկնող խնձորների:

Սիրելի ժողովուրդ, դու քաղաքական գործիչներին սթափեցրու, քո դարավոր իմաստնությամբ ցույց տուր միասնական կամքով գտնելու ճշմարիտ ուղին, մի՛ վերածվիր անդեմ ընտրազանգվածի, որից ամեն ինչ կարելի է պատրաստել, որի գլխին ամեն ինչ կարելի է բերել:

Միբելի ժողովուրդ, վերջապես քո քաղաքական գործիչներին մղիր Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց, Շահնուր, Լեո Կամսար, Օտյան, Դեմիրճյան, Մահարի կարդալու: Գուցե խուսափեն նրանց կատակադրերգական հերոսների վարքն ու ճակատագիրը կրկնելուց, մեր մեծերի խորիմաստ մտքերը, պատմական և իրենց ժամանակի ճշմարիտ վերլուծությունները որևէ ճակատագրական անկման մեղքը նաև մեր մեջ փնտրելու կամքը ըմբռնելու, թրծելու և տեսանելու մեր պատմության հավերժական Գիրք ճանապարհին:

«ԳԹ», թիվ 24, 2023 թ.

ԱՆՆԿԱՏ, ԽԱԲՈՒՄԻԿ, ԲԱՑԱՀԱՅՏ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմներից առաջ, ընթացքում և հետո միակ պատերազմը, որ շարունակվում է լիարժեք, դա տեղեկատվականն է: Հատկապես ներկա ժամանակի տեղեկատվական տեխնոլոգիաների գործարկմամբ և ցանցային տիրույթների ընդլայնված դաշտի պարագայում, երբ հնարավոր բոլոր միջոցներով հսկա քարոզչական, ապատեղեկատվական, կեղծ ու սուտ հնարքներ բանեցնելով նախապատրաստում են իրենց հասարակությանը, նաև աշխարհի բաց ականջին են ուղղում իրենց ապագա պատիր անելիքների պատճառաբանությունն ու անխուսափելիությունը:

Օգտագործում են եղանակի տեսության հաղորդումները՝ Հայաստանը Արևմտյան Ադրբեջան անվանելով, գտնում են էլի էկոակտիվիստներ և պայքարում ՀՀ տարածքի հանքարդյունաբերության վտանգների դեմ: Պարզ է, ինչ նպատակով, մեր բյուջեին հարվածելու, և այլ կասկածելի, մութ գործողությունների դիմելու համար:

Իրենք կրակում են ՀՀ և ԱՀ սահմաններին ու երբեմն իրենք իրենց վրա կրակելով բեմադրում են լրատվական փուչիկ, թե հայերն էլի խանգարեցին իրենց անդորրը:

Միջազգային դատարանների որոշումներն արհամարհում են, բայց խոսում են նոյեմբերի 9-ի կետերը ոտնահարող Հայաստանի մասին: Բազմիցս միջազգային բարձր աստիճանները շեշտել են Բաքվից հայ գերիների վերադարձի, Լաչինի միջանցքի բացման և այլ անհրավ ու անմարդկային գործողությունների հետևանքով առաջացած խնդիրների մասին: Ադրբեջանի կողմից կամ քար լռություն, կամ հակընդդեմ շինծու պահանջներ՝ հայտնի ազերի սահմանախախտ մարդասպանների վերադարձ: Զանգեզուրի միջանցքի տրամադրում և ամեն օր մի նոր սադրանք և դրան համարժեք կեղծ լրատվություն: Նրանք լավ են սերտել առաջին լուրերի ազդեցության վերաբերյալ հին մեթոդը:

Բաքուն ազդեսիվ տեղեկատվությամբ ամենօրյա ճնշման է ենթարկում մեր ու աշխարհի ականջները, սրտերը, հոգիները: Մի տեղ հավատում են, մյուսում՝ կասկածում, հաջորդում՝ բազմացնում:

Օգտագործում են նաև որոշ այլ երկրների լրատվական ծառայությունների հնարավորությունները: Թուրքիան նրանց աջակցում է բոլոր ուժերով: Մի քանի օր առաջ Ալիևը կոշտ քննադատեց Ֆրանսիայի պրեզիդենտ Մակրոնին Հայաստանին աջակցելու և Ադրբեջանին նշավակելու համար: Ռուսաստանի ԱԳՆ-ի խոսնակն էլ վրադիր շշպոեց Մակրոնին ու Ֆրանսիային՝ քիթը այս տարածաշրջան խոթելու համար:

Բայց հարց եմ ուզում տալ և՛ Զախարովային, և՛ մեր համարժեք պաշտոնավարողներին՝ եղե՛լ է մի անգամ քարկոծեք Էրդողանին Ադրբեջանին անմնացորդ սատարելու համար,

44-օրյա պատերազմին մասնակցելու ակնհայտ սևագիր պատմության էջերի համար. այսօր էլ անվերջ երկու երկիր մի ազգ ու բանակ հայտարարելով ակնհայտ ուղղորդում են Բաքվի քայլերը Հայաստանի և Արցախի դեմ, երևի այսպես կողքանց շարունակելու Հայոց ցեղասպանության կիսատ թողած գործը:

Մենք միշտ հերքողի, պաշտպանվողի, նրանց սադրանքները ռուս խաղաղապահներին հաղորդելով սպասում ենք իրական գործողությունների:

ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Մարիա Զախարովային Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի կոշտ պատասխանից պարզորոշ հաստատվում է մեր եզրակացությունը՝ Բաքուն առաջնորդվում է իր երկրի շահերով և այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների կարծիքներն ու կոչերը դիտարկվում է այդ դիտանկյունից: Ահա այսպես՝ ուզենք գարին խաշած կցանենք: Թող այդ երկրներն ու կազմակերպությունները նայեն իրար ու իրենց սարքած ճաշը ուտեն, իրենց սարքած խաղերից մի ուրիշ խաղ մոզոնեն ի հաշիվ միջազգային արդարադատությանը սրբորեն հավատացողների:

Այո, նրանց համար շահերն ավելի առաջնային են, քան դեմոկրատիան, մարդու և ժողովուրդների ինքնորոշման իրավունքները: Մա բացահայտ է և անպատիժ:

Միջազգային կառույցների հանդեպ մեր հավատը մեծ է, երբեմն երևի ամաչում ենք պահանջել իրականացնեն իրենց վճիռները:

Ամերիկահայ բժիշկները Երևանում մի մասնագիտական ժողովի մասնակցելով, միացյալ կոչ են հղել Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանին, որ նա հաղորդի Ադրբեջանի սպառնալիքների դեմ իրենց բողոքը ԱՄՆ իշխանությանը: Կարելի էր դա անել նաև ԱՄՆ-ում բոլոր հայկական կազմակերպությունների կողմից: Այդ սպառնալիքները լսում

են և՛ Անգլիայում, և՛ ԱՄՆ-ում, և՛ Ռուսաստանում, և՛ աշխարհի բոլոր անկյուններում, բայց լուր են, ինչպես որոշ երկրներում ապրող ու նաև բազմաքանակ հայերը: Չգիտեմ, նրանք հնարավորություն ունե՞ն տարածելու Բաքվի հակահումանիստական արարքների ու սպառնալիքների մասին, բայց կարծում եմ, քիչ չեն նման հնարավորությունները: Ադրբեջանցիք կազմակերպում են տեղեկատվական ստահող, հակահայ հոսքեր աշխարհի բազում ԶԼՄ-ներով, կայքերով, և այլն, և այլն: Մեզանում ասվում է, թե նրանք կաշառում են, առնում են լրագրողների, փորձագետների, պատգամավորների...

Այդ մասին հայտնի է ամենուրեք և ի՞նչ: Դատապարտու՞մ են նրանց, մեզ իրենց գլխի՞ն են դնում:

Շատ չերկարացնեմ. երբ 90-ականների կեսերին ՀՀ-ում Տեղեկատվության և գրահրատարակչության նախարարություն հիմնվեց, այդ մարմնի ղեկավարության հետ հանդիպեց ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան տիկին Հարթինգը և երբ լսեց, որ Հայաստանում բոլոր հրատարակչություններն ու տպարանները մասնավորեցվել են, հարցրեց, թե որևէ պետական չի՞ պահպանվել: Լսելով պատասխանը՝ ոչ, ասաց, որ Ֆրանսիայում պետական կարիքների համար կա պետական գործառնություններ իրականացնող տպարան ու հրատարակչական մարմին: Իհարկե, մենք զարմացանք: Մեկ տարի անց վերացավ մեր նախարարությունն ու իր «Տեղեկատվական» անունը և մինչ այժմ Հայաստանում որևէ մարմին կա՞, թե՞ չկա այդ կարևոր բնագավառի խնդիրները համակարգող: Չգիտեմ: «Արմենպրես»-ի այսօրվա գոյության համար ժամանակին նվաստս պայքարել է, մի քայլ էր մնացել դա էլ մասնավորին հանձնելու:

90-ականների սկզբներին տեղեկատվությունը շփոթում էին սովետական քարոզչամեքենայի հետ և համարում հնի մնացուկ:

2016 թվականին մի ժպտերես հաղորդավար նշանակվելով ՀՀ մշակույթի նախարար, ջնջեց նախ «գրահրատարակչություն» ավելորդությունը՝ զրկելով դասական և ժամանակակից գրողներին տպագրվելուց, տարատեսակ երկլեզու և եռլեզու ալբոմների հրատարակումից: Գեղարվեստականի ճանապարհով փակվեց նաև մեր պատմության, արվեստի ու գրականության տեղեկատվությունը միջազգային ցուցահանդեսներում, դեսպանատներում... Ահա այսպիսի պայքարի ճանապարհ տեղեկատվական դաշտում:

Այս ասպարեզում անհրաժեշտ է պետական քաղաքականության շտապ և հստակ քայլեր: Տեղեկատվական պատերազմը երբեմն ավելի վտանգավոր է, նա մշտական է ու նենգ, թաքուն ու բացահայտ, մի խոսքով պիտի արագորեն հարմարվենք հիֆրիդային կոչված համաշխարհային պատերազմին ու գործենք բոլորով, ամեն մեկն իր տեղում:

ԽՈՍՔԻ ԿՇԻՈՐ

Մի քանի օր առաջ ԵՖՄՎ-ն հրապարակեց իր բանաձևը, որն Ադրբեջանին ուղղորդում էր ապահովելու Լաչինի միջանցքի ազատ և անվտանգ երկկողմանի երթևեկը: Սա հիմնականն էր:

Եվ ահա այդ քննարկմանը զուգահեռ ու հետո ադրբեջանցի զինուժը բետոնե պատնեշներ է դնում Լաչինի միջանցքի մուտքի դեմ:

Սա նշանակում է՝ առը քեզ ԵՖՄՎ և, հընթացս, Ռուսաստանի խաղաղապահներ:

Լեռնային Ղարաբաղը լրիվ կտրվել է աշխարհից: Խաղաղապահներն էլ իրենց հացը պիտի փնտրեն խնդրելով ադրբեջանցիներին:

Միջազգային կարմիր խաչն էլ ամոթից ավելի է կարմրել, քանի շաբաթ չի կարողանում մուտք գործել միջանցք: Բաքվում հանդիպել են ղեկավարությանը: Տեսնենք՝ ինչ հետևանք կունենա: Վերջապես միջազգային բարձր կառույցները՝ ՄԱԿ, ԵՄ, ԵՖՄՎ, Խաղաղապահ ռուսական ուժեր ու նոյեմբերի 9-ի հուշագրի կողմերից երկուսը կըմբռնեն, որ Ալիևը թքած ունի բանաձևերի, կոչերի, հորդորների վրա, նրանք, ինչպես հայտարարում է՝ ուժն է, ուժի միջոցով իր իրավունքները պարտադրելը: Ուժ ասելով հասկանանք Թուրքիա, Պակիստան, Իսրայել, Անգլիա, ԱՄՆ, Ռուսաստան, Ուկրաինա և այլն, որպես թիկունք ու գործակից, իբրև նրանց միջև խաղարկելու դիվանագիտական, տնտեսական, բանկային, զինական առևտրի լայն հնարավորությունների դաշտ:

Նա սիրով դառնում է զենք տարբեր ծրագրերի համար, ի թիվս այլոց՝ հակաիրանական, հակահայկական, որոշակի հակառուսական և վերջում, երևի պարզվի՝ հակաչինական: Գրողիս երևակայությունը ուր ասես կտանի:

Մեր հեռու և մոտ բարեկամները, առավելապես արդարասերները, բավարարվում են դատավճիռներով, բանաձևերով, կոչերով, հորդորներով, ինչպես ասվեց՝ Ալիևը թքած ունի դրանց վրա: Նա, հատկապես վերջերս բառերը հակառակ իմաստով է հասկանում՝ խաղաղությունը՝ պատերազմ, ազատ և անվտանգը՝ արգելանք և սպառնալիք: Լեռնային Ղարաբաղի հետ երկխոսությունը՝ բանտերով վախեցնելը, գազից և էներգիայից զրկելը: Վերջերս էլ հայտարարեց, թե տարածաշրջանում հասունանում է լարվածության վտանգ և դա՝ Հայաստանի կողմից: Սա էլ նա հասկանում է և հայտարարում՝ զինվել և պատրաստվել ուժի դիրքերից լուծել իր նպատակները, այսինքն՝ հարձակվել

Հայաստանի վրա, մանավանդ հայտարարեց, որ իրենք Հայաստանում գրավել են բարձր ստրատեգիական դիրքեր:

Համոզված եմ՝ ՀԱՊԿ-ը սա կընդունի ի գիտություն: Մարիա Զախարովան էլ Ռուսաստանի ԱԳՆ-ից կհայտարարի՝ դեղիմիտացիա չկա, սահման չկա... ԱՄՆ-ի սենատորներն էլ պահանջում են չեղարկել Ադրբեջանին օժանդակելու 907 բանաձևը:

Չեմ կարծում, որ նրանք միամիտ են, ոչ մի պատժամիջոց չի հետևի: Ադրբեջանը լավ գենք է ունանց պետական բարձր, հեռագնա ծրագրերում: Այս մասին ոչ միայն նվաստս է ասում:

Մենք ինչպես ենք հասկանում բառերը: Խաղաղություն ասելով հասկանում ենք իսկական խաղաղություն, բարեկամ ասելով հասկանում ենք՝ եղբայրություն և երբ հիասթափվում ենք, փնտրում ենք նոր բարեկամներ, որոնք կխոստանան եղբայրություն:

Արցախի Հանրապետության և Ադրբեջանի երկխոսություն ասելով հասկանում ենք որևէ երաշխավորի ներկայությամբ, սակայն դեռ չկա այդ երաշխավորը և հարց է՝ կլինի՞, ախր Ալիևը սահմանը փակել է բոլոր նման փորձագետների, բոլոր ներկայացուցիչների և այլ իրավագետների, մարդասերների ու բնասերների առջև: Էլի ասենք՝ թքած ունի:

Իսկ դեղիմիտացիան և դեմարկացիան իրագործելու ճամփան առանց երաշխավորների և միջազգային հանձնախմբի՝ անվերջ պատերազմների բույն է: Ալիևի մտքում սա հրաշալի ինքնահաստատման հնարավորություն է: Համաշխարհային քաղաքական մարմինը քիչ-քիչ պինդ վիճակից վերածվում է հեղուկի: Մրանից ջրհեղեղ կսարքվի՞, թե՞ չէ: Աշխարհի որոշ գլխավոր դեմքեր կարծես չեն ընկալում իրենց քայլերի ճակատագրական հետևանքները:

Փոքրիկ բռնակալներն էլ, ինչպես Ալիևը, իրենց թուրն են ճաճում, իրենց երևակայելով Չինգիզ Խան կամ Լենկ Թեմուր: Ահա թե ինչ փորձանքներ են բերում բառերի կամայական, հակառակ ընկալումները: Եթե մեր ղեկավարները սա հաշվի չառնեն, դեռ շատ փորձությունների առջև կկանգնեն և իրենք, և մենք: Յուրաքանչյուր բառի արժեքը շատ ծանրակշիռ է այժմ աշխարհում, մեր տարածաշրջանում և Հայաստանում: Ալիևին դրական է թվացել իրենց երկրի տարածքի չափի մասին ՀՀ վարչապետի խոսքը, բայց նա մեր երկրի տարածքի մասին չի արտահայտվել: Գրաված հողերն ու դիրքերը ո՞նց հետ կտա: Սահման ասելով նա հասկանում է առաձգական, իրենցը՝ մեծացող, մերը՝ հակառակը:

Եվրոպական մեծավոր Շառլ Միշելի հետ հանդիպումներից հետո մեր ղեկավարները ազնվորեն խոստանում են կատարել պայմանավորվածությունները, իսկ ադրբեջանցին հրամայում է կրակել Հայաստանի և Արցախի սահմանների վրա, և չենք լսում պարոն Միշելի գոնե վիրավորված տոնով խնդրանք-հորդորը Ալիևին: Իսկ մի այլ մեծավոր՝

Ժողկայ Բորելը, այնքան է անկեղծ, որ խոստովանում է՝ ոչ մի պատժամիջոց չեն կարող իրագործել Ադրբեջանի նկատմամբ:

Ախր նա պատժամիջոցների հաշվեկշիռը քանում է և նետում Ռուսաստանի վրա: Նա էլ «պատժամիջոց» բառը հասկանում է երկակի ստանդարտների շրջանակում: Հո սուտ չի՞ խոսի: Թեպետ ստախոսությունը տարածվում է աղետալի արագությամբ:

Մենք՝ գրողներս, բառի արտաքին, ենթատեքստային, բազմիմաստության շերտեր ընկալողներից ենք և զգում ենք ժամանակն է ներհայկական քաղաքական խոսույթի համադրում, վերլուծություն, իշխանական լեզվամտածողության հստակ ձևակերպումներ, որ չենթարկվեն մեր դեմ հնարավոր խոստում - թակարդների: Ընդհանուր հայության խոսքն՝ ընդդեմ ծառացող ալիկյան խելահեղ նպատակների, մի ամերիկացի փորձագետ նրան համեմատել էր Սադամ Հուսեյնի հետ: ԵԽԽՎ-ում էլ նշվեց, որ նա ոչ համահունչ է եվրոպական աշխարհընկալմանը: Առայժմ՝ անարդյունք, անպատիժ: Դիվանագիտորեն որպես խաղ բետոնե պատնեշները հանեցին միայն հիվանդների համար, իսկ առողջների՞:

Մենք բոլորս՝ ՀՀ, Սփյուռք, Արցախ, պիտի ասենք մեր խոսքը հզոր պետություններին, նրանց դերն ու երկերեսանի խաղերը ծեփելով անտարբեր երեսներին, իշխանավորները դիվանագիտության կոշտ ու փափուկ ոճերով ու համառությամբ հարկ է մշտապես լոկ չպաշտպանվեն, ադրբեջանական սադրանքներին պատասխանելով նվազ տոնայնությամբ, այլ մեկ անգամ բարձրաձայն ասվի՝ ստի, ոճիրի, բռնակալության երկիրը չի կարող լինել երկխոսող, չի լինի մարդասեր ու իրավունքների պաշտպան, նա եթե ձեռք է տալիս հզոր մի քանի երկրի, թող այդ երկրների տերերը ալիկյան թուրք համարեն անձրև:

Թող ներեն գրողիս ոչ դիվանագիտական խոսույթը:

Հիմա էլ ԱՄՆ-ի կոնգրեսում քննարկվում է մարդու իրավունքների վիճակը Լեռնային Ղարաբաղում: Վաշինգտոնում սպասվում է Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումը: Սպասենք արդյունքների, այլապես այսպիսի հանդիպումները մինչ այժմ հաց ու ջուր չեն տվել արցախցիներին: Հավատանք «հավատ» բառի իրական ուժին:

Հ.Գ. Երեկ ԱՄՆ-ում պետքարտուղար Բլինքենը հանդիպել է Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարներին և որպես այդ հանդիպման արժանի պատասխան Բաքուն ԱԹՄ-ներով ուժեղացրել է Արցախի դիրքերը՝ չորս գոհ հայ դիրքապահներից:

Ահա ալիկյան բանակցային մեթոդը և նորից հայտնի արտահայտության «Մեր պատասխանը Չեմբեռլենին» ձևափոխումը՝ «Մեր պատասխանը Բլինքենին»

արհամարհական քամահրանքով: Ահա այսպիսի քաղաքակիրթ երկխոսություն ԱԹՄ-ներով:

«ԳԹ», թիվ 22, 2023 թ.

ՔԱՅԼԻ ԱՐԺԵՔԸ

Շախմատն ամեն մարդու, ամեն համայնքի ու կազմակերպության ու նաև պետություններին լուր հուշում է՝ ամեն քայլից առաջ մտածել ախոյանի հնարավոր պատասխան քայլերի մասին: Այս խաղում քայլ ետ տալ չկա, ձեռք ես տվել՝ խաղա: Բարդ իրավիճակներում տարբերակները, բնականաբար, բազմաթիվ են և արագ քայլեր անելը հղի վտանգներով, պարտության համար միակ մեղավորը դու ես: Շախմատիստը մի քայլ անելու համար, եթե բից կամ արագ շախմատ չէ, կարող է մտածել իր ժամանակի շրջանակում երկար, իհարկե, հանգուցային քայլերի մասին է խոսքը: Այդ խաղում կան դիրքեր, երբ յուրաքանչյուր քայլն էլ կարող է ճակատագրական լինել: Հաղթում է նա, ով ավելի ճիշտ է կողմնորոշվում, ով ավելի խոր ու տարբերակային է հաշվարկում:

Շախմատիստը չի փորձի խռովկան երեխայի նմանվել, ոչ էլ առաջին անգամ շքեղ ունիվերսալ մտած մանկան՝ աչքերը հիացմունքից, զարմանքից ու ոգեշնչումից չռած: Նա համբերատար է և չի ձգտում ամեն ինչ միանգամից ձեռք բերել: Դիմացինին նա չի թերագնահատում, ուսումնասիրում է նրա հոգեբանությունը: Ահա թե ինչու են շախմատը համարում իմաստուն խաղ, ահա թե ինչու է նա՝ սպորտ, նա՝ գիտություն, նա՝ արվեստ անվանվում: Ի՞նչ եմ ուզում ասել. այսօր աշխարհը նման է բարդ, խառնակ շախմատային իրավիճակի: Տեսնում ենք պետությունների արևմտյան խմբավորում, արևելյան խմբավորման փորձ: Տնտեսական միավորները ձգտում են ռազմաքաղաքականի վերածվել: Տարբեր տարածաշրջաններում պայթած պատերազմները ստիպում են անգամ հզորներին՝ ուրիշների ձեռքով իրենց նպատակներին հասնել: Հալ ու մաշ անել իրենց հակառակորդներին ու մրցակիցներին՝ Ամերիկյան Չինաստանին ու Ռուսաստանին, Թուրքիան էլ միարժվում է շրջակա երկրների կոփվելում ու պահանջում վերակերտել Օսմանյան կայսրության իր ակնհայտ երազանք-մարմաջը, հաճախ չենթարկվելով ո՛չ ՆԱՏՕ-ի, ո՛չ Ռուսաստանի և ոչ այլ ուժերի թելադրանքին: Փոքր եղբայրներին մղում է արևելք, տարբեր տնտեսառազմաքաղաքական կառույցներում ներգրավելով՝ որոշիչ ձայներ է ամրապնդում և պարզորոշ խորամանկությամբ ու նենգությամբ իր խաղն է տանում արևմուտքից արևելք և ոչ մի հզոր, անգամ Ամերիկյան, սաստելով չի գործում ետ պահել նրան և ոչ էլ տնտեսական պատժամիջոցներ է գործադրում, ինչպես այլ երկրների

հանդեպ: 44-օրյա պատերազմի ժամանակ և հետո ոչ մի թթու խոսք չասվեց նրան: ՄԱԿ, ԵԽԽՎ, ՆԱՏՕ, ՀԱՊԿ և այլն, կարծես չքմեղ հարսի քող են քաշել իրենց երեսին:

Ադրբեջանն էլ ավագ եղբոր հրահանգներով մերթ քաղաքացի, մերթ նենգ ժպիտով ահաբեկում է հյուսիս, հարավ, արևմուտք, իհարկե չի մոռանում բարբաջել խաղաղ համակեցությունից: Աշխարհի լռության համար նա նավթ և գազ է վաճառում:

Աշխարհը մի մանրածախ առևտրի շուկա է դարձել (ձեռի հետ էլ նմանակելով հիբրիդային մեթոդներին), նաև՝ բարդակ:

Խոսքս աշխարհին ուղղելուց առաջ, առավելապես ինձ ու մերոնց եմ հասցեագրում՝ այս պղտոր, խարդավանքներով լի իրավիճակում խոսելուց առաջ, որոշումներ կայացնելուց առաջ չխորշել վերածվել ձեռքը ճակատին դրած գրոսմայստերի և ամեն ինչ անել սահմանային կռիվները մեր մեջ չտեղափոխելու համար: Ժողովրդի անունից քիչ խոսենք, քանզի մեր հայրենակիցները պարտավոր չեն լինել խորագետ քաղաքագետ, դիվանագետ, թեպետ բոլորը սիրում են շախմատ խաղալ, բայց երբեմն քայլը ետ վերցնելու պայմանով: Հիշենք՝ երամն իր միասնությամբ, անվերջ շարքում յուրաքանչյուրի ճշգրիտ հերթագայությամբ ավելի ուղղակի է գտնում չվելու վայրը:

Ի տարբերություն հավքերի, մենք չենք պատրաստվում չվել, լինենք երամ մեր Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և Սփյուռքում: Յուրաքանչյուրն իր դերը գտնի խաղատախտակի առջև՝ մտածելով և գործելով առանց մանկական հուզումների և կտրուկ, չհաշվարկված քայլերի:

Շատ լավ էր, որ հայամետ Նենսի Փելսսին եկավ ու մեզ սատարման ու Ադրբեջանին տեղը դնելու խոսքեր ասաց, սակայն ԱՄՆ-ում 907 բանաձև կա, որով բազմամիլիոն օժանդակություն է տրվում հայ կին քառատող, Իգիլից սովորած մեթոդներով գործող բարբարոս մեր սահմանակցին, տեսնենք դա կչեղարկվի՞, տեսնենք հեռու բարեկամն է լա՞վ, թե՞ մոտիկ դաշնակից հարևանը: Որքա՞ն կարելի է մեր պատմության մեջ երկու կողմերի միջև միշտ կողմնորոշումներ փնտրենք, ու մեկ ձախ, մեկ աջ, անվերջ հողեր կորցնելով, և կռիվը մեր մեջ բերենք: Մի քիչ դիվանագիտություն սովորենք մեր հին ու նոր թշնամիներից:

Մեջբերեմ Աննա Ախմատովայի սթափեցնող բանաստեղծության մի քառատող, գրված 1942 թվականին, ինձ թվում է մեզ է ուղղված, ասենք ամեն մեծ գրվածք բոլորին է անհրաժեշտ հաց ու ջրի պես.

Հայացքս հառել եմ հեռու հորիզոնին,

Ուր խենթ խոլապար են քամիներն սկսել...

Օ՛, երեք ճակատ կա մեր միջև, ընկե՛ր իմ.

Մեր և ոսոխի ու... էլի՛ մի անգամ մե՛ր:

(Թարգմ.՝ Լևոն Բլբուլյանի)

ՀԻՇԵՆՔ, ՊԱՀԱՆՁԵՆՔ ԵՎ ԱՐԱՐԵՆՔ

Վահան Տերյանը «Մեր պարտքը» վերնագրով մի հոդված է գրել, որը հրատարակվել է «Մշակ» պարբերականում 1914 թվականին: Ես ուզում եմ մեջբերել մի տող այդ հոդվածից. «Ըմբռնենք, զգանք այսօրվա ահավոր ու արյունոտ անցքերի ճակատագրական նշանակությունը»:

Հարյուր տարի առաջ սկսվել է մարդկության պատմության հերթական մի պատերազմ, որն իր ընդգրկմամբ, ծավալներով, ժողովուրդների ու երկրների, կայսրությունների մասնակցությամբ և, բնականաբար, զոհվածների քանակությամբ չի ունեցել իր նախադեպը, այդ իսկ պատճառով թվագրվել է Առաջին համաշխարհային պատերազմ: Այժմ վերոնշյալ պատերազմը դասի է վերածվել պատմության մասին դասագրքերում, հանգիստ ապրում է շատ երկրների ու մարդկանց հիշողության մեջ, անգամ ստվերվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ահեղ մսաղացի ետևում, սակայն մի ժողովուրդ կա, որի համար դառն ու սարսափելի և շարունակական ներկայություն է պարտադրել այդ Առաջինը, որի ընթացքում, 1915 թվականին, տարբեր երկրների շահերի ու խարդավանքների թատերաբեմում ողբերգության արարի վերածվեց Օսմանյան Թուրքիայի հազարավոր տարիներ հայաբնակ, Արևմտյան Հայաստանը: Թուրքական յաթաղանի ու հրացանագարկերի տարափից տեղահանվեցին և ապա կոտորվեցին 1.5 միլիոն հայեր: Կոստանդնուպոլսում առաջինը ձերբակալվեցին և ապա սպանվեցին բազմաթիվ տաղանդավոր ու ճանաչված հայ գրողներ: Այժմ աշխարհի շատ երկրներ ճանաչել են մարդկության պատմության մեջ առաջին գենոցիդը:

Մեզ համար ցավալիորեն կենդանի են առաջին համաշխարհայինի հետևանքները: Մեր սպանված գրողների համար տապանաքար և սուրբ հիշատակ են նրանց գրքերը, որոնք տպագրվում են աշխարհի շատ լեզուներով:

Արևելքի և արևմուտքի, հարավի և հյուսիսի խաչմերուկում, մեզ թվում է, թե մենք՝ հայերս ենք կանգնած, չորս կողմը թևերը պարզած խաչի նման, մենք՝ պետականորեն առաջինը՝ քրիստոնեություն ընդունած Հայաստան երկրի մարդիկ:

100 տարի է անցել, մի՞թե նույն տագնապով չենք կրկնի Տերյանի կոչը: Ասում են՝ պատմությունը կրկնվելու սովորություն ունի և այժմ Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, Անդրկովկասում և այլուր սողում է մի այլ պատերազմ, որը չի թվագրվում, բայց առ այսօր անտարբերությունը աշխարհի փոքր ու մեծ ժողովուրդների

ճակատագրերի հանդեպ նույնն է, նույնն է ուժեղի արհամարհանքը թույլի հանդեպ, նույնն է դիվանագիտական ու քաղաքական թղթախաղի ու նավթախաղի դաժան հաշվարկների տակ գալարվող վիրավորի ու մեռնողի անգործությունը:

Ասվում է, թե կառավարելի քառս են ցանում, բայց ո՞վ կարող է երաշխավորել, որ այդ քառսը կատաղած շան պես դուրս չի գա կարգի սահմաններից կամ այդ ո՞ր ժամանակ էր, որ մարդը քառսից կարգ է սահմանել, ընդօրինակելով Աստծուն, սովորաբար մարդը երեխայի պես սիրում է կազմաքանդել ձեռքն ընկած որևէ մեխանիզմ: Երբեմն վերոհիշյալ մարդու նման են գործել ու գործում ինքնավստահ, աշխարհի ապագան որոշելու կամքով տոգորված կայսրություններ ու իշխանություններ, պետություններ ու թագավորություններ: Այդպես կրկնվում է պատմության անատոմիայի դասը:

100 տարի հետո շոշափելի աշխարհում ցունամիներին թևակից բարձր ու վեհ արժեքային համակարգերն են կործանում նախնադարյան մարդակերությունն ու միջնադարյան ինկվիզիցիան, կրոնական ֆանատիզմն ու բռնակալական ոճիրները, անհատական ու խմբակային ահաբեկչություններն ու գովազդվող ագրեսիվ փողասիրությունը, մարդու իրավունքների շղարշը հագած անբնական սեքսուալատոլոգիան և այս բոլորին գումարած խեղճ, անկյուն քշված մարդու արցունքները:

Խեղճացել են միջազգային կառույցների գործնական լծակները կամ դրանք աշխատում են միայն ուղղորդված ու շահաղիտական: Բոլոր աստվածներն ու մարգարեները նայում են իրար ակնհայտ տարակուսանքով:

Այդպես նայում են նաև երկրի վրա ապրող և վաղուց դասականացած գրողները:

Երկու հարթություն՝ կրկնության սովորությամբ շարժվող ժամանակ ու պատմություն և սպիտակ թղթի խորությունը հաղթահարող ինքնատիպ, երբեք չկրկնվող նորաշունչ գրականության ժամանակ ու գրականություն՝ ապագայից ներշնչված:

Յավոք, այս երկու հարթությունները հազվադեպ են խաչաձևվում: Գրականության ներգործությունը զիջում է ժամանակի ազդեցությանը, գրողի դերը գնալով փոքրանում է քաղաքականություն կազմակերպող ու խաղացող տեսակների թատրոնում:

Սա գրողին զսպանակված ուժ է հաղորդում, պայքարելու ճշմարտության, ազատության, բարության, մարդկայնության փակ շուկայում:

Գրողը պատմության պես կրկնելու սովորություն ունի միայն սերը և խիղճը գրով հավերժին հանձնելու կերպով ու միամիտ հավատով:

Ինչո՞ւ միամիտ, գիրն ավելի երկար չի՞ ապրում, քան անցած կայսրություններն ու արդեն ոչնչացած երեկվա բռնակալները, ահաբեկիչները, ինքնահռչակ մարգարեները, մեծատուններն ու գիրք այրողները:

Մեր մեծ Նարեկացու մահից 1000 տարի հետո Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ մատուցված սրբազան պատարագին Հռոմի Ֆրանցիսկոս Պապը Սուրբ Գրիգոր Նարեկացուն հռչակեց Տիեզերական եկեղեցու վարդապետ, էլ ինչպե՞ս չհավատաս գրի հավերժությանը, մեր ժողովրդի անթաղ զոհերի հայությանն ու հայ ոգու անվերջ արարող կամքին:

Հիշենք, պահանջենք և արարենք:

ԲԱՆԳԼԱԴԵՇԻ ԿԻՆ ՈՒ ՏԱՂԱՎԱՐԻ ՆԱՐԴԻՍ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԻ ՕՐԵՐԸ

1.

Մի հայ կին կա, որի զավակներն ու բարեկամներն ապրում են Ռուսաստանում, Ֆրանսիայում, Բելգիայում, Բուլղարիայում և այլ երկրներում, իհարկե գլխավորը՝ Հայաստանում: Նա ամեն առավոտ աշխարհին խաղաղություն է ցանկանում և խղճում այն երկրներին, ուր պատերազմ է հիմա:

Նա լավ չի պատկերացնում, թե ինչ են ուզում ԱՄՆ-ն ու Ռուսաստանը, Ուկրաինան ու Գերմանիան և ԵԱՀԿ Մինսկի խումբը, որն ահա կիսվել է երկու հակադիր մասերի և Ռուսաստան-Ուկրաինա պատերազմ է թևածում Ուկրաինայում, և մասամբ Ռուսաստանի սահմաններից ներս, Ադրբեջանի կողմից դիրքային խորացումներ են Հայաստանի սահմանների վրա, օդում կախված է Չինաստանի՝ Թայվանի նկատմամբ բնական, հայրենական մղումը, դրան՝ զսպող ԱՄՆ-ի սպառնալիքները, Տաջիկստան-Կիրգիզիա, Սիրիա, Իրաք, Իրան և այլ գոտիներում մեծ խմորումներ, որոնցից ուտելու հաց չի թխվի, այլ մի սև եռանկյունի նամակ:

Առաջ պատրաստվում էին հարավ-հյուսիս պայքարի, հիմա արևելք-արևմուտքի փոխվեց, վաղը գուցե երկիր-երկնքի և ատոմային քառսի:

Իսկ այն հայ կինն ուղղակի խղճում է բոլորին ու չի հասկանում՝ ախր էդ Մինսկի խմբի Ֆրանսիան, Ռուսաստանը, Ամերիկան պիտի Արցախի հարցով զբաղվեին, զբաղվել են 25 տարի ու հիմա, ինչո՞ւ իրար դեմ ելան, այսինքն՝ Ֆրանսիան ու ԱՄՆ-ը՝ Ռուսաստանի, ու ոնց որ մոռացան Արցախը, կամ էլ արանքում, միմյանց ճնշելու համար սա էլ են օգտագործում, ինչպես Ուկրաինային են մեջտեղ գցել:

Իր մի տղան Ֆրանսիայում է, մտածում է ձմեռը կմրսեն առանց գազի, մյուսն էլ կմրսի Բելգիայում:

– Վայ Աստված,– հառաչում է կինը,– Հայաստանին ու Արցախին հեռու պահի էդ պահապաններից: Մյուս երկրներին էլ վառելիք տար:

Նա չի հասկանում, որ ախր այդ երկրները շահեր ունեն, գազ ու մագի ճգնաժամ կա Եվրոպայում և առաջին հերթին դրա մասին պիտի մտածեն, հետո՝ Արցախի, իսկ Հայաստանը ծախելու քիչ բան ունի, քիչ զենք, բայց նրանցից զենք գնելու համար միլիարդներ չունի, իսկ ահա Ադրբեյջանը էլ գազ, էլ միլիարդ, Ալիևն էլ իր մեծ փողերը երևի պահում է էդ երկրների բանկերում: Մի խոսքով, մեր հայ կինը չի հասկանում, թե էս՝ մեր տելեներով քաղաքական գործիչներն ու բազմաթիվ փորձագետներն ու գրագետները ինչ համոզված ու վստահ բաժանվել են երկու և կողքից էլ մի քանի մանր հատվածների ու քարկոծում են միմյանց, թե որ ուղին է ճիշտ՝ արևելք, արևմուտք, Ռուսաստան, Իրան, Լեհաստան...

Հայ կինը տխրել է, որ իրենց Բանգլադեշի իննհարկանի շենքի բնակիչներն էլ, չգիտես ո՞նց, բաժանվել են տարբեր կողմերի, տղամարդիկ քիչ է մնում նարդի խաղալիս բակի տաղավարում իրար ծեծեն: Կանայք էլ՝ մագեր պոկեն: Մեկը գոռում է, որ էն չգիտեմ ինչյանը 100 տոկոսով համոզված ասաց՝ գերմանացիք, այսինքն՝ Եվրոպան, գալու է գորքով քշի թուրքերին... Նրան տեղում, բլոթի լեզվով ասած՝ չախում է իրեն գիտուն համարած ավտոմեխանիկ Վաղոն՝ արա, ի՞նչ Եվրոպա, հրեն Իրանը գորքը բերել է սահման ու մեզ է պաշտպանելու...

Իսկ ահա մսագործ Արմոն իր հանգստությամբ վեճը փորձում է հարթել՝ ինչ ուզում էք ասեք, բայց Ռուսաստանն է ըստեղի գոն նայողը, ոչ մեկը թող չթպրտա, Ավարայրը հիշեք...

Մեկն էլ, թե՛ ամեն տեղ էլ հայ կա, իրար դեմ են կռվելու:

Նարդու պարտվածը ոտքի է կանգնում ու՝ բա թո՛ւրքը, նա մարաղ մտած սպասում է Ամերիկայի հրամանին, բայց...

Իսկ նարդու հաղթողը վճռական ասում է՝ հա, Ալիևը թքած ունի Եվրոպայի ու Ամերիկայի վրա, եկեք մեր խաղը, իքի բիրը խաղանք, փորձանք են էդ փորձագետները, ամեն մեկը մի կողմից սնվում է ու փչում նրանց նվազը, չե՞ք կարդում ով որ երկրից է ցուցակով ստանում...

Այստեղ բոլորը համաձայնվում են՝ ծախված են բոլորը, տո էն հրեշտակ հայրենասերն էլ պարզվեց թուրքի լրտես ա:

Հայ կինը չի հասկանում, թե ով է հրեշտակ, ով սատանա, բոլորին խղճում է, անգամ Բայդենին, Պուտինին, մեր ընդդիմադիրներին, իշխանավորներին, ժեկի կառավարիչին ու մրմնջում.

– Միայն թե խաղաղություն լինի ամբողջ աշխարհում, ու էս մեր իրար հայիոյողները իրար գլուխ գան էս մեր տաղավարի խաղացողների պես ու մի բաժակ գինով իրար կենաց խմեն, թե չէ...

2

Այս խառը, այս դառը աշխարհում, երբ հաճախ հզոր ու միջին երկրների ղեկավարներն էլ պարզորոշ չեն տեսնում, թե ինչ է լինելու վաղը, ինչ ընթացքով են զարգանալու տեղ-տեղ փոթորկող պատերազմները, մոտալուտ վտանգներից երկնչող հասարակարգերը, համակարգերը, թե ատոմային 1332 ռումբերը ինչ են փսփսում իրար ականջի ու Թրամփին ոնց են հուշել, որ Ռուսաստանի հետ չպետք է առճակատվի ԱՄՆ-ը, լավ լինի, ահա այս համապատկերին տեսնում եմ հայկական հեռուստաալիքներից մշտապես հայ ազգին վճռական ու վստահ համոզվերությամբ միակ ու ճշմարիտ ուղի ցուցանող խոսող գլուխները, որոնք մերթ քաղաքական գործիչ են, մերթ փորձագետ, մերթ քաղաքական մեկնաբան, մերթ հզոր երկրների ներքին անցուդարձին տեղյակ իմաստուն գուշակներ: Մեկը հարցնող լինի, եթե այդ երկրներում, մեր աչքի առաջ քաղաքական լուրջ վեճեր են, ղեկավարների փոփոխություններ, անսպասելի կողմնորոշումների տեղաշարժեր, էդ ո՞վ և ո՞նց ձեզ տեղեկացրին և ապագան թղթի վրա գծագրած հրամցրին ու դուք էլ մեր ժողովրդին եք համոզում, սիրելի ընկերներ ու հայրենասեր ծանոթներ, ձեր մի մասի հետ մենք կյանք ենք ապրել, ընկերական շփումներ ենք ունեցել և ունենք, խնդրում եմ, որպես բարեկամ, որ հարգում եմ ձեր ոգորումները, մի քիչ վախեցեք Ձեր անկեղծ պոռթկումներից ու տեսլականներից, ռեալ թվացող մոտավոր և հեռավոր այլերկրային, անշուշտ, շահախնդիր խոստումներից: Մի քիչ կասկածեք Ձեր ընտրած ու հավատացած միակ ուղուն: Կարդացեք անցյալ դարի տասական և քսանական թվականների սկզբին գրված Թումանյանի ու Իսահակյանի հոդվածներն ու նամակները, նաև մեզ խիստ անհրաժեշտ է գոնե ծանոթանալ 15 թվից առաջ Պոլսում հրապարակված Երուխանի, Զոհրապի և մյուս երևելիների նյութերին: Այն ժամանակ էլ, որքան գիտեմ, Արևմտյան ու Արևելյան Հայաստանների գործիչների ու ռազմաքաղաքական գիտունների միջև կար խորը անհամաձայնություն կողմնորոշումների ու մեր քայլերի հարցում: Վերոհիշյալ արևմտահայ գրողները զոհվեցին անապատներում, նրանց հետ նաև մեծանուն այլ գրողներ ու գործիչներ և դատարկվեցին մեր հայրենիքի չքնաղ բնակավայրերը:

Եթե բոլորդ մի քիչ հարգեք իրար ընդդիմադիր-իշխանավոր-նորահայտ քաղուժեր, հասարակական խմբեր ու կազմակերպություններ, և վերջապես ժողովրդով պատրաստ

կլինենք լսելու միմյանց, գուցե մեր ամբողջությունը Վանգայից վատ չի գուշակի, ձևակերպի մեզ սպասող ապագան ու կհուշի միմյանց հետ բանավեճի մշակույթը, հանդուրժողականությունը, վերջապես սերը, ճիշտ է, քաղաքական կատեգորիա չեն, բայց առանց նրանց չկա ո՛չ ժողովուրդ, ո՛չ երկիր, ո՛չ քաղաքականություն ու քաղաքակրթություն (հիշենք նաև, որ շատ թմբկահարած պետականորեն ընդունված առաջին քրիստոնյաներն ենք):

Վկա աշխարհի այսօրվա վիճակը, հատկապես, երբ երկու եղբայր թշնամացած կործանել են ձգտում միմյանց: Նրանք վիճարկում են, թե ո՞վ է ավելի սլավոն, ո՞ր տեղանքն է գլխավոր ռուսական մայր հայրենիքը, ո՞վ է ավելի ուղղափառ քրիստոնյա և ո՞վ է ավելի քաղաքակիրթ: Եվ ընկնում են իրենց և ուրիշների ռումբերն ու հրթիռները իրենց գլխին ու հրահրվում է քաղաքակիրթ դրսից՝ մինչև վերջին ուկրաինացի, և որ հասկանալի է՝ մինչև վերջին ռուսաստանցի:

Մեր սպարապետ գրող-գինվորականն է գրել՝ ես վախենում եմ չվախեցողներից:

Թույլ տվեք ես հասկանամ նաև, որ նա վախենում էր ինքն իրենից, իր չափազանցված, սահման չճանաչող հզոր նպատակներից ու տեսիլքներից, որոնց իրական դառնալը հաճախ մեզնից կախված չէր:

Նա հաճախ էր կրկնում՝ 21-րդ դարը մերն է լինելու, 21-րդ դարում հզորանալու է Ռուսաստանը:

Չեմ կարող հաստատել նրա տեղեկացվածության մասշտաբները, սակայն այն, որ չէր խանգարի մեզ տասը չափելու, մեկ կտրելու հին, ժողովրդական իմաստությունը, չի խանգարի ոչ մի մարդու և ժողովրդի: Հաճախ այդ մեծերն են իրենց երևակայական, հրաշք գաղափարները պատվաստում զանգվածների նույնքան հուզական ներաշխարհին և...

Ըմբռնենք, որ զգուշությունը վախկոտություն չէ, խելամտության, վերլուծության, հաշվարկների մղող վիճակ է: Հերոս ձևանալը դեռևս հերոսություն չէ: Հերոսաբար միմյանց խաբելը վախկոտությունից առավել մեղք է:

Աստված մեզ հետ, հիշելով Աբելին ու Կայենին ասենք՝ եղբայրներ ենք մենք:

ԱՇԽԱՐՀԸ ԽՆԴԱ՞, ԹԵ՞ ԼԱ, ԹԵ՞...

2023 թվականի հունվարի 23-ին կլրանա Լեոնային Ղարաբաղի ավագագույն բանաստեղծ, բանասիրության դոկտոր-պրոֆեսոր Սոկրատ Խանյանի 93-րդ տարեդարձը: Այսօր՝ դեկտեմբերի 22-ին, ես խոսում էի նրա հետ և նրա ձայնի հետ ինձ էր հասնում անկոտրելի ոգու, պայծառ հոգու ելևէջները: Թեպետ նա հույս չունեի, որ

Բաքուն պիտի լսի ՄԱԿ-ի, ԵՄ-ի և այլ հարգարժան միջազգային կազմակերպությունների ու երկրների պահանջն ու հորդորը՝ բացել Լաչինի միջանցքը, քանզի նրա կյանքի փորձը հուշում էր՝ Ալիևը միայն կրնակրկի ռեալ ուժի դեմ, եթե, իհարկե, համաձայնի իր հայր ու թիկունք Թուրքիան, ինքնակոչ խաղաղասեր-միջնորդ (Ռուսաստանի ու Ուկրաինայի միջև) և հընթացս Սիրիայի, Իրաքի, Հունաստանի վրա ռումբեր նետող և մատ թափ տվող: Էդ միջնորդ-խաղաղասերն էլ Ուկրաինա բայրաքթար է ուղարկում, Ռուսաստանից հացահատիկ է ընդունում ու գազ է ամբարում մեծահոգաբար բաշխելու Եվրոպային ու էլ չգիտես ուր, հա, ձեռի հետ էլ միշտ հիշեցնում Մոսկվային, թե Ղրիմը չի ճանաչում Ռուսիայի մաս, երևի մտքում՝ ոչ էլ Ուկրաինայի, այլ իր հողն է, իրենն է եղել: Ահա այսպիսի միջազգային լարախաղացություն: Մեկ ՆԱՏՕ-ի անդամ հավատարիմ, մեկ ՆԱՏՕ-ի թշնամի Պոլտինին ընկեր հայտարարում իրեն: Երկու կողմերը և ավելի՝ Ամերիկան էլ վրադիր, չգիտես խնդան, թե լան, թե սպասեն այն օրը, երբ լարախաղացը կամ երկինք կթռչի, կամ կընկնի վար, կամ Մեծ ուժերի ձեռքին մի ուրիշ դեր կստանան:

Իմ սիրելի ավագ գրչեղբայր, դու հույս չունես, որ Ադրբեջանը բանի տեղ կդնի դեմոկրատական հորդորները, բայց չես հուսահատվում՝ փակել են, իրենք էլ կբացեն: Արցախցին կդիմանա, իր հողը չի լքել և չի լքի: Ռուս դիվանագետն ասաց, թե Լաչինի միջանցքը կիսով չափ է փակ: Բա որ կիսով չափ էլ բաց է, բա ինչո՞ւ ոչ մի մարդատար մեքենա չկա ճանապարհին, բա ինչո՞ւ ռուս խաղաղապահների բեռնատարներն են արգելում գնալ Ստեփանակերտ: Սա դեռ կանաչներն են, բա՞ որ մի օր էլ կապույտները գան, հետո դարչնագույները, հետո սևերը... Հա, եթե ճամփեն կիսով բաց է, բա ինչո՞ւ է արցախցի գրող Կիմ Գաբրիելյանը Գորիսում, թե՞ չի ուզում գնալ իր տուն՝ Ստեփանակերտ: Այս ամենի մեջ մի մխիթարական բան կա, Ալիևն ասում էր, թե Լեռնային Ղարաբաղը չկա, վերջ, ապա հիմա նա ինքը ապացուցեց, որ կա և ինքն էլ շրջապատել, փակել է խեղդամահ անելու, սակայն մեծահոգաբար՝ զորք չի ուղարկել, այլ գեներալ ու կապիտան բնապահպանների:

Հիմա աշխարհը խնդա՞, թե՞ լա, թե՞ Բաքվից ստացվող գազից ոգևորվի և ապագայում Բաքվից կանաչ էներգիա առաքելու համաձայնագրի ստորագրման արարողության պահին ԵՄ բարձր պաշտոնյա Ուրսուլա Ֆոն դեր Լեյենի նման հրեշտակի պես ժպտա, երբ նույն այդ պահին 92-ամյա արցախցի Սոկրատ Խանյանը բանտված է իր քաղաքում: Հարգելի Ուրսուլա, դուք կարծեմ 5 երեխայի մայր եք, Աստված պահի նրանց, պատկերացրեք, նրանցից մեկը արցախցի գրող Կիմ Գաբրիելյանի պես չի կարողանում հասնել իր տուն: Արցախի գրողների միության նախագահի՝ Վարդան Հակոբյանի որդին էլ չի կարողանում վերադառնալ տուն: Ի՞նչ կանեիք: Արեք հիմա հանուն դեմոկրատիայի,

մարդու իրավունքների գերակայության: Վստահ եմ Ձեր դեմ կբացվեր Լաչինի ճանապարհը և 2023 թվի հունվարի 22-ին Սուրատ Խանյանը Ձեզ սիրով կհրավիրեր Ստեփանակերտ իր 93-րդ տարեդարձին:

ԼՌՈՒԹՅԱՆ ՀԱՁԱՐ ԵՐԱՆԳՆԵՐԸ

Երբ Սովետական Միություն էր, Սումգայիթի ոճրագործությունից հետո ԽՍՀՄ մարդասերները հանկարծ զարմանքով, ամոթից կարմրելով իմացան, որ ադրբեջանցի ինչ-որ խուլիգաններ, հայրենասիրական մղումներով կարող են հայեր սպանել: Ջարմանքն այնքան մեծ էր, որ անգամ Գորբաչովը մի քանի օր ուշացրեց գործի մուտքը Սումգայիթ, ապա Բաքու, ապա «Կոլցո» օպերացիայով հայերին դուրս քշեց Շահումյանի Գետաշեն և այլ գյուղերից, ապա ուշացավ Լեռնային Ղարաբաղի, հատկապես Շուշիից Ստեփանակերտի վրա գրադի արկերի դեմն առնելու...

Մի խոսքով, շատ մեծ էր զարմանքը, և դա օգնեց հավասարության նշան դնել դահճի և զոհերի միջև:

Այս դիվանագիտական ճարպիկ նշանը պատմական թոփախներ է ապրում, հիմա էլ Իշխանասարի վրա, հայ գերիներին գնդակահարելու տեսանյութերը հպարտորեն տարածող Ադրբեջանի գործողությունները նույն այն զարմանքն են ծնել ու դրա հետ նաև կես խոսք, կես լռություն Եվրոպայի Միության, ԵԽԽՎ-ի, ԱՄՆ-ի բարձր ղեկավարների շրջապատում: Այս լռությունը նրանք իմաստուն են երևի համարում, սակայն հոգիներում համոզված են՝ հավասարության փորձված, անվնաս, դիվանագիտուն նշան է զոհերի և դահիճների միջև: Նաև հավատում եմ, որ ամոթից կրկին կարմրում են (հատկապես, հինգ երեխայի մայր Ուրսուլա ֆոն դեր Լեյենը) և գազ ու նավթի ադրբեջանական (ասում են՝ ռուսական) հոսքի դեմ լրակյաց մոռանում են ԻԳԻԼ-ի գլխատման, քառատման, գնդակահարման հարազատ ձեռագիրը սերտածներին (պատմականորեն հարևան ազգերի վրա փորձարկած մեծ ու փոքր եղբայրներին) գոնե ժպտալով սաստեն: Այս զարմացածներին են զգուշավոր միացել ՀԱՊԿ-ի մեծավորները, Ռուսաստանի ԱԳՆ-ի խոսնակը, որը Լոնդոնում ադրբեջանական դեսպանատան վրա ձու կամ պոմիդոր նետածներին էր տեղը դնում: Ախ, նա էլ զարմանքով լրագրողի հարցին ի պատասխան վարժ սահում է գալարապտույտ տալով՝ պիտի սպասի հրեշավոր տեսանյութի իսկության հետագոտմանը: Էս ադրբեջանցիք էլ ի՞նչ զազանություն անեն, որ մեր հարգելի բարեկամներն ու մարդու իրավունքների պաշտպանները զարմանքից բացված բերաններից հոդաբաշխ մի քանի մարդկային բառ ասեն:

Լռելու դիվանագիտությունը ադրբեջանցիներին հավաքել է գիշատիչների սեղանի շուրջ, իսկ աշխարհի բախտը որոշողները եթե չեն էլ մասնակցում այդ քեֆին, ապա համեստ, ժպտերես մատուցողներ են: Դժվար է սպասել, թե կխանգարեն գործնական պատժամիջոցներով և այլ ոչ հաճելի, դառը կերակուրներով:

Ահա այսպես հավասարության նշանը, դիվանագիտական լռությունը, արտիստիկ զարմանքը աշխարհը վերածել են նավթ ու արյան, գազ ու խղճի վակիսանալիայի:

ՄԱԿ-ում բարաբախտաբար, զսպում են ծափահարության խելահեղ կիրքը:

Բա մե՞նք: Մենք էլ արդարամտորեն, միամտորեն, դոնկիխոտաբար հողմաղացների տակ սպասում ենք սանչոների հասցեական դատապարտումներին: Բայց նա՝ Սանչոն, անտարբեր իր էշն է քշում:

Հարգելի ընթերցողներ, ահա այստեղ ևս բացահայտվեց Մերվանտեսի մեծ գրող լինելու հանգամանքն ու մեր զարմանքը՝ նա Դոն Կիխոտի և Սանչոյի, Ռոսինանտ ձիու և էշի միջև հավասարության նշան չի դրել:

Բա՛, աշխարհի մեծ ու սիրելի գրողներ:

ՍՈՒՐ ԲԱՐՁՐԱՑՆՈՂԻ ՎԵՐՋԸ

Այսօր աշխարհում բազմաթիվ մակարդակներում քննարկվում է Էրդոդանի կերպարը և հիմնականում գալիս են մի եզրակացության, որ նրա հոգեկան վիճակը անկանխատեսելիության և վտանգավոր հետևանքներով է հղի:

Միջերկրական ծովի արևելյան մասից սկսած, Սիրիայով, Հունաստանով, Կիպրոսով և Լիբիայով չավարտված, ահավասիկ մխրճվել է արցախյան ու, լայն իմաստով, հայկական հարցի մեջ, հրահրելով Ադրբեյջանին պատերազմների:

Ցեղասպանությունը չընդունելով ձգտում է նոր ցեղասպանության, թափահարելով նեոսամանիզմի, թուրանիզմի և իսլամիզմի դրոշներ ու սրեր, երբեմն հարձակվելով հենց մուսուլմանական երկրների վրա, թաքուն նենգ հայացքներ նետելով որոշ իսլամական երկրների վրա և հատկապես լկտի քմծիծաղ տալով Եվրոպայի ու քրիստոնեության վրա: Ահա թե ինչու Այա Սոֆիա տաճարը մզկիթի վերածվեց:

Ու հիմա Արցախում ընթացող պատերազմը կանգնեցնելու երկու հակառակորդներին ուղղված ՄԱԿ-ի, ԵԱՀԿ Մինսկի խմբի, Ռուսաստանի Պետդումայի հորդորները առ ոչինչ են Էրդոդանի և նրա աշակերտ Ալիևի համար: Չկա հասցեական դատապարտում և պատժի գործիքի կիրառում հարձակվողի հանդեպ:

Սա էլ ծաղրի ենթարկվածների պատասխանը:

Սպասենք մինչև Էրդոդանը հարվածի նրանց իրենց տան միջանցքներում:

Իսկ մենք սպասելու ժամանակ չունենք, սուր բարձրացնողը պիտի ընկնի սրից:

ՀԱԼԱԾՎԱԾ ԹՇՆԱՄՈՒ ԲՈՂՈՔԸ

Հե՛յ, աշխարհ, դու ո՞նց չես տեսնում, որ էս հայերը խաբում են բոլորին, հատկապես ադրբեյջանցիներին և Թուրքիային, թե Լեռնային Ղարաբաղում սով է, հումանիտար աղետ, մարդու և 120 հազար բնակչության իրավունքների ոտնահարում, և դեռ ՄԱԿ-ի բարձր ատյանում ցեխ են նետում բարի, մարդասեր, հայերի ձեռք տանջված, տեղահանված ու մշտապես ցեղասպանված Ադրբեյջանի կողմը:

Ճիշտ է, քննարկման ժամանակ եղան հայերի կեղծիքները կուլ տված ելույթ ունեցողներ, բայց և ճշմարիտ հակադարձեցին Թուրքիայի, Ալբանիայի ներկայացուցիչները. Ճիշտ է, ցեղակից են, բայց ի՞նչ կարևոր է, էն է, սլավոն ցեղակիցներ կան՝ իրար են ոչնչացնում, և հետո, Ալբանիայի Կոսովոն մի՛ շփոթեք Ղարաբաղի հարցի հետ, դա ուրիշ էր, Եվրոպան և Ամերիկան պաշտպանեցին նրա անկախության իրավունքը, մի բան գիտեին, չէ՞: Հետո էս հայերը սով ասելով հասկանում են տորթ ուտել, էդ մասին մոռացել է գրել Ստրաբոնը, հարսանիք են անում ճոխ-ճոխ՝ թշնամու ինադու, և խմում Քսենոֆոնի հին Հայաստանում տեսած գարեջուրը: Իհարկե, դա թուրքական, ադրբեջանական խմիչք է, որովհետև Հայաստան չի եղել, միֆ է, ադրբեջանցի-ալբանացիներ են եղել բնիկները, ուղղակի հունարեն չեն իմացել՝ տեղեկացնելու Ստրաբոնին, Քսենոֆոնին, հա, կարծում ենք էդ հոյներն էլ էն գլխից անտեսել են ադրբեջանցիներին ու թուրքերին, պարզ թշնամություն է, չեն սիրում մեզ, էլի, կարծես իրենց վատություն ենք արել, էլ չեն ասում մեր Կիպրոս կղզին կիսել են ու առոք-փառոք պառկում են ծովափերին: Հե՛յ աշխարհ... Էս հայերը չեն հասկանում, որ 21-րդ դարում տիեզերքից շատ հստակ կարող են ամերիկացիք տեսնել՝ Լաչինի միջանցքը փա՞կ է, թե՞ բաց: Ճիշտ է, ՄԱԿ-ում նրանց ներկայացուցիչը խիստ ասաց՝ պետք է բացել և վերջ: Բայց բացվե՞ց: Ուրեմն տիեզերանավը խաբել է կամ էլ հայ ծպտված տիեզերագնաց է եղել դիտողը:

Այ հիմա Կոռնիձորից Անդրկովկասում Եվրոպայի ներկայացուցիչ Կասպրճիկը հեռադիտակով նայում է ու կտեսնի, որ խաղաղապահ ռուսներն են անցակետ դրել, մեզ ստիպում են փակել ճանապարհը, պատանդ վերցնել: Մենք ի՞նչ կարող ենք անել, ռուսներն ուժեղ են, ո՞նց չլսենք, հետո կարծես վրեժ են լուծում, որ մենք օգնում ենք Ուկրաինային:

Հայերն ավելի են խառնում, նրանց մի թևը խրվում է արևմուտք, մյուսը՝ Ռուսաստան, էն հաջորդը՝ Հնդկաստան, մի այլ թև՝ Չինաստան և նոր մի թև էլ՝ Բրիքս: Չգիտենք՝ էս հայերը Բուդդայի՞ց են ծնվել բազմաթև: Եվ բոլորն էլ մեղադրում են ախույան թշնամուն, այսինքն՝ մեզ, որ թելադրում ենք գաղտնի կողերով: Բա ասում էիք խելո՞ք ենք, գարեջուր ենք հորինել, սովի ժամանակ հարսանիքի տակտիկա ենք ընդունում, դե մի ճամփա ընտրեք, մենք դա էլ փակենք, գնաք ՄԱԿ, ԵԽ, ԵԽԽՎ, հետո՝ Բրիքս, ձեր ընկերներ ռուսներն ու պարսիկները այդտեղ են, կարող են օգնեն: Շատ համը հանեք, մենք էլ կգանք այնտեղ, ինչպես ՄԱԿ-ում ենք, ԱՊՀ-ում, ՀՍՊԿ-ում, ԵԽԽՎ-ում, այսինքն եթե մենք էլ չենք անդամ, մերոնք են էնտեղ: Հասկացա՞ք: Ուր գնաք, մենք այնտեղ ենք՝ ՆԱՏՕ, ՀԱՊԿ և այլն: Ձեզ ի՞նչ բացատրենք, աչքների լայն բացեք, չէ, ի՞նչ ենք ասում՝ փակեք ու իրար հոշոտեք միասնություն գոռգոռալով: Պետք եղավ՝ մենք ձեզ ձեռք կմեկնենք Ադդամի

ճանապարհով, եղ էլ ձեր սիրած Շառլ Միշելն ասաց առաջինը, Լաչինով էլ դուրս կանենք դեպի հիվանդանոցներ: Կարմի խաչը չնեղանա:

Հա, չմոռանաք ասել՝ եղ Ֆրանսիան ինչ-որ բարաձև է պատրաստում, ուրախացեք, ՄԱԿ-ը երևի ընդունի: Նրանց ասեք՝ թող թղթի վրա չգրեն, գիտեք թղթի վերջը, թող վիրտուալ ներկայացնեն, այսօրվա աշխարհը եղ եղանակն է սիրում՝ վիրտուալ, դա շատ է օգնում սովահարներին, հատկապես սուտասաններին:

Հեյ, աշխարհ, կրակն ենք ընկել էս հայերի, այսինքն՝ ալբանների, արևմտյան ադրբեջանական հողերի վարձկանների ու մեր հեթանոս ու քրիստոնյա տաճարները սեփականաշնորհողների, խաչքարերը ջարդողների ձեռք:

Չմոռանանք ասել՝ իրենց այբուբենը ստեղծողն էլ էր հաստատ մերոնցից, թե չէ ինչո՞ւ էր ալբանների այբուբեն հորինում, հայերին ու վրացիներին ուրախացնելու շարքում:

Իմացեք, մենք նավթով լվացված մեր սուտը ճշմարիտի տեղ ենք ցծախում, կարաք՝ դուք էլ արեք:

Առայժմ այսքանը:

28.08.23 թ.

ԺՈՂՈՎՈՒՐՈՒՆ ԸՆԴՈՒՄ Է

Առավոտյան, երբ կերա իմ սիրած սև սալոր, մտքովս անցավ, թե ինչո՞ւ եմ սիրել սև գույնի մրգեր՝ թուր, խաղող, մանկությունից այդպես է, մեր այգում աճում էին ոսկեփայլ խուրջի խաղող, սպիտակ թուր և դեղնականաչ սալոր, բայց, ինչպես վերևում ասացի՝ սևն էր ինձ ձգում, անգամ ոչ կարմիր թուրը, վարդագույն խաղողն ու բազմագույն սալորը: Դե արի ու բացատրի, թե ինչո՞ւ: Միտքս չի գործում, գուցե թե սևի մեջ բոլոր գույները կան: Նկարելիս էլ սևը ձգում է ինձ՝ տուշ լինի, թե ջրաներկ, թե յուղաներկ, էլ չեմ ասում գրաֆիկայի ինքնահոսները: Մի հայրենասեր պատրաստվում է մեկնաբանել՝ մեր ժողովրդի պատմությունը հիմնականում մութ է եղել, պայքարել ենք լույսի համար, լավագույն օրինակը Գրիգոր Լուսավորիչն է, որն, ի դեպ, մեր ազգից չէր: Մենք էլ ուրիշ ազգերի ենք լուսավորել: Սնից փրկել:

Էս սևի մասին էի մտորում առավոտ շուտ, լավ չէի քնել, գիշերը նայել էի մեծ թենիսի Ամերիկայի բաց առաջնությունը, մեկ էլ մեջս կայծակվեց (երեկ չէ մյուս օրը ասեղ կայծակներ էին շաչել) մի տարօրինակ միտք՝ ժողովուրդը մեր երեխեն է: Հաջորդեց հակառակն ապացուցող այն մի հայրենասեր ընկերոջ հեզնական ժպիտը՝

բա, այ գրող կամ գրող ու ցավ, սխալ են ասել մեր նախնիք ու ներկա մտածողները՝ ժողովուրդը մեր մայրն է, հայրենին, հարազատ նախահայր ու էլի...

Միբելի բարեկամ, երբ մանուկ էի, գիտեի քո ասածը, պատանի դարձա՝ նույնը, երիտասարդ էի, գրել եմ քո և իմ ոգով, հայր դարձա, տղաներիս ներարկեցի այդ հզոր գաղափարները, հուշեցի կարդան Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», էլի շատ պատմական ու գեղարվեստական գրքեր, իսկ երբ հիմա պապիկ եմ, հանկարծ, կներեք, կայծակվեց այդ, կարծում եմ, նույնքան հայրենասիրական միտքը՝ ժողովուրդը մեր երեխեն է, ավելին՝ մեր թոռը, մեր ծոռը, շարունակելիության կողմը: Այս մանուկը խաղացել է քարերի հետ, սեպագրել իր հրաշալի թոթովանքները, ոգել հրեղեն ասքեր, նետով ու պարսատիկով պայքարել այլախոս մանուկների դեմ, թռչուններ որսացել, ժայռապատկերներով մեզ հաղորդել պարզունակ որսի տեսարաններ, մանուկ հոգուն դաջել աստվածություններ ու գրավոր պայծառատեսություն, բանաստեղծելու բնասեր ու բնագանգ շնորհք:

Էս մանուկն իր էպոսի հերոսի նման ձեռքը միշտ մեկնել է կրակին, ոչ՝ ոսկուն, այրված ձեռքն էլ տարել է բերանը ու լեզուն թլուվել ու ինքն իր խոսքի վրա խնդացել է, ինքնահեգնել ու թշնամուն սաստել՝ չհամարձակվես լեզվական արատի վրա ծիծաղել, ամոթ է, քեզ նայի:

Սեպտեմբերյան այդ առավոտ գիտեի, որ մեր տանը խաղող չկա, երբ սև սալորն արդեն կերել էի ննջասենյակում, գնացի հյուրասենյակ և ի՛նչ տեսնեմ, սեղանին ափսեի մեջ մի ճուֆ սև խաղող: Դա չկերա, պահեցի երեխայի համար, թող ինքը ուտի և չատի սևը, չդարձնի մտածողության անջնջելի անեծք ու գերեվարվի: Խաղողը նաև քաղցր է: Ես փորձեցի իմ մեջ խոսել՝ թլվատ էր չլսվող խոսքը: Այն իմ ընկեր հայրենասերը ծուռ նայեց՝ այդպես թլվատ խոսում ես ու լռում, էն մյուս գրողներն ու գործիչներն էլ թուրակավարի կրկնում են մեր չասվողը, կիսատը, անամբողջականն ու մեզ ուղղորդող այլերի ու գայլերի թելադրանք ու երթնեկության նշանները:

Նաև հիշեցի մի ուրիշ ընկերոջ, նույնքան և ավելի հայրենասերի միտքը՝ մենք պիտի ուտենք մեր հողի բանջարեղենը, միրգը, գարին ու ընտանի դարձած վայրի ցորենը, ընտանի թռչուն ու կենդանի, մերը, մերը, սրան է սովոր մեր մարմինն ու հոգին:

Թոռներս երեկ ինչ-որ համերգի էին, երևի խմել են կոկա-կոլա, սփրայթ և այլն (սա գովազդ չէ), նրանց ասել եմ և կրկնում եմ՝ խմել հայրենի ծիրանի հյութ, խաղողի հյութ, նռան հյութ: Ես ասում եմ, ես՝ լսում:

Տարեց Մարտիրոս Սարյանն իր մանուկ ժողովրդին աղոթելու պես ընծայում էր ամենաթանկ տեսարաններն Արարատի, դաշտերի, ծաղիկների: Նա իր ձյունափառ գազաթով նայում էր մարգաղաշտից վերադարձող եռանդուն ցավքաշ ջահելների ու

պատանիների, որոնք իր համար փոքրիկներ էին, և մրմնջում՝ այդպես երկրպագեք սեպագիրը, գիրը, ծաղկողներին և... ա՛յ մարդ, դաս մի տուր, քո ժողովուրդը քեզնից իմաստուն է:

Հիմա չհասկացա՝ ժողովուրդն ի՞նքն է, թե՞ ժողովուրդը հայ: Հավատամ, միասնականացվել էին, և հայտնի խոսք կա՝ մեծանալով վերածվում ենք մանուկի, այդպես՝ Սարյան – ժողովուրդ, Թումանյան, Իսահակյան, Կոմիտաս, Այվազովսկի, Մարոյան, Ազնավուր... Մանուկների մի երգչախումբ ժամանակի բեմահարթակին:

Հավատա՞մ, որ մեր տաքսիստները ուրիշ վարորդների սխալը քննադատելուց էլ չեն ասի՝ հայ ենք, էլի, կամ հայություն արեց, ապա՝ միայն հայը ըտենց կքշեր, և էլի՝ հայից ի՞նչ սպասես, իսկ ֆիլմերում էլ են մերոնք հնչեցնում՝ մուխաննաթ հայ ենք, նախանձ, տակ փոքրո՞ղ, վեր ելնողի ոտից ներքև քաշող: Տո ավելին ասեմ՝ դավաճան հայ ենք, որտեղ հաց, ընդեղ կաց՝ հայ տեսակ և էլ չասեմ, ամոթն էլ լավ է: Հավատում եմ, որ այս ամենը մեզ ներշնչել են մեր թշնամիք, մեր միջի կիսատ-պռատները և, հատկապես, նրանք, ովքեր մեր ժողովրդին ծերուկի տեղ են դնում, ամեն մեղք նետում վրան: Ուրիշ ո՞ր ազգի մեջ կա նման ինքնանվաստացում, ինքնառնչացում և ասողն էլ՝ փիլիսոփայի պես իբր խելոք փքված: Իմ պստիկ կարծիքով, ճիշտը, ինչպես վերում եմ ասել՝ ժողովրդին էրեխուղ տեղ դնելն է ճիշտը, որ գուրգուրես, սիրես, աշխատես նրա համար և մեկ-մեկ էլ սխալը տեսնելիս տուտուզին չպպացնել տաք ու հայրական մատներով: Չապտակեք, թե չէ դատի կտա: Եվրոպական օրենքները մեզ էլ են հասել:

Էս տարի սև թուրք չընկավ գլխիս, սպիտակ շորիս, որ մաքրեի խակ, կանաչ թթով: Սա էլ հայրենի և մարդկության մի գյուտ: Ամեն հետք նմանապես հնարավոր է ջնջել հետք թողածի կամ խակ, կամ հասուն, կամ չմաքրել, թողնել որպես վերից ընկածի պարզև:

Հեքիաթներն ավարտվում են, ինչպես բանավոր, այդպես էլ գրավոր, խնձորների բարեբեր անկումով, ափսոս նրանց մեջ սևը չկա, որ բաժանեինք ցորնամորթ, դեղնամորթ, սպիտակ, դարչնագույն և սևաթույր մարդկության ժողովուրդներին (բոլորին իրենց գույնին ու հոգուն ցանկալի), որոնք մանուկներից առավել միրգ են սիրում:

Ո՞նց չսիրեն, եթե մանուկից մանուկ են:

ԷՂՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

ԿՈՉ

**Աշխարհի բարի կամքի տեր մարդկանց, ժողովուրդների անկախության,
ազատության ջատագով մտավորականներին, մշակութային գործիչներին, գրողներին և
արվեստագետներին**

Դարձյալ պատերազմ է հայոց ազատատենչ Արցախի հողում... Սեպտեմբերի 27-ի վաղ լուսաբացից շարունակվում են թեժ մարտերը ադրբեջանա-արցախյան սահմանային գոտու ողջ երկայնքով: Այս անգամ՝ ավելի՛ լայնամասշտաբ, ժամանակակից գրեթե բոլոր զինատեսակների օգտագործմամբ: Ադրբեջանական իշխանությունների սանձազերծած այս նոր վտանգավոր արկածախնդրությունը միանգամայն սպասելի էր՝ նկատի ունենալով մշտապես կիրառվող և վերջին շրջանում սաստկացած ռազմատենչ հռետորաբանությունը, որն այս անգամ ոչ միայն անուղղակիորեն հրահրվում, այլև անմիջականորեն սատարվում է Թուրքիայի դեկավարության կողմից՝ ռազմական և այլ միջոցներով, բացահայտ մասնակցության որոշակի իրողություններով: 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի ցեղասպանությունն իրագործած և մինչ օրս այն չճանաչող ու մերժող Թուրքիան, ըստ էության, շարունակում է իր հակահայ քաղաքականությունը՝ սեփական հողն ու հայրենիքը պաշտպանող ժողովրդի հանդեպ կատարած նախկին հանցագործությունները մոռացնել տալու համար: Ակնհայտ է նաև այն անթաքույց արհամարհանքը, որ դրսևորում է Ադրբեջանի դեկավարությունը արցախյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված միջազգային հանրության, մասնավորապես, ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահության ջանքերի նկատմամբ՝ գերի մնալով իր մաքսիմալիստական նպատակներին, մերժելով ուժայինից բացի որևէ այլ տարբերակ: Ընդ որում՝ ձեռագիրը նույնն է՝ հարձակում անգեն, խաղաղ բնակչության ու բնակավայրերի վրա, սիրիական պատերազմների մասնակից ահաբեկչական խմբերի, օտար վարձկանների ներգրավում...

Սակայն ոսոխը պետք է լավ իմանա, որ ոչ մի ուժ ու սպառնալիք չի կարող կոտրել արցախահայության, Հայաստանի Հանրապետության և աշխարհասփյուռ հայության ազատատենչ ոգին, Հայրենիքի և Արցախի միասնական դիմադրական կամքն ու վճռականությունը, ոչ մի ագրեսիա անպատիժ չի մնալու:

Հայաստանի գրողների միությունը, ինչպես միշտ, սատար է հայկական բանակին, նրա հերոս զինվորներին ու հրամանատարներին, հայ ժողովրդի մարտական ոգուն և հավաքական ուժին:

Վստահ ենք, որ միջազգային կառույցների և ազդեցիկ ուժերի միջամտությունը, ի վերջո, տալու է իր արդյունքը, հանցագործը ստանալու է իր գործողությունների

քաղաքական և իրավական գնահատականը՝ նրան վերադարձնելով հիմնախնդրի լուծման միակ ճիշտ՝ բանակցությունների սեղանի մոտ:

Հավատացած ենք, որ դրանում մեծ է նաև հումանիտար հանրության դերը:

Հայաստանի գրողների միությունը դիմում է աշխարհի բարի կամքի տեր մարդկանց, ժողովուրդների անկախության, ազատության ջատագով մտավորականներին, մշակութային գործիչներին, գրողներին և արվեստագետներին՝ իրենց ձայնը բարձրացնելու ընդդեմ սեփական հողի վրա իր խաղաղ կյանքը կերտող Արցախի Հանրապետության ժողովրդի դեմ Ադրբեյջանի և Թուրքիայի նկրտումների, որոնք հղի են տարածաշրջանային և միջազգային լայնամասշտաբ հակամարտության վերածվելու իրական վտանգով:

ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԿՇԵՌՔ ՆԺԱՐԵԼՈՒ ՄԵՐ ՄԽԱԼՍՈՒՆՔՆ ՈՒ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Մենք համառորեն ճշմարտություն ենք վաճառում (պատմական, ներկա իրադարձությունների, աշխարհաքաղաքական և այլն), փորձում ենք համոզել աշխարհի հզոր կազմակերպություններին ու երկրներին 1915 թվի ողբերգական ցեղասպանության ծրագրի շարունակման մի մասը ներկա է Լեռնային Ղարաբաղում (հայերի համար՝ Արցախ) հավատալով, թե մեզ կըմբռնեն, դիմում ենք ՄԱԿ-ին, ԵՄ-ին, Ռուսաստանին, Ամերիկային, դատարաններին, կան վճիռներ ու համաձայնագրեր, կան ռուսական խաղաղապահներ ու եվրոպական դիտորդներ, սակայն այդ ամենից հետո Բաքուն առավել ուժգին է փակում Լաչինի միջանցքը, Հայաստանին կապող միակ ճանապարհը, կամ երբեմն թույլ է տալիս Կարմիր խաչի մեքենաներով հիվանդների տեղափոխել և մեկ էլ, այդ ավտոներից բռնի առևանգում է հիվանդ մարդու, խեղճ Կարմիր խաչի բժիշկները ձեռքները վեր են բարձրացնում և անճարակ քրթմնջում, թե նայեք ռուս խաղաղապահներին, նրանք էլ են քրթմնջում՝ զենքերը ամոթից պահելով մեջքների ետևում՝ մենք ախր խաղաղապահ ենք, խաղաղություն ենք պահում: Վերջերս էլ երեք երիտասարդ մարզիկի են առևանգել հենց խաղաղապահների ուղեկցությամբ անցակետ հասած, այս խաղաղապահները ո՞նց ասեն, որ դիմաձների ցուցակներն են հանձնում նախապես ըստ պայմանավորվածության, իսկ ազերիներն էլ արագ սոց. ցանցերից, նկարահանումներից, անցյալ ու ներկա տվյալներից արագ կազմում են մեղադրանքների գործեր և առևանգում:

Ահա այսպես Արցախի ողջ բնակչության վրա նախապես, կարծում եմ, սև ցուցակներ են կազմել և հերթով կպատժեն նախկին ու 44-օրյա պատերազմների մասնակիցներին, իրենց համար վտանգավոր թվացած հասարական, քաղաքական գործիչներին և նաև նորածին մանուկներին, սրանք խախտել են սովի պարագայում չծնվելու պայմանները և փորձել են դեմոգրաֆիկ վիճակը թեքել ի նպաստ հայերի: Այսպիսի վիճակում պնդել, թե արցախցիներ

ու ազերիներ, նստեք ուղղակի բանակցությունների, ասողները՝ լուրջ միջազգային դեմքեր, իսկ պատկերացնում են առանց միջազգային հսկման մեխանիզմների ի՞նչ կարող է պատահել՝ հայ մասնակիցների առևանգում Ադրբեջանի սահմանը խախտելու համար (եթե բանակցությունը տեղի ունենա նրանց տարածքում): Ահա այս խեղճ միջազգային դեմքերը՝ և՛ ռուսներ, և՛ ամերիկացի ու եվրոպացի, հետո ձեռքները կլվանան պիղատոսավարի ու կմրմնջան՝ ո՞վ կսպասեր նման դեմոկրատիայի և մարդու իրավունքների խախտման: Շարլ Միշելն էլ մեծահոգաբար Ադդամի ճամփեն է առաջարկում բացել Լաչինին հավասար կամ փոխարինող: Այս ընթացքում Փարիզի քաղաքապետ Անն Իգալգոն է հումանիտար բեռներով, Ֆրանսիայի այլ քաղաքապետների հետ սպասում Կոռնիձորում, և հոխորտում են ու մատ թափ տալիս Լաչինը փակածների կողմը: Եվրաներկայացուցիչ Կասպրչիկն է հեռադիտակով ուսումնասիրում, երևի եվրոպական առաքելությունից է 5 բոպեով խնդրել: Եվ նոր-նոր պիտի պարզի էս ինը ամիս փակվածը իսկապե՞ս փակված է: Ռուսաստանի ԱԳ խոսնակն էլ մյուս կողմից է հոխորտում, մերն էլ նեղսրտած ու վճռական այս կողմից է բացատրում, մանրամասնում իրավիճակի ընթացքը: Չմոռանանք Ֆրանսիային շնորհակալություն հայտնել հետևողական և անգոր ջանքերի համար: Ռուսներն էլ զայրանում են, թե մեր դեմ է, Կովկասից մեզ քշելու համար է Մակրոնը և Արևմուտքը ջանադիր:

Եվ տեսեք ո՞ւմ և ինչպե՞ս ենք վաճառում մեր ճշմարտությունը: Մեր հավատացած ու սիրած աշխարհի կոչվածը լրիվ բացում է իր դիմակը, ծուռ և անկար ժպտում է, թե էլ ի՞նչ անենք, որ տեսնեք՝ մեր դարդը Ուկրաինան է, մեր թշնամին՝ Ռուսաստանն ու Չինաստանը, էդ փոքր Լեռնային Ղարաբաղը թող նստի իր դահճի հետ բանակցելու: Ապա ծուռ ժպիտի մեջ հասկանանք, ասվում է՝ ճշմարտությունից զատ. կարևոր բա՞ն կա վաճառքի կամ... Ռուսաստանն էլ կռվի մեջ խրված՝ զայրացած նայում է մեր պահանջներին, ու էլի մեղավորը մենք ենք, որ Բաքուն օգնում է Ուկրաինային:

Այսքանից հետո ինձ մի հարց է ժանգոտ մեխով ծակում՝ մեզ պե՞տք է ճշմարտություն, մենք մեզ համար նժարե՞լ ենք մեր սխալն ու ճշմարտությունը:

Ամեն ժողովուրդ չէ, որ երագում է իր սխալները ճանաչել, ինքնագիտակցել ու նույն փոցիսի վրա նույն ոտքը չդնել: Ճիշտն ասած, սա ժողովրդին վերագրելը այնքան էլ բանական չէ, սխալների քննությունը ժողովրդի զարգացած, տաղանդավոր, աշխարհի վերուվարը, մեր անցած ճանապարհը մանրագնին զգեցած ու վերլուծած անհատների տիրույթն է: Բհարկե, մենք ունեցել և ունենք այդպիսի մտածողներ և՛ Հայաստանում, և՛ Արցախում, և՛ սփյուռքում, սակայն փաստ է նաև, որ նման դեմքերի անցյալում հալածել են նրանց հակառակորդները, որոշակի քաղաքականացված կամ զայրագին զանգվածներ: Վիճաբանության նոր ալիք չբարձրացնելու համար չթվարկեմ անուններ: Այո, մարդիկ հաճույքով չեն լսում իրենց սխալների մասին: Յուրաքանչյուրն ինքն իր հոգում պիտի գտնի բարդ ճանապարհը, երկրի քաղաքական էլիտան, դիվանագիտական ու պաշտոնական այրերը, գիտական մասնագիտական ինստիտուտներն ու տակտիկական ու ստրատեգիական հարցերով զբաղվող կենտրոններն առաջարկեն տարբերակային զարգացումների ծրագրեր, և միացյալ ժողովուրդը ճշգրիտ պատմական բնագոյով ու մտավոր փորձով անցնի խոչ ու խուրերը:

Հուզական ժողովուրդ լինելով, հաճախ պաթետիկ, ոչ իրական լիցքով գաղափարների ազդեցության մամլիչի տակ պոռթկում ենք, հուսավառությունից կտրուկ ընկնում անհուսության մեջ: Այնքան ենք հավատացել կախարդանքով հմայող բառերի ոլորտին՝ աշխարհը մեզ կսիրի, չի պաշտպանում, անտարբեր է, շահասեր և այլն: Իսկ ո՞րն է մեր ասած «Աշխարհը», անորոշ է՝ Ամերիկան, Ռուսաստանը, Եվրոպան, Աֆրիկան, Չինաստանը, Պարսկաստանը, գուցե Չիլին կամ Ավստրալիան: Այս վիրտուալ Աշխարհը ոչ մի ժողովրդի էլ ոչ սիրել է, ոչ ատել: Դա արել են առանձին երկրներ, միացյալ պետությունների միություններ կամ ռազմականացված կառույցներ, այն էլ՝ իրենց շահերի համաձայն: Այդպես եղել է, այդպես կլինի:

Յուրաքանչյուր պետություն իր ճկուն դիվանագիտությամբ, ռեալ ժամանակի ուժային քարտեզի վերլուծությամբ ուղղորդում է իր երկիրը՝ որոշակի անվտանգային միության ու ռազմական կազմակերպությունների, միությունների մեջ լինելով: Եվ, իհարկե, անվերջ չտատանվելով, հրվելով, առաջնորդվելով ամեն տեսակի ուժերի ազդեցությունից: Այո, կան դժվար ընտրության ժամանակներ, սակայն հստակ և հիմնավոր երաշխիքներով, և ոչ պատրանքային, մոտավոր հաշվարկներով ու կտրուկ ցնցումներով: Այո, կան ճգնաժամային ճակատագրական ժամանակներ, ժամեր, երբ ստույգ որոշակիություն է պահանջվում:

Այս պարագայում քրիստոնեական աշխարհին աչք ածելն անհեռանկար է, քանզի կրոնական պատկանելության նույնականությունը երաշխիք չէ հակամարտությունների ընթացքում: Ճիշտ է, երբեմն խաղարկվում է արնակցությունը, դավանանքը, հավատամքը, բայց ներկա ժամանակում եղբայր ու կրոնակից երկրներ հռչակում են միմյանց՝ Ռուսաստան-Ուկրաինա:

Եվրոպական որոշ երկրներում վաճառվում են քրիստոնեական տաճարներ, որքան հիշում եմ Հռոմի Բարուղիմեոս պապը առաջարկել էր Եվրամիության անվան մեջ ավելացնել «քրիստոնեական» որոշիչը, սակայն հենց Եվրոպայի ազդեցիկ երկրների ղեկավարներ դեմ եղան: Այնպես որ մեր նկարագրի մեջ ամրակայված հավատն առ Եվրոպայի քրիստոնեական եղբայրակցություն, մշտապես անարդյունք է եղել:

Ցարական Ռուսաստանի աշխարհանվաճ առաքելության մեջ շեշտվել է քրիստոնեական փրչության հակում: Փրկել՝ վերածելով իրենց հպատակի: Հասկանալի է՝ մեծ երկիր, մեծ նպատակներ, ծովեր, օվկիանոսներ... Մինչև ՄՍՀՄ-ի փլուզում:

Հայոց ցեղասպանությունից հետո մեր պատմական փորձն ապացույց է՝ մահմեդական երկրներում հայերն ավելի ինքնուրույն էին ու հայապահպան գործում հաջողեցին, քան հավատակից երկրներում, որտեղ ձուլման վտանգը առավել շոշափելի էր և է:

Շուրջ երկու հարյուր տարի մեր ժողովրդի մի մեծ հատված եղել է ռուսական տիրապետության ներքո: Սովետական տարիներին գերակա էր մեծ եղբոր անունն ու դերը: Առաջին հանրապետության ժամանակ մեր անկախությունը խարխափեց Արևմուտք-Թուրքիա-բոլշևիկյան Ռուսաստան եռանկյունու մեջտեղում: Մինչև Թուրքիան իր ուզածը խլեց Ռուսաստանին խաբելով, Արևմուտքն էլ հասկացրեց՝ ձեր վիճակը 20 մետր է, մեր գերանը՝ 15 մետր, մեր նավերն էլ ձեր լեռները չեն բարձրանա: Բոլշևիկյան Ռուսաստանն էլ Կովկասը

չէր թողնի այլ երկրների ազդեցության տակ՝ մտան իրենց ցարական կայսրության տարածքները, միավորեցին մի սահմանի մեջ, ներսում (ազգային հիմքով ձևավորեց այնպիսի քարտեզ, որ ուզած պահի միջամտեն կամ կռիվ գցեն քանոնով գծած սահմանների փոփոխման համար: Նախիջևան, Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Հյուսիսային և Հարավային Օսեթիաներ և այլն: Այս միջամտության մեթոդը գործեց նաև ԱՊՀ երկրների հարաբերությունների սրման իրավիճակում: Արևմուտքի մագնիսը ձգել էր Մերձբալթյան պետությունները: Թուրքիան իր թուրանական ծրագիրն էր ձևավորում Ադրբեջան և Միջին Ասիա միասնականացնելու որոշումով:

Արևմուտքի և Ռուսաստանի միջև Ուկրաինան դարձավ կռիվահանդիմ: Մեր պատմության գրքերից քաջաձանոթ է այս «կռիվահանդիմ» բառը: Անվերջ երկու քարի արանքում, ինչպես անցնել, որ չնմանվենք խոշտանգված ու կորուստներ կրող հայրենիքի:

Ուկրաինայի ներկա իրողությունը առարկայական ասում է՝ չպետք է ընկնել մեծ պետությունների աշխարհաքաղաքական խաղերի մեջտեղում, չպետք է վերածվել ռազմադաշտի, տարբեր երկրների փորձադաշտի: Նամանավանդ հիմա, երբ Ռուսաստանը մկանները ձգած պայքարի մեջ է Արևմուտքի դեմ և Ուկրաինան է Արևմուտքի ուշադրության կենտրոնը:

Թուրքիան վարպետորեն խաղում է երկու լարի վրա, շահերն է առաջ տանում, ձեռքի հետ Ադրբեջանին միացնում ռազմական ու քաղաքական ընդհանուր ծրագրերին, որոնց վերևում ՆԱՏՕ-ի դիրիժորական փայտիկը պիտի որ գործի: Նրանք Ռուսաստանի հետ շահեկան առևտրի վիճակում են: Չմանրամասնենք: Բայց ըստ Պուտինի խոսնակ Պեսկովի՝ միշտ իրենց մտքում է Թուրքիայի ՆԱՏՕ-ի անդամ լինելը:

Ո՞ր է մեր անվտանգության բարձիկը, ՀԱՊԿ-ը մեզ նեղացրել է, մենք էլ խռովկան երես ենք թեքում, ո՞ւր, ՆԱՏՕ-ն էլ իր անդամության թեկնածուներին է կոնֆետ ցույց տալիս ու թաքցնում ետևում, ինչպես Ուկրաինայի պարագայում: Երաշխիքները որտե՞ղ են մեր խաղաղ կամ բանակով պատերազմելով ապրելու: Տեսնում ենք միջազգային կառույցների անճարակությունը, իրենց վճիռներն իսկ չեն կարողանում կամ չեն ուզում պարտադրել Բաքվին (մեջքին Թուրքիան է): Ռուսներից էլ մերթ դժգոհելով, մերթ ԵԱՏՄ-ին գովելով, ՀԱՊԿ-ին բշտելով, ՆԱՏՕ-ին մի թեթև գործակցելով մինչև ո՞ւր, անկանխատեսելի Արևմուտք, Արևելք, Ամերիկա ու Ռուսաստան և վերևում օդ, որ բաց է անօդաչու թռչող գիսաստղերի ու սարքերի դեմ: Որտե՞ղ են մեր խաղերի ու շահերի սահմանները, արդյոք կարո՞ղ ենք ռեալ պոլիտիկով ռեալ ներկան պահել կայուն գիշատչական կրքերով եռացող այս ժամանակում, տարածաշրջանում և աշխարհում:

Աշխարհ, որն արագ փոփոխվում է, նոր խմբավարումներ, նոր ծրագրեր, նոր հակամարտություններ: Մեր առջև դժվար, բայց ոչ անհաղթահարելի ջունգլի է՝ ումանց համար՝ դրախտ տանող, ումանց համար՝ դժոխք: Բայց ամենաճիշտը վանեցու խոսքն է՝ զգուշությունը լավ բան է: Սա վախկոտություն չէ, ժողովրդի, երկրի ճակատագրի հրամայականն է՝ տասը չափի, մեկ կտրի: Ասվում է և՛ խիզախին, և՛ վախկոտին, և՛ ընդդիմադիրներին, և՛ հատկապես, երկրի բախտը որոշողներին՝ պաշտոնյաներին: Իսկ եթե

բոլորով փորձեն իրենց մկրատները մի կողմ դնեն, միասնականը գտնեն ու չափեն, ու կտրեն:

Երանի մի օր թռչունների երամի բնագդն ունենանք՝ ճիշտ ուղին դեմներս բաց:

ԿՈՉ

Աշխարհի բարի կամքի տեր մարդկանց, ժողովուրդների անկախության, ազատության ջատագով մտավորականներին, մշակութային գործիչներին, գրողներին և արվեստագետներին

Ազատատենչ Արցախի հողում սանձազերծված ադրբեջանա-թուրքական ագրեսիան՝ չնայած անհապաղ հրադադարի հաստատման կոչերին ու պահանջներին, շարունակում է արդեն մեկ ամսից ավելի՝ նույն ուժով և ինտենսիվությամբ: Վարձկան ահաբեկիչների, թուրքական հատուկ ջոկատայինների, ժամանակակից ամենամահաբեր զենքերի ու զինատեսակների կիրառմամբ թուրք-ադրբեջանական տանդեմը ջանում է ամեն գնով հասնել պատմական Արցախը հայաթափելու, հազարամյա բնիկ ժողովրդին բնաջնջելու իր հրեշավոր նպատակին: Ավելին՝ չկարողանալով իրականացնել բլից կրիգի իր ծրագիրը, սկսել է դիմել ամենաանմարդկային միջոցների՝ անխնա ուժակոծելով Արցախի Հանրապետության քաղաքներն ու գյուղերը, խաղաղ բնակչության դեմ կիրառելով միջազգային կոնվենցիաներով արգելված զինատեսակներ՝ կասետային, ֆոսֆորային ռումբեր, վիժեցնելով Միջազգային Կարմիր Խաչի միջնորդությամբ, զոհվածների մարմինների, վիրավորների ու գերյալների փոխանակման մարդասիրական գործընթացը, որոնք օր-օրի ավելի իրական են դարձնում մարդկային ու բնապահպանական աղետի բռնկումները տարածաշրջանում:

Նկատի ունենալով այդ ամենը, դիմում ենք աշխարհի բոլոր խաղաղասեր ու արդարասեր պետություններին, ժողովուրդներին և մտավորականներին՝ իրենց ձայնը բարձրացնելու Մեծ Աղետի կանխման և բազմաչարչար Արցախի հողում խաղաղության հաստատման համար:

ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

ՀԳՄ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ

ԿՈՉԸ

Արդեն մի շաբաթից ավելի է, ինչ ադրբեջանցի չակերտավոր բնապահպանները փակել են Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը բնապահպանական հորինովի խնդիրներով, որոնք հետո վերաճեցին քաղաքական պահանջների: Զարմանալի է, ո՞ր էին այդ բնապահպանները, երբ Ադրբեջանի ֆոսֆորի ռումբեր էին նետում Լեռնային Ղարաբաղի անտառների, բեկորային ռումբեր էին նետում քաղաքացիական շենքերի, մանկապարտեզների, դպրոցների, հիվանդանոցների վրա: Բարեբախտաբար աշխարհի

բարեսիրտ մարդիկ, օրինասեր միջազգային կազմակերպությունները և երկրները իրենց ձայնն են բարձրացնում այս անմարդկային, ցեղասպան, դարերով մշակված գործողությունների դեմ: Լեռնային Ղարաբաղում գրողների միության անդամները գտնվում են ծանր սոցիալ-տնտեսական և բարոյա-հոգեբանական վիճակում: Նրանցից ոմանք ծեր են, հիվանդ և կարիք ունեն բուժօգնության և աջակցության:

Հայաստանի գրողների միության վարչությունն ու նախագահությունը դիմում են աշխարհի գրական-մշակութային կազմակերպություններին, գործիչներին և ակնկալում նրանց ձայնի ուժգին ալիքը: Այլապես այսպիսի «բնապահպաններ» մի օր հայտնվելու են իրենց երկրների ճանապարհներին: Աստված հեռու պահի նման «բնապահպաններից»:

ԿՈՉ

Աշխարհի գրողներին, հատկապես մանկագիրներին

Սա կոչ է կոչերի ունայնության մասին:

Ամբողջ աշխարհի քաղաքակիրթ երկրների ղեկավարները, միջազգային կազմակերպությունները, սենատորներն ու բարձր ներկայացուցիչները, լրագրողները Լաչինի միջանցքի բացման համար կոչեր են կոչում ու գոչում, իսկ մի ինքնավստահ տիրակալ թքած ունի այդ ամենի վրա: Ո՞նց փրկենք նրանց պատիվը: Նրա հրամանով Արցախի Հանրապետությունը Հայաստանին կապող միակ, միջազգայնորեն ընդունված, 2020 թվի նոյեմբերի 9-ի համաձայնագրով հաստատված, ռուսական խաղաղապահներով հսկվող միջանցքի վրա կառուցել է վիշապ-անցակետ: Թույլ չի տալիս ել ու մուտ: Արդեն յոթ ամսից ավելի սովի ճիրանները սեղմում են արցախցիներին: Միջազգային կարմիր խաչի մեքենայից առևանգում են 68-ամյա հիվանդ տղամարդու: Միջնադարյան ինկվիզիցիայի համառությամբ խարույկ են վառել բոլոր մարդասեր հոգիներում: ԿԽՄԿ-ն շփոթահար և անգոր նայում է փակ անցակետի երախին: Եվս մի լացակումած անտեր:

Արդարադատության աստվածուհի Ֆեմիդան կրկնակի, եռակի, քառակի, հարյուրակի ժապավեններով փակում է փակ աչքերը, չտեսնելու ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի վճռի հանդեպ Ադրբեյջանի կողմից արհամարհական, ոտնահարող, ձեռառնոցի վերաբերմունքը: Խեղճ Ֆեմիդա: Ոճիրը կա, պատիժը՝ ոչ, դատը կա, դատաստանը՝ ոչ:

Եռակողմ հանդիպումները (ԵՄ, Հայաստան, Ադրբեյջան, ապա Ռուսաստանի և հետո ԱՄՆ-ի մասնակցությամբ) ավարտվում են, և Ալիևը շարունակում է նույն հայատյաց ոճով, նրա հրամանով կրակում են Արցախի ու Հայաստանի սահմաններին ու դիրքերին,

հողագործների վրա: Նա իբր խաղաղության ջատագով է, սակայն միևնույն պահին Բաքվի պետական հեռուստատեսությունը ֆիլմ է ցուցադրում Արևմտյան Ադրբեջանի մասին, որը իրականում Հայաստանի մասին է: Ոնց հավատալ այս երկերեսանի քաղաքականությանը, որի վարպետ-դաստիարակն է Թուրքիան, հանրահայտ հայոց ցեղասպանության անպատիժ իրագործողը: Սպառնալիքների, ոտնձգությունների ու ռեալ կրակոցների մեթոդով իրենց բնիկ օջախներից փորձում են դուրս մղել արցախցիներին և հետո անցնեն Հայաստանին: Աշխարհի բաց աչքերի առջև է բեմադրվում այս տրագիկոմեդիան, մեզ համար՝ ողբերգություն, մյուսների համար՝ կատակերգություն: Սուտը, խաբեությունը, անտարբերությունը գիշանգդի պես պտտվում են այս տարածքների վրա:

Բարության նկատմամբ չարի այս լպիրշությունը, հավատացած եմ, թույլ չեք տա մտնի ձեր տողերի մեջ, իսկ եթե մտնի՝ վերջում խիստ կպատժվի:

Սակայն իրական աշխարհում Ֆեմիդան ևս մի ժապավեն է կապում աչքերին՝ չտեսնելու Արցախի 120.000 բնիկների, որոնց մեջ 30.000 մանուկների, 2000 հղիների չարչարանքի տեսարանները: Երեխաները, որ Աստված տա ծնվեն, ի՞նչ են ճշալու այս արդարադատության, այս աշխարհի և գրողների, հատկապես մանկագիրների ականջներին, երևի սա՝ անխիղճ ղեկավարներին մարդ լինելու կարճ ու պարզ ճանապարհ ցուցանեք, հանուն արևի տակ սիրով ապրելու հավատի: Որևէ տիրան լսի, թե չլսի, Ֆեմիդայի պես գրողը չպետք է աչքերը և ականջները փակի, միամիտ համոզվածությամբ՝ մեկ է, բարին կհաղթի չարին:

Աշխարհի հարգարժան գրչնկերներ, եկեք միասին փրկենք ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԵԽԽՎ-ի և այլ միջազգային կազմակերպությունների, երկրների ու լրագրողների, հատկապես մանկան պես լացակումած ԿԽՄԿ-ի արժանապատվությունը:

ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԿՈՉ ԿՈՉԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս հեղհեղուկ, կառավարելի-անկառավարելի քառսի ժամանակ, երբ ռուս-ուկրաինական պատերազմն է, չին-ամերիկյան-տայվանյան սողացող կոկորդիլոսն է դանդաղ երախը բացում, սերբ-ալբանական եփվող կաթսան է հիշեցնում բալկաններից սկսված 1-ին համաշխարհայինի մասին, երբ Մերձավոր Արևելքն է եղանակային բարձր ջերմաստիճանը վերածում ռազմաքաղաքական խարույկի, և այլն, և այլն, այս միջոցին

Կովկասն էլ իր բաժին փայտածուխը, չէ, նավթն ու բենզինն է փորձում լցնել վերոհիշյալ խարույկին, և դրա նախաձեռնողը խաղաղության ջատագով Ադրբեջանն է, թոչնոդ սարքերով օրը ցերեկով պայթեցնում է Արցախի միամիտ «Ուրալ» մեքենան, վիրավորում խաղաղ բնակիչներին, և փորձում է ապացուցել, որ արցախցիների արյունը նավթ է, եվրոպացիներ, և մենք Բրիտիշ պետրոլիումի խողովակներով կուղարկենք ձեզ, կմեծացնենք ծավալները, որ չմրսեք ձմռանը:

Եվ ահա այս «մարդասիրական» արարքներին հետևում են քաղաքակիրթ կոչեր ԱՄՆ-ի պետդեպից, ԵՄ-ից, ՄԱԿ-ից, Մակրոնից, թե պետք է թուլացնել լարվածությունը, կողմերին՝ Ադրբեջան-Հայաստան, հարկ է զսպվածություն: Մեկը հարցնող լինի՝ Հայաստանն ի՞նչ գործ ունի այս միջոցում, այնտեղ ռուսական խաղաղապահներն են, Արցախի ոստիկանությունն ու զինվորականները: Վստահ եմ, կոչողները լավ չգիտեն Հայաստանի ու Արցախի տեղը, կամ չիմանալու են տալիս:

Հայաստանի ԱԳՆ-ն փորձում է իր խաղաղասիրական քաղաքականությունն ապացուցել, սակայն վերոհիշյալ միջազգային կազմակերպությունները շարունակում են կարծրատիպը՝ երկու կողմերին կոչել զսպվածության, և չեն էլ հիշատակում Լեոնային Ղարաբաղի գոյության մասին իրենց պարտավորությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, իրենց համար ճիշտ էլ անում են, քանզի լավ են հիշում ինչպես է Ալիևը իրենց վրնդել Բաքվից, պարզ, հողաբաշխ թելադրելով՝ դուք չկաք, յո՛խ:

Որից հետո ո՛չ ԱՄՆ-ից, ո՛չ Ֆրանսիայից չինչեցին իրենց գոյության մասին ծպտուններ, միայն Ռուսաստանը, որի ներկայացուցիչը բացակայում էր Բաքվից վրնդվածների մեջ, անորոշ ընդունում-լռում-շեշտում է իր գործնական դերը, 20 թվի նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարությունը:

Արցախի վրա հարձակումը ռուսական խաղաղապահներին դուրս քշելու հերթական քայլերից է: Սա չեմ կարծում, թե չի ընկալում Ռուսաստանում, Պուտին-Էրդողան Սոչիի նախատեսված շտապ հանդիպումը թելադրված է այն վտանգներով, որ հյուսվում են Ռուսաստանի շուրջ: Ուզենք, թե չուզենք այսպես է երևակվում աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական իրավիճակը: Որոշ իմաստով Պեկին-Մոսկվա սերտացումը բարձրացրեց Ռուսաստանի տրամա-դրամադրությունը, չհաշված այլ հանգամանքներ: Չմոռանանք Իրանին: Նրանք հստակ հայտարարում են՝ ոչ մի սահմանային փոփոխություն չեն հանդուրժելու իրենց երկրի շուրջ:

Մեր արյունը նավթատարով հոսում է Եվրոպա: Ջոզեֆ Բարելը խիստ անհանգստացած է առաջիկա ձմռան ցրտով և կոչ է անում թուլացնել լարվածությունը չգիտե որտեղ, նա Լեոնային Ղարաբաղի, առավել ևս Արցախի տեղը դժվար իմանա:

Նա կարո՞ղ է մեզ ասել, եթե ռուսական խաղաղապահները երկու-երեք տարի հետո դուրս գան Լեռնային Ղարաբաղից, Ալի՞նն է գուրգուրելու և թաքուն սրախողխող անելու հայերին, թե՞ երկնային թաքնված սատանաները: Եվրոպան էլի կկոչի զսպվածության, այս անգամ կպահանջի գառների լռություն գորշ գայլերի ռիմակի առջև:

Հա, մոռացա ձեզ ասեմ՝ Ալիևը նաև Երևանն է համարում իրենց հին հողը, չգիտես ինչու բաց է թողել Վիեննայի պատերը իրենցը համարելը:

Երևի վախենում է ձեր կոչերից, խեղճ մարդ:

Հիմա ինձ մնում է կոչեմ կոչերի վերաբերյալ՝ դուք չե՞ք ամաչում ձեզանից, նավթի և արյան այս մոլախաղից, աշխարհի անվտանգության ծույլ ու անկար պահապաններ:

ԵՐԿՈՒ ՔԱՐՀԱՆԳՈՒՅՑ ՄԻ ԿՈՇԿԱԹԵԼԻՆ

Վրեժ Բարայելյանին

Երեկոյան զանգեց կին խմբագիրը, ասաց.

– Հուզվեցի գրածիցդ:

Հետո մենք մեր գրչեղբոր մասին խոսքեր տվինք-առանք, ու խմբագիրն առաջարկեց.

– Մի բան՝ պատմվածք կամ բանաստեղծություն տուր, բայց քո էն գրվածքների պես՝ փախած, ոնց ասեմ, դու հասկացար, չե՞, փախած:

Ես առանց մանրամասնելու պատասխանեցի.

– Հասկանալի է:

Երբ հեռախոսը լռեց, մտքումս դանդաղ շուռումուռ եկավ «փախած» բառը, ու փորձեցի զգայել, թե ինչ էր խմբագրի ստույգ ուզածը՝ աբսուրդ գիր, հումորիկ շարժ, թախծալի հուշ, սարկաստիկ, բացբերան ծաղր կամ հրապարակախոսական դադող պաթոսով ճիչ, կամ այս ամենն իրար խառնած, հունցած, եփած կարմիր, չոր կողերով ձեռքեր վառող բոքոն: Զգիտեմ: Բայց այն, որ «փախած» բառը եղունգի տակ մտած մառի պես սկսեց տանջել՝ փաստ է:

Ո՞վ չգիտի՝ աշխարհում ամենասոսկալի հալածանքը կրում ես չընկալված խոսքից, մտքումդ թպրտացող մոռացված բառը հիշվելու փորձերից թեթևորեն խույս է տալիս ու ձկան բերանով ժպտում քո համառ փորձերի վրա:

Ես չեմ ուզում թղթապանակներում որոնել մի փախած բան, ես վերածվել եմ հիդրայի, որն ամեն կողմից փորձում է ընդգրկել այն, ինչ չորոշակիացրեց կին խմբագիրը, և այդպիսի ջանքը գրելու համար ծանր մղձավանջ է: Կան թեթևորեն տրվող վիճակներ, իրենք իրենց գիր դարձող պատմվածք ու ոտանավոր, բայց և կան հաղթահարման ճիգ պահանջող բառային ամպեր, որոնցից դժվար է քամել անձրևի

կաթիլ, բռնել կայծակի շեղբ, ասեղնագործել ձյան փաթիլներ, երկնքով գլորել որոտների ահեղմունք:

Ոչ բոլորին է տրված գրելու անջանք:

Ոչ բոլորին է տրված գրելու հրճվանք:

Ում որ չի տրվել, չի նշանակում, թե չի տանջվում, չի հրճվում, գուցե ավելին՝ երանի հոգով աղքատներին, երբ այսպիսիք ու մանուկները հավասարվում են խորանի առջև:

Երբ գործից հետո տուն էի եկել ու բազկաթոռի մեջ նստած թեքվել էի կոշկաքուղերն արձակելու, զգացի՝ դժվարանում եմ ամենօրյա հասարակ, սովորական այդ գործողությունն անել, քաշեցի թելի ծայրից, չբացվեց, էլի քաշեցի, քարհանգույց ընկավ, երկու թելերն այնպես էին խճճվել, երկու տեղից քարհանգույց ընկել, որ չէի հիշում նման դեպք, մի տեղից քարհանգույց եղել էր, երկու տեղից՝ երբեք: Սրտովս նախապաշարման մի մուր ստվեր անցավ, արագ ջնջեցի և շարունակեցի կոշկաքուղերն անջատելու արդեն զայրացնող գործը:

Կոշիկը դրեցի գիրկս ու ամբողջ ուժով քանդում էի վերնի փոքրիկ հանգույցը, ափսոս, մի քանի օր առաջ ցուցամատիս եղունգը խորքից էի կտրել, էլի բռնեցի հանգույցի մեջքից, քաշեցի, խոնարհվեցի վրան, ու հայհոյանք թռավ մարդաբերանից, մարդը ձգում է ագույցը, հանգույցը, իրար մերված հնամաշ թելերը: Քրտինք ծլեց մարդու ճակատին: Կինը բշտեց.

– Կոշիկը գիրկդ առած՝ ի՞նչ ես անում:

– Օրոր եմ ասում,– ջղային մրթմրթաց ամուսինը:

– Լավ, լավ,– վեճից խուսափելով հեռացավ կինը:

Տղամարդը կարող էր մի այլ միջոցով, ասենք՝ մկրատի ծայրով քանդել հանգույցը, բայց զլաղիատորի վճռականությամբ քաշում էր հանգույցի մեջ պարզ գծագրվող թելի մեջքից ու փնչում, ֆնչում, ճոնչում:

Բացվե՛ց, բացվե՛ց: Տղամարդն ուրախությամբ շուրջը նայեց ու ցավով հասկացավ, որ չի կարող քանդել վերնի հանգույցը, եթե ներքինը չբացի:

– Չեղա՞վ,– հյուրասենյակ վերադարձած կինը հարցրեց:

– Ի՞նչը,– մոնչալուն մոտ փնչաց տղամարդը:

– Եսիմ,– խուսափեց կինն ու էլի գնաց:

– Այ քո մերը,– կոշկաթելին սեպեց տղամարդը:

Հետո հիշեց՝ «Այն, ինչը չես կարող անել զոռով, արա հանգիստ»: Մա ռ՞վ է ասել, ոչ որ, ինքն էր իր համար հորինել և հաճախ համոզվել՝ ճիշտ է ինքնասույթը:

Փորձեց հենց այնպես, առանց ճիգի: Բացվեց: Կյանքի 10 բուպեն անցավ կոշկաթելի դեմ զայրալից ու ծիծաղելի պայքարում:

Ի՞նչ դաս քաղեց տղամարդը՝ ցուցամատի եղունգը չկտրել խորքից:

Տաքատը քիչ-միչ փռոշտվել էր, հանեց ու որոշեց՝ էլ շոր չհագնի, քնի: Պառկեց ու քնեց:

Սրանից ինչ «փախած» պատմվածք, սա փինաչու տվայտանքների մի չնչին բառասյուր է:

Կարծեմ Չեխովն է ասել, որ լուցկու մասին էլ կարող է պատմվածք գրել: Ես Անտոն Պավլիչ չեմ, ինձ ոչ ոք չի թողնի Չեխով լինել, լուրջ բաներ գրելու ժամանակն է, աշխարհը գլոբալացվում է, ջերմաստիճանը բարձրանում է բևեռների սառցահալքին զուգահեռ, կողքից ու վրայից էլ հայրենական հազար ու մի ժառանգական հիվանդություն:

Կոշկաթել, կոշկաքուղ, էս էր մնացել պատմվածք դառնա, միայն հավ կխեղդեն նրանցով: Խեղճ հավ, քե՞զ ինչի հիշեցի, վիզդ պոկում են, թոցնում, չեն խեղդում, ժամանակը սուղ է: Մեքենայացված մորթ, հանկարծակի, շտապ. Սպանդանոցն էլ խղճի կտոր ունի: Տղամարդը հիշեց, որ քնած տեղից վեր թռավ, հարսի ցավագին ճիչը միջանցք բերեց իրեն ու կնոջը: Հարսը գրկել էր աղջկան ու կերկերուն ձայնով կանչում էր.

– Տաթև, Տաթև:

Սկեսուրը հասավ թոռնիկին, աջ ու ձախ այտերին ապտակեց: Դանդաղորեն շարժվեցին Տաթևիկի կուլ գնացած աչքերը, ուշքի եկավ:

– Բժիշկ, բժիշկ,– կանչեց հարսը:

Աղջկան գրկած դուրս տարավ սկեսուրը, ետևից՝ հարսը: Հարևանի տղան լացուկոծի վրա հասավ, գրկեց աղջնակին ու տարավ իր մեքենայի կողմը: Սա այնքան արագ կատարվեց, որ էս չհասցրի հագնել տաբատս:

Լալիս էր Տաթևիկի ախպերիկը, տղամարդը, այսինքն՝ էս, դեռ չէի հասկացել կատարվածի պատճառը, հանկարծակի դիպվածի էությունը, գրկեցի երեխային, կանգնեցի պատուհանագոգին և շշնջացի.

– Նայի, նայի, մաման, Տաթևիկը, տատին, տեսա՞ր:

– Չէ՛, չեն երևում,– լացելով պատասխանեց:

Տարա խոհանոցի պատուհանի մոտ:

– Տեսա՞ր:

– Հա՛,– լացը կտրելով ասաց ախպերիկ-թոռնիկը:

Հարևանի տղան՝ Գագոն, քշեց մեքենան, գնացին:

Գնացինք իմ բաց անկողնու մոտ, ուր առավոտները սովորաբար օժանելիքի սրվակներով, սանրերով, մազակալով ու այլ առարկաներով ինչ-որ հեքիաթ էի

բեմադրում: Սրվակները հաճախ գայլեր էին, նրանցից մեկի տուփը՝ ֆուտբոլիստ, սանրերը՝ ոգնիներ, հատկապես մետաղյա փշերով կլորիկ սանրերը միշտ կովում էին գայլերի դեմ և փրկում սարը բարձրացած սպիտակ գառնուկին:

Ես ու թոռնիկս գայլերի ու ոգնիների մեր սիրած հեքիաթի դերակատարներին հավաքեցինք ներքնակի վրա: Թոռնիկս հրամայում է վերմակը սար դարձնել:

Թոռնիկս աչքերը լայնանում են, անհանգիստ նայում է ինձ:

– Ուզո՞ւմ ես խաղանք, – շտապ հարցրի:

– Հա՛, – համաձայնեց:

Մանկական հիվանդանոցից զանգեց կինս և արագ-արագ ասաց.

– Մի՛ անհանգստացիր, լուրջ բան չկա, երեխան չուտող է, բոյ է քաշում, և փորն է ցավել:

Տաթևիկին երկու օր պահեցին հիվանդանոցում, կաթիլային սնուցումը զգալիկ ազդուրել էր: Ոչ մի լուրջ անհանգստացնող բան չէին հայտնաբերել: Վերջում կրկնակի նկարեցին սիրտը: Առողջ էր: Այս երկու օրը տղաս հասկացել էր, որ որքան անորոշ է հիվանդությունը, այնքան բազմանում են վճարովի ծառայությունները՝ ստուգում, կարդիոգրամա, հետազոտություններ՝ մասնակի և համալիր:

– Կարևորը առողջ է աղջիկդ, ի՞նչ ես փնթփնթում, – ասացի:

– Տաթևը ներերակային սրսկումներից և առհասարակ ոչնչից չվախեցավ, քաջ աղջիկ է, – ասաց տղաս:

Երեխային տուն տարան:

Սա ի՞նչ «փախած» պատմություն, հասարակ կյանք, երեխա են, կընկնեն-կելնեն:

Տաթևիկի հիվանդանոց ընկնելն ինձ կտրել էր ընկերոջս հետ հանդիպելուց: Բլոթ խաղալն ինձ համար սովորական, առօրյայի մի քանի ժամը լցնելու ժամանց է, իսկ նա՝ ընկերս, երբեմն այնքան լուրջ է ընդունում խաղը, որ նրա գոռոց-բոռոցից լրջանում էին խաղընկերները, փորձում հանգստացնել.

– Խաղ է, էլի, ինչի՞ ես սրտիդ մոտ ընդունում:

Նա սև, մեծ աչքերը խոլորում է և սաստ ասում.

– Պիտի չախեր, չչախեց:

Կամ մի ուրիշ բան է ասում.

– Իմ սխալն էր:

Կամ.

– Մեր գյուղում մարդ կսպանեին այդ սխալի համար:

Հետո արագ մոռանում է հաղթանակ ու պարտություն և կնոջ հետ սեղան է գցում: Ջահել տարիներին անասոված խմող էր, հիմա՝ չափի մեջ, մերթ ընդ մերթ կարմրում է մի բաժակ օղուց: Ասում է.

– Ալերգիա է:

Նոր գրած պատմվածքը հրում է դեպի ինձ.

– Ուզո՞ւմ ես, կարդա:

Զանգեցի: «Ոնց ես, ոնց չեսից», հետո պատմեցի թոռնուհուս գլխով անցածը:

Նա ճանաչում էր Տաթևիկին, նրա թոռնիկ Դավիթը Ծաղկաձորում խաղում էր մեր աղջնակի հետ, ընկերս ու կինը կարծում էին՝ Տաթևը մեծավարի տիրություն կանի գծուկ Դավթին, բայց նա էլ պակաս գծուկը չէր: Էծը կապել են էծի կողքին:

Նա ցավով արձագանքեց.

– Հիմա լա՞վ է:

– Հա՛, – ասացի, – քեզնի՞ց ինչ կա:

– Ծխելը թողել եմ, բրոնխներս, պարզվում է, մրսել են:

– Կարո՞ղ է Չաուշի հիշատակի օրը դրսում շատ մնացինք:

– Երևի:

– Էս երկու օրը հանդիպենք, – ասացի:

– Հա՛, տանն եմ լինելու:

Ասաց այնքան թեթև ու ջինջ, որ մտածեցի՝ ծխելը թողնելու հետևանք է:

Մեկ օր անց, առավոտյան, կնոջն ուղարկել էր ինչ-որ ջրի-մրի վարձերը մուծելու, ինքը նստել էր բազմոցի իր սիրած տեղը, կողքը դրել իր գրքերից մեկը՝ «Վաղ թե ուշ», գրել պարտադիր պարզաբանում, իսկ մինչ այդ, գուցե, տան դուռը բաց թողել, բարձրացրել հեռուստացույցի ձայնը և քունքին դրած օրինական ատրճանակից արձակել կրակոց:

Այդ զենքով առաջին ու վերջին կրակոցը:

Նրա կայծակե մտքերի շրխկոցը մի պահ խանձել է հարազատների կողմից իրենից թաքցրած, սակայն իրեն ներքնատեսորեն հայտնի քաղցկեղի ճյուղավորումը: Կարճ, կտրուկ:

Կինը, ինձ տեսնելով, լացախառն ասաց. «Վերջը իր սասունցիությունն արեց: Կարծում էր չէ՞մ խնամի»:

Մի կին բազմոցից արյունն է մաքրում:

Իմ տան սեղանին փռված թերթի մահախոսական էջից նայում է գրչընկերս: Կարծես ժպտում է:

Նա գիտեր՝ մեծագույն խեղճությունը ինքդ քո դեմ խեղճանալն է, քո աչքերով նայող ճակատագրի առջև ընկրկելը: Չդառնալ բեռ ամենասիրելի մարդկանց ու հողի վրա:

Երեկոյան քամին պատուհանից ներս ընկավ, միայն իրեն հատուկ ճարակությամբ շնչավորեց, թրթռացրեց, ծփծփացրեց թերթը, ալիքվում է թերթը, մահախոսական էջից դանդաղորեն, ոչ հանդիսավոր պոկվեցին գիր ու լուսանկար, աղավնիների նման օդում կախված ճախրեցին ու դուրս թռան բաց պատուհանից:

«Փախած» պատմություն՝ երկիրը լքողների, երկրից թռչողների: Գրվածքներ կան, որոնք չեն մնում թղթին, նրանք թռչելու համար են: Այսուհետ գրել թռչնի փետուրով: Վերջ:

Վեր կացա, նայեցի շուրջս՝ ոչինչ չտեսնելու, չփնտրելու անորոշությամբ:

Սև կոշիկներս բազմոցի կողքին, իրար թեքված, քիթ քիթ, լուռ էին գոմեշորեն:

Եվ կոշկաթելը՝ արձակ:

ԵՐԿՆՔԻ ԿԱՊՈՒՅՏԸ

Անցյալ դարի 60-ական թվականներին արձակի դաշտ էին ներխուժել ջահել ու տաղանդավոր տղերք, որոնց գրվածքները ձնհալի տակից դուրս եկած ձնծաղիկների պես թարմ էին ու դժուրիչ, խոսքը մերկացել էր կեղծ կաղապարներից, գաղափարական ուղղորդված գծից և ձեռք էր մեկնել եվրոպական ու համաշխարհային գրականության ժամանակակից բարձր ու ազատ մտածողությանը:

Պերճ Զեյթունցյանն այդ փաղանգի մեջ իր յուրահատուկ ձայնն ուներ և «Կլոդ Ռոբերտ Բդերլի» վեպով դարձավ ընթերցողների և, հատկապես, մեր սերնդի գրողներից շատերի սիրելի ու սպասված անունը:

Ամեն նոր գրքի հետ Պերճ Զեյթունցյանի խոսքն ավելի ընդարձակեց ժանրային սահմանները, նրա դրամատուրգիան թատրոնների բեմերից խոսում է պատմության ու ներկայի հետ և առավել, ապագայի խորքերից է քննում անցյալ ու ներկա: Թարգմանում են նրա երկերը, նա արժանացել է բարձր մրցանակների ու կոչումների, և այդ ամենն ընդունվում է շատ սովորական՝ այդպես էլ պիտի լիներ, արժանավոր է: Իսկ իբրև մարդ՝ ազնվական հայի ձիգ տեսակ է, որի հետ շփվելիս երկնքի մոտիկությունն էս զգում: Պատահական չէ, որ նա իր աչքերում միշտ անհունի կապույտն է պահում:

«ԳԹ», թիվ 37, 2013 թ.

ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ

Կյանքից հեռացավ մեր գրականության ևս մեկ նվիրյալ՝ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս և թարգմանիչ Պերճ Զեյթունցյանը, ում ողջ կյանքն ու գործը շողկապված են մեր ժողովրդի պատմությանը, ներկային ու, հավատացած եմ, ապագային: Նաև հաստատապես օտար երկրների նրա ընթերցողներն ու գրչընկերներն այսօր կցավեն իսկական մարդու և գրողի մահվան կապակցությամբ:

Նա ՀՀ պետական մրցանակի կրկնակի դափնեկիր էր, Հռոմի «Թիբերնա» ակադեմիայի անդամ էր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արժանացել էր Երևանի պատվավոր քաղաքացի, «Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ» Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և մեր հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանների:

Մրանք կարճ թվարկումն էին Պերճ Զեյթունցյանի վաստակի գնահատման, բայց ինչպես ինքն էր գրել մի հոդվածում, այնքան էլ կարևոր չեն կոչումներն ու մեղալները, կարևորը գրողի անունը սիրելի լինի: Այդ առումով սիրելի գրողին ոչ միայն սիրում, այլև նրանից սպասում էին ու պահանջում նոր ստեղծագործություններ: Մարդու տապանաքարին նշում են ծննդյան և մահվան թվերը և նրանց միջև ուղիղ գիծ է, բայց արդյո՞ք դա ուղիղ է:

Գրողի ծնունդը Եգիպտոսում 1938 թ. հուլիսի 8-ին, Ալեքսանդրիա քաղաքում. Սա չի՞ նշանակում, որ նա իր մանկությունից լսել ու կրել է հայոց ճակատագրի ծանր կնիքը, թեպետ նրա մանկական լուսանկարներում ջինջ ու պայծառ հայացք է: Բարեբախտաբար, իհարկե, մեզ համար 1948 թվին ընտանիքով ներգաղթել են Խորհրդային Հայաստան, սովորել է Ղազարոս Աղայանի անվան դպրոցում: 1963 թ. ավարտել է Ռուսաստանի Պյատիգորսկ քաղաքի օտար լեզուների մանկավարժական ինստիտուտը և Մոսկվայի Գորկու անվան գրականության ինստիտուտի սցենարական դասընթացները:

Գրող – առաջին գիրքը, «Նրա առաջին ընկերը» լույս է տեսել 1956 թ., ապա՝ «Մեր թաղի ձայները»՝ 1959 թ., «Մեզանից հետո»՝ 1963 թ., «Փարիզի համար» (1965) և վերջապես «Կլոդ Ռոբերտ Իզերլի» (1968) տպագրված գիրքը, որի մասին եղան իրարամերժ կարծիքներ:

60-ականների սերնդի հետ համընկավ նրա մուտքը՝ Ադասի Այվազյան, Հրանտ Մաթևոսյան, Վարդգես Պետրոսյան, Ռուբեն Հովսեփյան, Զորայր Խալափյան, Նորայր Ադալյան, Մուշեղ Գալշոյան, Վահագն Գրիգորյան, ամեն մեկն իր ուրույն ձեռագրով և Պերճ Զեյթունցյանը՝ նմանապես:

Ամերիկյան արձակի հետք փնտրեցին նրա գործերում, 70-ականների սկզբում նա մի հոդված գրեց Դերենիկ Դեմիրճյանի մասին և դրանով պատասխանեց իրեն եվրոպական և ամերիկյան ազդեցություն կրողի մակնիշ կպցնողներին, ասելով. «Դեմիրճյանի մեթոդն էր «Քաջ Նազարը» կողքից նայել, ասես խաղացող մանուկների: Պայմանականի և իրականության, ֆանտաստիկայի և իրապատումի ներդաշնակ միասնության, մանկական խաղ, թամաշա»: Ահա այս գեղարվեստի նորագույն ձևի մեթոդն էր, շարունակեց հոդվածի հեղինակ Զեյթունցյանը: Նշեց նաև. ««Վարդանանքում». Պատմական ռոմանտիկ շղարշի մերժում:

Պատմությունը արդիական շունչ ունի: Պատմությունը միջոց է, ոչ նպատակ: Ծառայում է այսօրվա նպատակներին»:

Այսպիսի գաղափարներ դավանողը պիտի գրեր «Արշակ Երկրորդ» վեպը, «Ամենատխուր մարդը», «Մեծ լռություն» և այլ ժողովածուներ, որոնց մեջ Գրիգոր Զոհրապին նվիրված կենսագրական վեպը: Շուրջ 35 գրքի հեղինակ վեպեր, վիպակներ, պիեսներ, հոդվածներ:

Հարկ է առանձին ասել նրա հոդվածների մասին, նրա հավատամքն է՝ սիրում եմ, ցավում եմ, ուզում եմ լավ լինի իմ երկիրը: Խիղճս հանգիստ չէ, մենք վրեժ ունենք լուծելու: Վրեժի լավագույն ճանապարհն այն է, որ բարեկեցիկ երկիր կառուցենք թուրքի քթի տակ, բարոյապես ուժեղ, կեղտից ու աղտից մաքրված, որպեսզի հայը ոչ թե արտագաղթի, այլ ուզենա հայրենիք վերադառնալ: Եթե այս գիտակցությունը գերիտշխի մեզանում, դառնա միասնական կամք, մենք մեր վրեժը լուծած կլինենք: Գոնե մասամբ:

Թարգմանել է Հեմինգուեյի «Հրաժեշտ գենքին», Կիլիմանջարոյի ձյունները» Գրեհեմ Գրենի «Խաղաղ ամերիկացին» և այլն:

Մարդ և քաղաքացի, շիտակ, ուղիղ աչքերին նայող և ճշմարտություն ասող: Ասում էր. «Պետք է միշտ գրել, հոգնելու իրավունք չունենք, թեպետ մեր գրածների ազդեցությունը կարճատև է և անցողիկ»:

Ոչ, սիրելի Պերճ Զեյթունցյան, Ձեր ստեղծածը երկար է մնալու, որքան հայ ընթերցողը, ապագայում դուք զրուցելու եք, մենախոսելու փոխկանչի մեջ եք լինելու:

«ԳԹ», թիվ 27, 2017 թ.

ԼԵՎՈՆ ԱՆԱՆՅԱՆ

Աշխատում էինք «Գարուն» ամսագրի խմբագրությունում, ջահել էինք, Լևոնն այն ժամանակ մորուք էր պահում, և ինձ թվում էր 19-րդ դարից է եկել, հայ արվեստի ու լրագրության մշակներից է: Միշտ լրջախոհ, մերթ ընդ մերթ ժլատ ժպտացող և անվերջ վազքի մեջ:

Զարմանալի է, որ այդ անդուլ վազքը շարունակվեց նաև Գրողների միության նախագահ աշխատելու ընթացքում, և ո՞վ ինքն իրեն չի հարցրել. որտեղի՞ց այս մարդու մեջ այդքան ջանք, սատար լինելու կամք, անվերջ նոր նախաձեռնությունների ու իրագործումների կարողություն:

Նաև հասցնում էր գրել հոդվածներ, էլույթներ: Ամեն տեղ հայտնվում էր ու արագ հեռանում, մի ուրիշ տեղ լինելու նպատակով:

Գրողների միությունը զգաց նրա մտքի ու սրտի անմնացորդ այրման ջերմությունը և չզգաց, թե ինչպես հանկարծ մոմի պես հանգչեց: Այդպես ապրում և մարում են ժամանակի մեջ չտեղավորվող մեր հրաշալի մշակները:

«ԳԹ», թիվ 28, 2013 թ.

ԵՐԿՐԻ ԱՂԸ

Լևոն Խեչոյանը 1991 թվականին տպագրած առաջին իսկ գրքով՝ «Խնկի ծառեր», ընդունվեց որպես տաղանդավոր գրող, նրա անունից առաջ, ինչքան հիշում եմ, չի դրվել «երիտասարդ գրող» արտահայտությունը, նրա ձևավորված և հասուն գրչից սպասել են նոր գրքեր: Եվ եղան այդպիսիք, որոնք պատմության («Արշակ արքա, Դրաստամատ ներքինի») և ներկայի («Սև գիրք, ծանր բզեզ») մաքառման ու հաղթահարման, ընկրկումի և հաղթանակի մետաղյա կնիքն էին կրում:

Պատմությունը իմաստավորվում էր ներկայով, և ներկան շնչում էր անկորուստ պատմություն դառնալու ջանքով:

Լևոնն իմ ճանաչած եզակի գրողներից էր, ում բանավոր ու գրավոր խոսքը հար և նման էին՝ անընդհատ բառերի ու տողերի արանքում չասվածի խտություն, լուրջան հասկանալի հաղորդություն և միշտ սթափ ու պատրաստ՝ շեշտելու որևէ կարևոր բան: Նա մի անգամ ասել է, որ սպիտակ թղթին մոտենում է իբրև զինվոր: Նա թղթից հեռանում էր էլի որպես զինվոր, և պատահական չէ, որ նա ռազմիկ էր Արցախյան կռվում, նա, առհասարակ, իր կեցվածքով, մարմնակազմությամբ շատ էր հիշեցնում հատուկ պատրաստված հին ու նոր մարտիկների:

Կյանքում և գրի տարածքում մաքսիմալիստ էր: Քամում էր ամենագլխավորը: Նա ժպտում էր աչքերով, և դա նրա արծվային դեմքին լույս ու մտերմություն էր արտացոլում: Իրար հետ երկար ճամփեք ենք անցել: Ավստրիայում ես տեսել եմ՝ ինչպես են օտար ընթերցողներն ուշադիր լսել նրա «Երկրի դողը» պատմվածքը և ինչ ջերմությամբ են ընդունել: Ափսոս, որ մեզանում ժամանակակից բանաստեղծներին ու արձակագիրներին այդպես չեն լսում, չեն կարդում, չեն ասմունքում: Հազար ափսոս, հեռանում են մեր տաղանդաշատ գրողները, և հետո, համոզված եմ, շատերը ցավով կհիշեն, թե ինչու չեն հանդիպել նրանց, չեն շփվել մերօրյա գիրը արթուն պահող գրչի և ոգու ռազմիկների հետ:

Այդպիսին էր Լևոն Խեչոյանը և կմնա այդպես մեր ու աշխարհի գրականության մեջ, որպես պատերազմում ոչ թե թշնամի ու թշնամություն, այլ՝ ճշմարտություն փնտրող, իսկ խաղաղության մեջ՝ խիղճ ու հոգի ճառագայթող մի անկրկնելի մարդ և Բանի մշակ:

Լևոն ջան, քեզպեսներին մեզանում և այլուրեք կոչում են՝ Երկրի աղ:

«ԳԹ», թիվ 1 (Հատուկ թողարկում), 2014 թ.

ՎԱՐԱՆՂ

Վարանդը ճանաչված ու սիրելի բանաստեղծ է ոչ միայն Իրանում, այլև Հայաստանում ու Սփյուռքի այլ օջախներում, և այդ ճանաչումը նրա ազնիվ ու ճշմարտացի գրականության՝ հայրենի արմատներին հայ հոգևոր արժեքներին նրա անդավաճան նվիրումի անդրադարձն է: Վարանդը այն հեղինակներից է, ովքեր հստակ գիտակցում են իրենց ասելիքի կարևորությունը և գեղագիտական պաճուճանքներից գերադասում են ոգեղենն ու ճշմարիտը, մանավանդ, եթե խոսքը հայապահպանության և հայրենասիրության ոլորտից է: Եվ, այդուհանդերձ, անհնար է նրա գրականությունը սիրված կամ ընտրովի թեմաների մեջ տարալուծել: Բոլոր թեմաներն էլ՝ անձնայինից մինչև քաղաքացիական կողմնորոշում, Վարանդի գրական հայացքի տիրույթում են՝ ժամանակի իրադարձությունների բովում կոփված և իրենց նշանակությամբ ժամանակի քննությանը դիմակայող: Վարանդը մշտապես կապի մեջ է և համագործակցում է Հայաստանի գրողների միության հետ: Գիրք նվիրելու օրը նա իր բազմաթիվ գրքերից հարյուրավոր օրինակներ ուղարկեց Հայաստան, դրանք ՀԳՄ-ի միջոցով հայաստանյան գրադարաններին նվիրելու համար: Անգնահատելի է նրա ծառայությունը նաև հայ ժամանակակից գրականությունը թարգմանաբար Իրանում տարածելու գործում: Դիտարկելով և արժեվորելով Վարանդի բովանդակ կյանքը՝ պիտի փաստել, որ 60-ամյակը ճանաչված գրողի համար ընդամենը նոր էլակետ է, ստեղծագործական կյանքի նոր, բեղմնավոր հեռանկար:

«ԳԹ», թիվ 18, 2014 թ.

ԱՇՈՏ ՔԵՐՈՒՅԱՆ

Առավոտ շուտ զանգեց Ռոլանդ Շառոյանը և առանց «բարիլույսի» փորձում էր մի բան ասել: Հասկացա, որ գույժի լռություն է: Եվ ցավալիորեն այդպես էր: Հանկարծակի մահացել էր մեր վաղեմի ընկեր, բանաստեղծ Աշոտ Քերոբյանը, որին բոլորը իր ծննդականի անունով էին շարունակում կոչել՝ Շոթա:

Աշոտ Քերոբյանը կյանքն ապրեց թվացյալ թեթևությամբ, որի մեջ կար բանաստեղծական չպարտադրող թրթիռ: Ինքը բանասեր չէր, մաթեմատիկոս էր: Թվերի և բառերի միասնականությունը Շոթայի էությանը հաղորդում էին փիլիսոփայական զվարթ գոյակերպ: Հումորը նրա էության անբաժանելի մասն էր: Այն մարդկանցից էր, որ

երբեք խմբագրությունների դռներ չէր ծեծում, իր գրածները ժամ առաջ տպագրված տեսնելու մարմաջ չունեցավ երբեք: 60-ականների սերնդից էր, տպագրվել է «Գարուն» ամսագրի առաջին համարներում, սակայն հետագայում երկար տարիներ իրեն դուրս էր դրել գրականության ասպարեզից: Ու չդարձավ շուրջգրական դեմք: Աշխատել է Ազգային գրադարանում՝ փոխտնօրեն, ինչպես նաև «Ծիծեռնակ», ապա և՛ «Նորք» ամսագրերում: Տարիներ անց հրատարակեց կյանքում իր միակ գիրքը՝ «Անապատ առանց օազիսի» վերնագրով: Նրան ճանաչելով՝ պիտի ասեմ, որ գիրքը կարող էր վերնագրել իր պատկերի համաձայն՝ «Օազիս առանց անապատի»:

Նրա մեկսենյականոց բնակարանը սերնդակիցների համար խոսքի, խաղի (սիրում էր շախմատ խաղալ) հավաքատեղի էր: Գրքի դարձերեսին երջանկահիշատակ տաղանդավոր նկարիչ Վիգեն Թադևոսյանի գծանկարն է՝ Շոթայի դիմանկարը: Եվ չեմ կարող չհիշել այն երեկոները, որ մենք երեքով՝ Աշոտը, Վիգենը և ես, երկար ժամեր ենք անցկացրել: Դրանք իմ կյանքի լավագույն պահերից էին: Աշոտն իր երկայն հասակով ինձ հիշեցնում էր Դոն Կիխոտին, և ես նրան կոչում էի Դոն Կիշոթա: Այդպես էր նրա հոգին՝ պարզ, անմիջական, մարդկային ու բարի: Այդպես էր նրա գիրը: Այս ժողովածուն վկայում է մի բան՝ մարդկը կարող է ապրել իբր գրականությունից դուրս, բայց գրականության միջուկում: Եվ պարտադիր չէ ծածանել բանաստեղծ լինելու հանգամանքը: Պարզապես լինում են բանաստեղծ:

Գրքի վերջին բանաստեղծությունը վերնագրված է «Անհրաժեշտ դադար»: Այդ դադարը բոլորին է սպասում: Եվ այդ բանաստեղծության առաջին տողը՝ «Երբ չեն գրվի այլևս լավ բանաստեղծություններ», կարծում եմ, գրվել է այն հավատով, որ միշտ էլ կգրվեն լավ բանաստեղծություններ:

Աշոտ Քերոբյանի մարդկային և գրական կյանքը դա են ապացուցում: Հոգին դուրս արած մարդու լավագույն կերպարներից էր, որին ես բարեբախտաբար հանդիպել եմ:

Գնաս բարով, ջանս (քո սիրած բառը քեզ եմ վերադարձնում ընդմիշտ):

«ԳԹ», թիվ 33, 2015 թ.

ՀՐԱՉՅԱ ՍԱՐՈՒԽԱՆ

Հրաչյա Սարուխանը անցյալ դարի 60-70-ական թվականներին գրականություն մուտք գործած երիտասարդ սերնդի լավագույն դեմքերից էր: Նրա բանաստեղծություններն առաջին անգամ տպագրվել են «Ավանգարդում» և նկատվել Մահարու կողմից:

Հրաչյա Սարուխանի հետ մեր ընկերությունը տարօրինակ ստացվեց: Նա սովորում էր Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանում, դիպլոմային աշխատանք էր

նկարում և ինձ կանչեց որպես բնորդ, կոչվում էր «Երիտասարդ բանաստեղծի դիմանկար»։ Ութերիս տակ մի ծաղկաման կար, որի մեջ ծաղիկների կեսը նկարել էր, կեսը՝ ոչ։ Ես էի նկարում մնացյալը։ Ինքն արդեն ամբողջովին տրված էր գրականությանը։

Հիշում եմ Գարիկ Պասմաճյանին նվիրված բանաստեղծությունը. քայլում էինք, հանկարծ գրպանից հանեց ձեռագիրն ու կարդաց. «Երևանից մինչև Երուսաղեմ գլորվում է պոեզիայի դատարկ սկուտեղը, ախր ո՞ր ես գնում, շան տղա»։ Եվ այս տողի մեջ կարծես Գարիկի ապագա ծանր ճակատագիրն էր երևում։

Իր մարդկային, ազնիվ, բանաստեղծական էությանը, աստվածաշնչյան, մեր հայ գրականության, նաև իր կենսափորձի շաղախով շատ լավ բանաստեղծություններ էր գրում և՛ ազատ, և՛ դասական տաղաչափության ձևերի մեջ։ Թվացյալ խաղաղ արտաքին թաղանթի տակ ջղաձիգ վերաբերմունք, ապրում, այսինքն՝ բանաստեղծի, մարդու կեցվածք ուներ։

Հրաչիկի մարդկային տեսակը հազվագյուտ էր, ազնիվ, պարկեշտ, գրական ընկերներին երբեք չվատաբանող։ Շատ ծանր կորուստ է մեզ համար, մեր ընկերների համար։ Հրաչյա Սարուխանի լավագույն բանաստեղծությունները մեր պոեզիայի գանձարանում կմնան։

«ԳԹ», թիվ 11, 2016 թ.

ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Ցավալի է լսել, որ Դավիթ Հովհաննեսի սիրտը այլևս չի բաբախելու մեր ցավին համընթաց, մեր բանաստեղծության խոսքի ռիթմերում, մեր երկրի հաջողություններին արձագանքող, մեր հոգսերը ցուցանող, վեր ու վարին ցուցամատը տնկած իր ճշմարտությունը բարբառող։

60-ականների սերնդի պոռթկուն ներկայացուցիչ էր։ Հենց առաջին գրքով՝ «Երգերի պսակ»-ով, նա համարձակ քայլ արեց, որի մասին գրեցին, գնահատեցին։ Հետագա գրքերը ևս արդեն դասական տաղաչափության ծիրի մեջ որքան ոգեկոչում էին Չարենցին ու Տերյանին, նույնքան և իր բանաստեղծական փորձառությունն էին ներկայի դեմքով վերածում բանաստեղծության հրայրքոտ գրի։

Դավիթ Հովհաննեսն աննկուն, նշավակող, երբեք հանգիստ չմնացող տեսակ էր։ Կարող էիր նրան չհանդուրժել, կարող էիր և մեծարել, բայց նրա շուրջը երբեք անտարբերության դաշտ չէիր տեսնի։

Բանաստեղծական տոհմի զավակ էր, և որքան արդիական, նույնքան նորարարական ձգտումներով։ Մեր սերնդի համար՝ ծանր կորուստ։

«ԳԹ», թիվ 25, 2016 թ.

ԼՈՒՐԹ ԱԶՔԵՐՈՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՔՈՒՐՄԸ

Մեր տղերքը, մեր գրչեղբայրները հեռանում են կյանքից հերթով, իրար հերթ չտալով, ինչ-որ սատանի քամի է պտտվում մեր մեջ, չես հավատում, որ Հրաչյա Թամրազյանն էլ, Հրաչը, լուրթ աչքերով, պայծառ հայացքով Հրաչը, պիտի տրվի հեռացման քմայքներին, ախր, ինքը շտապող չէր, ծանր էր ֆիզիկապես, ավանդապահության ուժով, դասականության հանդեպ խորունկ հարգանքով ու ամուր տոհմիկ արմատներով, որոնք մե՛րթ միջնադարի խորքերն էին պեղում, մե՛րթ ռուսական պոեզիայի ոչ վաղ շրջանի տարբեր, հաճախ հաճախ իրարամերժ շերտերը տնտղում՝ Մայակովսկիի, Եսենինի, Պաստերնակի, և թարգմանաբար հաղորդում հայ ընթերցողին։ Հայերենի նվիրյալ քուրմ, բարձր ոճի հավատավոր, իր խոսքը հաճախ բազմիմաստ նշաններով շղարշող։ Նոր ձևեր փնտրելու ջանք չէր գործադրում, իսկ ինչ գտել էր՝ խորն էր և յուրահատուկ։

Մարդ էր մշտապես կարեկից դժվար ժամանակի հրատարակիչ և պաշտոնյա ու գիտնական, մի մարդու մեջ խտացած բազում շնորհներ։

Ժամերով լողում էր Սևանում, մի օր ընկել էր որսագողերի ձկնործսական ցանցի մեջ և ձայն չէր հանում, օգնություն չէր կանչում։ Որոշ ժամանակ անց զգացվեց, որ դժվար կացության մեջ է, նավակով հասան ու դուրս բերեցին։ Հաճախ նա լռում էր, և այդ լռության մեջ շատ բան-ձկներ էին թաքտում։ Նա շատ բան տարավ չասված, իսկ ինչ ասաց՝ բանաստեղծությամբ հղկված նուրբ ականջի ու մաքուր սրտի համար է։

Բառերով խմում եմ քո կենացը, ընկեր։

«ԳԹ», թիվ 28, 2016 թ.

ՎԱԶԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ժպիտներ կան սարքովի, որոնք իրենց վրա կրում են դաստիարակված բարեկրթության նշան։ Ժպիտներ էլ կան, որոնք հոգու նուրբ ծաղիկներ են և այնքան բնական, այնքան մարդամոտ, ահա այդպիսի ժպիտի տեր է իմ ավագ բարեկամ, հանրաճանաչ գրականագետ ու դասախոս Վազգեն Գաբրիելյանը։

Նրա գրիչը, սակայն, սուր է և երբեմն խոցող, դիպուկ ու խորագնին, վերլուծող ու բացահայտող։ Մեր գրականության դասական և ժամանակակից երևույթների հանդեպ նույն հայացքն է ամբողջականության ու շղթայական կապի գիտակցումով ու քննությամբ։

Արևմտահայ և սփյուռքահայ գրական դեմքերի համախումբ պատկերը մեզ է մատուցել, ու նաև թարգմանաբար նրա հոդվածներն աշխարհում տարածում են եղեռնագոհ գրողների կորստյան ողբերգությունն ու հանճարի լույսը:

Շատ Բան է արել, և շատ Բան սպասում ենք:

Չկա մի կարևոր գրական երեկո ու միջոցառում, որին ներկա չլինեն սիրելի Վազգեն Գաբրիելյանն ու նրա հրաշալի տիկին Ժենյա Քալանթարյանը: Չգիտեմ որևէ մեկի, որ նրանց տեսնելիս չուրախանա: Սա լավագույն պատասխանն է այն գործի ու մարդկային էության, որ պարզևեղ են մեզ:

Շնորհավոր հոբելյանդ, անխոնջ գրչի ու ժպիտի տեր ավագ ընկեր:

«ԳԹ», թիվ 6, 2017 թ.

ԺՊՏԱՑՈՂ ՀՈԲԵԼՅԱՆ, ԾԱՆՐԱԽՈՂ ՀՈԲԵԼՅԱՆ

Այս արագափոխ այս օրենքները վայրենաբար ոտնակոխ անող, վերջապես այս իսկացնոր աշխարհում, երբ բացեիքաց երկրագնդի ոչնչացման ումբահարումների հաստատակամ կոչերն են հնչում այստեղ ու այնտեղ, մենք կարոտում ենք հանդարտության, մարդկային մի պարզ ժպիտի, ոչ այն, որ իր կեղծությամբ ու թաքցրած սառնությամբ հոգի կհանի:

Ահա այդ մարդկային պարզ ժպիտի տերն է ըստ իմ անսասան ընկալման, Վազգեն Գաբրիելյան մարդը, տաղանդավոր գրականագետը, նույնքան տաղանդավոր ու ազնվաշուք գրականագետ Ժենյա Քալանթարյանի ամուսինը, հասարակությանը հայտնի ընտանիքի հայրը, ապա՝ պապը, մեր ազնիվ բարեկամը, ընկերը, հա, բա չեք ասում՝ քաջածանոթ դասախոսը:

Եվ այսպես շուրջ 60 տարի նրա ներկայությունը ցանկալի է հաճելի և մտքի խաղաղ փիլիսոփայությամբ հաշտեցնող, գնահատող, վերլուծող:

Մեր գրականության լայն դաշտում և. դասական, և՛ ժամանակակից, հատկապես արևմտահայ ու սփյուռքահայ գրական ընթացքի խորը իմացությամբ գրականագիտական հերկեր է բացել, որոնք ձգվել են ուսանողների, ընթերցողների հոգիներում: Ո՞ր նոր գրքի հեղինակը չի սպասել նրա բանավոր կամ գրավոր կարծիքին կամ գրախոսությանը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին իրագործեցինք եղեռնագոհ գրողների «Հողը կխոսե» անթոլոգիայի հինգ լեզվով լույսընծայումը,, գերմաներենը նաև Գերմանիայում, որի շնորհնադեսը տեղի ունեցավ Մագդեբուրգի Սուրբ Հովհաննես եկեղեցում, բազմաթիվ գերմանացի և հայտնի թուրք գրող Դոդանի մասնակցությամբ, ի միջի այլոց, Դոդանը ևս բարձր գնահատեց զոհված գրողների գրականությունը և ցավ

հայտնեց, որ նման գրողների են սպանել իրենց հայրենիքում: Գիրքը ներկայացվեց նաև Հալլե քաղաքի քաղաքապետարանում և Վիեննայի ՀՀ դեսպանատան դահլիճում:

Գրքի առաջաբանը գրել էր Վազգեն Գաբրիելյանը և այնքան խորիմաստ ու դիպուկ, որ օտարալեզու ընթերցողին ճշմարիտ պատկերացում էր տալիս ցեղասպանության և մեր սրբազան գրող-գոհերի իրական համաշխարհային արժեքի մասին:

Հոբելյարի մասին այնքան լավ գնահատականներ են հնչել, որ ինքը թույլ չի տա թվարկելով ձանձրանցնեմ իրեն, քանզի իմ ճանաչած մարդկանցից իրական համեստության համն ու հոտը առել եմ աշխարհում 85 տարի ապրած ու կյանքը առանց ճիգերի շարունակելու պատրաստ զվարթախոհ Վազգեն Գաբրիելյանից:

Շնորհավոր հոբելյանդ, սիրելի ավագ գրչեղբայր:

«ԳԹ», թիվ 8, 2022 թ.

ԾԻԱԾԱՆԻ ՊԵՍ ԿԱՄՈՒՐՁ

Գագիկ Դավթյանը ծնվել է Սյունիքի դարերի շունչը պահպանող լեռ ու ձորի, հայ հինավուրց նիստ ու կացը կրող մարդկանց միջավայրում և իր հոգում ամբարել է լեռնային գետի և լեռից լեռ խոսող մարդկանց պաթոս, որը մերթ պոռթկում է բանաստեղծության մեջ, մերթ՝ թարգմանության, մերթ՝ հասարական ու գրական տարածքներում:

Նկատել եմ՝ միշտ էլ արդարության ու ճշմարտության դիրքն է նրան ձգողը, երևի դա է պատճառը, որ Գագիկի պոեզիան անհանգիստ է, վազորդի սրտխփոցի ռիթմով, մեկ-մեկ՝ ջղային:

Աշխարհի այսօրվա իրավիճակը թույլ չի տալիս ննջել փետրավոր ամպերին ու թարմ բուրոդ դափնիներին:

Վերջին տասնամյակներին բանաստեղծն առավել ուժգնորեն է բախում տարբեր երկրների բանաստեղծական դոներն ու ընտիր հայերենով մեզ է մատուցել ու մատուցում Թագոր, Լիվադիտիս, Պուշկին, Լերմոնտով, Ֆետ, Բլոկ, Լյուբիցա Միլետիչ, հիսունից ավելի հեղինակ, երեսունը՝ վրացի: Վերջերս նա եկավ Գրողների միություն և ինձ նվիրեց վրացական պոեզիայի հաստափոր հատորը:

Տարիների անտրտունջ աշխատանքի նշանակալից արգասիք:

Կարելի է ասել, որ նա անխոնջ կամրջաշինարար է, պոեզիայի ափեր է կապում միմյանց, վերջին մի քանի տարում սերբ ու լեհ և բուլղար բանաստեղծները գրանցվեցին մեր թարգմանական մատյանում և նաև այդ պոետներից ոմանք հայերենից իրենց լեզուներ թարգմանեցին հայ բանաստեղծների: Այո, կամուրջը միակողմանի երթևեկության համար չէ: Այդ կերպ ենք ճանաչելու ոչ միայն ուրիշների գիրը, այլև մեր

ստեղծածի արժեքը: Գազիկն այս հավատամքով է գիշեր ու գոր փնտրում իր և այլոց պոետական անհայտ եզերքները: Հաճախ գտնում է ու չի բավարարվում, նորից որոնում, նորից հայտնաբերում:

Կամուրջ նախագծողը փորձարկելիս կանգնում է կամրջի տակ, դու վստահ եղիր, Գազիկ, քո կամուրջները ծիածանի յոթ գույների դյուրող ու ոգեշնչող թռիչքն ունեն՝ դեպի նոր ամյակներ, 70-ը միջանկյալ հանգրվան է:

«ԳԹ», թիվ 11, 2017 թ.

ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Ժենյա Քալանթարյանն իմ սիրելի դասախոսներից է, հիշում եմ նրա բանիմաց, հավասարակշիռ ձայնը, խոհուն քայլվածքը լսարանում, և «Հայ քննադատական մտքի պատմություն» առարկան դարձավ ցանկալի ու ձգող: Տարիների ընթացքում ես բազմիցս համոզվել եմ, որ Քալանթարյան գրականագետը խորաթափանց ջանքով մեզ է ներկայանում ոչ միայն հայոց գրականության ու գրականագիտության ինքնատիպ ու տաղանդավոր վերլուծականներով, այլև համաշխարհային գրականության ու գրականագիտության մեծերի մեկնություններով ու նրանց հետ մերոնց բաղդատումով: Մեծ հետաքրքրությամբ ենք կարդում ժամանակակից գրականագիտության նոր մեթոդների փորձերով Ժենյա Քալանթարյանի դիտարկումները ժամանակակից հայ գրողների ստեղծագործությունների վերաբերյալ:

Նա նույն օբյեկտիվ հայացքով է նայում դասականների և ժամանակակիցների ստեղծագործություններին, և նրա լրջմիտ գնահատականները երկար ժամանակի մեջ լինելու գործություն ունեն: Նա անչափ պարզ, ջինջ մարդ է, վեպանձն տիկին, և մեկ-մեկ մտածում ես՝ մեր մեծերի լավագույն գրվածքներից եթե մի էություն ձևավորեն, նրա անունը Ժենյա Քալանթարյան կլինի:

Շնորհավոր պանծալի հոբելյանդ, տիկին Ժենյա:

«ԳԹ», թիվ 17, 2017 թ.

ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ – 80

Ժենյա Քալանթարյան գրականագետին և ազնվական տիկնոջը ճանաչում եմ համալսարանում՝ ուսանողական տարիներից, երբ «Հայ քննադատական մտքի պատմություն» առարկան էր դասավանդում, և զարմանալիորեն ջահել կինը հանգիստ, խաղաղ կարողանում էր ներկայացնել առարկան այնպես, որ ուսանողները ուշի-ուշով հետևում էին և՛ նրա խոսքին, և՛ նրա հանդարտ կեցվածքին, և ամբողջ դարաշրջանի մեր

մտքի պատմությունը դառնում էր սեփականություն մեզ համար: Տարիների ընթացքում, կարդալով նրա հոդվածները, գրքերը, ես համոզվեցի, որ այն խաղաղ, հանդարտ կեցվածքը մտքի հզոր աշխատանքի արգասիք է, և հետևելով՝ տեսա, որ այդ աշխատանքը ամբարում է իր մեջ ժամանակակից գրականագիտության լավագույն շերտերը, համաշխարհային ձեռքբերումները, նվաճումները: Յուրաքանչյուր հոդված, գրքերում տարբեր հոդվածների հավաքածու նշանավորում են մեր ժամանակակից գրականագիտության բարձր չափանիշները: Այդ առումով Ժենյա Քալանթարյանի գործը մեծ դրվատանքի, մեծ գնահատանքի է արժանի: Ե՛վ դասական, և՛ ժամանակակից գրականության վերլուծականները ասում են մի բան, որ Ժենյա Քալանթարյանի դիտողականությունը, վերլուծական հզոր միտքը այդ ամենը համադրում է համաշխարհային գրականագիտության, գրականության դաշտում: Եվ, այո՛, այն էջերը, այն դրվատելի գրականությունը, որ ստեղծվել է նրա գրչի տակ, ավելի հաստատուն է դառնում, ավելի ընկալելի է դառնում: Նրա խաղաղ, հանգիստ տոնայնությունը հաստատվում է մտքի խոր վերլուծական աշխատանքով, մեկնաբանություններով: Եվ բացառված են կենաց խոսքերը, բացառված են գովքերը, բացառված են ածականները, որոնք կարող են գրողներին սիրելի լինել, բայց դա գրականագիտության դաշտը չէ: Այդ առումով բարձր եմ գնահատում իմ սիրելի դասախոսին, իմ սիրելի բարեկամին, շատ սիրելի գրականագետին և ցանկանում եմ, որ նրա այդ հանդարտ, խաղաղ, ներդաշնակ, բարր էությունը երկար տարիներ լուսավորի մեր գրական աշխարհը և նաև իր հրաշալի ընտանիքի երկինքը:

«ԳԹ», թիվ 19, 2022 թ.

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատմության Մեծ տիկիներին և Մեծ մայրերի խտացումն էր Գրետա մայրիկը: Սպարապետ և տաղանդավոր գրող հայ ժողովրդին պարգևած մայրը կարող էր այդպիսին լինել: Ամենամեծ ցավ տարած, բայց միշտ մարդկանց խաղաղ հոգի ու բարություն պարգևած Գրետա մայրիկի հետմահու գոյությունն էլ հովանի կլինի երկնքի պես...

«ԳԹ», թիվ 17, 2018 թ.

21-րդ դարի հավատավորը

Վազգեն Սարգսյանը լցվել էր մեր պետության ու ժողովրդի մեջ իր ոգու լրիվ կշիռով, և չկա մի անկյուն, որտեղ բացակա լինեի: Նա միշտ ներկա էր և ներկա է լինելու

այսուհետ, նրա գործը Հանրապետության հետ հավերժի է ձգտում Հանրապետության հիմք՝ բանակաշինություն: Ինքը, հիշում եմ, հասարակ շինելով մտնում էր «Գարունի» շենք, և ո՞վ կասեր՝ 88, 89-ի խորհրդային բանակի զանգվածեղ գոյության ժամանակ տնկում է հայոց բանակի շիվը, ո՞վ կասեր՝ այստեղից-այնտեղից հանած-գտած մի քանի հրացանով մի խումբ երկրապահներով սկսում է մի գործ, որ հետո համարվելու է երկրի պայծառ, երկրի պատմության նոր ընթերցում և նոր էջի ծաղկագարդում:

Զինջ, պայծառ, խոշոր աչքերը զոհերով ու հաղթանակներով այլևս մագնիսական դաշտեր էին, որտեղ ներկայի և ապագայի աննահանջ վճիռ ու զորքնդեղ ոգիք էին հմայված ձգտում:

Հավաքվելու, ամբարելու հսկայական ուժ էր: Առասպելական հայ գորականների, նորաթուխ խիզախների և նոր ծնված մանուկների եղած և լինելիք կորովն էր մարմնացնում:

Մպարապետ էր և է: Մեր իմացած բոլոր հզորների հետ կանգնած է մի դասում, և ժամանակների մեջ չեն լռի նրա հրամանը, հորդորը, զայրույթն ու սերը:

Նա միշտ շարժման մեջ էր՝ լեռնագետի պես, և չէր թողնում իրեն ճանաչեն, ինչպես կար՝ կոշտ, փուխր, արցունքի չափ տաք ու ոգեղեն, արյան պես արբեցնող, հատու, վճռական՝ իր անգամ չնչին սխալն ընդունելիս, հարագատ՝ իր հետ շփված յուրաքանչյուր ազնիվ արարածի հանդեպ, թշնամու ուժը հարգող, իր ուժը բարձրացնելու մշտական ջանքով, հինավուրց հայ մշակի նման ինքնամոռաց աշխատող: Մերձավորները գիտեն՝ նրա ժամն այնքան է, որքան կարող է դիմանալ: Աշխատելու այսկերպ ինքնայրույն գործընկերներին թույլ չի տալիս ոտքը կախ գցել:

Գործի մեջ մաքսիմալիստ էր: Այս վարքը նույնն էր զրուցելիս, ֆուտբոլ խաղալիս, ելույթ ունենալիս (արագախոս, չլինի մի բան թողնի կիսատ), հրամայելիս, մի բան կազմակերպելիս պետականի և ոչ պետականի բաժանում չկար, ամեն ինչ կարևոր էր:

Զարմանալի մանրամասն գիտեր բանակը՝ զորամասի վերջին բռնակից մինչև սահմանային խրամատների վիճակը, զինվորի հագուստից ու ուտելիքից մինչև որևէ սպայի կենցաղային խնդիրը: Կհավատար, բայց կստուգեր, գիշեր թե ցերեկ այնտեղ, որտեղ հարկ է: Եվ վերջում կբանաձևեր՝ ոգին է կարևորը:

Այնքան արագ էր աճում, որպես զինվորական, քաղաքական, պետական գործիչ, որ նրա բնագոյն ու միտքը թվում էին դարերի ու ներկայի մեջ համակարգված մի անվերժանելի ծրագիր: Ո՞նց էր հասցնում: Ահա այստեղ է, որ հավատում ես մարդու գերբնական, ինքն իրենից վեր բարձրացնող ուժին: Ճանաչում էիր այն, ինչ տեսանելի էր, բայց նա արդեն մի այլ տեղում էր, որ տեսնում էիր զարմանքով, որքան ճիշտ տեղում է, մինչև նոր թոփչք:

Իր մեջ կենդանացնում էր անցյալը, ապագան իրական էր և շոշափելի, ներկան՝ Վազգենական էր:

Խոսում էր 21-րդ դար մտնելուց: Դարասկիզբը՝ դառն ու դաժան, դարավերջը՝ հաղթողի նման, պիտի մտնենք 21-րդ դար՝ մի ուրիշ, ուժեղ ժողովուրդ ու պետություն դարձած: Նրա համար սա ծիսական էր հնչում և խիստ առարկայական:

Նրա հավատն այնքան հզոր էր, որ այսպես չապրելն ու չիրականացնելը՝ դավաճանությունն է:

Գրող էր՝ առնական, ջեկլոնդոնյան տիպի: Այն գիրը, որ չշարունակեց գրչով, արարեց զենքի, կնիքի, խոսքի միջոցով:

Վերջին գորահանդեսի ժամանակ նայում էր ու մատներով նվագի ռիթմեր էր զարկում ամբիոնին: Զինվորական շարայուները նրա տողերն էին Հանրապետության հրապարակի բաց մատյանի վրա:

«Հայ զինվոր»

ՕՐՀՆՅԱԼ ԾՆՈՒՆԴ

Ի՛նչ փառքով և ի՛նչ դժվարությամբ ենք ասում՝ շնորհավոր հոբելյանդ, Վազգեն Սարգսյան...

Երիտասարդ արձակագիրը Դավալուից հայտնվեց գրական միջավայրում՝ իր զինաթափող ժպիտով, պինդ, անսայթաք գրիչով և իրենց գյուղի թունդ զինով, որով օծվեց գրական զվարթ ընկերությունը, ու նա ընկալվեց վաղուց հարազատ ու շնորհալի:

Առաջին գիրքը՝ «Հացի փորձությունը»: Գնահատվեց, մրցանակի արժանացավ: Կյանքի խոր ըմբռնում, կոշտ գիր: Հացը նրա էության տաք ու կենսաթրթիռ բնութագիրն էր, փորձությունը՝ ճակատագիրը՝ իր մեջ ներառած ֆուտբոլի կախարդական մագնիսը, գրի մոգական ազնիւն, զենքի հանդեպ ազգային, պատմական ձգողականությունը:

Եվ ժամանակը սրընթաց վազքով, Արցախական դղիրդով ձուլվեց Վազգենի հուժկու մկանունքին ու պայծառ հոգուն, թռավ օդ, իջավ հողին այնքան արագ, որ փլված ԽՍՀՄ-ի, անկախացած Հայաստանի սրտագրի նման զգայուն ժամանակը չհասցրեց գրի առնել՝ սահմանային կռիվներն ու կազմավորվող երկրապահն ու Հայոց բանակը ցնծության ու կսկիծի, նահանջի ու խոյանքի, հպարտության ու մահապարտության հոգի ցնցող զանգահարությամբ էին արթուն և զգաստ պահում, մինչև Հաղթականարի կառուցում, Եռաբլուրի արծվահայաց հսկումի ներքո:

Ինչքան մոտեցան իրար մեր Վազգենի գելխեղդ ծիծաղն ու մորմոքուն լռությունը, ուրախության ու կորստի արցունքները:

Բանակաշինություն, պետնախարար, Պաշտպանության նախարար, ռազմական, քաղաքական ու պետական գործիչ: Իմ ճանաչած ամենակազմակերպված ու ժողովրդական ոգին ըմբռնած, արագ վերընթացի էակն էր, ծնված այստեղ և հիմա, ճիշտ տեղում, մեծ նպատակի նշանով ու ջանասիրությամբ: Միասնության դաշինք: Ծաղկած ծիրանենու խորապատկերին ինքն ու Կարեն Դեմիրճյանը:

Վարչապետ: Սեպտեմբերի 21, զինվորական շքերթ: Քափ-քրտինք մտած զօր ու զիշեր քննարկումներ, ծրագրեր և... Նրա հանդեպ թշնամության ու սպառնալիքի բացահայտ խոսք ու վեճ սրճարաններում, այլուրեք: Ոչ մի քայլ անվտանգությունն ապահովող պատկան մարմինների կողմից: Ամերիկայից վերադառնալուց հետո նա մռայլ էր, երկրի կոռուպցիայի պատկերն էին դրել դեմը: Նա իր բնույթին հարիր՝ կառավարության նիստում, այլ տիրույթներում ճակատներին մեխում էր ճշմարտությունը, դառը, ցավալի ու... Մերկ բռնցքով զարկում էր մեխի սուր ծայրին: Պատասխանը չուշացավ. գլխատվեց դաշինքը՝ Ազգային ժողովի դահլիճում, օրը ցերեկով:

Սա ողբերգության հետ ծաղր էր մեր ժողովրդի դեմքին՝ դրսից ու ներսից գծագրված, մինչ այժմ ո՛չ դրսինն է պարզորոշ, ո՛չ ներսի կազմակերպիչներն են բացահայտված ու դատապարտված:

20 տարի առանց Վազգեն Սարգսյանի և քսան տարի նրա հետ և միշտ նրա հետ, քանզի մեր ժողովուրդը միասնանալու խնդիր ունի, ուժեղ երկիր լինելու վճիռ ունի, մեր երկիրը ինքնավստահ ընթանալու կամք ունի, աշխարհի ուժեղների հետ բացճակատ խոսելու և իր ճշմարտությունը հասու դարձնելու խոհեմություն ունի...

Նա իր ուղնուծուծով նորի ձգտող և կառուցող մեծ անհատ էր: Խտացած, զսպանակված ժամանակի պատմական, անցյալը մի կարճ ընթացքում իր մեջ առած ու պատմական լեզենդ դարձած հիմա մեզ է նայում իր աննահանջ ժպիտով:

Օրհնյալ լինի ծնունդ, Զավեն հոր և Գրետա մոր զավակ Վազգեն...

Շնորհավոր 60-ամյակդ, սպարապետ Վազգեն Սարգսյան:

«ԳԹ», թիվ 6, 2019 թ.

ԱՓՍՈ՛Ս, ՀԱԶԱՐ ԱՓՍՈՍ...

Անդրեյ Բիտով մարդը, կնքելով մահկանացուն, իր ընթերցողներին, իր ժողովրդին թողեց հավերժության կնիքով հաստատած հրաշալի գրականություն:

Հատկապես հայերիս համար թանկ է նրա «Հայաստանի դասերը» գիրքը, որ մեզ պարզևեց ծանոթ և առավելապես անծանոթ, ուրիշի աչքերով, սրտով ու գրչով տեսած, զգացած ու բանաձևած մի նոր Հայաստանի հոգի:

Օսիպ Մանդելշտամից, Վասիլի Գրոսմանից հետո նա դարձավ աշխարհին Հայաստանի գաղտնիքներ պարզող ևս մի ռուս գրող, որին մենք ընդունել ենք որպես եղբոր:

Նա որևէ երկրի չնայեց օտարի հայացքով, նայեց ներսից, հարազատորեն, դարձավ նրա արյունակիցը: Ճշմարիտ բոլորի մեկնակետ է սա:

Հիմա հավատում եմ, որ նա այն աշխարհը ևս կվերածի այնպիսի գրի, որին հասու չենք լինի մենք, և դա կհամարենք անգնահատելի կորուստ:

Ափսո՛ս, հազար ափսոս...

Անդրեյ Բիտով, Բարեկամ, դու հավերժ ապրելու ես մեր սրտերում:

«ԳԹ», թիվ 41, 2018 թ.

ԼՈՒՐԹ ԱԶՔԵՐՈՎ, ԲԱՐՁՐԱՀԱՍՏԱԿ ԹՈՒՂԹ ՈՒ ԳԻՐ ԱՐՎԱԾԸ

Ալեքսանդր Թոփչյան քննադատին, թարգմանչին, արձակագրին, դրամատուրգին, հրապարակախոսին, կինոգետին թուղթ ու գիր են արել՝ երկնային շնորհի սոսնձով կաշել և տեր ու ծառա դառնալ թուղթ ու գրին:

Ալիկը (մտերմիկ այսպես են նրան դիմում) մի սերնդի պատմություն է ու պատմիչ: Գարունականների դատապաշտպանը խիզախորեն նրանց բանաստեղծական նավը քշեց չկամ, չընդունող, չընկալող, աշխարհի ժամանակակից պոեզիայից հեռու ինքնակոչ կուռք-դատավորների փշատերև ջունգլիի միջով ու, երբ նրանց՝ բանաստեղծներին, դուրս բերեց բացատ, լքեց ու գնաց ի՛ր գրին՝ Կիրկե կղզի:

Գրեց Ռուբեն Սևակի կենսավեպը, Բանկ Օտոմանի գործողության իր տեսլականը և պատմվածքներ, էսսեներ, հուշեր, թարգմանություններ...

Ուր էլ ապրեց, ասենք՝ Փարիզում, սրտագիրը Երևանի ու Հայաստանի պատմության ու ներկայի խորապատկերի վրա էր: Գրչածայրը՝ ցավը և թերին ցուցանող:

Նա աշխարհի մարդ է նաև, ընտիր ճաշակ, արվեստական իմացություն հաստատող և հաղորդող, հայոց Իգդիր քաղաքից սերված ազնվական բնույթով:

Այս ճաշակի ու ոգու պահպանման համար դեռ կռիվ ունես տալու ճահճի գոլությունը չմոռացած մեր զլմ-ների ու մշակույթի ասպարեզում, իմ լուրթ աչքերով, քարձրահասակ, 80-ամյա, պատանու հայացքով ընկեր:

Շնորհավոր ծնունդ:

«ԳԹ», թիվ 28, 2019 թ.

ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Լյուդվիգ Կարապետյանին ճանաչում եմ երկար տարիներ: Ինձ միշտ ոգևորել է նրա ոգևորությունը: Աշխատում էր «Պիոներ կանչում» և պիոներական զվարթությունը, հումորը միշտ անպակաս էր Լյուդվիգից և միշտ պատրաստ էր գործունեության: Այն ժամանակ նա ուսումնասիրում էր Վախթանգ Անանյանի գրականությունը և դիսերտացիա գրեց ու պաշտպանեց մեր տաղանդաշատ գրողի ստեղծագործության վերաբերյալ: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ նա եզակիներից է, որ դիսերտացիա է պաշտպանել մանկական գրականության թեմայով: Եվ, ցավոք սրտի, մանկական գրականության միակ մասնագետն է: Իր խաչը կրում է բարձր արժանապատվությամբ: Տասնյակ գրքեր է հրատարակել հայ մանկագրության պատմության, ժամանակակից մանկագիրների մասին: 5-րդ դարից մինչև այսօր պեղել, ուսումնասիրել է առակներ, հանելուկներ, մանկական գրականությանը առնչվող նյութեր: Կարող եմ ասել, որ նա հանրագիտարանային գրականություն ստեղծեց մանկական գրականության վերաբերյալ: Լյուդվիգը թեթևորեն, կարծես ձեռքի մի շարժումով անում է այդ գործը, բայց երբ հատորները տեսնում ես, հսկայական աշխատանք է, որ կարող էր միայն նա անել՝ առանց ծանրացնելու, բարդացնելու, առանց կարևորելու: Հիմա էլ, անգամ առաջացած տարիքում, բազմաթիվ հոգվածներ, խոսքեր է գրում նոր տպված գրքերի մասին: Ցանկանանք Լյուդվիգին չկորցնել զվարթության ծվենները, որովհետև առանց դրա նա Լյուդվիգ Կարապետյան չի լինի:

Շնորհավոր հոբելյանդ, եղբայր:

«ԳԹ», թիվ 24, 2019 թ.

ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ռուբեն Հովսեփյանը այն մարդն էր, որին եթե ծանոթ էիր, կարդացել էիր գրվածքը, անպայմանորեն մի ծանր քարի պես նստվածք էր թողնում մարդու հոգում՝ ամուր, կայուն, ավելի շատ լռություն, քան խոսք, համբերատար, տոկուն տանելու իր դժվարությունը, իր ուրախությունը երբեք թեթևորեն չցայտեցնող: Կան տեսակներ, որոնք շուտ ոգևորվում են, շուտ կոտրվում: Ռուբեն Հովսեփյանը մշտապես մի առինքնող ռիթմով ապրող մարդ էր:

Նրա կերպարի մեջ հավերժությունից մի հզոր կտոր կար, որը, լավագույնս արտահայտվեց նրա պատմվածքներում, որոնք ունեն հսկայական խորքեր, որոնք անվերջ կգրավեն մեր ընթերցողներին, որովհետև բազմաշերտ են, անսպասելի՝ ներքին ծալքերում, արտաքին փայլից զուրկ, և ամբողջը ապրումներ, ենթագիտացական շարժեր,

պատկերվածին համարժեք հրաշալի հայերեն, որի մեջ և՛ հին՝ գրաբարյան զնգզնգոց կար, և՛ նաև ժամանակակից մարդու ընթացիկ հայերեն:

Ռուբեն Հովսեփյանի՝ որպես մարդու պակասը ես անձամբ շատ եմ զգում՝ մի բարև տալ, նստել, մի բանի շուրջ զրուցել, մշտապես հղկած, առանց էմոցիաների, առանց ավելորդ արագ եզրահանգումների, մշտապես չափած, մշտապես տեղը տեղին և, իհարկե, կարող էր ունենալ նաև զգացմունքային որոշակի պոռթկումներ, որոնք, սակայն, համբերատարությունից հետո էին լինում: Շուրջ 50 տարի նա գրական միջավայրում իր ստեղծագործություններով, մարդկային կերպարով, ելույթներով, թարգմանություններով, հաստատել է բարձր գոյության կնիքը: Ես չգիտեմ որևէ մեկի, որ նրա հանդեպ լիներ անտարբեր, կամ նրա արձակի մասին խոսեր բացասական երանգով: Միշտ մի հարգանք, մի գնահատանք հնչել է, և կարևորվել է նրա գործը:

Ռուբեն Հովսեփյանը ծնվել է մայիսի 5-ին: Ասեմ, որ մայիսի ծնունդների մեջ, ինչքան ես եմ ծանոթ, հողի զգացողությունը, հողից ուժ առնելու կապը զգալի է: Նրա ինքնության մեջ հողի ծանրություն կար և հողի մոգականություն: Նրա լուսանկարների միջից հաղորդվում է մի անբացատրելի ուժ, որը ազդում է դիտողի վրա: Հաստատապես Ռուբենը չէր ճգնում ազդելու, ուղղակի իր ներսի ուժն էր թելադրում:

Եվ այդ մոգականությունը նրա արձակի մեջ կար: Նրա պատմվածքները մեր արձակի հրաշալի կտորներ են՝ հողից, ոսկե երակից դուրս եկած ոսկե կտորներ են, որ հավերժ կմնան մեր գրապատմության մեջ: Նրա արձակում և նրա մարդկային բնույթի մեջ նկատելի էր եռամեծարություն՝ ընտանիք, հայրենիք, մարդկություն: Ռուբենը ինչին էլ որ նայեր, քամում էր իր ինքնությանը հարազատ գույնը, երանգը, խոսքը: Հատկապես ուզում եմ շեշտել Ռուբենի խոսուն լռությունը: Շատ քչերին գիտեմ, որ լռությամբ ասեն այն, ինչ հաճախ խոսքով դժվար է ներկայացնել, բարբառել: Ռուբենն այսօր մեզ հետ է, Գրողների միությունում անվերջ զգալու ենք նրա ներկայությունը, քանզի նման անհատները, աշխարհից գնալով, մնում են իրենց մարդկային ազնվական նկարագրով, իրենց գրվածի խորությամբ, և մեր պարզևում են հիշողության ծանր, բայց նաև շքեղ իրողություն:

Միշտ ապրող՝ ժողովրդի հետ, մեր կյանքի հետ, մեր անցյալի, ներկայի, ապագայի հետ: Ցավով եմ հիշում Գերմանիա գնալուց առաջ նրա խոսքը՝ «Ես հիվանդ, երկիրը հիվանդ»: Այդ փոքր խոսքի մեջ, խոստովանանքի այդ երանգը և՛ ցավալի էր, և՛ երկրի ցավը ավելի գերադասող, երկրի ցավի մեջ մտած և ցավը հաղթահարելու ջանքով: Երբեք չեմ նկատել, ոչ էլ կարդացել եմ, որ նա լացակումած խոսի իր ցավից, ժողովրդի ցավից: Բնավ: Հաճախ մարդիկ հայրենասիրությունը խառնում են ողբերգության, ցավի՝ մանրամասն պատմելու հետ: Ռուբենը մի տողով կարող էր արտահայտել այդ ամբողջ

կուտակումը: Նրա հավատը շատ հզոր էր: Այն հավատը, որ երկիրը, ինչպես օվկիանոսը, ծովը, ինքնամաքրվելու, ինքնակառուցվելու ներքին բանաձևեր, օրենքներ ունի, առանց դրան հավատալու դու դժվար գրիչ վերցնես և ինչ-որ բան գրես: Դա ինքնահոս չի լինում: Պիտի մարդը, ընդհանուրը գորեն:

Ռուբեն Հովսեփյանը անցյալ դարի 60-ականների նորարար սերնդի մեր լավագույն արձակագիրներից է, և պատահական չէ, որ հենց ինքը թարգմանեց Մարկեսի «Հարյուր տարվա մենությունը», «Նահապետի աշունը», որոնք ասես բնագրից թարգմանած լինեն: Կարևորը այստեղ համոզիչ հայերենն է՝ հզոր, հրաշալի, ոսկեղենիկ հայերենը:

Ռուբեն Հովսեփյանը նաև որպես «Նորք» ամսագրի խմբագիր, Գրողների միության քարտուղար, մշտապես սեր և կամք է դրել իր աշխատանքում:

Նա խուսափեց նշելու իր 75-ամյակը, այժմ նա չի կարող թույլ չտալ նշելու 80-ամյակը մեր գրական ընտանիքում, գիտեմ, որ այս տարի մի շարք վայրերում ևս նշվելու է:

Արժանին մատուցենք մեր տաղանդավոր, մշակ գրչեղբորը,

«ԳԹ», թիվ 15, 2019 թ.

ՄԵՐ ՔՈՒՅՐ ԱԿԱՑԻԱՆ (Գոնաշվիլի)

Կան երկրներ, որոնց առանց պոեզիայի պատկերացնել չի լինի, այդպիսիներից է խորախորհուրդ պատմության տեր և հրաշագեղ բնության ու մարդկային յուրատեսակ լեզու ու ինքնություն պահպանած ու դարերով շռայլորեն նվիրաբերող Վրաստանը: Այդպիսի հայրենիքը բժախնդիր է բանաստեղծների նկատմամբ, նա չի հմայվում սոսկ իր հայելային պատկերը տեսնելով գրողի բանվածքի մեջ, նա սպասում է ընդերքային խոր արձագանքների, խոսքարվեստի հրաբխային ժայթքումների, ճշմարիտ մեկնության ու գնահատականի և տաղանդավոր, ինքնատիպ, ժամանակակից կշռույթներով ու ոճերով ոսկեղենիկ բանի:

Ահա այդ պահանջված բանաստեղծներից է Մաղվալա Գոնաշվիլին: Նրա ձայնի մեջ լսելի են մշուշի մեջ ծնվող արցունքի ծնունդը, գյուղական ու քաղաքային կյանքի հոգսաշատ, նաև գունագեղ առօրյայի ձայնաշիթերը, ժամանակակից աշխարհի զիզգազվող ռիթմի մե՛րթ ցավը, մե՛րթ այդ ցավից արտածվող սարկազմը, և ամեն դեպքում հեղինակի նրբանուրբ քնարականության դուդուկի նվագն է: Հայերեն մի արտահայտություն կա՝ ձյան տեղ մաքրող քամի. բանաստեղծի գիրը ինձ հայտնվում է այդ քամու զորությամբ, տեղ ու տարածք է բացում ներկայի ու ապագայի ձյունեղեն, մաքուր ժամանակների համար:

Պատահական չէ, որ տիկին Մադվալայի բանաստեղծությունների ու մանկական արձակ պատումների գրքերը թարգմանվել են բազում լեզուներով, հատկապես Հայաստանում տպագրվել են նրա գրքերը, նրան սիրում են, սպասում նոր ստեղծագործությունների:

Բարձր ենք գնահատում նրա կազմակերպչական տաղանդը, որ նոր ջիղ ու ավյուն հաղորդեց Վրաստանի և Հայաստանի գրական կապերի զարգացմանը: Նա թարգմանել է հայ բանաստեղծների:

Էլ ո՞վ, եթե ոչ նա պիտի գրեր.

Երկու Ծառ ենք մենք – միարմատ ու նույնավիշ,

Մեր գլխից վեր նույն երկինքն է բացվել-փակվել,

Նույն շանթերն են շրջիկացել –

Երերացել-կծկրվել ենք հաճախ ցավից,

Երբեք սակայն չենք երկտակվել –

Առավել են միահյուսվել մեր շանթահար ոստերն իրար,

Եվ ելել ենք դարերն ի վեր –

Շուք անելով միմյանց վրա...

Այս հրաշալի գրվածքը, կարծում եմ, ոչ միայն պատմության դժվար փորձ է ու իմաստնություն, այլև ապագայի անկյունաքար ու պատգամ:

Սրտերը մեր Հայոս-Քարթլոս նախնիների

Բաբախել են համատրրոփ,

Սրտերի պես սիամական

Արյան կոչով ծառս են ելել ու միակամ

Եղել իրար թն ու թիկունք,

Եվ կիսել են աստվածային նշխարքն անգամ,

Ջուրն են անգամ կիսել մի կում:

Ինչպե՞ս չասենք՝

Մադվալա Գոնաշվիլին նաև հայ բանաստեղծ է, մեր քույրը, մեր Հայաստանի գրողների միության պատվավոր անդամն ու գրական վաստակի մեղալակիրը: Աշնանը Հայաստանում Թարգմանչաց տոնի շրջանակում պատրաստվում ենք նշելու նրա հոբելյանը:

Սիրելի՛ Մադվալա, Ձեր մի տողն է՝

Աստված, ակացիա դարձրու դու ինձ:

Թույլ տվեք շարունակեմ՝

Միշտ ծաղկած ու աշխարհը բանաստեղծական բույրով արբեցնող ակացիա, այսինքն՝ այնպիսին, ինչպիսին հիմա կաք և հավատացած եմ՝ միշտ եք լինելու:

Շնորհավոր հոբելյանդ, մեր քույր ակացիա:

«ԳԹ», թիվ 14, 2019 թ

ԱՆՎԱՆ ՊԱՏԻՎՆ ՈՒ ԳՈՒՆԵՐԱՆՔԸ

Արևշատ Ավագյան անուն-ազգանունը պարտավորեցնող է:

Անունը նրան մղում է լուսերգության, բարության ու այգեպանության, վկա՝ նրա բանաստեղծական բնապաշտպանական, գունագեղ աշխարհը, նկարչության շրջանակում առասպելականի ու տոհմականի հաշտեցումը, հայրենի բնության թրթռուն ալեբախը գրաֆիկական հորինվածքներում, աստղերի ցուլացում երկնքում և աչքերում մարդկանց և այս ամենին գումարած Յոթ մուսաների այգում Ծիրանատոնի, ընկույզի և այլ մրգերի տոնակատարություններ, մշակութային հավաք, ուր երգողների մեջ է Արևշատը, ծառերն էլ նրա քանդակներն են:

Մշակույթ բառը նրա անձնագրի մեջ չի գրվել, բայց նրա անձի բացահայտիչ բառ է՝ մշակույթի ֆոնդ, մշակութային խորհրդարան, մշակութային ամսագրեր, հաղորդումներ, բանավոր ու գրավոր զրույցներ և մի ողջ կենսագրություն:

Նրա կյանքում գրականությունն ու մշակույթը առանձնացված չեն, գիրն էլ է հագեցած նկարչական գունեղանգով, երաժշտական ուրվով, մարդկանց ուղղված երբեմն ուղիղ հորդորներով, խորհրդածություններով:

Նրա նմաններին մայրս կոչում էր՝ անդադրում: Այդպես տեսել եմ նրան, երբ ես 14 տարեկան էի և նա դեռ մազեր ուներ գագաթին, տեսնում եմ հիմա, երբ և՛ նա, և՛ ես բավականին ճաճանչափայլ գագաթներ ունենք և հավատացած ենք, որ կարևորը ծառ, ծաղիկ աճեցնելն է և գումարած՝ մագաղաթներին ծաղկելը, վայելչագրելը և ծառայելը Մշակույթին:

Որպես կրտսեր ընկեր շնորհավորում եմ տաղանդավոր գրող, տաղանդավոր նկարիչ և տաղանդավոր մշակութապահպան իմ ավագ ընկերոջ 80-ամյակը:

Ազգանունը պարտավորեցնում է միշտ լինել ավագ և ապրել որպես Արևշատ:

«ԳԹ», թիվ 127, 2020 թ

ԲԱՌԻ ՈՐՈՆՄԱՆ ՎԱՅԵԼՔԸ

Հոբելյանական խոսք գրելու վտանգը կենացախոսության մեջ ընկնելն է, չափազանց գնահատականների մատնվելը, մանավանդ օդը, ցամաքը և սոցցանցերը անխղճորեն քրքրում են ածականների հոգին:

Արդ, սիրելի՛ հին ընկեր Հենրիկ Էդոյան, ինչպե՞ս ժամանակին շարժվել և կանգ առնել ժամանակին, որ քո մասին խոսքը լինի բարելիեֆի պես (պոեզիայից մի մասին նման) լուռ և խոսուն, և պոետական վերջին երկու գրքերիդ պես շարժուն ու ստատիկ, հատկապես, երբ «Լույսը ձախ կողմից» է:

Քո էության մեջ գենետիկ և անձնական փորձի հիշողության մշտագրույցն է: Դու, ինչպես հարազատ եղբայր, խոսում ես պատմության սկզբից մինչև հիմա գումարված Մեծ մշակույթի հետ, և ուրախալի է, որ նա էլ քեզ հետ է խոսում արվեստի ու մարդկայինի բոլոր լեզուներով:

Մի օր ասացիր, որ քո նախկին ես-ը դարերի մեջ մնացած Եգիպտոսի քուրմ գրադարանավարն է:

Դու թարգմանեցիր Մեռյալների գիրքը:

Դու կամաչես, եթե երեսիդ ասեն դասվելու ես մեր դասական բանաստեղծների շարքը, քանզի շարժվելու, շարունակելու ձգողական ուժն ավելին է, քան արձանի վերածվելը օրը ցերեկով: Փախս ես տալիս կուռքի վարածվելուց, ոմանց բան ու գործը հին սովորույթի ուժով մեզանում համազգային պաշտամունքի առարկա շինելն է, թե նրանք համաշխարհայինի կվերածվեն, դա նրանց չի հուզում:

Սիրելի՛ Հենրիկ, դու և՛ մերը գիտես, և՛ նրանցը, և՛ քոնը, և այդքանը բավական է բավարարվելու գրի մոգությանը ձուլվելու համար: Դա ամենամեծ վայելքն է, որի հասել ես որպես բանաստեղծ և գրականագետ (վկա՝ «Պոեզիայի երկակի տեսողությունը»):

Էլի որոնիր տքնանքով, դա երբեմն առավել է, քան գտնելու գոհությունը:

Թեպետ քո խաղաղ քայլվածքը տանջալի փնտրտուքի մասին չի խոսում, հավաստում է երկար և ներդաշնակ ընթացքի կերպը:

Ո՛ղջ լեր, եղբա՛յր, քեզ սագական են տարիքը, գալիքը, տալիքը

ԷԴՈՅԱՆ

Հենրիկը մե՛րթ այնպես

Թեք է նայում,

Ասես ապրում է տրամվայում:

Եվ մե՛րթ այնքան

Դժգոհ է նայում

Կարծես անցել էր կանգառից:

Մի օր նա ասաց.
 – Ի՞նչ անեմ, որ մոայլ չլինեմ
 լուսանկարներում:
 – Ժպտա, – ասացի ես
 լուսանկարչի պես:
 Նա լուրջ նայեց.
 – Չի ստացվում:
 – Դարդ մի արա, – գոտեպնդեցի:
 Ու նստեցինք տրամվայ,
 Որովհետև մեր քաղաքից
 Վաղուց հանել են ռելսերը:

«ԳԹ», թիվ 27, 2020 թ.

ԱԼԲԵՐՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ՉԻ ՆԿԱՏՈՒՄ ԻՐ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Աննկատ մոտեցել և անցել է մեր սիրելի ընկեր, թարգմանիչ, բանաստեղծ, «Литературная Армения» ամսագրի բազմավաստակ խմբագիր Ալբերտ Նալբանդյանի 80-ամյա հոբելյանը: Նա միշտ փախս է տալիս իր հոբելյանից, երբեք չի ուզում դա նշանավորել, ծննդյան օրն էլ հատուկ չի պատրաստվում նշել:

Ալբերտ Նալբանդյանը մեզանում հայտնի է որպես շատ լավ թարգմանիչ: Երբ 80-ական թվականներին «Советский писатель» հրատարակչությունը տպագրում էր մեր գրքերը, բայնի վարիչ, բանաստեղծ Էդուարդ Բալաշովն ինձ ասում էր, որ հետապնդում է Ալբերտ Նալբանդյանին, որպեսզի նա թարգմանի ոչ միայն հայ, այլև մյուս հանրապետությունների գրողներին: Նա. շատ երկրների գրողներ էին ձգտում Ալբերտի հետ համագործակցել, քանի որ նա նրբազգաց, ճշգրիտ և բանաստեղծական էությունն ընկալող թարգմանիչ է, որը պատիվ է բերում թարգմանվող հեղինակին: Եվ ասեմ՝ շատերի գրքերը թարգմանել է:

Ի դեպ, նա մնայուն նախաձեռնություններ կյանքի կոչեց «Սովետական գրող» հրատարակչությունում, որտեղ ռուսական բաժնի վարիչն էր. իրականացրեց հայ արդի գրականության ռուսերեն թարգմանությունն ու տպագրությունը ԽՍՀՄ բոլոր, այդ թվում նաև՝ մեր հանրապետությունում (այն օրերին Հայաստանում ռուսերեն գրքեր քիչ էին հրատարակվում):

Ալբերտի մարդկային, մտավորական, գրական կերպարը առանձնակի շեշտվեց, երբ սկսեց խմբագրել «Литературная Армения» ամսագիրը: Նրա աշխատանքի արդյունքն է, որ ամսագիրը պահանջարկ ունի գրքի միջազգային տարբեր ցուցահանդեսներում: Հատկապես Մոսկվայում, գրքի միջազգային ցուցահանդեսի օրերին տեսնում էինք, թե ինչքան մարդ է գալիս, վերցնում ամսագիրն ու զարմանում, որ Հայաստանում դեռ շարունակվում է հրատաակվել ռուսերեն պարբերական, մանավանդ 90-ականների վերջերի և 2000-ականների սկզբների դժվարին տարիներին: Եվ այդ գործը մեր սիրելի Ալբերտ Նալբանդյանն անում է՝ դիմակայելով ակնհայտ դժվարություններին: Շատ մեծահարուստ հայեր կան, բայց, ցավոք սրտի, մշակույթի նկատմամբ այն բարի հայացքը չունեն, ինչ մենք էինք ակնկալում...

Պետական մասնակի աջակցության շնորհիվ ամսագիրը տպագրվում է, իր ընթերցողներն ունի և բավականին ներդաշնակ ներկայացնում է ժամանակակից, նաև դասական հայ գրականությունը, հրապարակախոսություն՝ Արցախյան ազատամարտի, մեր պատմության, ժամանակակից կյանքի թեմաներով:

Ալբերտ Նալբանդյանին շատ խորքից գիտեմ՝ իրար հետ շախմատային շատ պարտիաներ ենք խաղացել: Արհեստավարժ շախմատիստ է, վարպետության թեկնածու, և ասեմ՝ նրա կերպարին կառուցիկություն, ներդաշնակություն հաղորդել է նաև շախմատի ոգին: Մտածողությունը, տրամաբանությունը, աշխատանքը կազմակերպելու հմտությունը, կարծում եմ, շախմատից փոխանցված հատկանիշներ են, որոնք ամրացրել են նրա՝ ի սկզբանե ամուր բնավորությունը:

Մեր սիրելի բարեկամի, ընկերոջ 80-ամյակը շնորհավորենք, իսկ ես ավելացնեմ՝ նա այնպես թեթև է անցնում այդ տարիքի վրայով, որ մտածում ես՝ 100 տարին էլ հեռու չէ...

«ԳԹ», թիվ 30, 2020 թ.

ՄՆԱՑԱԿԱՆ ԹԱՐՅԱՆ ՄԱՐԴՆ ՈՒ ԳՐՈՂԸ

Ես Աստուծոց շնորհակալ եմ, որ մանուկ հասակից բախտ եմ ունեցել մեր, ապա քեռուս տանը հանդիպելու բազմաթիվ գրողների, ծանոթ լիելու, կարդալու նրանց ստեղծագործությունները: Քեռուս տանը մի օր՝ 70-ականների վերջերին, առաջին անգամ հանդիպեցի նրան:

Քեռիս ծանոթացրեց. «Մնացական Թարյանն է, շատ լավ բանաստեղծ, գրող, որը համարյա իմ ճակատագիրն է ունեցել»: Հետո, երբ ծանոթացա նրա ճակատագրի դեպքերին, հասկացա, թի ի՞նչ մաքառումների, ի՞նչ ծանր մահվան դարպասներով են անցել երկուսն էլ և ինչպես են մնացել այդքան բարի, անչար, և ստեղծագործությունների մեջ հաղթանակել է լույսը, ազնվությունը, պայքարը, հայրենիքի սերը:

Մնացական Թարյանի ստեղծագործությունների մեջ կառանձնացնելի գերության մեջ գրված գործերը, հատկապես «Բաղնիքում» բանաստեղծությունը, որը գերության մեջ մարդկանց բաղնիքի նկարագրության մի կեղեքիչ պատկեր է: Այդպիսի բանաստեղծություն՝ պատերազմի թեմայով, շատ քիչ եմ կարդացել, գերության կամ քսոսի տարիների մասին, թերևս, Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարերը», Վալտեր Արամյանի «Կռիվ» պատմվածախաբը և որոշ ստեղծագործություններ, բայց ահա այս բաղնիքի պատկերը ուղղակի ցնցող է:

Նշեմ նաև Մ. Թարյանի փոքրիկ պատմածքները, որոնցում հեղինակը չի նկարագրում իր տանջանքը, տառապանքը, ուղղակի փոքրիկ դրվագներով կարողանում է ի ցույց դնել պատերազմի դաժան դեմքը, գերության ծանր մղձավանջը: Եվ զարմանալի է, որ այդ տառապանքը տեսած մարդու մանկական բանաստեղծությունները լուսավոր են, պայծառ, երեխաներին մղում են ազնվության, անվախության, դժվարությունները հաղթահարելու, մի խոսքով՝ դրական այնպիսի լիցքեր են հաղորդում երեխաներին, որ իսկական մանկական բանաստեղծություններին է հատուկ:

Հրաշալի էր Մնացական Թարյանի մարդկային նկարագիրը՝ երբեք իրեն առաջ չնետող, կուրծ չձեռող, իր անունը չթմբկահարող: Այս հոգեբանությունը փոխանցվել է նաև նրա զավակներին: Աղջկա՝ Անահիտ Թարյանի հետ սովորել ենք նույն կուրսում, շատ լավ բանաստեղծություններ է գրում մեծերի և մանուկների համար՝ շարունակելով հոր գործը: Որդին՝ Նվեր Մխիթարյանը, Ուկրաինային ակադեմիայի անդամ է, հայտնի ճարտարագետ, նաև՝ Հայաստանի գրողների միության բարերարներից է՝ առաքինի, պարկեշտ և գրականությունը սիրող ու հարգող: Այն ավանդները, որ հայրն էր ներարկել Նվերին, ակնհայտ տեսնում ենք, թե ինչպես է որդին իրագործում կյանքում: Ասվածի վկայությունը հոր՝ Նվերին ուղղված «Պատգամ» բանաստեղծությունն է:

Տաղանդավոր, համեստ գրական մշակի՝ Մնացական Թարյանի 100-ամյակն է լրանում, և ուրախալի է, որ ընտանիքը շարունակում է նրա գրական ուղին:

«ԳԹ», թիվ 31, 2020 թ.

ԲԱՐԻ ԵՐԹ

Ռոլանդ Շառոյանի հետ ընկեր ենք պատանեկան տարիքից, սովորել ենք, կարելի է ասել, նույն կուրսում՝ նա լրագրող, ես՝ բանասեր, և մեր մտերմությունն ավելի բովանդակալից դարձավ, երբ նա՝ ինձ առաջարկեց կարդալի իր «Ցուլը» պատմվածքը: Դա առաջին դեպքն էր, երբ նա գրական ստեղծագործության հայտ էր ներկայացնում:

Կարդալուց հետո ուրախությամբ վերլուծելով հիմնավոր հավատ ներշնչեցի Ռուանդին, որ արձակի դժվար ուղու առաջին արգելքը հաղթահարված է:

Նրա պատմվածքները տպագրվեցին գրական մամուլում, ապա և հրատարակվեց առաջին գիրքը: Գովելի էր, որ նա մեծական կոչված արձակին զուգընթաց գրում էր մանուկների համար և հրատարակվեց «Իշուկ Գորշուկը, որ գնում է աշխարհը տեսնելու» վիպակը, որը դարձավ փոքրիկների սիրելի գրքերից, Շառոյան հեղինակը պարբերաբար տպագրեց մանկական գրքեր և հաստատեց որպես տաղանդավոր գրող մանուկների հետ խոսելու իր իրավունքը: Գրվածքները և՛ բանահյուսական արմատներ ունեն, և՛ իրենց գյուղի անցուդարձերի դրոշմը, և՛ անձնական փորձով թրծված համ ու հոտը: Նրա ստեղծագործությունները, որոնք կրում են հեղինակի երևակայության խաղերը, Աշնակի ու Սասունի հայրենի գյուղի միջև Ռուանդը մի երգեցիկ, հուզախառն կամուրջ է, որի վրայով թռչկոտալով գնում են էրգրային պատումները և ետ են վերադառնում պատումներ ներկա ժամանակի՝ Հայաստանի, Սփյուռքի ու Արցախի ներշնչմամբ:

Տարբեր պետական պաշտոններ վարելով, նա չմոռացավ երգն ու հատկապես հումորը, որը անպակաս է Ռուանդ Շառոյանի կենսակերպից և բնական է, նաև նրա ստեղծած մանկապատանեկան առինքնող ու սիրելի տարածքներից, հեքիաթներից ու վիպակներից:

Հասուն տարիքում Ռուանդն իրեն փորձարկեց պոեզիայի գետը նետվելու և թևալողով կտրեց ազատ բանաստեղծական ալիքները և, եթե ոմանց թվաց, թե կխեղդվի այդ հորձանքներում, չէ, գրում է էլի ու թեթև, բատեֆլայ ոճով հրատարակում ու մտածում, որ ինքը բանաստեղծ չի: Դա օգնում է հաստատ, որ չի ջղածգվում ինքնապարծանքի հողմերից և շարունակում է մանկան հոգով պատմվածքներ գրել երեխաների համար: Այդպես դյուրին է հասնել 70-ամյակի և լողալ դեպի նոր ներշնչանքներ:

Բարի երթ, իմ անհանգիստ ընկեր:

«ԳԹ», թիվ 27, 2022 թ.

ԵՐԿԱԿԻ ԽԱՂԻ ՊԱՇՏՊԱՆԸ

Իմ մտերիմ ընկերների մասին մահախոսականներ գրելիս գրիչս քարանում է, կարկամում՝ ի՞նչը գրել՝ անցկացրած խաղերով լի կյանքը, մարդկային բնօրվոր, գրականության գնահատակա՞նը, նրանց ու իմ ցա՞վը՝ մոռացած բազում հումորիկ

պատմությունները, թե՛ լռվել, վերոհիշյալ ամբողջը սեղմել հանկարծակի պայթող արցունքի կաթիլում:

Է՛հ, ախպե՛րս, քո տողերը փորձեցին ամփոփել և մեր կյանքի հոլովույթը անվերջանալի «Հայկական ժամանակ» ասքի մեջ:

Երևանի Մետաքսից գրականություն մտած, դու շարունակեցիր «Մետաքսի ճանապարհով» դեպի մարդկանց սրտի արահետները, պոեզիադ լրջի և անլուրջի միջակայքում թաքտում էր մե՛րթ դասական գրավոր և մե՛րթ խոսակցական բանավոր արտահայտվող ձկան պես: Այդպես պոեզիայի և անտիպոեզիայի հետ կոիվ տալով թարգեցիր բանաստեղծություն գրելը, Բայց ծխելդ, ցավոք, քեզ չլքեց, և դու նրանով մխրճվեցիր արձակի հին ու նոր թաղերն ու փողոցները: Հա՛, մանկական բանաստեղծություններդ երեխաների հետ կանչում էին իրենց հետ խաղդ շարունակելու:

Իսկ դու, Արմե՛ն ջան, գերադասում էիր ժամանակ անցկացնել թղթախաղի ու այլ ժամանցային վայրերում՝ երբեք հագուրդ չտալով խաղասիրությանդ: Իրար հետ խաղացել ենք նարդի, ֆուտբոլ, բլոթ, պոկեր, սեղանի թենիս, բիլիարդ...

Դու ես գրել.

Ես խաղ եմ խաղում մի երկակի

Ուրիշների և ինքս ինձ հետ:

Այդ ժամերին քո դեմքը հաղթանակից լուսավորվում էր, պարտությունից՝ շտապ օդ էր թոցնում մի թեթև ժպիտ (որը երբեք քեզ չի թողել հուսահատվելու, մթնելու և «բախտից» բողոքելու):

Երբեք լրջորեն չխոսեցիր քո գրվածքներից, իսկ նրանք սիրելի էին շատ ընթերցողների: Նրանցից ոմանք քո հերոսներն էին: Երևանը քո խաղընկերն էր ու միշտ ուղեկիցը: Դու երբեմն հիշատակել ես քո նախնիների Վանն ու Իգդիրը: Դու քո Շեկոյան ազգանունը արդարացրել էիր մաշկիդ ու մագերիդ գույնով, լուսավոր և ուրույն, և շատ սիրով էինք ասում՝ կյաժ: Քո քանքարավոր գրվածքների երկվորյակ եղբայրն էիր:

Եվ հենց էդ օրն էլ կատանամ ներում

Ու կհեռանամ ինձնից ու ձեզնից:

Հոգիս կը ճախրի ձեր վերններում,

Բայց, ավա՛դ, ես դա արդեն չեմ տեսնի:

Մենք քեզ տեսնում ենք Գրի պատուհանից դուրս և ներս նայելիս: Հենց նոր դուրս ու ներս արեց քո Արմեն-ական ժպիտը:

Հիմա մեր ընկերը խաղում է հավիտենության հոգու հետ:

«ԳԹ», թիվ 27, 2021 թ.

ԱՆՍԱՆՁ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԵԾՅԱԼԸ

Միրելի ընկեր, Դավիթ, երևանցի տղա, համալսարանական, պիոներ պալատական, մշակույթի անպարագիծ դաշտը հերկող՝ մերթ կինոյի մասին հրակայուն սերմեր ցանոդ, մերթ թատրոնի վերաբերյալ ոսկեփայլ կորիզներ նետելով, մերթ գրականության աշխարհին բազմագույն ու բազմանուն հունդեր դնելով արևոտ գուղձերի մեջ ու ձեռնափով խնամքոտ ծածկելով, մինչև ծլեն ու բերք տան նոր ֆիլմեր, ներկայացումներ ու գրքեր:

Համալսարանի գրական ստուդիայում դու չէիր փորձում շշմեցնել բանից անտեղյակ ոմանց, բայց, հավատա, ովքեր առաջին անգամ էին լսում Ֆոլկների, Մարկեսի, Կաֆկայի, Կամյուի և շատ մեծերի անուններ, մտածում էին վազեն գրադարան ու...

Պիոներ պալատի գրական խմբակից էր գալիս քո իմացությունների կարկուտը, սերը հզոր գրականության հանդեպ: Կարդում եմ քո նոր հատորյակի էսսեները և ուրախանում մտքիդ շաչող, մտքեր շարժող տքնանքից:

Մեր արվեստի ու գրականության, աշխարհի անթվարկելի արժեքները համտեսած հմտությամբ զրուցում ես պարզ ու անկաշկանդ:

Եվ մարդկային կերպարդ՝ անամպ, առանց թաքնամտած որոգայթների գայթակղությանը տրված:

Այո, դուրին չէ դիմանալ տարատեսակ գայթակղությունների, միայն նրանք դա գիտեն, ովքեր, ինչպես դու ես գրել «Հորինվածքի արվեստ» խոհագրության մեջ՝ մանկության մեջ ընկերդ... երևակայությունն է:

Ու թող նա քեզ տանի ուր կամենա՝ նա քեզ լավ գրվածքներ է պարգևելու, դու, իհարկե, համոզված ես:

Շնորհավոր ամյակդ, ընկեր ջան:

«ԳԹ», թիվ 41, 2021 թ.

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ – 60

Մանվել Միկոյանի վերջին գրքի վերնագիրը՝ «Լռության խոնավ աչքերը», մեզ չպետք է շփոթության մատնի. նրա գիրը հազեցած է մեր ժամանակի էությունը հումորով, սարկազմով և խորը քնքշանքով պատկերող բանաստեղծություններով: Չկա լաց և հրապարակախոսության գայթակղիչ պաթետիզմ: Ապրեցնող գիր է:

Բնականաբար նա արժանացել է մի շարք գրական լուրջ մրցանակների՝ ՀԳՄ Իսահակյանի անվան տարվա լավագույն բանաստեղծական գրքի, Թեքեյան

մշակութային կենտրոնի Թեքեյանի անվան մրցանակի և այլն: Որպես ընկեր և պատվական մարդ նա սիրով է ղեկավարում ՀԳՄ Լոռու գրական բաժանմունքը: Նրա ընտանիքը գրական միջավայրում և ընթերցողական դաշտում հայտնի է նաև որդու՝ Արթուր Միկոյանի շնորհալի ներկայությամբ:

Մանվել Միկոյանից մշտապես սպասում ենք նոր բանաստեղծական գրքեր և հրապարակախոսական լրջմիտ հոդվածներ: Պատահական չէ, որ նա է խմբագրում Լոռու գլխավոր թերթը՝ «Վերածնունդը», և բաժանմունքի «Երկունք» գրական թերթը:

Եռանդուն մտավորական և խոհեմ ընկեր, ցանկանում ենք կյանքն էլ իր աջակից խաղաղությամբ նպաստի ստեղծագործական ջանքերիդ:

«ԳԹ», թիվ 36, 2021 թ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ - 70

«Գարուն» ամսագիրը 60-70-ականներին իր շուրջն էր հավաքել երիտասարդ հեղինակներին, «գարունականներ» գրական հոսանքի գրողներից այսօր սիրով հիշենք Հովհաննես Գրիգորյանին, ում գյումրեցիական հումորի արտաքո թվացյալ թեթևության մեջ կար հայ մարդու թախիծը: Հ. Գրիգորյանին համարելով հայ գրապատմության մեջ ավանդույթ դարձած բանաստեղծ, որն աղերսներ ունի հայ դասական գրականության հետ, ա կյանքը դիտարկում էր կողքից, կոմեդիական ընթացքը վերցնում-դարձնում էր բանաստեղծություն և դրանով էր հենց ուժեղ, մենակ չէր, կղզիացած չէր: Այնքա՛ն կենդանի շունչ հաղորդող մարդ էր իր հումորով, իր տեսակով և ամեն ինչին քամահրանքով նայելու իր բնույթով: Մեր պոեզիայում ասել է իր հրաշալի խոսքը, և այն միշտ մնալու է մեր գրականության մեջ:

«ԳԹ», թիվ 36, 2015 թ.

ԳՐԶԻ ՈՒ ԶԵՆՔԻ ԽԱՉՄԵՐՈՒԿԻՆ ԿԱՆԳՆԱԾ (Վարդան Հակոբյան – 70)

Վաղուց եմ ճանաչել Վարդան Հակոբյանին, երբ նա՝ երիտասարդ բանաստեղծ, գալիս էր Հայաստան, և մենք մի տեսակ շեշտված գործվանքով էինք շրջապատում նրան: Ղարաբաղյի ամեն գրող Ադրբեջանի կազմ խցկած մեր հայրենիքի այդ վեհ ու պատմական երկրամասի դեսպան էր ու անգեն զինվոր, հայերենի քուրմ ու հայ ոգու խնկով լի բուրվառ: Նրա երգերում դասականների ու այդ ժամանակի հայտնիների

հաստատագրված թեմաներն էին՝ սեր, հայրենիք, պատմություն և այլն: Այդ ամենը՝ որոշակի վերացական ու ռոմանտիկ կամ կորստի ցավի հիշատակումով: Իրականությունը, իրական մարդն ու իրական ժամանակը դժվարությամբ էր հայտնվում գրվածքի տարածքում, պիտի հաշվի առնենք այն պարագան, որ գլավիտը, ինչպես ԽՍՀՄ-ում ամենուրեք, այդպես էլ Ղարաբաղում հատկապես, կրկնակի խստությամբ էր հետևում ամեն բառ ու տողի:

Վարդանի անուրանալի տաղանդը բացահայտվեց, երբ Արցախի հարցը, պատերազմը, ԼՂՀ պետական կառույցի ու ազատ ընթացքի կենսագրությունը ծավալվեց դժվար, զոհերի ու հերոսականության հիմքի վրա, սոցիալական նոր շերտավորումների, շարունակվող կես-խաղաղություն և կես-պատերազմ ռիթմով:

Հայտնի է՝ բանաստեղծին ճանաչելու համար պիտի տեսնել նրա հայրենիքը, հայրենիքը ճանաչելու համար պիտի կարդալ նրա բանաստեղծությունը: Ես գործի բերումով մասնակցել եմ Վարդանի Հայաստանում հրատարակված գրքերի լույս ընծայման աշխատանքներին և ինձ ուրախություն համակեց, երբ կարդացի նրա «Թների հեռուն» (2003 թ.) բանաստեղծությունների գիրքը, ինչո՞ւ. լիովին փոխվել էր Վարդանի գեղարվեստական հայացքի ուղղությունը բաց տեքստի բազմաձայնություն ու լեզվամտածողության անկաղապար շողարձակումներ, թեմատիկայի ռեալ ու ճշգրիտ հասցեականություն, անսպասելի հնարքներ ու գոյության հրճվանք, պետականության, սահմանների համար մշտական պայքարի անհանգիստ սրտատրոփ: Ահա աշխարհի մի անկյունում ապրող բանաստեղծի և՛ բանաստեղծական, և՛ դժբանաստեղծական վիճակ: Կյանքը հախուռն, ամեն վայրկյան փոփոխվող բնույթով դառնում է գրողի կենսափորձ ու գրին ձուլված անբաժանելի արյան հոսք: Աշխարհի սևեռուն հսկման տակ հայտնված Արցախի բանաստեղծը խոսում է Արցախի, Հայաստանի և հենց այդ նույն աշխարհի անունից ու հանուն այդ աշխարհի: Նրա «Քրիստոսի ծաղիկները» ասքը այդ ոգով է տոգորված: Ժանրերի խաչաձևումից ծնված շատ կարևոր ստեղծագործություն հայ ժամանակակից գրականության դաշտում: Այսպիսի գրական երկերը դիվանագիտական սեղաններին ու ընդհանրապես ոչ պակաս դեր կխաղան արցախյան հարցի արծարծման ու հանրահռչակման ուղղությամբ:

Այո՛, Վարդանի ասած՝

Չէ, մնում է նա, ով մնում է, անկախ նրանից, գնացած է թե մնացած:

Եվ կմնա այս տողի լուռ միասնքը.

Թաղում: Թաքուն: Անլաց: Անծպտուն: Անթափոր:

Եվ այս տողերի դաջվածքը կմնա՝

Դար ու դարեր գնում ենք և միշտ չենք հասնում,

Բայց կանգ չենք առնում ոչ մի անգամ,

Քանզի հավատում ենք, որ հասնելու ենք:

Այսպես շարունակ կարող եմ մեջբերել տպագրված և դեռևս անտիպ գրվածքներից, որոնք, բարեբեխտաբար, կան և կձգվեն պոետական սահմաններից դուրս, բայց ոչ բուն պոեզիայից:

Վարդան ջան, դու նաև շատ լավ գրական կազմակերպիչ ես, Արցախի գրողների միությունը բազմաթիվ հիշատակելի գործեր է արել, տաղանդավոր անուններ են տքնում՝ գրիչը զենք արած, զենքը՝ գրիչ: Հայ գրի ներկան և ապագա պատմությունը սիրով ընդգծելու է այս ջղուտ, այս հրաշք, այս պայքարող և արարող լեռնաշխարհի բան-աստեղծությունը, որպես Վարդանի ու նրա գրչընկերների օրագիր, վկայագիր ու վերջնագիր:

Շնորհավոր 70-ամյակդ, եղբայր, բայց սա արցախցու համար մանկական տարիք է: Դու և թոթի ծառերը ինձնից լավ գիտեք դա:

ՎԱՐԴԱՆԻ ՄԵԾ ՄԻՐՏԸ

Հայաստանի գրողների միությունը խոր ցավով տեղեկացավ Արցախին գրողների միության նախագահ, տաղանդաշատ բանաստեղծ, քաղաքական-հասարակական գործիչ, Արցախյան շարժման երևելի լիդերներից Վարդան Հակոբյանի մահվան գույժը:

Անասելի ու բարձր էր նրա դերը Արցախի գրական կյանքի կազմակերպման ու գրականության հանրահռչակման ասպարեզում: Համահայկական նշանակության սիրելի ու սիրված անուն էր, նրա գլխավորությամբ Արցախում կայացել են միջազգային ու սփյուռքահայ գրողների փառատոներ: Նրա ստեղծագործությունները տպագրվել են աշխարհի շատ լեզուներով: Վերջերս լույս տեսավ նրա հարուստ և ժամանակակից ասելիքով «Եթե իմ շունը օրագիր ունենար» գիրքը: 44-օրյա պատերազմից հետո ծանր ապրումների և խտացած գեղարվեստի լիցքով ժայթքում է այն: Մպաստում էինք նոր գրքի տպագրմանը: Գիրքը լույս կտեսնի, բայց, ավաղ, նա կլինի անհաղորդ հեղինակ և կղիտի

պատմության երդիկից: Նա լիարյուն առաջնորդ էր և փխրուն սրտի տեր, երիտասարդների ու ավագների հոգեշահ աջակից: Վարդան Հակոբյանի մարդկային կերպարը առինքնող էր ու ձգող: Եղբայրաբար իմ ցավակցությունն էս հայտնում, երկար տարիների ընկերոջս կորուստը չի սփռվիլի բառերով: Մխիթարական է, որ նրա գործն անմահ է և մշտակա Արցախի հետ:

Ցավոք, առկա վիճակը թույլ չտվեց նրա հայաստանցի երկրպագուններին, գնահատողներին ու գրական ընկերներին ներկա լինել մեր սիրելի Վարդան Հակոբյանի հուղարկավորությանը: Մենք միասին հրաժեշտ տվեցինք հեռակա, ՀԳՄ-ում: Թող աշխարհն իմանա, թե Ադրբեջանի շրջափակումը ինչ հարված հասցրեց նրա սրտին: Սիրտ, որ բաբախում էր մարդկության հանդեպ մեծ սիրով:

«ԳԹ», թիվ 6, 2023 թ.

ԵՐՎԱՆԴ ԱԶՍՏՅԱՆ (մահախոսական)

Մեծ ցավով իմացա, որ կյանքին հրաժեշտ է տվել բազմավաստակ գրականագետ, հասարակական գործիչ, հրապարակախոս, սփյուռքահայ մտավորական Երվանդ Ազատյանը: Նա մեծ ներդրում ունի սփյուռքահայ գրականության, ինչու չէ, ոչ միայն սփյուռքահայ, այլև ժամանակակից հայ գրականության գնահատության, հանրահռչակման գործում: Նաև պիտի գումարենք նրա մեծ իմացությունը դասական հայ գրականության վերաբերյալ: Նրա հետ զրույցները խիտ, հրաշալի, հետաքրքիր էին: Նա խոսում էր արդեն մեզ համար լեզենդի նշանակություն ունեցող սփյուռքահայ մեծ գրողների մասին, որոնց հետ ինքը շփվել էր, որոնց մասին հետաքրքիր պատմություններ էր անում: Ես ուրախ եմ, որ Երվանդ Ազատյանի հետ բազմաթիվ զրույցներ եմ ունեցել, շատ բան եմ լսել, իմացել այն բաների մասին, որոնց վերաբերյալ չէի կարող որևէ մեկից իմանալ: Նա նաև Սփյուռքում բարեգործական մեծ, ծավալուն աշխատանք է արել մեր մշակույթի զարգացման, տարածման համար: Մի քանի տարի առաջ Ազատյանի հետ որոշեցինք Հայաստանում կազմակերպել սփյուռքահայ գրողների համաժողով: Հիմնական զեկուցողն ինքն էր: Այնպիսի խորությամբ էր ուսումնասիրել ժամանակակից սփյուռքահայ գրականությունը, որ հետագա ելույթ ունեցողները նշում էին այդ մասին: Ասեմ, որ ամեն տարի Երևան գալով՝ նրա հետ կա՛մ հանդիպել, կա՛մ հեռախոսային զրույցներ ենք ունեցել, և ես միշտ ուրախացել եմ նրա եռանդուն ոգով: Ոգի, որը և՛ Սփյուռքն էր պահում, և՛ Հայաստանի հետ կապերն էր ամրացնում: Երվանդ Ազատյանի նաև հրապարակախոսական հողվածները շատ խորը վերլուծական հիմքեր ունեին: Այդպիսի մտավորականները իսկապես Սփյուռքի սյուներն էին: Եվ ես կարծում եմ, որ

նրա աշակերտները, նրա հետևորդները պիտի կարողանան եթե ոչ առանձին-առանձին, չ գոնե միասին նրա տեղը գրավել, նրա գործը անել: Հրաշալի մարդ, հրաշալի գործիչ, հրաշալի մտավորական և մեզ հարագատ ոգի: Խոնարհում նրա հիշատակին, թող մեր սերը նրան հոգիների աշխարհում նոր թևեր տա՝ մեր աշխարհի, մեր ժողովրդի ապագայի համար: Ապագայում այդպիսի մարդիկ լինեն մեզ հետ թե չլինեն, իրենք միշտ ուժ, կամք ու եռանդ են հաղորդելու մեզ:

«ԳԹ», թիվ 9, 2023 թ.

ՄԻՇՏ ԷՈՒԹՅԱՆ ԽՈՐՔՈՒՄ

Ես սիրով եմ գրում Շանթ Մկրտչյան մարդու, ընկերոջ, թարգմանչի և վերջապես՝ բանաստեղծի մասին: Նա իր ստեղծագործական կյանքի 35-ից ավելի տարիներում տպագրել է բանաստեղծական ութ ժողովածու, տասնյակ թարգմանական գրքեր, նաև մանկական գրքեր և դեռևս տպագրության ընթացքում է պատմվածքների և էսսեների ժողովածուն:

Սա ո՛չ շատ է, ո՛չ քիչ, քանակական կամ թվական գնահատականը ավելորդ է, երբ խոսքը գեղարվեստի մասին է, մանավանդ, երբ Շանթն իր յուրաքանչյուր գրքով մատուցում է մշակութային հարուստ գիտակցության խառնարանից («Խառնարան»՝ 1989 թ. առաջին գրքի վերնագիրը) շատրվանած արվեստի տարբեր բնագավառների մեծերին նվիրված էքսպրեսիվ պոետական հրացուքեր, ինչպես «Լաոկոն» և «Ես՝ Տինտորետտոն, որդին ներկարարի» պոեմները, նաև բանաստեղծություններ հայ մեծերին ու աշխարհի հայտնիներին հղված՝ Քուչակ, Սայաթ-Նովա, Թումանյան, Լի Թայ Պո, Բորիսեն, Բրոդսկի, Բախ, Եսենին և այլն:

Նա միևնույն տեքստում մերում է հակադիր ոճեր՝ էլիտար և ցածր, բայց դա չի վերածում պարոդիայի, այլ յուրահատուկ ժամանակակից մտածողության, որում և դասական մշակութային հոսքերին խառնված են անձնական փորձի սրտահույզ-հուշ պատառիկներ: Տինտորետտոյի «Դրախտը» մեծադիր նկարը տեսել եմ Վենետիկի Դոժերի պալատում, և Շանթի գրվածքը նրա մասին կարծես հաղորդվել է դասականի դարչնագույնի երանգներով հարուստ գաղտնախորհուրդ ազդեցիկ նկարից: Ներկա ժամանակի ներմուծումով 2018 թվականին տպագրված «Էության խորքում նվիրականի» խմբագրի իրավունքով վստահաբար ասում եմ, որ գրքի շատ բանաստեղծություններ կարող են տեղ ունենալ աշխարհի կարևոր անթուղզիաներում, և որոշ լեզուներով արդեն տպագրվել են՝ չինարեն, ռուսերեն, պորտուգալերեն, իսպաներեն և այլն: Մեր համացանցային սրընթաց դիմագրկող, պարզունակ զգայականության հեղեղի դեմ կան

որոշակի ժամանակակից բանաստեղծներ, որոնց հարկ է խորապես վերլուծեն մեր գրականագետները: Շանթն այդ դիմակայողներից մեկն է: Ես չեմ որակում՝ շնորհալի, տաղանդավոր, մեծ, հանճար, քանզի այդ բառերն այնքան են արժեզրկվել, որ երբեմն վերածվում են զավեշտի: Շանթ Մկրտչյանը պարզապես բանաստեղծ է և՛ ազգային, և՛ աշխարհի ժամանակակից չափանիշներին համահունչ: Սա ասում եմ, որովհետև թացն ու չորը խառնելուն զարմանալիորեն լծված են նաև ճաշակի պահապան կոչվածներից ոմանք, և տեղական ապրանքի գովազդից ազդված ոչ մի ճաշակի սահման չճանաչող կենացներ են բաշխում աջ ու ահյակ:

Շանթ Մկրտչյանի թարգմանական գործը հատուկ ուսումնասիրության նյութ է՝ և՛ արձակ, և՛ պոեզիա թարգմանաբար մատուցել է ուրույն ծրագրով՝ Նոբելյան մրցանակակիրներ Իոսիֆ Բրոդսկի, Շեյմաս Հինի, Չեպլավ Միլոշ, Օկտավիո Պաս, ապա և Ֆերնանդո Պետոա, բազմաթիվ ոուս և այլազգի ժամանակակից պոետների:

ՀԳՄ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Կանթեղ» մրցանակի է արժանացել և այլ մրցանակների, բարձր են գնահատվել նրա Եվգենի Վոլոդազկինի «Լավր» և Անդրեյ Վոլոսի «Վերադարձ Փանջիռուղ» վեպերի թարգմանությունները:

Շանթ Մկրտչյանը ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալակիր է:

Շնորհավորում եմ փառավոր 70-ամյակը և ցանկանում նույն ստեղծագործական ժամացույցի գիշեր ու զօր աշխատանքը:

«ԳԹ», թիվ 20, 2023 թ.

ՊԱՊԱԿԱՆ ՏՈՒՆՆ ՈՒ ԸՆԿՈՒՁԵՆՈՒ ՇԻՎԸ

Օրեր առաջ ընթերցեցի սփյուռքահայ հասարակական, կրթական, եկեղեցական գործիչ Զավեն Խանջյանի տարիներ առաջ տպագրված «Այս տունը քո՞ւկդ է, թե իմ» ուղեգրության հատորը, որն ամփոփում է Արևմտահայաստան կատարած ուխտագնացության անջնջելի տպավորությունները: Դրանք ներկայացված են հայոց պատմության, գրականության, ճարտարապետության, ընդհանրապես, ընդարձակ մշակութային քարտեզի վրա, դա Զավեն Խանջյանի իմացությունների լայն դաշտն է, ուր զարմանալիորեն և մանրամասն ամեն քար ու թուփ, վանք ու երգ, բանաստեղծություն ու վկայագիր թաթախված են հոգևոր լույսով ու հուզիչ ելևէջներով:

Մեր մեծերի բազմաթիվ անուններն ու արած գործերը, հիշատակումն ըստ նրանց ծննդավայրի, ապշեցնում են: Հանրագիտարանային լայնք ու երկայնքով և նաև հակիրճությամբ պատկերվում է գունագեղ պատմական անցյալն ու ցավի միջով նայած

ներկայի սև-սպիտակ լուսանկարչական կերպարը: Ի պատիվ հեղինակի պիտի ասենք՝ չի ընկնում ցավագին հուզախոռովության ու այնտեղ ապրողների հանդեպ ատելության հունը: Ես որ միշտ խուսափել եմ գնալ Արևմտյան Հայաստան, ինձ հեռու է պահել ներքին անհաշտ մի ձեռք, այս գիրքը կարդալուց հետո ինչ-որ բան փոխվեց իմ հոգում և Անին ու Վանը, իմ նախապապերի Մուշն ու Ալաշկերտը, Բիթլիսն ու Արաբկիրը երևակայածիս հետ ներդաշնակվելու պահանջ ունեցա:

Հատկապես ուզում եմ առանձնացնել Զավեն Խանջյանի պապական եզերք Ադրն այցելելու իսկապես ուխտագնացությունը: Այնթափից գնած բահն ու ընկուզենու շիվը գրկած քարքարոտ ճամփով մագլցում են դեպի տունը, որ հայրը ստիպողաբար լքել է 1928 թվականին: Իսկ Տիգրան պապը սպանվել է այդ տան այգում, իսկ քիչ այն կողմ սպանվել է մորական պապը: Տունը կա: Զավենի քույրն այցելել է 1994 թվականին, և տանտիրոջ թրքուհի մայրը, կանչելով ընտանիքի անդամներին, ապսպրել է.

– Այս կինը կամ իր ընտանիքի անդամներեն ունե մեկը ունե ատեն եթե այցելեն ձեզ, զիրենք տանտիրոջ պես կընդունիք:

Ուխտագնացների խումբը հասնում է 20-րդ դարասկզբին կառուցած երկհարկանի երևացող տան դուռը (այս տանն է 1912 թվականին ծնվել Զավենի հայր Վազգենը): Դուռը բացում է տանը բնակվող Հուսեյնը: Բնագրով զգում է՝ ովքեր են եկել: Խոսում են, զրուցում, և նա տեղեկացնում է, որ տունը իր հայրն է գնել երեսնական թվականներին, թուրքական պետական մի հիմնարկից: Զավեն Խանջյանն առաջարկում է ընկուզենու շիվը տնկել այգում: Հուսեյնի հետ ընտրում են տեղը, փորում են հողը, ու Զավենը ծնկած տնկում է շիվը, լուսանկարը վավերագրած պահն է մեզ պարզում, Հուսեյնի հետ ջրում են շիվը:

Այս դրվագը տեսեք ինչպես է ամփոփում հեղինակը.

«Կուզեի իմաստաւորել մեծանուն գրագէտ տրապիզոնցի Լեւոն Զաւեն Սիւրմելեանի սրբազան խորհուրդը.

«Մեռելներուս իբրեւ խաչ՝ ես այս ծառը տնկեցի»:

Ես եւ Հիւսեյնը տնկեցինք, Սրբազանը օրհնեց հետեւելով Սիւրմելեանի աղօթքին:

«Տէր օրհնէ ծառն այս մատղաշ: Ես կը տնկեմ զայն ահա փխրուն եւ սեւ հողին մէջ ուր պապերս կը պառկին»:

Ես եւ Հիւսեյնը տնկեցինք ու ես փառք տուի Աստուծոյ՝ փինիկի նման մոխիրներէն վերածնած ազգիս համար»:

Սա մի կինոնկար է, մի ցնցող պատմություն, որ խիստ զուսպ, ներքին խռովքը լռությամբ պատած, միայն մարդկային հաղորդակցություն արտահայտող ու բնության շիվի հետ ապագային ձգտել-բարձրանալ մինչև Արդարություն և ճշմարտություն:

Եվ Հուսէյնը հարցնում է.

Հիմա այս տունը քո՞ւկդ է, թե՞ իմս:

Հարցն անպատասխան է:

Ընկուզենու ծառը գուցե կտա պատասխանը:

Զավեն Խանջյանի գրած միայն այս հատվածը ապացույց է նրա գրական լուրջ ձիրքի ու ճաշակի մասին:

ՀՐԱՆՏ ԴԻՆՔԸ

Հրանտ Դինքն իր իմաստալից կյանքով և ծրագրված սպանություն-մահով ապացուցեց մի պարզ բան. մենք՝ հայերս, աշխարհին նայում ենք մեր աչքերով, մեր չափումներով, որոնք միտված են քաղաքակիրթ աշխարհի առաջադեմ գաղափարներին՝ արդարամտություն, ժողովրդավարացում, ազատ խոսք, երկխոսություն թշնամացած հարևանների ու ազգերի միջև, փոքրամասնությունների իրավունքների և ընդհանրապես մարդու իրավունքների պաշտպանություն և այլն, սակայն աշխարհի հզոր ուժերն ու նրանց շահերին համընկեց որոշ երկրներ, դիցուք՝ Թուրքիան, այդ ամենին նայում են յուրահատուկ կերպով՝ ինչն այդ պահին իրեն է ձեռնտու, կանգ չառնելով ոչ մի միջոցի առջև, այդպես է երկրի ներսում, այդպես է երկրից դուրս հարևանների հետ հարաբերություններում, միայն վախն ու ուժն է նրանց զսպում, եթե, իհարկե, լինում են այդպիսի հզորներ, որ իրենց շահերի դիտակետում Թուրքիայի քայլերը անհանգստացնող ու սթափեցնող են ընկալվում:

Հիշում ենք անցյալ դարի սկզբնական տարիների Օսմանյան Թուրքիայում սահմանադրական փոփոխությունները ինչ ռոմանտիկ տեսլականներ արթնացրին այդտեղ ապրող փոքրամասնությունների հավատավոր ուղեղներում, շատ քիչ մտավորականներ էին նախազգում ապագա չարիքների արագընթաց արշավը: Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած Թուրքիայի մարդակուլ ծրագրերի իրականացման հնարավորությունները չուշացրին Մեծ Եղեռնի իրագործումը:

Մա մեծ և ողբերգական փորձ ու փորձանք էր, որից հետո թուրքին և Թուրքիայի նորացմանը, քաղաքակրթմանը հավատալը հրաշքի պես բան պիտի լիներ:

Եվ եղավ, աղավնու խորհրդանիշով կերպավորված Հրանտ Դինքը նոր եվրոպական ու առաջադեմ գաղափարներով, իր հայերեն ու թուրքերեն տպագրվող «Ակոս» թերթով ճախրեց 21-րդ դարի Ստամբուլ քաղաքում և այլուրեք, պատասխանը՝ բանտարկություն, սպառնալիքներ ու սպանություն:

Սա կարելի էր կանխագգալ, քանզի Հայոց ցեղասպանության հարցում հակադրվում էր Թուրքիայի պաշտոնական տեսակետին, ըստ որի տեղի ունեցածը պատերազմական ժամանակների բախումների հետևանք էր և ոչ թե նպատակային կոտորած: Այս վարքը կարելի է համարել դոնկիխոտություն: Սա պատճառ էր, որ նա զրկվի կյանքից: Սա նաև հարված էր մյուս նման մտածողների մեջքին: Թուրք այլախոհներին ևս արյունոտ ակնարկ էր: Թուրքիան այսօր էլ շարունակում է նույն հայահալած, քրդահալած, եզդիահալած և այլ ազգությունների նկատմամբ սուր ու հրով բնաջինջ անելու քաղաքականությունը՝ միավորելով Ադրբեջանի և այլ եղբայրակից երկրների ուժերն ու բանակները: Մենք ճանաչում ենք թուրքերին, աշխարհը գուցե սիրիական սահմոկեցուցիչ իրադարձությունների ու իսլամական պետության իրողության համապատկերի վրա փորձի ընկալել այդ երկրի իշխանությունների գիշատչական բնույթը:

Աղավնուն նրանք միշտ էլ զարկելու են, եթե չի դունդունում իրենց հանգով:

Հրանտ Դինքն իր սպանությամբ սա ճանաչելի դարձրեց: Նա կանխագգում էր իր վերջը, նա հային հատուկ խոյի համառությամբ անում էր իր վտանգավոր գործը:

2007 թվականին ես եղել եմ Ստամբուլում Զահրատի թաղմանը և հրավիրվեցինք «Ակոս» թերթի խմբագրություն, ուզում էի նրա շունչն ու ոգին զգալ, կիսախավարում, գուցե ինձ այդպես թվաց, մի չարքաշ մշակի ձայնը լսեցի, հիշեցի նրա ծակ կոշիկը, որի պատկերը տարածվեց աշխարհով մեկ, նա հաստատ մի կոշիկ գնելու գումար կունենար, սակայն, իմ համոզմամբ առանձնապես նշանակություն չէր տալիս հագուստ-կապուստին և ժամանակ չունեի, այդ ժամանակը ծառայելու էր Մեծ և կարևոր ժամանակին և աշխարհասփյուռ հային, Հայաստանին և աշխարհի արդար և ճշմարիտ մարդկանց:

Հիշեցի Զահրատի բանաստեղծությունը՝

Հրանտ Տինքին

*Աղավնիները համոզեցին, ըսին որ իրենց վրայ
չեն կրակեր. Հրանտ հաւատաց: Թէպէտ երկչոտ՝*

հաւատաց թէ աղանի մըն է:

Բայց կրակեցին:

*Նախատեսած էր, մէկ քանի տարի առաջ ըսած էր ինձի
«Իմ մահը պիտի ըլլայ ոտքի վրայ՝ կանգնած՝ ոչ թէ պստկած՝
անկողինի մէջ»:*

*Թող պատկի լոյսերու մեջ:
Եթէ մեզի հարցնէք, ան միշտ յաղթական պիտի կանգնի՝
Անաղարտ արձանի մը պէս:*

Տարիներ անց ես գրեցի այս բանաստեղծությունը, որը, բարեբախտաբար, չորս լեզվով արդեն թարգմանվել և տպագրվել է, տարածելով Դինքի գործն ու կերպարը:

**«Ակոս» թերթի խմբագիր
Հրանտ Դինքի կոշիկը**

*Հրանտ Դինքը զարկված, ընկած էր
Ստամբուլի Շիշլի փողոցում:
Նրան շատերն էին համեմատում
Աղավնու հետ,
Բայց թռչունը, ինչպես բոլորդ զիտեք,
Կոշիկ չունի,
Իսկ Հրանտի կոշիկը ծակ էր
Ու զարմացած, քարացած անցքը
Շիշլի փողոցի անցորդներին,
Ստամբուլի վերին ու վարին,
Երկնքի ամպերին
Նայում էր կույր աչքի նման:*

*100 տարի հետո էլ փտանգավոր է Թուրքիայում խոսել
Հայոց ցեղասպանության մասին,
Երբ կոշիկդ ծակ է,
Եվ անցքը նման է
Տիեզերքի ակնախտոցում անտարբեր պտտվող
Երկրագնդի:*

Զոհրապը և Երուխանը և մյուսները շարունակվեցին Դինքի կերպարով, և նա շարունակեց իր մեծ գոհված նախորդների գործն ու մահվան ձևը:

Որքա՞ն կտևի այս ողբերգական թատերախաղը:

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐԴԸ

Զորի Բալայանի անվան մեջ ամբարված զորությունը նրան մղել է դեպի դժվար մարզաձև՝ ծանրամարտ (նա երկար տարիներ իր կրծքին հպարտորեն կրում էր ՍՍՀՄ սպորտի վարպետի նշանը), դեպի բժշկություն (աշխատել է Կամչատկայում, բուժել բազմաթիվ մարդկանց), դեպի գետագնացություն ու ծովագնացություն, նաև՝ աշխարհաճանաչություն (շնասահնակներով, «Կիլիկիա» և «Արմենիա» նավերով կտրել է երկրագունդը վերից վար ու վարից վեր), դեպի լրագրություն (եղել է թեժ վայրերում, երկու կրակների միջև, գրել բազմաթիվ նյութեր), դեպի գրականություն (բազմաթիվ վեպ ու վիպակ, պատմվածքներ է գրել հող ու ջրի, գող ու բժշկի, հերոսների ու հասարակ մարդկանց մասին), դեպի Արցախ, Հայաստան, Սփյուռք է թռել բազեի սրատեսությամբ, հասել ուր անհրաժեշտ է եղել, սրտի մի քանի վիրահատություններն անտեսած՝ իր հոգին է պարզել որպես առագաստ բարու և չարի ծովաքամիների ու հողմերի դիմաց, ասելու ճշմարտությունը, իր խոսքը, թող որ սուր և վիճելի, նշտարի պես հաճախ կտրող ու բուժիչ:

Մի՞թե միջնադարյան մարդու գորավոր, բազմագետ տեսակ չէ, մի՞թե ճակատագրական պահերին գործելու անկասելի ուժով անհատի դերը զանգվածեղ թափի ու նշանակության չի վերածում մեր ժամանակի ողբերգակատակերգական բեմին:

Նա ճակատագրական մարդու առաքելություն կրող մարդ է:

Զեռոյ կանաչ, Զորի Բալայան:

ԿՅԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԲԱԶՄԻՄԱՍ ԱՖՈՐԻԶՄ

Սփյուռքահայ բանաստեղծ Անգնեսն անցյալ ամիս Հայաստանում էր: Հայաստանի գրողների միության Ծաղկաձորի ստեղծագործական տան մեծ դահլիճում նշվեց նրա հոբելյանը: Երևանից եկել էին նրա գրականության ընթերցողները, ընկերները, Համո Սահյանի անվան գրադարանի աշխատակիցներ ու նաև ստեղծագործական տան հանգստացողներ:

Նա արժանացել է բազմաթիվ մրցանակների ու մեդալների և՛ Սփյուռքում, և՛ Հայաստանում: Բոլորը թվարկելու համար գրախոսականը տեղ չի անի: Հիշենք կարևորները՝ ԱՄՆ-ի և Կալիֆոռնիայի հայ գրողների միության «Պոեզիա» անվանակարգի 1-ին մրցանակ «Ասուպներ» գրքի համար, Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալ, ՀՀ Սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարդյան» մեդալ, Մշակույթի հայկական ֆոնդի «Ծիր Կաթին» 1-ին մրցանակ, Կատարողական արվեստի համաշխարհային ասոցիացիայի «Ոսկե գրիչ» մրցանակ

«Աֆորիզմներ» գրքի համար և այլն: Վերջերս հորեյանի առթիվ գրականությանը մատուցած ծառայությունների համար նա արժանացել է ՀԳՄ պատվոգրի և հուշանվերի:

Հորեյանն առանց նոր գրքի շնորհանդեսի կզրկվեր շուրջից և, ահա, ներկայացվել է Ազնեսի Երևանում տպագրված «Աֆորիզմներ» գիրքը, որի մասին ջերմ խոսքեր են ասել գրականագետներ, գրողներ և ընթերցողներ,

– Գիրքը, որ վերնագրել եմ «Աֆորիզմներ», իմ անցած ուղին է, կենսափորձը:

Պիտի հիշենք նաև նրա նախապես զգուշացումը.

– Իմ մտորումների ծաղկեփունջն եմ հանձնում ձեզ, զգույշ եղեք, այստեղ կհանդիպեք նաև սուր փշերի:

Փշերին սիրով հանդիպելու անհամբերությամբ բացում եմ գիրքը և աչքիս դիպած գրվածքներից ինձ հմայում է արտաքո սովորական թվացող մի խորհուրդ.

– Նա, ով չի ուզում գնել ճամփորդական կոշիկներ և ճամպուրկ, չունի արևային լայնեզր գլխարկ ու գունավոր ակնոց, չի կարող խոսել երջանկության ու վայելքի մասին:

Կենսական փորձի այս տողերը թեթև ու հաճելի տրամադրության մղելով, ստիպում են դնել լայնեզր գլխարկ ու գունավոր ակնոց և ընկնել ճանապարհ, նախապես, ըստ Ազնեսի աֆորիզմի, ճանաչելով եղանակների փոփոխականությունը.

– Եղանակները նման են կանանց, դժվար է ասել, թե անձրևից հետո ծիածա՞ն կլինի, կամ՝ արևոտ օրը որքա՞ն կտևի:

Փույթ չէ, թե եղանակը ինչպիսին կլինի, դու կյանքը որպես ճանապարհ անցիր ու լայնեզր գլխարկդ թող պատսպարի ոչ միայն քեզ, այլև.

– Երջանկություն է, եթե ունես հավատարիմ ընկերներ, որոնք չեն փոխվում հեռավորությունից ու եղանակից, դիմանում են անգամ ցրտին՝ իրենց սերը հանդերձանք արած:

Այո, այդ սերն է, որ կտրում է օվկիանոսը՝ Ամերիկայից Հայաստան, Հայաստանից Ամերիկա և օվկիանոսի վրա, թռիչքի երկար ժամանակամիջոցում, թե քնած լինես, վստահ ես, որ չի քնում քո հոգու կարոտը՝ հայրենի երկրի, լեզվի ու պարզ սովորույթների համ ու հոտով զգեցած:

– Հայրենիքը միայն կարոտելու և սիրելու համար չէ, նա հատկապես հայրենանվեր գործողությունների պահանջ ունի, ուր էլ լինի նրա զավակը, եթե իսկապես ժառանգ է և կրում է դարերի մշակույթի, պատմության ու ճակատագրի ժառանգորդ լինելու պատիվը՝ ստեղծելու է, արարելու, ապրելու իր հայրենիքի ներկայի ու ապագայի ռեալ տեսլականով: Ահա Ազնեսի մի խտացում.

– Յուրաքանչյուր հայրենիք աստվածային է, այնտեղ սրբանում, մաքրվում է ամեն ինչ, խճաքարն անգամ լեռ է թվում:

Նաև սա պատվիրան է, որ մեր լեռը խճաքար չդարձնենք, մեր ոգեղենությունը չմանրացնենք հանուն «որտեղ հաց, այնտեղ կաց» հայերեն հնչող ամենացածրաթեք գաղափար-կաղապարի:

Եզրափակելով իմ կարճ ճամփորդությունը Ագնեսի աֆորիզմների պարզ, բարդ, լիրիկական, փիլիսոփայական խիտ թավուտներում, շնորհի լույսն է կանչում, հորդորելու:

– Մեր հոգիներում թագավոր Հիսուսն է: Նա իր տառապանքի խաչը թողեց ցածում, որ մարդը միշտ էլ հիշի, որ դա էլ կա...

Ճամփորդական գունավոր ակնոցը մի կողմ դնեմ ու պարզ նայելով Ագնեսի աֆորիզմներին, ասեմ՝ նրանք բանաստեղծություններից թե առած, ինքնուրույն ապրելու մղումով առանձնացված թևավոր մտքեր են, որոնք նաև կարող են տողատվել և վերածվել բանաստեղծության:

Ինչպես ասում են՝ ծովի կաթիլի մեջ ծովն է ճանաչվում:

Միրելի Ագնեսին ցանկանանք նոր քանքարավոր բանաստեղծական գրքեր, նոր խտացումներ և նոր թռիչքներ կարոտի ու սիրո օվկիանոսի վրայով:

ԷՂՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԹԵԹԵՎ

Ամեն ժամանակ կտրում-անցնում ենք տարիքի դաշտը, փնտրելով մեր մտերիմների, ընկերների ցանած սերմերի արդյունքը, հմայվելու ծառ ու ծաղկի, գիր ու խոսքի սաղարթներով, նրանց մրգերով:

Աշոտ Ալեքսանյան մշակույթի մշակը, որքան էլ խորացավ արտաքին գործոց տեսանելի և ավելի՝ անտեսանելի աշխատանքներում, բնավ չմոռացավ իր առաքելությունը՝ տարբեր լեզուներից թարգմանել, հրատարակել, տարածել արտերկրում և Հայաստանում: Գրել գրականագիտական հետաքրքիր նյութեր, հորինել բանաստեղծություններ և խիզախել երգել կիթառի նվագակցությամբ: Ապա, երբ ազատ ժամանակ է լինում, ընկղմվում է հին ու մեռած լեզուների ծովերը, վերջերս նրան տեսել են շումերական մի խեցի գտած, որի մեջ գնգում են հայերեն բառեր:

Տարբեր երկրներում եմ նրան տեսել և միշտ ուրախացել իմ կրտսեր ընկերոջ զարմանալի թեթևասահ ջանքով, միշտ տրված հորինումի, մերթ Ռոբերտ Մուզիլ հաղթահարելիս, մերթ ֆրանսիական պոետների, մերթ գերմանական արձակագիրների...

Դու նա ես, Աշոտ սիրելիս, ում երբեք չեմ ասի՝ հանգստացիր մի քիչ: Քո գրիչը, կրիչը, չգիտեմ ինչը ձեռքիդ շարունակությունն են և, ասենք՝ թող միշտ կանաչ լինեն այստեղ և ամենայն կողմն աշխարհի:

Ինչ զարմանալի թեթևասահ դարձար 60-ամյա հոբելյար, ցանկանում եմ այդպես, առանց ետ նայելու ընթանաս ուր սիրտդ կամենա:

ՄԻՐՈ ՀՈՒՁԻՉ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երբեմն լրագրողներն ինձ հարցնում են, թե ինչու յոթանասուն-ութսունական թվականներին հրատարակված շնորհալի և որոշ ժամանակ անխնա քննդատված երիտասարդ բանաստեղծների գրքերում հիմնականում բացակայում են սիրային բանաստեղծությունները: Ես նաև ավելացնում եմ՝ հայրենիքի ներկայի, պատմության թեմայով գրվածքները, և պատասխանում, որ մեզանից առաջվա հանրահայտ սերնդի քերթողական արվեստը լիովին մատուցել էր նման գրվածքներ, կարծես դաշտը հագեցել էր, և նորերը խուսափում էին հին թեմաների հին ոճերից, լեզվամտա-ծողությունից և նոր խոսքում դեռևս չէր գտնում իր թարմ, ինքնատիպ ասելիքը:

Զգիտեմ ճիշտ եմ արտահայտում գրական այն թվերի իրավիճակը, թե ոչ, բայց իրականությունը դեռևս լիովին չի մեկնաբանվել: Միամտորեն ասեմ՝ հին անվանված թեմաները հավերժական են, հավերժությունն էլ քարացած չէ, անվերջ գունափոխվում, սպիրալաձև վեր է ձգտում: Այս ժամանակներում էլ են գրվում սիրային բանաստեղծություններ, ընթերցողները փնտրում են նման գրվածքներով գրքեր, հրատարակիչներն էլ վրա-վրա հրատարակում են:

Եվ ահա վերջերս լույս տեսավ ճանաչված բանաստեղծ Անահիտ Թարյանի «Մատյան սիրո» ժողովածուն: Նրա հոբելյանական տարում լավ նվեր է և՛ Անահիտին, և՛ ընթերցողներին: Գիրքը լիովին սիրային է՝ բազմաձև, սիրո նրբերանգներով, կյանքը սիրո ոլորաններում դիտարկած, մերթ դրամատիկ, մերթ մեղմ լիրիկայով ընդլուծված, համբույրից այն կողմ չանցնող սիրազեղությամբ, խոհական շերտերով ու սիրեցյալի, տվյալ դեպքում՝ ամուսնու, կորստից հետո զգայացունց պոռթկումներով ու ցավով:

Հաճախ չէ, որ բանաստեղծների տեքստերում կյանքի, հատկապես սիրո ճանապարհն այսքան կենսական ու տրամաբանական լինի: Անկեղծության շունչը ջերմացնում է ընթերցողին և չի ենթարկում այս ժամանակին հատուկ սեռացնումների, էպատաժի, նորովի ասելիքի չափազանց ճիգ ու ջանքի: Հեղինակը գիտի իր չափը և մնում է լիրիկայի դասական ծիրում, բայց ինքնատիպ պատկերների, պարզ, երբեմն կենցաղային դրվագների սրտամոտ, յուրահաստուկ դաշտում:

Գիրքը բացվում է «Միրում եմ» բանաստեղծությամբ.

Լույսի հետ եկավ սերը.

Բե՛ր՝ սարին գրեմ՝ սիրո՛ւմ եմ...

Դարձավ իմ սրտի տերը.

Այս ծառին գրեմ՝ սիրո՛ւմ եմ...

Թնեցի արևի շուրջ.

Մեր դարին գրեմ՝ սիրո՛ւմ եմ...

Թե մեռնեմ՝ մեռնեմ սիրուց.

Իմ քարին գրեն՝ «Միրո՛ւմ եմ...»:

(«Միրում եմ», էջ 3)

Սովորական կյանքի մի դիպված իր մեջ որքան հույզ է պարփակում, հայ աղջկա վեհերոտության, դա խիստ պարզ, առտնին խոսքով ներկայանում է «Հանդիպում» բանաստեղծության մեջ: Որպեսզի լրիվ չմեջբերեմ, ասեմ՝ խոսքը մի տղամարդու ամեն օր նույն ժամին, նույն տեղում տեսնելու մասին է ու.

Շատ եմ վրաս ես զարմանում.

Ինչպե՞ս է, որ ես

Մի օր հանկարծ չեմ մոռանում

Ու... բարևում քեզ...

(«Հանդիպում», էջ 16)

Տիոլետների շարքում երաժշտականությունը սուղի բանալու կողքին հայտնաբերում է.

Քո սրտի համար գիշերով այս ուշ

Որոնում եմ ես հրաշք բանալի...

(«Տրիոնլետ – 2», էջ 75)

Չշփոթենք, հրաշք բանալի փնտրողը կարող է լինել այնպիսին, որ տղամարդիկ ճիշտ չհասկանան նրան.

Իմ չար լեզուն քո դեմ գործեց որպես սվին.

Միրտդ արնեց ինչպես ցավից փշրված նուռ...

(«Այրող եղինջ», էջ 93)

Սա մեր ճանաչած ավանդական կնոջ ծուռ խոստովանություն է, տղամարդկանց խոսքի տակն ու վրան տարբերակելու մղող, որ չփշրվեն որպես նուռ:

Ընդհանրապես նուռը մշտապես ուղեկցում է հեղինակին և կենաց ծառի բոլոր փայլերը մերթ պարփակված են նրա կեղևի տակ, մերթ բոցկլտում են բացված կեղևից:

Կենսահաստատ է Թարյանի էությունը, երբեք չընկճվող, ըմբոստացող.

Ճիչն այդ կրոնի աշխարհն իսկ համայն,

Բայց դու՝ իմ կողքին, չես լսի բնավ...

(«Ցավիս ճիչը սուր», էջ 134)

Անահիտ Թարյանի քնարերգության շրջանակում քիչ չեն չոր և իրեն հարգող կնոջ հրամայական տողերը.

Դու ինձ մի՛ ժպտա.

Մոգական ուժ կա

Քո սփինքսային, լուռ ժպիտի մեջ.

Այն տաքուպաղ է,

Գույների խաղ է,

Որ վետվետում է դեմքիդ անընդմեջ:

(«Դու ինձ մի՛ ժպտա», էջ 167)

Իրեն հատուկ հիշարժան պատկեր է այս քառատողը, որտեղ վերջին տողերում գործածվող ռետին բառը ճշգրիտ իր դերն է խաղում առասպելական դամոկլյան սրի կողքին.

Ու չարչարվում է ժամանակն անլուր՝

Մեր ձեռքին դարձած ռետինն լար...

Ո՛ւր էր, թե իջներ դամոկլյան մի սուր՝

Հատված մի ծայրն ինձ, մյուսը՝ քեզ գար...

(«Սպասման պահն այս», էջ 201)

Մեջբերված քառատողից հետո մի ուրիշ քառատող իր տեղն է պահանջում այս էջի մեջ, նա պակաս դրամատիկ չէ.

Չարչարանաց գիշերս մութ

Մոտենում է լուսաբացին.

Պսպղում է սառն ու անգութ

Լուսինն՝ ինչպես սրած կացին...

(«Խաչելություն», էջ 246)

Սակայն սիրո ջերմ, նաև ցավագին ուրբերից հետո Անահիտը որպես գրքի ամբողջացնող վերջաբան բոլորիս ընծայում է հավերժական քրիստոնեական պատգամ.

Ապրիր քո օրն ու տարին,

Թող քնքշանք բուրեն բառերը...

(«Անհոգ են», էջ 291)

Մեջբերումները գուցե ավելինի էին արժանի, քան իմ մեկնաբանություններն են: Սիրային գրվածքները թող ներող լինեն:

Անահիտ Թարյանի ժողովածուն ամբողջովին շնչում է իր պատգամի ոգով, սիրո անպարագիծ, մարդկային սրտի ալիքներով հուրհրատող մթնոլորտով:

ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

ՏՈՀՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐՈՎ

Անահիտ Թարյանի հետ մինչև գրչընկեր լինելը կուրսընկեր էինք: Ինձ և շատերին զարմացնում էր այն թվերի համար դժվար ընկալելի, ժողովրդական պարերի պարուհիների նմանությամբ՝ կրունկներին հասնող հյուսքեր պահելը: Տարիներ հետո մազերը կարճացան, սակայն մնաց ավանդներին հավատարիմ լինելը և՛ ընտանիքում, և՛ միջավայրում, և՛ գրականության մեջ: Քեռուս տանը, երբ պատանի էի, ծանոթացել էի նաև նրա հոր՝ տաղանդավոր մանկագիր, բանաստեղծ ու արձակագիր Մնացական Թարյանի հետ, քեռիս՝ բանաստեղծ Երջանիկ Առաքելյանը, և նա, մոտավորապես նույն ճակատագրի համեստագույն, զարմանալի բարի մարդիկ էին: Դա ժառանգել են և՛ Անահիտը, և՛ նրա եղբայր, մեր ՀԳՄ պատվավոր բարերար Նվեր Մխիթարյանը:

Անահիտի մանկական բանաստեղծությունները մեր մանկագրության լուսավոր էջերից են, նաև մեծական բանաստեղծությունները մեր ժամանակի սրտագիրն են կրում՝ հավատ, սեր, դառնություն և ոչ երբեք վիատություն:

Նա իրավացիորեն արժանացել է Վախթանգ Անանյանի անվան մրցանակի, ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալի, բայց ամենակարևորը՝ նրա մշտական ուշադրությունն է ՀԳՄ հիմնադրամի աշխատանքների նկատմամբ և՛ որպես խորհրդի անդամ, և՛ որպես սրտացավ գրող: Հազվադեպ գրական ընտանիք, որ գրական մեր միությանն էլ ընդունում է հարազատի պես:

Հոբելյանդ շնորհավոր, սիրելի Անահիտ, քո գրվածքներին սպասում են մանուկները, ավագները և քո ընկերները, վկա՝ քո կեսդարյա ընկեր **ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԸ:**

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՃԱՄՓԱՆ

Արտեմ Հարությունյանը մեր կյանքի հազվադեպ մարդկանցից է, որի կենսագրությունը շնչում է գրականությամբ, մասնավորապես՝ բանաստեղծությամբ: Նրա գրվածքները սկզբում խոսում էին նշանների լեզվով, առաջին գիրքը՝ «Նշանների երկիրը», բնության ու մարդու ներդաշնակ փոխներթափանցման ժողովածու էր, կարծես երկուստեք արտահայտում էին միմյանց, բնությունը՝ բույսերով ու կենդանիներով՝ բանաստեղծին, իսկ վերջինս էլ՝ իր հոգու բնանկարը: Եվ դա շատ էր հարազատ Դիլիջանի տեղանքին: Ոմանց թվում էր պոետը խուսափում է իրականության և պատմության ճշմարիտ պատկերումից: Սակայն Արտեմի նշանային համակարգում փշի

և տատասկի սուր լռությունը կար: Պատմության մշտաբերուն ժամանակը հայոց երկրում չի շրջանցում բանաստեղծին: Արտեմն անսպասելի արագությամբ վերափոխվեց ըստ 88-ի շարժումից հորդացած գետի հզոր ընթացքի և շուշեցի արմատների պոթթկումով գրեց Արցախի ու նրա շուրջ փոթորկվող դեպքերի, ծանր իրադարձությունների, գոհերի ու հիշատակների մասին:

Հարությունյանի գիրը դարձել էր էքսպրեսիվ, գիտակցական հոսքի հանկարծական մուտքով և փոփոխական շարժմամբ: Սարկազմի խարազանը շառաչում էր մերթ անցյալի և մերթ ներկայի լայնք ու երկայնքով, չխնայելով մեծ ու փոքր մեռած և ապրող կուռքերի ու պաշտոնյաների:

Ամերիկայում Արցախի ներկայացուցիչն էր, դա մեծ հնարավորություն էր ընդգրկուն հայացքով դիտելու մեծ աշխարհի ու փոքր Արցախի աշխարհաքաղաքական ռեալ պատկերը: Հենց այդ ոգով գրվեց «Հուդայի արձակուրդը» գիրքը: Արտեմ ջան, էդ ե՞րբ են հուդաները արձակուրդ գնում: Նրանք հայտնվում են դիվանագիտական կլոր և քառակուսի սեղանների շուրջ, մտնում են քառատրոփ տողերի մեջ ու հանգիստ չեն տալիս ո՛չ բանաստեղծին, ո՛չ ընթերցողին և ո՛չ էլ մեր սիրելի Հայրենիքին: Քո գիրը և՛ բնանկարչական է, և՛ քաղաքացիական, և՛ քաղաքական, և՛ համամարդկային: Քո ընտիր ճաշակը քարացած արժեհամակարգ քանդելու միտված այս էլ քանի տասնամյակ գրիչ է ճոճում Սերվանտեսի հայտնի հերոսի նիզակի հանգով: Դու (և քո սերնդակիցները) երկար պայքարեցիր նաղլա-մաղլականության դեմ և չհոգնեցիր, ուղղակի բանաստեղծություն կարդացողներն են պակասում աշխարհում և նրանց մեջ էլ սակավ են ընտիր էջերը ընկալողները:

Քո իմացած բազում լեզուներից թարգմանեցիր, հաստատելու աշխարհի նորագույն բանաստեղծական մտածողության իրավունքը մեզանում, գրեցիր աշխարհի մեծ գրողների մասին գրքեր ու հոդվածներ, դասախոսեցիր, և փառք Աստծո, եղան և կան արդեն տարիքոտ և ջահել ունկնդիրներ («Ցուլքեր» գրական երիտասարդական խմբակը վկա): Քո խոսքը արտիստիկ է, հումորով առլեցուն և համոզիչ: Նոբելյան մրցանակ չստանալը կատակի տալու ևս մի առիթ էր: 75-ամյակիդ օրերին լույս կտեսնի նոր գիրքդ: Հավատացած եմ, որ նույնքան ձգողական լիցքերով հարուստ, մետաղի պես ծանր կլինի և թեթև՝ քո սրախոսության նմանակ:

Նորից կքայլես մեր երկրով ու քաղաքով, Ղարաբաղի թուր կերածի ձիգ դիրքով, բարձր ճակատով և չես փնտրի բանաստեղծական պատկերներ, նրանք ուղղակի քեզնից կթռչեն դեպի պատմության հին օրերը, դեպի ա՛յ հենց էն անցորդ էակը, դեպի գալիք, ուր քեզ են սպասում քո ընթերցողները:

Շնորհավոր ամյակդ, Հարությունյան Միքայել բանաստեղծի բանաստեղծ որդի Արտեմ Հարությունյան:

ՀԱՐԱՋԱՏ ԵՐԿԻՐ ՈՒ ԵՐԿԻՆՔ

Դավիթ Ավետիսյանին ճանաչում եմ վաղուց և չէի մտածում, որ երբևէ նա կգրի բանաստեղծություններ, որովհետև շատ լուրջ բնագավառի՝ իրավաբանության մասնագետ էր (հետագայում՝ բարձր պաշտոններ վարած) և տարբեր հանդիպումներին չէր խոսում ո՛չ գրականությունից և ո՛չ էլ արվեստից, այլ պատմում էր զվարճալի դեպքեր իր կյանքից, իրավական տիրույթից: Եվ մի օր կարդացի նրա բանաստեղծություններն ու զվարթացա, քանզի այդ բնապաշտական, խոհական գրվածքներում նրա էության ճշգրիտ պատկերն էր: Ձգտում էր աֆորիստիկ բանաձևումների և բազմիցս այդ խտացումները տարածվում ու զրուցում են ընթերցողների, ՖԲ ցանցի գրասերների հետ: Մի քանի բանաստեղծական գրքերի հեղինակ է:

Ես գիտեի, որ բանաստեղծ Դավիթը նաև պատմվածքներ է գրում: Նրանցից մեկը՝ Բաշ-Ապարանի ճակատամարտի մասնակից՝ հարազատ պապի մասին, տպագրվեց «Գրական թերթում»: Հուզիչ էր և հասուն գրչով գրված:

Վերջերս ինձ հանձնեց մի թղթապանակ: Պատմվածքների գիրք է: Ընթերցելուց հետո ավելի խորը ըմբռնեցի Դավիթ Ավետիսյան ընկերոջս բանասեր, մարդասեր, հայասեր և լուրջ ու հումորով պատմություն թելոդ բազմաշնորհ հոգին: Իրավաբանության բնագավառի մասին բազմաթիվ գիտական գրքերի և հոդվածների հեղինակ է: Նրա իրավաբանական աշխարհի քաջ իմացությունն օգնել է դիտարկել բանտն ու բանտարկյալներին ներսից ու դրսից: Հոգեբանական բացահայտումները մեզ են պարզում չարի ու բարու հավիտենական կռիվը՝ գրողի և իրավաբանի սթափ ու վերլուծող խորաթափանցությամբ: Կյանքի մի հուշը այնպես նրբորեն և սրտառուչ է մատուցել, որ քիչ է մնում փորձես ուտել նրա տատի թխած լավաշը: Այնքան բնական ու առինքնորդ են Արցախի մարտերում թրծված Մադաթը, Հովիվը, Հայկ Ակսալիչը և հենց հեղինակի կերպարը՝ տարբեր դիպվածներում:

Կարդալուց հետո քեզ են միանում կյանքիդ մեջ չհանդիպած մարդիկ և նրանցից ոմանց հետ կցանկանաս քայլել ու թռչել պատմվածքներում շատ հանդիպող ինքաթիռով՝ դեպի ջինջ ու հարազատ երկիր ու երկինք:

ՄԵՐ ՀՐԱՉՈՆ

Նրան գիտեի այն թվերից, երբ Հրաչյա Մաթևոսյան էր և երբ արձակ չէր գրում, նա երևելի լրագրող էր «Ավանգարդ»-ի էջերից հայտնի ու նաև երևելի երգիծախոս էր բանավոր զրույցներից քաջաձանոթ: Ես շատ փոքր տարիքից եմ այցելել «Ավանգարդ» թերթի խմբագրություն և առաջին անգամ այդտեղ եմ տպագրվել, ճանաչում էի բոլոր աշխատակիցներին և, հատկապես, տպավորիչ էր դոնկիխոտյան արտաքինով տարեց թվացող, բայց իրականում երիտասարդ Հրաչյա Մաթևոսյանը՝ Հրանտ Մաթևոսյան արդեն հանրաճանաչ գրողի եղբայրը: Նա մի անգամ ցույց տվեց խմբագրության դիմացի ծառի բնին մեխված ժանգոտ մեխի դուրս մնացած գլուխն ու ասաց.

– Սա Հ.-ի պոեզիայի մեխն է:

Լրիվ չեմ գրում՝ ում մասին էր խոսքը, քանզի կարևորը հումորն էր, մանավանդ, ոչ՝ սև:

Այդպիսին էր Հրաչյայի հումորը նաև իր արձակում: Ուշ տարիքում հրապարակեց գեղարվեստական գործերը, մասնավորապես հաջող էին մանկապատանեկան վիպակներն ու պատմվածքները: Երբեք չտրվեց փառատենչության մրցավազքի, իրեն չնետեց առաջին պլան, դա զարմանալի էր գրողական եռուն կյանքում, նամանավանդ երբ կարող էր օգտվել Հրանտի մեծության և ընդունելության նպաստավոր ուժից: Երբեք չտեսանք, որ նա ինքը չլինի, միշտ նույն անկոտրում հումորն ու հեգնանքը, իսկ վերջինս կձանձրացնի, եթե մերթընդմերթ չի վերածվում ինքնահեգնանքի: Ստացավ մրցանակներ և՛ գրողական, և՛ լրագրողական, խղճի քարտուղարը դարձավ հրապարակախոսության տիրույթում, չհպարտացավ ընդդիմադիր կեցվածքով և հերոսի վեղար չփորձեց զցել ուսերին, իր բաժին ճշմարտությունն էր բարբառում առանց հոխորտալու, որ միակ ճշմարիտն ինքն է ու իր գրիչը:

Ուրախանում էր մյուսների գրվածքներով, տուն էր զանգում, գովում ու մեղմ կամթում: Հազվադեպ կերպար էր այդ առումով, իրենն էր համարում բոլորի լավ գրվածքները:

Հիվանդ վիճակում էլ հաճախում էր Գրողների միություն, նստում էր դահլիճի առաջին շարքում և մեկ-մեկ ռեպլիկներ բաց թողնում:

Չլսողներն էլ խնդում էին երբեմն, նրանք գիտեին Հրաչո գրական կեղծանունով իրենց ընկերը միշտ էլ անկեղծ է ու շեշտակի:

ԶՎԱՐԹ ԳԾԵՐԻ ԿԱԽԱՐԴԱՆՔԸ

Մինչև նկարիչ Աշոտ Բայանդուրին ճանաչելը, ես «Պիոներ» և «Ծիծեռնակ» ամսագրերից ծանոթ էի նրա ձևավորումներին, որոնք միանգամայն հարազատ էին իմ

ըմբռնումներին, քանզի նրա գծանկարը զվարթություն և հումորիկ հայացք էր նետում դիտողի վրա, նրան իր հետ շփվելու և խաղալու հրավեր հղելով:

Ինքնատիպ, մանկական մտածողությանը հատուկ նրա ձևավորումները նորություն էին մեր հայոց ձևավորման արվեստում և, բնականաբար, շատ գրողներ էին ցանկանում, որ Աշոտը ձևավորի իրենց գրքերը: Նրա կարմիր ու սև գույների և գծերի աշխարհում տիրում էր և՛ հեքիաթի, և՛ ժամանակակից աշխարհի կանչող, կախարդող, նաև ծիծաղի հրավեր պարունակող բայանդուրական մթնոլորտը:

Հետո, երբ իրականում ծանոթացանք, ես համոզվեցի, որ մարդը ինչ էլ նկարի, իր մարդկային էության շրջանակից դուրս չի գա, որ նկարը լավագույնս է խոսում իր հեղինակի թաքուն և տեսանելի նկարագրի մասին: Եվ խոսում է տաղանդավոր լեզվով, երբ խոսքը Աշոտ Բայանդուրի մասին է: Նա շատ գրքեր է ձևավորել, հրաշալի ծաղկած բացվածքներ է նվիրել մանուկներին մանկական ամսագրերում:

Նկարագարող էլ է իմ «Գնելը դրսում, Գնելը ներսում» 1982 թվականին հրատարակած մանկական բանաստեղծությունների ժողովածուն, որը մինչև հիմա հիշվում է և ընթերցվում գրադարաններում և տներում նաև ի շնորհիվ Աշոտի յուրահատուկ ձևավորման:

Նրա գեղանկարչական ստեղծագործությունները ևս զգալի տեղ են գրավում մեր ժամանակակից նկարչական բարձր մակարդակի ասպարեզում: Սպասելի ու նշանակալի էր նրա նկարչական ներկայությունը ցուցահանդեսներում:

Վերջին անգամ պատահական հանդիպել ենք փողոցում, նրան ասացի, որ բանաստեղծությունների նոր գիրք եմ պատրաստել և ցանկություն ունեմ ինքը նկարի, իրեն հատուկ նուրբ և ջերմ ժպիտով պատասխանեց, թե գնալու է կարծեմ՝ Սլովենիա, կվերադառնա, կգանգի, սկսենք աշխատանքը:

Ցավոք, որոշ ժամանակ անց լսեցինք բոթը:

Մեծ կորուստ էր, որ չի փարատի անգամ նրա ամեն ինչ ընկալող ժպիտը:

ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ - 100

Հարգելի ընկերներ, գրողներ, գրասերներ, ընթերցողներ, հյուրեր, Մոսկվայից հատուկ ժամանել է այսօրվան մասնակցելու մեր ժողովրդի բարեկամ Վիկտոր Կրիվապուսկովը: Հունվարի 19-ին Կոմիտասի անվան պանթեոնում հանդիսավոր նշվեց անվանի բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս, մանկագիր Միլվա Կապուտիկյանի 100-ամյակը, դա սկիզբն էր այն հանդիսությունների, որոնք պատրաստվում են դպրոցներում, բուհերում, գրադարաններում և այլուրեք: Երկրորդը

մեր ՀԳՄ-ում այսօր կազմակերպվածն է, որի ջանադիրներն են բանաստեղծի տուն-թանգարանը և Հայաստանի գրողների միությունը՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: Սիլվա Կապուտիկյանն անցել է գրական մեծ ճանապարհ, շուրջ 25 գրքերի, բազմաթիվ թարգմանված ժողովածուների և հատորների հեղինակ է, ՍՍՀՄ-ում և Սփյուռքում լայնորեն ճանաչված ու սիրված: Ես Մոսկվայում նրա հետ ելույթների եմ եղել և տեսել, թե ինչ սիրով են ընդունում նրան: Էլ չասեմ՝ Սփյուռքը: Նույնը և առավելապես՝ Հայաստանում:

Նրա գիրն ընդգրկուն էր՝ լայն թեմատիկայով՝ ՍՍՀՄ բարեկամական կապեր, հայոց ազգային կնճիռներ, ցեղասպանություն, պատերազմ, Սփյուռքի խճանկար՝ «Քարավանները դեռ քայլում են», «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» գրքերով և բազմաթիվ հոդվածներով:

Արցախի հարց՝ որի արծարծողն ու պաշտպանը եղավ ՍՍՀՄ բարձր ատյաններում, հենց Գորբաչովի հետ հանդիպելով և նաև այս հարցով ցավալի հարվածներ ստացած և՛ դրսից, և՛ ներսից: Բայց միշտ մնաց այդ սուր և ձգձգված կոնֆլիկտի մարտական դիրքերում:

Եղավ անկախության ժամանակաշրջանի և դրանից առաջ ևս խոչ ու խութերի, հասարակական, քաղաքական կյանքի ստվերները խաբանողը:

2000 թվականին հրատարակվել է նրա «Չեմ կարող լռել» գիրքը: Նա չի լռել, իսկ եթե ժամանակին լռել է, հատկապես իր կյանքի առաջին կեսում, ապա ներում է հայցել իր հորից ու ժողովրդից:

Նրանից միշտ սպասել են սուր և բալասանող խոսք, դա հատկապես այն թվերին, երբ ոչ սոցցանցեր կային, ոչ թերթերի ազատ հարթակներ, ոչ էլ զանգվածային այլ լրատվամիջոցներ, ուր ամեն ոք իր մտքին եկածն է արտահայտում: Անգամ գրողական միջավայրում նա էր առաջինը հարց բարձրացնողն ու տազնապողը, այդպես 1986 թվականին ՀԳՄ-ում Կարեն Դեմիրճյանին ներկայացրեց Հայկական ատոմակայանի իրական վիճակը և երկրորդ բլոկի կառուցման ճակատագրական վտանգը, որին համաձայնեց և մարամասնեց Կ. Դեմիրճյանը:

Ահա այսպես՝ մինչև «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի ետ տալը Քոչարյանի նախագահության շրջանում, որպես ընդվզում ու անհամաձայնություն տիրող բարքերին ու վարքերին:

Նա խիզախ հայ կնոջ կերպար էր և խիզախ էր նաև իր նկատմամբ՝ ինքնաքննության սուր նշտարով փորփրում էր իր չարածն ու լռության մատնելը, որն առավելապես բաց տեքստով երևաց «Մտորումներ ճանապարհի կեսին»՝ տաղանդավոր պատմաքննական, ազգային խորքերը սուզված բանաստեղծական դաշտում: Իր մայրիշխանությունից

ժառանգած իշխանուհու կեցվածքով և սթափ գինտակցության բարձրից հայող հայացքով:

Նրա քայլքն էր վանեցու պատվախնդրությամբ ծանր ու հարգելի:

Սիրելի Սիլվա Կապուտիկյան, Դուք միշտ սիրելի կմնաք Ձեր «Խոսք իմ որդուն» պատգամով, Ձեր զանգահարի արթուն պահող մայրական բնագողով, Ձեր կանացի սիրով:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂ ՔԱՅԼ

Երբ տեղեկացա, որ մարսելաբնակ բանաստեղծ Կարեն Խուրշուդյանը ուզում է թարգմանել Պոլ Էլյուարի բանաստեղծությունները, նախ ուրախ ավիք անցավ սրտովս, իսկ ապա միտքս խլրտաց, թե ո՞նց է մտնելու ֆրանսիացու դադաիստական, հետո սյուրռեալիստական զարմանահրաշ, պատմողականությունից, ընդունված տաղաչափական ձևերից, մեզ անվերջ շրջկալած սիրային ախուվախային հուզականությունից, սրտակեղեք պատմություններից և դաստիարակչական խրատաբանությունից փախս տված աշխարհը և այնտեղից դուրս գալու բարդ ասոցիատիվ մտածողության մարգարիտներով, անսպասելի պատկերների ծովահատակից հանած խեցիներով, գերմանացիների կողմից նվաճած Փարիզի ցավի չհուսահատեցնող բոցերով, մարդկայինի ապրեցնող տիեզերահմա արթուն հայացքով և էլ ինչ ասեմ՝ բանաստեղծականության ստեղծագործ, աներևակայելի, անհաղթահարելի, երազային և վերերազային, իրական և գերիրական հոգին որսած կամ որսի հովազային մորթին չվնասած:

Արդեն թարգմանված «Յավի մայրաքաղաք» գրքի ձեռագրին ծանոթանալով, համոզվեցի, որ Կարենը լուրջ որսորդ է, այդ խոսքի թավուտում չի կորցրել բնագրի հմայքը և մեզ է մատուցում հայերենի Էլյուար, որի մասին կարելի է ասել գեղեցիկ էպիտետներ, բայց Պոլ Էլյուարը խիստ հայացքով կգալի՝ պահպանել բանաստեղծությունը առանց ճոխ ու գեղգեղուն գնահատականների: Որքան գիտեմ՝ ֆրանսիացուն թարգմանելու առաջին ընդարձակ փորձն է: Էլյուարի կենդանության օրոք հարյուրի հասնող հրատարակած գրքերից ջոկված են թարգմանչի սրտի ու գրչի ընտրվածները, որոնք որոշակի պատկերացում են տալիս հանրահռչակ հեղինակի հորինած ներաշխարհի մասին:

Կարեն Խուրշուդյանին ցանկանանք նոր որոնումներ և գտածոներ ֆրանսիական հարուստ գրական ընդերքից:

ՏՈՀՄԻԿ ԱՍԱՑՈՂԸ

Պատանի տարիքից մինչև հիմա Արտաշեսի դեմքին մի բրածո տխրություն կա, որ չի պատմվի և չեմ առնչում միայն Սասունից ելնելու հետ, ավելի ընդերքային է, նրա դեմքն էլ ձորերի ու ժայռերի ստվերներ ունի, Մարութա սարի առասպելներով է հերկած, նաև տոհմիկ բառ ու բանի շղթան է զնգզնգում, երբ հանկարծ պոռթկում է գրական առիթով: Նա չի խոսում խուլ ու ուշադրություն լարելու կամքով, ասում է իր խոսքը գրչակից ընկերների գրքերի մասին, ապա գրում է, ապա էլի խոսում դասական գրողների ու նկարիչների մասին, ևս գրում էսսեներ ու չի հոգնում ուրիշի գիրը իրենը համարելու բարձր, խոհական, ազնվական վարքից: Ի ծնե է: Նա Մուշեղ Գալշոյանի կեցվածքի կայծերն ունի և սիրելի է նրա տուրքը գրողական համակեցության դժվար ու քմահաճ ընթացքում: Նա չի սպասում, որ գրեն իր ստեղծածի մասին, կարծես չի կարևորում իր բանաստեղծությունը, նա իր դերն է խաղում բացձակատ ու դիպուկ: Երկար վերարկուն հագած՝ մերթ Սարոյանի արձանին է նման, Մերթ Միքայել Նալբանդյանի արձանացումն է շնչավորում և երբեք չես ասի, որ խաղ է, դերասանություն: Հավատում ես նրա կերպարի մաքրությանը, նրա գրի բարձրությանը, նրա հայերենի արմատական, ձայնավոր ու բաղադայն թրծվածքներին: Չի վախենում պարզ ու բարդ լինելուց, վաշենում է աշխարհի մշակութային դաշտից հեռու, անհասցե կայանելուց: Նրա գրվածքներից ընթերցանության վայելքի ծփանք ես զգում: Կարդում է և ապրում գրի մոգական ամպը, անձրևում է ու բաշխվում:

Սիրելի Արտաշ, դու Ղազարյան լինես թե Արամ, մեկ է, դու ինքդ ես, ինքնատիպ, անկրկնելի և բազմանուն՝ բոլոր տաղանդավոր ընկերների համաձուլմամբ:

Պահպանիր քեզ, դու և քո գրիչը Կաթնաղբյուրի գոթի մեջ եք կնքվել, ապրեցնող եք:

ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ ԴԻՏՈՂԸ

Գրողները գրականագետներից մշտապես սպասում են գրախոսականներ, տեսական հոդվածներ, ժամանակակից գրականության մասին վերլուծականներ և հաճախ դժգոհում են, որ մեր գիտնականները սակավ են մասնակցում գրական կյանքի ընթացքին:

Այո, մեր ժամանակակից գրականությունը կարիք ունի սթափ ու քննական հայացքի, շատ գրականագետներ խորանում են դասականների ժառանգության մեջ և

կարծես երկնչում են անդրադառնալ ապրողների երբեմն դժվարամարս ստեղծագործություններին:

Բարեբախտաբար մեզանում գործող հրաբխի պես իր կրակոտ ոգին անցյալի ու ներկայի վրա տարածող մեկը կա, որ խիզախում է դասականների հետ խոսել դասականաբար և ապրող գրողների հետ քննել ընթացիկ ժամանակի գեղարվեստական ներքին հոսանքները, աշխարհի և Հայաստանի մշակութային, գրական խաչաձևումները: Նա պատասխանատու է հայ գրականության բարձր նշանդրի պահպանման համար: Ուրախալի է, որ ոչ մի օր չի հոգնում այդ դերի մեջ, հսկայական հատորներին գումարում է նոր գրքեր, հոդվածներ: Անելիքն է՝ հատու, մտածման մղող, փիլիսոփայական գրականության և գրական փիլիսոփայության սահմանները հսկող:

Նա Սերգեյ Սարիճյանն է:

Իր տեսքի պես խրոխտ ու սևեռուն, արծվի պես զննող: Նա ոչ թե տարածություն, այլ ժամանակն է դիտում 90-ամյա բարձունքից:

ՔՈ ԿՅԱՆՔԻ ԴՈՒՌԸ

Դուռը քո ետևից շրխկոցով փակող, հեռացող էիր: Ես դա տեսել եմ, երբ 1969 թվականից համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող էինք և ընկեր:

Տեսել եմ, երբ դու իմ հարազատ Սարի թաղում էիր ժամանակավոր կենում: Տեսել եմ, երբ ընկերական հավաքներում հանկարծ պոռթկում էիր ու ինչ-որ մեկի հետ վեճը կռվի էր վերածվում: Տեսել եմ նույն նորակերտ թաղամասում հարևանաբար ապրելու տարիներին, տեսել եմ, երբ տարբեր խմբագրություններում էիր աշխատել ու չէիր հանդուրժել խմբագրական կյանքի միապաղաղությունը, խմբագիրների քեզ օտար պահվածքը:

Այսպես մինչև 88 թիվը և դու Ղարաբաղյան շարժման մեջ մտար լրիվ պատրաստ գրողի ու ընդվզողի գրավոր ու բանավոր դիպուկությամբ:

Դարձար միտինգների ու թափ հավաքող հայրենական բարձր ալիքի սիրելիներից:

Նորանկախ պետության սյուներից էիր ու բանդաների, տեղական ու միջազգային հեղինակությունների ատելին:

Պաշտոններ եկան ու անցան մի կողմ հրելով քո միանգամից առինքնող, անսպասելի և ուժգին գիրն ու գրիչը (մի օր գրել էիր, թե լուրջ ուսումնասիրել ես հայոց արձակը և հանգել քո ոճին): Զարմացա, ախր դու այդպես հանգիստ, գրողա-գիտնականավարի տիտիկ անող չէիր:

Պետական ծանրակշիռ ներկայությունը ունանց խանգարում էր, ունանց օժանդակում, սակայն Անկախության առաջին տարիների տնտեսական, սոցիալական հետևանքների մասին ունես փոքրիկ գրություն, որից մի բան ցցուն հիշվում է, դա լաված գործարանների մոայլ ուրվանկարն է:

Առաջին Արցախյան հերոսական ճակատամարտը վերջնական հաղթանակ համարողներին ու այդ փորձության միջով անցած ծանր կյանքով ապրող մարդկանց դժվար էր համոզել ընկալելու սպասվելիք վտանգներն ու նվաճած հողերը հանձնելը:

Եվ եղավ իշխանափոխություն: Եվ եղավ դատ ու դատաստանի սպասում, և եղավ պարտադիր վտարանդիություն ու դուռը շրխկոցով փակելու ժամը:

Ձեր կողմերում եղել է մի լեգենդար դաչաղ Վանիչկա, դու պատմել ես նրա մասին, ու ինձ միշտ թվացել է, թե դու կրում ես նրա տեսիլքը, անունդ էլ խոսում է այդ մասին:

Հետո այն, ինչ դու, որպես Մենակ գրել ես անցյալի ու քո միանձնության օրերի մասին:

Դու մենակ չէիր, քեզ հետ էր քո անդավաճան գիրը և կյանքիդ բազում փառավոր ու տանջալից իրողություններից հեռանալուց հետո անվերապահ մնալու է «Կիրակի» և «Ծանր լույս», «Ափսոս էր երեխան» ստեղծագործությունների ներհուն կիրակին ու ամեն ինչից թեթև լույսը և ասենք ու հազար ափսոս և՛ երեխան, և՛ Վանո ըմբոստը, գրողը, գործիչն ու մահվան վրա դուռը շխկոցով փակողը:

ՈՒՐԻՇ ԵՐԿԻՆՔՆԵՐ ԴԻՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բաղաթեր Արաբուլին վրաց ճանաչված, սիրված բանաստեղծ է: Մենք ջահելության տարիներից ընկերներ ենք, հանդիպել ենք տարբեր պոետական համաժողովներում և այժմ, ուրախ եմ, որ նա Վրաստանի գրողների միությանի ղեկավարներից է ու մնացել է նույն ջահել ու պարզ Բաղաթերը, որի հետ ընկեր լինելը հավերժական է թվում: Հավատում ենք իրար և հավերժությանը:

Նրա պոեզիան շաղախված է հարազատ ելևեջներով, պատմության անտաշ քարերի մամռապատ խորհրդով, Վրաստանի կիրճերի ու լեռների, դաշտերի ու բլուրների ոգեղեն քարտեզով:

Նրա հետ ցավ ես ապրում լքված գյուղերի, ավեր ամրոցների, դատարկվող շենքերի առջև:

Մի թե հայ բանաստեղծներին օտար են այս տեսարանները.

Եղիր իմաստուն, ցա՛վ իմ,

Եվ պահիր քեզ առավել գուսպ,

Անցածի համար մի դժգոհիր

Եվ չանհոճես բախտդ:

Նրա գրվածքներում նաև կյանքի կենսական, պայծառ թրթիռներն իրենց տեղն ունեն: Ինչ քնքշությամբ ու երգային են թոռնուհի Թախային նվիրված տողերը: Արաբուլին նախ հավատարիմ է ինքն իրեն, մշտապես սիրո և ցավի շեշտերով ամրացնում է իր և ընթերցողների կապը:

Քամին քամի է միշտ,

Չի փոխում երբեք իր հին բնույթը,

Չի ընկնում ժամանակի

Եվ օտար խարիզմաների խելքին:

Բաղաթերը բազմիցս թարգմանել է հայ բանաստեղծների և հրատարակել:

Վրաց բանաստեղծի գրքույկը կազմվել է Գագիկ Դավթյանի և իմ թարգմանություններով:

Ժամանակակից վրաց պոեզիայի ինքնատիպ աշխարհի փոքրիկ մաս է, բայց սա այն կաթիլն է, որով ճանաչում են Քուռ գետը, Սև ծովը և վրաց հողը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՐՏԻ ՄԵՋ

Կարեն Խուրշուդյան բանաստեղծն ապրում է Ֆրանսիայի Մարսել քաղաքում: Նա կրթական և հոգևոր ոլորտում զգալի գործունեություն է ծավալում: Նրա եռանդը կրավարարի նաև այլ ասպարեզներում ներկա և գործուն լինելու: Սակայն ես ցանկանում եմ, որ նա շատ ժամանակ ունենա բանաստեղծություններ գրելու, ապա և թարգմանելու համար: Կարդացել եմ նրա առաջին գիրքը և տեսել, որ կա ջերմ, անկեղծ հոգի, ապրածն ու զգացածը տողերի վերածելու շնորհք ու որդիական անհանգստություն իր հայրենիքի՝ Հայաստանի անցյալ-ներկա-ապագա ժամանակային, տարածական և հոգևոր պատմության և ընթացքի վերաբերյալ:

Հատկապես դա շեշտված է այս նոր գրքում, որ ես ընթերցել եմ, իսկ դուք բարեպատեհ առիթ կունենաք կարդալու և զգալու Հայաստանի և Արցախի պայքարն ու ցավը 44-օրյա պատերազմում:

Քաղաքակիրթ աշխարհ կոչվածի կրավորական, անհոգի հայտարարությունների շրջապատույտում տվյալտող սփյուռքահայերը նորովի բացահայտեցին իրենց պարտքը, միասնական լինելու հրամայականը, հայրենիքի ճակատագրի պահապան զինվոր լինելու անհրաժեշտությունը:

Հետզհետե փոքրացող, համացանցում վիրտուալ թռչկոտող աշխարհի շուրջ պտտվող ցիները ստիպում են միանալ երկրագնդի բարի, մարդասեր սրտերին և նրանց մեջ բանաստեղծներին հատկապես, և այդ ոգով են գրված Կարենի ֆրանսիական, հնդկական մոտիվներով բանաստեղծությունները:

Այդ տողերն այնքան ձգողական են, որ ես կրկին անգամ ինձ պատկերացրի իմ տեսած պատմական քաղաք Ջայպարում, հնդկական տաճարներում և այլ հնագույն մշակույթի տարածքներում:

Կարենը բնության ու մարդու միասնական էությունն է մեզ պարզում իր «Աղորիք» բանաստեղծությամբ, երկինք ու երկիր աղորիք և նրանց միջև մարդու հոգին՝ սրբազան հացի համար այյուր:

Այդպիսիք են «Ջուրը», «Սահարայի ճգնաժամը» և այլ հորինվածքներ:

Նրան հատուկ է մտածման մաղով անցկացնել ժամանակների հոսուն ավազը, պահպանելու հավերժականն ու մարդ արարածի երազանքը՝ մերձավորին սիրելու պարզ և հաճախ ոտնահարվող պատվիրանը:

Ուզում եմ մեջբերել նրա երկտողը՝ *«Հայաստանից հեռու, Հայաստանը իմ սրտի մեջ»:*

Այս գիրքը դրա ճշմարիտ վկան է:

ԶՈՒՄՊ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ

Գուրամ Օղիշարիան վերջին տարիներին իմ կարդացած վրացի այն բանաստեղծն է, որ հմայում է բնության բացառիկ նրբին ընկալմամբ: Բարության, գեղեցկության, մարդասիրության թրթիռներն են ելնեջում բանաստեղծական ներքին հոսքերի ինքնօրինակ բացահայտումներում:

Առաջին հայացքից աննկատելի հայրենասիրական այն թելերը, որոնք հյուսված են բանաստեղծին, իսպառ զերծ են նույնիսկ ամենաաննշան պաթետիկ երանգներից և մարդկային ամենատես հոգու հրաշքն են հայտնաբերում որքան զուսպ, նույնքան թափանցիկ խոսքով, առինքնող ոճով ու պատկերային անսովոր համակարգով:

Ներքին այրման առեղծվածային ընթացքի բանաստեղծ է Գուրամ Օղիշարիան:

Դրախտային Վիրքի պատմության եզակիությունը, վրացու ինքնության ու հոգեկերտվածքի ցուցումները փորձելով միահյուսել աշխարհի գրականության քարտեզին, բանաստեղծը ձգտում է ընդլայնել հոգևոր այն տարածքը, ուր Վրաստան երկրի բերկրանքն է ու ցավը; Եվ, իհարկե, երկրի հայտնությունը: Հայտնությունը ըստ Գուրամ Օղիշարիայի:

Թարգմանելով այսպիսի բանաստեղծի, մեր հարևան երկիրն ու եղբայր ժողովրդի ոգին առավել ենք ճանաչում՝ տաղանդավոր հեղինակի խորապես ժամանակակից բանաստեղծական մտածողության կնիքը համարելով մերը, այդպիսով նաև մերը դարձնելով նրա հիացմունքը, ուրախությունն ու թախիծը, հավատն ու տազնապները, ինչը հրաշալի հայերենով և բարձրարվեստ վարպետությամբ մատուցում է թարգմանիչը:

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՆԿԱՐԻՉ, ԹԱՐԳՄԱՆԻՉԸ

Տարիներ առաջ, երբ ես ծանոթացա Էդուարդ Հախվերդյանին, իմացա որ նա եկել է Իրանից, և հետաքրքիր էր, թե ինչ տեսակ մշակույթների շաղախ է իր հետ բերել մեր սիրելի ընկերը: Տարիների ընթացքում՝ կարդալով նրա բանաստեղծությունները, նաև ուրախացա, որ տեսա ինքը նկարիչ է, հետո նրա թարգմանությունները ընթերցեցի. հսկայական գործ, նախ առաջինը, որ Իրանի սուրբ գիրքը՝ մահմեդականների «Սուրբ Դուրան»-ն էր թարգմանել, ապա հսկայական մի աշխատանք՝ Իրանի հնագույն «Ավեստա» գիրքը, որը անցյալ տարի ներկայացվեց Իրանի մեծ մրցանակի, որ տրվում է աշխարհում իրանցիների գրականությունը թարգմանողին և մեր ընկերը՝ Էդուարդ Հախվերդյանը ստացավ Սաադիի անվան մրցանակ: Էդուարդի պոեզիան շատ նրբագեղ, նկարչական պատկերներով, անսպասելի անցումներով, շատ նուրբ լեզվամտածողությամբ պոեզիա է: Ես որ ծանոթանում էի նրա թարգմանած գրքերին՝ Սոհրաբ Սոփեհրիի, Ահմադ Շամլուի, Աբդոլմալեքյանի, Ֆորուզ Ֆարոխզադի, և մյուս գրողների, ես տեսնում էի, որ և՛ հարազատություն ունի մեր դասական ու ժամանակակից պոեզիայի, և՛ պարսկական գրականության հետ, որովհետև պարսկական գրականությունն էլ՝ ժամանակակիցը հատկապես, շատ հետաքրքիր մի խառնուրդ է՝ արևմտյան և արևելյան պոեզիաների: Իմանալով Իրանի դասական հսկա ժառանգությունը, նաև ժամանակակից պոեզիայի ձևերը, Էդուարդի պոեզիայում խաչաձևվել ու շատ գեղեցիկ արդյունք է ստացվել՝ նրա բանաստեղծական գրքերում կամ առանձին շարքերում: Պատկառելի ժառանգություն է ստեղծել մեր Էդուարդ Հախվերդյանը, և նաև այն ժրաջանությունը, որ մենք տեսնում ենք, հույս է տալիս, որ առաջիկայում նոր անակնկալներ են սպասվում:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԱՅԱՑՔԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծնվելով Ռումինիայում, ապրում է Գերմանիայում, գրում է ռումիներեն, նաև՝ գերմաներեն, հրատարակել է գրքեր և արժանացել մի շարք գրական և կինոարվեստի մրցանակների:

Ինչպե՞ս ընկալել նրա բանաստեղծական հայացքի ուղղությունը, որն ուղղակի ժամանակների ժամացույցով չափումից դուրս է, տարածությունների անհավանական

խաչմերուկներ են հայտնաբերում և այդ ամենը՝ մի մարդու հայացքով, որը կետադրական նշաններից է խուսափում, տողերը կարող են բազմանշանակ ընկալվել, և հանկարծ բառեր են հայտնվում, որոնք իրենց առջև և հետո գրված բառերի հետ օրգանական որևէ կապ չունեն: Մակայն ընդհանուր տեքստի տիրույթի մեջ ստանձնում են և՛ առանձնակի, և՛ ընդհանուրի հետ առնչվող իմաստ: Դյուրին չէ ընթերցել նման տեքստ, եթե դու սովոր ես միայն դասական տաղաչափությամբ ստեղծագործություններ կարդալուն, և ազատ բանաստեղծության դաշտը մտնում ես նախապես մերժելու տրամադրությամբ: Տրայան Պոպ Տրայանի պոետական հայացքը չի հայցում ընթերցողի գործվանք կամ սեր, կամ իրեն պաշտեն ուշաթափվելու աստիճան: Ինքն իրենից ազատ է և հայտնաբերում է բազում ոչ լիրիկական և ավելին՝ կոշտ ու կոպիտ աշխարհը ունայնությամբ, հեզանքի արժանի կաղապարներով:

Տրայան Պոպ Տրայանը ուշադիր է այլ երկրների գրականության հանդեպ, մասնավորապես իր ստեղծած «Պոպ» հրատարակչությամբ լույս է ընծայել ժամանակակից հայ պոեզիայի հատորը (2021 թ.) և իր խմբագրած «Մատրիքս» ամսագրում պարբերաբար տպագրում է նմուշներ հայ արդի քնարերգությունից, ինչպես վերջերս (2022 թ., թիվ 2):

Նրա տեքստերն առաջին անգամ են հրատարակվում հայերեն «Հպանցիկ ճանապարհ» գրքով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ

Յուրաքանչյուր փորձառու և խելամիտ հոբելյարի հատուկ է՝ մի պահ սևեռվել, անցած ուղին քննել դրվագ առ դրվագ և ապա արդարամտության կշեռքով ու խղճի մտոք կշռելուց հետո այդ շարժանկարի հում նյութից մոնտաժել, թողնել կարևորը, արժանին, ուսանելին, առանցքայինը և այդպիսով ամփոփել անցած ճանապարհի հացը և դնել լայսօրվա սեղանին:

Այս կերպը որքան հատուկ է անհատին, նույնքան էլ որևէ կազմակերպության:

Հայաստանի գրողների միությունը 80 տարեկան է: Նա ետ է նայում և բազմիցս վերլուծված ինքնակենսագրության էջերում չի կարող վերստին չտեսնել ստեղծագործական հաջողություններ, ցավ ու դառնություն, ստալինյան բռնապետության դաժան արհավիրք, որին գոհ գնացին մեր մեծերից Չարենցը, Բակունցը, Թորոմենցը: Դատապարտելով անհատի պաշտամունքի համատարած մամլիչի գազանային դեմքը, հոբելյարը ցավով և ինքնադատության խիզախումով փաստում է, որ այդ մսադացի ատամների տակ հայ գրողներից ոմանք չէին խորշում նետել իրենց գրչակից ընկերների մարմինն ու հոգին:

Մխիթարականն այն է, որ բազմաթիվ գրողներ պահպանեցին տաղանդավոր մարդուն առանձնացնող մաքուր և աննախանձ կենսակերպը: Հովհաննես Թումանյանի «Վերնատուն» գրական եղբայրության ուժը շարունակվում էր Իսահակյանի և Դեմիրճյանի բարեպատեհ ներկայությամբ: Ի հեճուկս այս դժնի տարիների, հայտնվել էին երիտասարդ տաղանդավոր գրողներ, որոնց մի մասին ոտնատակ կտա 2-րդ համաշխարհային պատերազմը, մյուսները կղիմանան ու կստեղծեն բարձր գրականություն: Գրչի եզենքի միասնության ժամանակ էր:

Մեծ եղեռնի վերքերը չէին սպիացել, բայց դրա մասին խոսելն ու գրելը ազգայնության պիտակով էր հաճախ նշավակվում: Մնում էր պատմության խորքերից պեղել հայրենապահպանության ու ազգային նկարագրի կարևորությունը հաստատող թեմաները, որոնց հիմքի վրա ստեղծվեցին կոթողային վեպեր, պոեմներ, դրամաներ (այժմ դասական համարվող):

Պատերազմն ավարտվեց, սակայն ազգային մտածողության դեմ թաքուն և բացահայտ պայքարը վերջ չունեցավ: Դրան գումարվեց ֆորմալիզմի անվան տակ մշակույթի ու գրականության հալածանքը: Գուրգեն Մահարին, Մկրտիչ Արմենը և այլ գրողներ բանտերում և արքտրավայրերում էին: Պատերազմի տարիներին թրծված սերունդ կար, որը ոտքի էր կանգնել, փորձում էր Չարենցի և Բակունցի արգելված հանճարեղ գրքերի ընթերցողն ու նրանց ավանդների շարունակողը լինել:

Ժողովուրդը փնտրում էր գիրքը, գրողները տպագրվում էին բազմահազար տպաքանակներով, հատկապես ազգային թեմաներով գրքերը: Այս երկերը իրենց գեղարվեստի ուժով նախապատրաստեցին 1965 թվականի ազգային ինքնագիտակցության պոռթկումը:

Ժողովուրդը գրականության մեջ փնտրում էր ճշմարտություն, ազատություն, հայրենասիրություն: Խրուչչովյան ձնհալից հետո 60-ականների սերունդը բացված առազաստներով մղվեց Արևմուտք և Արևելք, անցյալի ու ներկայի՝ նախկինում արգելված թեմաների դյուրիշ տարածքները:

Եկավ նաև «Գարուն» ամսագրի ժամանակը: Այս հզոր թափի հզոր ակորդը համընկավ գորբաչովյան պերեստրոյկան լուրջ ընդունած Լեոնային Ղարաբաղի ու Հայաստանի ընդվզման հետ: Արցախի և Հայաստանի գրողների միությունները կիզակետում էին: Երկրապահի շտաբը ՀԳՄ շենքում էր: Բանակաշինության, անկախ պետականության կառուցման գործում և պատերազմի դաշտում գրողների անունները ետին շարքերում չէին: Նորից գրչի ու զենքի միասնության ժամանակն էր:

Խորհրդային Միության անվանի գրողների շարքում հռչակվում էին հայ բանաստեղծների ու արձակագիրների անուններ, նրանց գրքերը թարգմանվում էին

օտար լեզուներով: Տպաքանակները վայել էին աշխարհի մեկ վեցերորդ մասը տիրապետող երկրին: Հնոթարները զգալի էին, սոցիալական հարցերը լուծվում էին պետական միջոցների հաշվին: Սակայն ոչ ոք չի կարող ժխտել, որ այս ամենի հետ գործում էին նաև հանրապետությունների միջև քանոնով գծված սահմանները, միակուսակցականության ու գաղափարախոսության ոչ պակաս կոշտ սահմաններն ու սահմանափակումները:

Բազմաթիվ ազգամիջյան, սահմանային, քաղաքական, մարդու իրավունքների, դեմոկրատական խնդիրներիթեժ, եռացող հողմերն ու փոթորիկները քանդեցին Խորհրդային Միությունը:

Շատերը մտավախություն ունեին, թե անկախացած Հայաստանի Հանրապետությունը կարող է մնալ հսկա պետության փլատակների տակ, սակայն դժվարին մաքառումով ոչ միայն կանգուն մնաց, այլև Արցախին թիկունք եղավ, հայության միասնականության հրով թրծվեց Հաղթանակի սուրբ: ՀԳՄ 70-ամյակին նվիրված խոսքում Լևոն Անանյանը գրել է. «Անկախության գլխապտույտ արբեցումը, պատերազմը, սոցիալական խոր ճգնաժամը՝ վայրի շուկայի չվերահսկվող բարքերով, որոշ տեղատվություն ու նահանջ արձանագրեցին մեր գրականության դաշտում: Սակայն վերջերս առկա է նկատելի բեկում ինչպես գրողի հանիրավի խաթարված հեղինակության վերականգնման, այնպես էլ գրահրատարակչության խթանման, գիրք-ընթերցող կապի աշխուժացման ոլորտներում»:

Իսկ վերջին տասնամյակում անուրանալի ջանքով ՀԳՄ-ն ընդարձակեց հայ գրականության քարոզչության և տարածման սահմանները, բազմաթիվ լեզուներով հրատարակվեցին հայ գրողների գրքեր, անթոլոգիաներ: Ավանդական դարձան սփյուռքահայ և օտարազգի հայ գրողների համաժողովները: Փաստենք, որ այլևս ՀԳՄ անդամ են սփյուռքահայ գրողները:

Երևանը համաշխարհային գրքի մայրաքաղաք հռչակելուն, կարծում ենք, նպաստել էր նաև Հայաստանի գրողների միության գործունեությունը, նրա ներկայությունը բազմաթիվ միջազգային գրքի ցուցահանդեսներում, փառատոներում:

Այժմ ՀԳՄ-ն ունի իր հրատարակչությունը, տպարանը: Նրա անմիջական գլխավորությամբ են վերականգնվել Մանկապատանեկան գրքի շաբաթը, Թարգմանչաց տոնը, Վարդատոնը, Գիրք նվիրելու օրը, դասական գրողների մեծարման օրերը: 2013 թվականին առաջին անգամ Հայաստանում կազմակերպվեց պոեզիայի միջազգային փառատոն:

Հրատարակվում են ժամանակակից գրողների գրքերը, թարգմանիչների և գրականագետների երկերը: Գործում է գրական մամուլը:

Մեր Ծաղկաձորի և Սևանի ստեղծագործական տները աշխարհում, երևի, եզակի, անվճար հանգստանալու և ստեղծագործելու հնարավորություն են տրամադրում մեր միության անդամներին:

Որոշակի գործունեություն է ծավալել Համահայկական գրական հիմնադրամը:

Սակայն պիտի նշենք, որ այսօրվա ընդարձակված գրական դաշտի կարիքները համարժեք պետական և մասնավոր աջակցության պահանջ ունեն:

Ամեն տասնամյակ իր խնդիրներն է առաջադրել, թվում է, մեր պատմությունը խտացված ներկայացել է մեզ, գումարած նոր մարտահրավերներ՝ գլոբալացում, Արցախի հիմնահարցի արդարացի լուծում, Մեծ եղեռնի ճանաչման ու հատուցման պահանջ, հայ ինքնության պահպանման կամք, երկրի կողմնորոշման քաղաքականության հարց, արտագաղթը ներգաղթի վերածելու գործնականություն:

Հավատացած ենք, որ միայն տաղանդավոր գրականությունն է ի վիճակի այս բախտորոշ, ճակատագրական ու կենսական հարցերն ամփոփել սեղմ, ջղուտ բջիջներում ու հյուսվածքներում և ապագային պարզել այս ժամանակի ճշմարիտ քարտեզը: Այսպիսի գրականության պահանջ ունեն աշխարհի բոլոր լավ ընթերցողները: Կարծում եմ մեր երկիրն ու ժողովրդի ոգին աշխարհին ներկայացնելու ամենաճշմարիտ ճանապարհն է սա:

Գուցե միամտորեն կարծում եմ նաև, որ գրականությունն է մեր պատմության, պետականության և ապագայի անկյունաքարը:

Այսօր ոմանք վիճարկում են ստեղծագործական միությունների լինել-չլինելու հարցը: Մարդկությունը, բարեկամներ, գնում է միությունների, այսինքն՝ ընկերակցությունների ստեղծման ճանապարհով: Փաստերը հայտնի են: Գրողների միությունը այսօր ևս մնում է գրական մշակների օջախ, նրանց հոգսը, որոշ առումով գրական կյանքը կազմակերպելու կառույց: Այնպես որ ՀԳՄ-ն իր կառուցողական կեցվածքը կցուցանի նաև ապագայում, հարստանալով յուրաքանչյուր գրողի հոգևոր տուրքով:

Հայաստանի գրողների միության ամեն անդամ անհատական իր ուղին ու գեղարվեստի ըմբռնումն ունի, սակայն միասնական ենք մի հարցում՝ ազնիվ ու ճշմարիտ լինել սպիտակ թղթի առջև:

80-ամյա մեր միությանը սպասում են գալիքի երգասանները:

Գողթան երգիչների սովորությամբ միանանք նրանց՝ շարունակելու բանն, որն ի սկզբանե էր և անվերջ:

ՀԳՄ 19-ԸՆԴՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ԲՈԼՈՐԻՍ ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ ՄԵՐ ԳԱԼԻՔ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԳՄ վարչության և նախագահության, ինչպես նաև ՀԳՄ աշխատակազմի աշխատանքը եղել է ամենօրյա: Այդ ամենը լրատվությամբ, հիմնականում «Գրական թերթում» ներկայացվել է, սակայն բազմաթիվ հանդիպումներ, քննարկումներ, լիանիստեր, շնորհանդեսներ, հոբելյաններ, գիտաժողովներ, ելույթներ, ասուլիսներ, հրապարակումներ չէին կարող ամբողջովին ամփոփվել տեղեկատվության այդ շրջանակում: Ուստի որոշվեց թողարկել թերթի հատուկ համար, որտեղ ցանկով կներկայացվի, թե հաշվետու շրջանում ինչ ուղղություններով են աշխատանքներ տարվել: Ստեղծագործական միությունը նախ և առաջ պետք է կարողանա ապահովել գրական մթնոլորտ, ստեղծագործական ընթացք կազմակերպել ոչ միայն Երևանում, այլև ողջ Հայաստանում, Սփյուռքում, արտերկրում, ինչպես նաև լուծել գրողների սոցիալ-տնտեսական հարցերը: Պետք է անպայման հաշվի առնել, թե այդ ժամանակաշրջանում ՀԳՄ ստեղծագործական տների, Գրողների միության շենքային պայմանների ինչպիսի հավելումներ են գրանցվել, գրողների իրավունքը պաշտպանելու, դասական ու ժամանակակից գրողներին թարգմանելու և հանրահռչակելու, գրական գործերը մրցանակների տեսքով գնահատելու, դրանք տպագրելու, դրանց շուրջ գրականագիտական, քննադատական աշխատանք ձևավորելու ուղղությամբ ինչ գործեր են արվել: Չպետք է մոռանալ նաև Սփյուռք-Հայաստան առնչությամբ կատարված գործերի մասին, քանզի Սփյուռքի մեր գրողները լիարժեք ՀԳՄ անդամ են, և այս հաշվետու շրջանում աշխատանքներ ենք ծավալել՝ կազմակերպելով սփյուռքահայ մեր գրողների հետ հանդիպումներ, քննարկումներ, շնորհանդեսներ, հոբելյաններ, դրա մեջ ներառելով նաև արևմտահայ գրողների և սփյուռքահայ գրողների հոբելյանները: Այս ամենը մանրամասն կներկայացվի հատուկ թողարկման մեջ՝ մատենագիտական ցանկով, և ամբողջական պատկերը, կարծում եմ, տեսանելի կդառնա:

Հրատարակչական աշխատանքները, բնականաբար, մեր գրողներին ամենաշատն են հուզում: Մինչև 2017 թ. ՀՀ մշակույթի նախարարության պետական աջակցության ծրագրով հրատարակվում էին ժամանակակից գրողների գրքերը, և առանձնապես որևէ խոչընդոտ չկար: Չկա մի լավ գիրք, որ ներկայացվել է ու չի տպագրվել: Իսկ ինչ վերաբերում է այն կարծիքին, թե նաև թույլ գրքեր են տպագրվել, ապա այդ թույլ կամ ուժեղ գրքերը պիտի գրականագետները, քննադատները մեկնաբանեին, վերլուծեին, գնահատեին: Այդ ամենը որակելու դերակատարումը նրանց է պատկանում, քանի որ հնարավորություն է եղել տարբեր հարթակներում գնահատելու այդ գրքերի որակը: Ի դեպ, նշենք, որ ՀԳՄ Մեծ դահլիճում և Կլոր սրահում մշտապես եղել են քննարկումներ,

շնորհանդեսներ, հանդիպումներ գրողների հետ, գործել է բանավեճի ակումբը: 2017 թվականից դժվարություն առաջացավ ՀՀ մշակույթի նախարարության կողմից ժամանակակից գրողներին տպագրելու խնդրում: Անցկացվեց գրահրատարակչական խնդիրների արծարծման լիանիստ, որտեղ մեր գրողներն ու հրատարակիչներն իրենց կարծիքները հայտնեցին, որը ներկայացվեց Մշակույթի նախարարությանը: ՀՀ մշակույթի նախարարությունն իր ծրագրերում ներառեց տպագրել երիտասարդ, սփյուռքահայ և ազգային փոքրամասնությունների գրողների գրքերը: Իհարկե, ժամանակակից գրողի տպագրման հարցը որոշակիորեն դժվարացավ, և ՀԳՄ-ն, ՀՀ մշակույթի նախարարության հետ համագործակցելով, տարբեր ծրագրեր իրագործեց: Մենք փորձեցինք մեր միջոցներով հրատարակել ժամանակակից գրողների գրքերը: ՀԳՄ հրատարակչությունը հատկապես կարևորում է ժամանակակից գրողների «21-րդ դար. հայ արձակ» և «21-րդ դար. հայ պոեզիա» մատենաշարի հրատարակումը: Արդեն 11 գիրք տպագրվել է, շնորհանդեսով ներկայացվել, ինչը շարունակական բնույթ է կրելու: Թե՛ ՀԳՄ-ի, թե՛ Հայաստանի գրական հիմնադրամի միջոցներով պետք է անպայմանորեն շարունակենք այդ մատենաշարի լույսընծայումը: Տպագրվել են նաև մատենաշարից դուրս գրքեր: Ի դեպ, ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցի գլխավորությամբ, քննարկվել են ժամանակակից գրողների հրատարակման խնդիրները, և, կարծում եմ, առաջիկայում դրական լուծումներ կլինեն:

Ստեղծագործական հարցերի մասով ուզում եմ նշել մի հանգամանք. հաշվետու ժամանակաշրջանում, վերջին 25 տարում երևի առաջին անգամ, կազմակերպվեցին լիանիստեր տարբեր գրական ժանրերի՝ արձակի, պոեզիայի գծով, ինչպես նաև թարգմանական գործի, հրատարակչական խնդիրների, երիտասարդական գրականության հարցերի վերաբերյալ: Ստեղծագործական հարցերը լայնորեն քննարկվել են այդ լիանիստերում, և այդ ձևը, կարծում եմ, կշարունակվի ապագայում ևս: Հավելենք՝ եղել են գիտաժողովներ դասական ու ժամանակակից գրականության ու գրականագիտական կարևոր հարցերի վերաբերյալ:

Մեր օրերում առավել առաջնային են երիտասարդների հետ տարվող աշխատանքները: Ամեն տարի հունիսին Գրողների Ծաղկաձորի ստեղծագործական տանը տեղի է ունենում երիտասարդ գրողների համաժողով, որտեղ քննարկվում են երիտասարդական գրականության հարցեր: Ընդգծեմ, որ երիտասարդ ստեղծագործողների հետ աշխատանքը Ծաղկաձորյան համաժողովով չի ավարտվում: Անցյալ տարի ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ համատեղ կազմակերպեցինք երիտասարդ գրականագետների նիստ, քննարկվեցին տարբեր հարցեր, ՀԳՄ-ն և Գրականության ինստիտուտը որոշեցին ժամանակակից

գրականության վերաբերյալ երիտասարդ քննադատների համար մրցանակաբաշխություն կազմակերպել: 2018 թ. դեկտեմբերին կամփոփվի այդ մրցանակաբաշխությունը: Ունենք հատուկ մրցանակաբաշխություններ երիտասարդների համար՝ Իրինա Գյուլնազարյանի, Լևոն Անանյանի անվան մրցանակաբաշխություններ, Արա Աբրահամյանի մրցանակաբաշխության մեջ հատուկ անվանակարգ առանձնացվեց, ՀՀ նախագահը ևս հատուկ մրցանակ է սահմանել երիտասարդ գրողների համար: Մեր մրցանակաբաշխությունների մյուս անվանակարգերում նույնպես ներկայանում են երիտասարդ գրողներ և հաճախ արժանանում մրցանակների: Օրինակ, վերջերս ամփոփվեց Ռուբեն Հովսեփյանի անվան մրցանակաբաշխությունը՝ պատմվածքի ժանրում, և մրցանակը ստացավ երիտասարդ արձակագիր Արմինե Բոյաջյանը: Հատուկ երիտասարդների համար սահմանված մրցանակ է Արարատ Մկրտումյանի մրցանակաբաշխությունը, որը մի տարի տեղի է ունենում Շիրակի, մյուս տարի՝ Լոռու մարզում: Մեր թերթերը, հանդեսները տարբերություն չեն դնում երիտասարդ և ավագ գրողների միջև: Լավ գործերը տպագրվում են: «Նորք» հանդեսի վերջին երկու համարներում հրապարակվեցին հիմնականում երիտասարդ գրողների ստեղծագործություններ, տպագրված երիտասարդ գրողների հետ առանձին հանդիպում կազմակերպեցինք ՀԳՄ-ում և զրուցեցինք երիտասարդների գրականության հարցերի շուրջ: Մեր օժանդակությամբ բազմաթիվ երիտասարդ գրողներ հրատարակվել են արտասահմանյան թերթերում, ամսագրերում: Որոշակի մասնակցություն են ունեցել «Գարուն» ամսագրի (խմբ.՝ Աշոտ Գաբրիելյան) խմբագրի նշանակման և ընդհատված աշխատանքը նորացնելու գործում: Գրողների միության «Ցուլքեր» մանկապատանեկան պարբերականը և գրական խմբակը գնահատելի ավանդ ունեն պատանի և երիտասարդ ստեղծագործողների ճաշակի ձևավորման, նրանց գրական ընթացքին սատարելու գործում: Այստեղ վարպետության դասեր են անցկացնում անվանի գրողներ Արտեմ Հարությունյանը, Հռիփսիմեն: «Գրեթերթը» ամբողջովին երիտասարդական գրականության հարթակ է, այստեղ իրենց նորամուտն են ունեցել բազմաթիվ երիտասարդ, այժմ ճանաչված անուններ: ՀԳՄ հրատարակչությունը իր հիմնական խնդիրներից է համարում նաև նոր անունների և երիտասարդ գրողների հրատարակումը: Իմիջիայլոց, որևէ շնորհքով երիտասարդ գրող, եթե դիմել է՝ ընդունվելու ՀԳՄ շարքերը, աջակցվել է:

Ի դեպ, որոշ գրական ամսագրերի և թերթերի խմբագիրները նշանակվել են երիտասարդ գրողներ և գրականագետներ:

Առաջիկայում ծրագրում ենք երիտասարդական գրականության, երիտասարդության միջավայրում գրականությունը տարածելու ասպարեզում առանձնահատուկ

աշխատանք կազմակերպել՝ ներգրավելով երիտասարդ գրողների, քննադատների, գրականագետների:

Առաջիկայում մշակութային դաշտի երիտասարդական տարբեր թևերը միմյանց ճանաչելի դարձնելու նպատակով, ՀԳՄ-ի նախաձեռնությամբ, տարբեր ստեղծագործական միություններում կազմակերպվելու են հանդիպումներ: Քանի որ երիտասարդ բանաստեղծ Էդուարդ Հարենցը լայն կապեր ունի այդ ասպարեզում, ուստի նա է համակարգելու այդ աշխատանքը:

Գրական մամուլը գնահատելիս ուզում եմ անպայմանորեն նշել, որ այն բովանդակային, ինչպես նաև արտաքին տեսքով հագեցած է եղել. Հատկապես «Լիտերատուրնայա Արմենիա» (խմբ.՝ Ալբերտ Նալբանդյան), «Նորք» (խմբ.՝ Լիլիթ Հովսեփյան), «Արտասահմանյան գրականություն» (խմբ.՝ Վահե Արսեն), «Ցուլքեր» (խմբ.՝ Հռիփսիմե) հանդեսները գունավոր ներդիրներով, նոր շապիկներով են ներկայացել ընթերցողներին: Անպայման պիտի առանձնացնենք «Գրական թերթի» (խմբ.՝ Կարինե Խողիկյան) դերը, որը ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև մշակութային խնդիրներ է արծարծել, գրողների, լրագրողների նյութերով մեր հանրապետության առջև ծառացած հասարակական, քաղաքական, բնապահպանական բազմաթիվ խնդիրների, հոսքերի մասին է բարձրաձայնել: «Գրեթեթը» (տնօրեն՝ Գուրգեն Խանջյան, խմբագիրներ՝ Արքմենիկ Նիկողոսյան, Նառա Վարդանյան) իր առջև դրված խնդիրը կարողացել է արժանապատվորեն իրականացնել. այն է՝ ապահովել նոր երիտասարդ գրողների տպագրվելու և գրական դաշտում կայանալու հնարավորությունը:

Այս ամենին հավելենք նաև մարզերում հրատարակվող թերթերը՝ «Երկունքը» (խմբ.^a Մանվել Միկոյան, Լոռու մարզ), «Եղեգան փող» (խմբ.՝ Ռոզա Հովհաննիսյան, Շիրակի մարզ), «Ոգու կանչ» (խմբ.՝ Հակոբ Հարություն, Կոտայքի մարզ): Այս թերթերը մարզերում ստեղծել են մի միջավայր, որտեղ և՛ նոր անուններ են հայտնվել, և՛ մեր բազմափորձ գրողներն են հրատարակվել, ինչպես նաև թարգմանական էջեր են ներկայացվել: «Լիտերատուրնայա Արմենիան» ոչ միայն տպագրել է ժամանակակից գրողների ստեղծագործությունները, ապահովել թարգմանական որակ, այլև մեր գրողների միջազգայնացման ասպարեզում հսկայական գործ է արել՝ տրամադրելով մեր գրողների թարգմանական նյութերը, հաճախ տողացիներ, նպաստելով մեր գրողների ստեղծագործությունները տարբեր երկրներում հրատարակմանը: «Լիտերատուրնայա Արմենիան» նաև տարբեր երկրների հետ փոխանակային համարներ է կազմակերպել: «Արտասահմանյան գրականություն» ամսագիրը նորովի՝ և՛ արտաքնապես, և՛ ներքին բովանդակային առումով փորձել է ընդլայնել թարգմանվող գրողների քարտեզը, հետևել թարգմանության որակին:

Առանձին, հատուկ թողարկման մեջ ներկայացվելու են մեր պարբերականներն ու թերթերը, և այդտեղ ավելի պարզորոշ կերևա, թե ով ինչ ծավալի աշխատանք է կատարել:

ՀԳՄ ժանրային բաժանմունքները հաշվետու շրջանում կազմակերպել են բազմաթիվ միջոցառումներ, քննարկումներ, ինչպես նաև հանդիպումներ ընթերցողական լայն շրջանակների հետ: Մասնավորապես^a ակտիվորեն մասնակցել են Գիրք նվիրելու օրվա միջոցառումներին, Մանկական գրքի շաբաթին, որոնք վերածվել են հանրապետական լայն ընդգրկում ունեցող տոների: Հայ դասականների օրերի առիթով կազմակերպել են գրական ընթերցումներ, քննարկումներ Հայաստանում և Հայաստանից դուրս: Պոեզիայի ցերեկոյթներ են անցկացվել ՀԳՄ-ի հարակից տարածքում^a Պոեզիայի պուրակում: Անպայման նշենք, որ հարյուրից ավելի գրող մասնակցեց «Մայիսյան հաղթանակներ» փառատոնին՝ հյուրընկալվելով Սարդարապատում, Ապարանում և Վանաձորում: Կարող ենք նաև հավելել Սայաթ-Նովային նվիրված Վարդատոնը Թբիլիսիում, որտեղ ներկա էին տասնյակ գրողներ ու բազմաթիվ ընթերցողներ, մասնակիցներ: Կարելի է ասել, որ որոշ բաժանմունքների, հատկապես պոեզիայի բաժանմունքի (ղեկավար^a Արևշատ Ավագյան) աշխատանքներն ամենօրյա են: Զգալի են աշխատանքները արձակի (Ալիս Հովհաննիսյան), մանկապատանեկան գրականության (Անուշ Վարդանյան), թարգմանության (Շանթ Մկրտչյան), քննադատության (Սուրեն Աբրահամյան), ռուսագիրների (Սերգեյ Մուրադյան) բաժանմունքներում:

Բոլոր տասը մասնաճյուղերում ծավալվել են հիշատակելի գործեր և՛ մարզային գրական կյանքի տեսակետից, և՛ ընդհանուր: Մարզերում տարբեր հանդիպումներ են կազմակերպվել տեղի գրողների, քննադատների հետ: Տարբեր մարզերում նշվում են իրենց տարածքում ծնված դասականների հոբելյանները, գրական տոները: Նշենք նաև, որ ՀԳՄ Մեծ դահլիճում տեղի են ունեցել հանդիպումներ Շիրակի, Լոռու, Արաճոտնի, Կոտայքի մարզային գրողների հետ: Մարզային մասնաճյուղերը նաև կազմակերպել են մասնաճյուղերի անդամ գրողների գրքերի տպա՝րության, քննարկումների, շնորհանդեսների աշխատանքներ: Հատկապես ուզում ենք առանձնացնել Շիրակի և Լոռու մասնաճյուղերի գործունեությունը, որոնք զգալի ներդրում ունեցան նաև 2017 թ. կազմակերպված գրական մարաթոնին: Մնացյալը կներկայացվի հաշվետվությամբ:

Առանձնահատուկ ներկայացնեմ Արցախի գրողների միության հետ տարված աշխատանքները: Հիշատակելի են Պոեզիայի միջազգային փառատոնի կազմակերպումը Ստեփանակերտում, Մուրացանյան օրերը, հանդիպումները ժամանակակից հայ անվանի գրողների հետ, հոբելյանների նշումը, Արցախի Հանրապետության երիտասարդ գրողների հետ տարվող աշխատանքը, գրական մամուլի լույսընծայումը: Նշենք, որ Երևանում, ՀԳՄ Մեծ դահլիճում կազմակերպվեց Արցախի գրողների միության

նախագահ Վարդան Հակոբյանի ծննդյան 70-ամյակին նվիրված հոբելյանական երեկո: Արցախի գրողների ստեղծագործությունները ՀԳՄ-ի գրական մամուլում մշտապես տեղ ունեն, ներկայացվում են հրատարակվելու այլ երկրների պարբերականներում, անթոլոգիաներում: Արցախի գրողները ՀԳՄ մրցանակաբաշխություններում ստանում են տարբեր մրցանակներ, նրանց գրքերի շնորհանդեսներ, քննարկումներ են կազմակերպվում Երևանում, ՀԳՄ-ում, գրադարաններում: Համատեղ աշխատանքով համալրվել են ՀԳՄ նոր անդամներ:

Սփյուռքի գրողների զօլի մասը ՀԳՄ անդամներ են: Բայց պետք է ասենք, որ աշխատել ենք ոչ Միության անդամների հետ ևս: ՀԳՄ Մեծ դահլիճում և Կլոր սրահում կազմակերպվել են սփյուռքահայ գրողների շնորհանդեսներ, քննարկումներ, հանդիպումներ, հոբելյաններ: Սփյուռքահայ գրողները ևս տպագրվել են ՀԳՄ մամուլում՝ առանց ուղղափրությունը փոխելու: ՀԳՄ միջնորդությամբ նրանց ստեղծագործությունները տպագրվել են Մշակույթի նախարարության աջակցության ծրագրով: Ոմանք հրավիրվել են մասնակցելու «Գրական տապան» միջազգային ծրագրին: Տարեկան մոտավորապես քսան սփյուռքահայ գրողի հետ հանդիպում և շնորհանդես է կազմակերպվում ՀԳՄ-ում: 2015 թ. չորս լեզվով հրատարակվեց եղեռնագոհ գրողների ստեղծագործությունների անթոլոգիան, որն աննախադեպ էր: Գերմանիայում տպագրվեց գերմաներեն, և Մագդեբուրգ, Հալլե ու Վիեննա քաղաքներում տեղի ունեցավ այդ ժողովածուի ներկայացումը: Մագդեբուրգում մասնակցում էին Գերմանիայի ՊԷՆ ակումբի անդամները: 2017 թ. աշնանը կազմակերպեցինք Սփյուռքի օտարազիր և հայազիր գրողների համաժողով Ծաղկաձորում, որին մասնակցեց 46 սփյուռքահայ գրող: Չորս օր շարունակ տեղի ունեցան քննարկումներ, ընթերցումներ: 2018 թ. հրատարակվեց «Դեպի ակունքը լույսի» խորագրով ժողովածուն, որտեղ ընդգրկվել են ոչ միայն համաժողովի զեկուցումներն ու ելույթները, այլև մասնակիցների ստեղծագործությունները: Ի դեպ, ՀՀ Սփյուռքի նախարարի հետ հանդիպման ժամանակ առաջարկեցինք սփյուռքահայ երիտասարդ արվեստագետների հետ հանդիպման ծրագիր, որն ընթացքի մեջ է:

Հայտնի է, որ ՀԳՄ-ն կարևորում է համագործակցությունը ՀՀ տարբեր կազմակերպությունների հետ՝ իրականացնելով համատեղ գրական միջոցառումներ: Ստեղծագործական խնդիրների լուծման ուղղությամբ համագործակցել ենք ՀՀ Մշակույթի, Սփյուռքի, Գիտության և կրթության, Պաշտպանության նախարարությունների և ուսումնական հաստատությունների, գրադարանների, թանգարանների հետ: Հատկապես ուզում եմ նշել Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական, Ազգային, Խնկո-Ապոր ազգային մանկական գրադարանների, Եղիշե

Չարենցի, Ավ. Իսահակյանի և Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանների արժանահիշատակ դերը մեր համատեղ աշխատանքում:

Հաշվետու ժամանակում բոլոր հանդիպումների, միջոցառումների թիվը մոտավորապես յոթ հարյուր է:

ՀԳՄ աշխատանքները լուսաբանվել են ոչ միայն գրական մամուլում, այլև «Հայաստանի Հանրապետություն», «Իրատես», «Հայ զինվոր» թերթերում, հեռուստառադիոընկերություններում: Շնորհակալ ենք Հանրաին ռադիոյին, «Հ1», «Հ2», «Շանթ», «Երկիր մեդիա», «Շողակաթ», «Արմենիա», «Կենտրոն» և մյուս հեռուստաընկերություններին և նրանց լրագրողներին, որոնց ամեն տարի պատվոգրեր ենք հանձնում: Հատկապես ընդգծեմ «Հ2»-ին, որը կազմակերպեց մեր գրական մարաթոնը:

ՀԳՄ գործունեության կարևոր մաս են սոցիալական և տնտեսական խնդիրները: Շարունակվում է գրողների անվճար հանգստի ապահովումը: Աշխարհում, որքան գիտեմ, սա եզակի երևույթ է: Կազմակերպվել է ՀԳՄ անդամ-գրողների բժշկական օժանդակությունը: Տասնյակ գրողներ անվճար բուժօգնություն են ստացել: «Մեդլայն» բժշկական հաստատությունը մեզ հետ կնքած պայմանագրի շրջանակում բուժճառայություններ է մատուցել ՀԳՄ անդամ-գրողներին: Հիշենք նաև ՀԳՄ պոլիկլինիկայի գործունեությունը: «Մեդլայնի»՝ հետ կնքվելու է աչքերի բուժման պայմանագիր, ըստ որի՝ այն անվճար ծառայություններ է մատուցելու, այդ թվում նաև վիրահատություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում 95 գրող ֆինանսական աջակցություն է ստացել: Կազմակերպվել են գործուղումներ Հայաստանում (43 գրող): Նաև այլ հարցերում աջակցել ենք գրողների ընտանիքներին: Գրողների իրավունքները պաշտպանելու, սոցիալական խնդիրները լուծելու ուղղությամբ մշտապես իր մասնակցությունն է ունեցել ՀԳՄ-ն:

Տնտեսական առումով, կարող եմ ասել, որ երբ ընտրվել եմ նախագահ, ՀԳՄ-ն ունեցել է գույքահարկի և եկամտահարկի մասով 8 մլն 700 հազար պարտք: Բյուջեում ունեցել է 63 000 դրամ, 1 մլն էլ ունեցել է գրական հիմնադրամը: 2018 թ. հուլիսի 1-ի դրությամբ՝ ՀԳՄ-ի հաշվեհամարին ունենք 5 մլն 200 հազար դրամ, իսկ գրական հիմնադրամում՝ 4 մլն-ից ավելի գումար: Սա ես ասում եմ ի գիտություն նրանց, ովքեր կարող են մտածել, թե ՀԳՄ-ն մեծ ժառանգություն է ստացել: Սրանով ես չեմ թերագնահատում իմ նախորդին, որը դժվար աշխատանքով ապահովել է ՀԳՄ-ի գործունեությունը, մանավանդ, որ մինչև նախագահ դառնալը գրեթե տասը տարի աշխատել եմ որպես Գրողների միության

քարտուղար և գրական հիմնադրամի տնօրեն՝ հասարակական կարգով (իմիջիայլոց, որպես նախագահ, աշխատավարձ ստացել եմ 2016 թվականին, վարորդը՝ նույնպես):

Տնտեսական իրավիճակի բարելավմանը նպաստել է տարբեր ծրագրերի ներգրավումը որոշ բարերարների օժանդակությամբ, որոնց մի մասի անունները գրված են ՀԳՄ պատվո տախտակի վրա: Գրական հիմնադրամի մարաթոնի ընկերական, բարեկամական կապերը նույնպես օգնեցին, որպեսզի հիմնադրամը ունենա որոշակի մուտքեր: Մուտքերի ավելացմանը նպաստել է նաև Գրողների միության համակարգի մեջ մտնող Ծաղկաձորի ստեղծագործական տունը, որը իր սենյակները նորոգելով, միջավայրը բարելավելով որոշակիորեն մուտքեր է ունեցել, որոնք հիմնականում ծախսվել են Ստեղծագործական տան շենքը պահպանելու և գրողների հանգիստը կազմակերպելու համար: Ինչ վերաբերում է Սևանի ստեղծագործական տանը, մեջբերեմ ՀԳՄ նախկին նախագահ Լևոն Անանյանի խոսքը համագումարյան զեկուցումից. «Վերջապես կարողացանք լուծել Սևանի ստեղծագործական տան թնջուկը, որը յուրատեսակ պատուհաս էր դարձել ՀԳՄ նախագահության համար: Օրերս այցելեցի Սևան և կարող եմ հավատալ, որ վերջապես գտնվել է հուսալի վարձակալը, ով լուրջ ներդրումով փորձում է փրկել տունը ավերումից և ապահովել մարդավայել սպասարկում», և այդ վերոնշյալ վարձակալները իմ որդիներն են եղել, որոնց անունները հիշատակված չէ այդտեղ: Նրանց ամենամյա ներդրումներով Սևանի հանգստյան տունը վերոնշյալ ծանր վիճակից հասել է գործելու և գրողներին սպասարկելու վիճակի: Նաև պիտի ասեմ, որ ճարտարապետական լուրջ աշխատանք է արվել տնօրինության և ճարտարապետների կողմից Պոլ Գետի հիմնադրամի հետ գործակցության շրջանակում: Ծրագիրը հասնում է ավարտական փուլին և կներկայացվի հանրությանը: Հուլիսի վերջին տեղի կունենա ճարտարապետական ողջ աշխատանքների շնորհանդեսը ճարտարապետների միությունում: Դա ճարտարապետների միության, տարբեր մասնագիտական ինստիտուտների, Սևանի ստեղծագործական տան տնօրինության և ճարտարապետ Ռուբեն Արևշատյանի առաջարկն էր, և գործընթացին մեր մասնակցությունն ունենք:

Անդրադառնամ նաև Գրողների միության շենքին: Առաջին հարկը և ՀԳՄ Մեծ դահլիճը նորոգվել են, դահլիճը հագեցել է ժամանակակից թանկարժեք տեխնիկայով և վարձակալության տրվել թատրոնին: Դա ևս որոշակիորեն բարելավել է մեր ֆինանսական վիճակը: Ամբողջովին վերափոխվել է հարակից տարածքը, ժամանակին չորացող այգին պահպանվում է, ստանում ստորգետնյա ոռոգում, և այդտեղ հաճախ կազմակերպում ենք բացօթյա հանդիպումներ, ցերեկույթներ: Շենքի գույքահարկը, եկամտահարկը վճարվում է ժամանակին, և այսօր որևէ մեկի պարտք չենք: Մեր

տնտեսությունը բարելավվել է և աշխատանքային պայմաններ են ստեղծվել խմբագրությունների, ՀԳՄ աշխատակազմի համար: Շենքի մեծ մասը զբաղեցնում են խմբագրություններն ու ՀԳՄ աշխատակազմը: Մյուս հատվածը տրվել է վարձակալության, ինչպես եղել է նախկին նախագահների օրոք: Վերջին 27 տարում առաջին անգամ ջեռուցվում է շենքը (2016-2017-ից սկսյալ):

Անցյալ տարի Թբիլիսիում բացեցինք Հովհաննես Թումանյանի տունը, որը նախաձեռնել էր Լևոն Անանյանը, և նորոգումը շարունակեցինք մենք՝ Վրաստանի Հայոց թեմի աջակցությամբ:

Մեր տնտեսական վիճակից ելնելով՝ ավելացրել ենք մրցանակաբաշխությունները: Ամենամյա մրցանակների շարքում ավելացել են Հովհաննես Թումանյանի, Հովհաննես Մասեհյանի մրցանակները, մրցանակ են սահմանել նաև Ծաղկաձորի և Սևանի ստեղծագործական տները: Լևոն Անանյանի անվան երիտասարդական մրցանակ՝ Նաթելլա Լալաբեկյանի հովանավորությամբ, գումարվել է նաև ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ մրցանակաբաշխությունը, ինչպես նաև երիտասարդ քննադատների մրցանակաբաշխությունը:

Այսօր մշակույթը, մասնավորապես՝ գրականությունը չի կարող անմասն լինել համաշխարհային զարգացումներից: Ընդլայնվել է ՀԳՄ-ի հետ համագործակցող երկրների քարտեզը: Մեզ հետ ավանդաբար աշխատող Ռուսաստանի, Իրանի, Վրաստանի, Սերբիայի, Սլովակիայի, Ռումինիայի, Գերմանիայի թվին գումարվել է Չինաստանը, Վիետնամը, Լեհաստանը, Բելառուսը, Լիտվան, Ղազախստանը, Կիրգիզիան: Իրանի հետ ունենք աշխատանքային լուրջ կենսագրություն: Այնտեղ «Աֆրազ» հրատարակչությունը շարունակում է հրատարակել ժամանակակից հայ բանաստեղծների գրքերը: Նաև դրամատուրգների փոխայցելություններ է եղել Հայաստանից Իրան, Իրանից Հայաստան: Իրանում հրատարակվել է հայ դրամատուրգների անթոլոգիա, Հայաստանում էլ՝ Իրանի: Այդ երկրներում հրատարակվել են ու պատրաստվում են հրատարակության ժամանակակից գրողների անթոլոգիաներ: Ռուսաստանի «Լիտերատուրնայա գազետա» թերթը պարբերաբար, առանձին հավելվածով, ներկայացրել է ժամանակակից բազմաթիվ հայ գրողների: Նույնը՝ Վրաստանում: Գերմանիայի հետ աշխատանքային հարաբերությունները շարունակվել են, իրագործման ընթացքում է մի ծրագիր՝ Նաթելագու «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը գերմաներեն թարգմանելու և Գերմանիայում հրատարակելու ուղղությամբ: Թարգմանիչ Վիլհելմ Բարչը իր կնոջ՝ Ֆրաու Օտտոյի հետ այս ամսին հյուրընկալվեց Հայաստանում, և զբաղվեցին գրքի թարգմանությամբ ու

ձևավորման աշխատանքներով: Եկող տարվա սկզբին գիրքը տպագրվելու է Գերմանիայում:

Հաշվետու ժամանակաշրջանում հրապարակել ենք ցանկեր, թե 2012-2016 թթ. ժամանակակից հայ գրողը որ երկրում ինչ հրատարակություն է ունեցել: Դա ընդարձակ ցանկ է: Եվ հատուկ թողարկման մեջ օրերս տպագրվելու է 2016-2018 թթ. ցանկը: Այս ցանկի ի հայտ գալը խոսում է այն մասին, որ եթե Սովետական Միության օրոք միայն ռուսերենի միջոցով էինք աշխարհ դուրս գալիս, ապա այսօր անմիջական գրական կապերով, հնարավոր միջոցներով տարածում ենք դասական և ժամանակակից հայ գրականությունը: Այստեղ պետք է հաշվի առնել նաև գրողների անձնական կապերը, որոնք հաճախ օգտակար են լինում ընդհանուր գրականությանը: Ժամանակակից հայ գրողները հրավիրվում են մասնակցելու տարբեր երկրների գրական փառատոներին, հանդիպումներին, և այդ հարցերում որոշակիորեն աջակցել ենք նրանց:

Հաշվետու ժամանակաշրջանում 18 արտասահմանցի գրողի հրավիրել ենք Հայաստան, որոնք մասնակցել են «Գրական տապան» ծրագրին և մեր հանդիպումներին, որոնք կազմակերպվել են ՀԳՄ Մեծ դահլիճում և ՀԳՄ Կլոր սրահում, նաև տարբեր գրադարաններում ու գրախանութներում:

Այս ընթացքում, կարծում եմ, պատշաճ մակարդակով անցկացրեցինք ՀԳՄ-ի

80-ամյակի տոնակատարությունը, որի ընթացքում բազմաթիվ գրողներ արժանացան կոչումների, մեդալների, հրատարակվեց 80-ամյակին նվիրված գիրք:

Իրավական հարցերով^ա դատարանում քննարկվել է Հայ գրողների միության՝ մեր դեմ ներկայացրած հայցը, և մենք շահել ենք դատը: Նաև առանձին գրողների հարցերով հնարավորինս փորձել ենք պաշտպանել նրանց հեղինակային և այլ իրավունքները:

2014 թ. վերականգնեցինք Գրողների միության կայքի աշխատանքը: Ռուսերեն և անգլերեն թարգմանվեցին ու տեղադրվեցին գրողների տվյալները: Ֆեյսբուք սոցիալական ցանցում Գրողների միությունն ունի իր էջը: Վերջերս հիմնել ենք <http://grakan.am> կայքէջը (խմբագիր՝ Արմեն Ավանեսյան), որը բացառապես անդրադառնալու է ժամանակակից գրականությանը, գրական նորություններին:

Կազմակերպվում են գրողների հանդիպումներ տարբեր լսարաններում, որոնց իրագործման համար իր ջանքն է ներդնում Տիգրան Նիկողոսյանը: Շարունակվում են ՀԳՄ սրահներում Երևանի հայ գրականության ուսուցիչների հանդիպումները գրողների հետ:

ՀԳՄ նախկին նախագահ Լևոն Անանյանի՝ ապագա անելիքների ծրագիրը, կարող ենք հավաստել, ամբողջովին իրագործվել է: «Ընդլայնել արդի գրականության թարգմանական շրջանակները, խորացնել ՀԳՄ-ի միջազգային կապերը, փորձում ենք

ստեղծել գրական մամուլի հոնորարային հիմնադրամ, պետք է նորոգել ՀԳՄ կայքը, եղած նյութերի հիման վրա կարելի է բերել թարգմանական բանկ, գրական ծրագրերով մասնակցել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին, 2014 թ. շուքով նշվի ՀԳՄ 80-ամյակը»: ՀՀ մշակույթի նախարարությունում քննարկվել է գրական մամուլին աջակցելու հարցը: Նախարար Լիլիթ Մակունցի հրավիրած նիստում քննարկվել է հոնորարներ տրամադրելու ծրագիրը: Այս ամենին գումարվել են այն աշխատանքները, որոնք թվարկվեցին վերնում: Իմ նախընտրական ծրագիրը, որ տպագրել էի «ԳԹ»-ում, ամբողջապես իրագործվել է:

Այժմ՝ համառոտ ապագա ծրագրերի մասին: Նախ շարունակելու ենք լավագույն ավանդույթները: Ծրագրել ենք կազմակերպել ամենամյա միջազգային գրական փառատոն, որին կհրավիրվեն մեր գրականությանը բարեկամ թարգմանիչներ ու գրողներ: Պատշաճ նշել ՀԳՄ-ի 85-ամյակը: Կազմակերպել գրական մարաթոն՝ հիմնականում արտերկրում, ստեղծել տարբեր լեզուներով տողացիներ ապահովող խումբ, ընդլայնել գրական կապերի քարտեզը, առավել ընդլայնել սոցիալական հարցերի լուծման շրջանակը, երիտասարդ գրողների ուղղությամբ տարվող աշխատանքը՝ նրանց ներգրավելու գրական-կազմակերպական աշխատանքում: Կարիքն ունենք յուրաքանչյուրի թարմ շնչի, առաջարկություններն իրագործելու ամեն մեկի գորակցության: Բոլոր հարցերը կարող են քննարկվել նորընտիր նախագահությունում, վարչությունում, իսկ նախկինների աշխատանքի համար, ի դեպ, իմ շնորհակալությունն եմ հայտնում, և իմ շնորհակալությունը՝ բոլոր այն րոդներին, ովքեր հաշվետու շրջանում իրենց ժամանակն ու ջանքն են ներդրել:

Սա իմ իններորդ հաշվետվությունն է, ամեն կիսամյակ ներկայացրել եմ մեր աշխատանքները, և ինչ հասցրել ենք անել, Ձեր աչքի առջև է, ինչ չենք հասցրել՝ ներող եղեք: Այսքանը՝ համառոտ: Բոլորիս հույս, հավատ, սեր մեր գալիք գործերում:

ԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ (1986 – 2023)

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

Այս «Գրական տեղեկատու»-ին նախորդել են երեք նմանօրինակ տեղեկատու, առաջինը՝ 1975 թվականին, կազմել է Հայաստանի հանրագիտարանի աշխատակից, գրող Հայկ Խաչատրյանը: Տեղեկատուն ամփոփում էր 1934 թվականի ստեղծած ՍՍՀՄ գրողների միության մաս կազմած Հայաստանի գրողների միության անդամներին: 40 տարվա ժամանակաշրջան էր ընդգրկում:

1981 թվականին տպագրվել է երկրորդ «Գրական տեղեկատուն», որի հեղինակն է նախորդի կազմող, գրող Հայկ Խաչատրյանը: Այդ տեղեկատուն ևս հեղինակը համարում է Հայաստանի գրողների միության տոհմամատյան: Հայաստանի գրողների միության անդամներից բացի այդ հրատարակության մեջ տեղ են գտել ՍՍՀՄ այլ վայրերում հայերեն ստեղծագործող ՍՍՀՄ գրողների միության անդամներ և 1975-ի, երրորդ լրացված «Գրական տեղեկատուն» տպագրվել է 1986 թվականին, ընդգրկել է 661 գրողների, թարգմանիչների ու գրականագետների կենսագրություններ (լուսանկարներով և հայերեն գրքերի ամբողջական մատենագիտությամբ): Հեղինակը կրկին Հայկ Խաչատրյանն է:

Այս՝ չորրորդ «Գրական տեղեկատուն» ընդգրկում է միայն ժամանակակից ստեղծագործող Հայաստանի գրողների միության անդամներին: Շարունակվել է նախորդների կազմման սկզբունքները: Ի տարբերություն նախորդ 3 տեղեկատուների, ներառվել են սփյուռքահայ և Արցախի Հայաստանի գրողների միության անդամները: Արցախցի գրողների տվյալները տրվել են երջանկահիշատակ Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանի գիտությամբ և ամբողջացրել է Արիս Արսենին:

«Գրական տեղեկատու»-ում ընդգրկված բոլոր գրողները, արձագանքելով ՀԳՄ հայտարարությանը, որը տեղադրվել էր «Գրական թերթում», տեղեկատու կայքում և ֆեյսբուքյան էջում (նաև եղել են առանձին հեռախոսային զանգեր և սփյուռքահայ մեր անդամներին ուղղված հայտարարության տեքստի հիշեցումներ) և իրենք են ներկայացրել կենսագրականները, գրքերի ցանկերը և լուսանկարները, հեռախոսահամարները և մյուս տվյալները: Սակայն, ցավոք, կան գրողներ, որոնք չեն արձագանքել կամ էլ հարկ չեն համարել ներկայանալ «Գրական տեղեկատու»-ում:

Բացակա հեղինակների ցանկը առկա է գրքում:

Այս «Գրական տեղեկատու»-ում կենսագրական և մատենագիտական տեղեկությունների վերջնաժամկետը 2023 թվի հուլիսի 1-ն է: Տեղեկատուի հասցեատերերն են գրողները, ինչպես նաև գրականության մասնագետները և գրասերները:

ԻՍԱՀԱԿՅԱՆ ՏՈՀՄԻ ՖԵՆՈՄԵՆԸ

Հայ ժողովրդի մեջ դժվար լինի մի անհատ, որ չճանաչի Ավետիք Բասիակյան քանաստեղծին, արձակագրին, փիլիսոփային, մի խոսքով՝ հանճարեղ գրողին: Նրան հաղորդվում ենք դպրոցից, առտնին գրույցներում հնչում են նրա իմաստուն քանաձևումները, հումորիկ պատմությունները, կայծակի պես կտրուկ կարծիքները:

Ի՛նչ անտակ հարստություն է պարփակված նրա «Հայկական հարցը» հրապարակախոսական ժողովածուում, ի՛նչ մարդկային սիրտ է բաբախում նրա բազմաթիվ նամակներում և հուշերում:

Ի՛նչ իմաստություն՝ գրողների և այլ մեծերի նրա գնահատականներում:

Ինչպես է իր թշվառ կյանքում այսքանը գումարել ու բաշխել ոչ միայն հայ, այլև աշխարհի ընթերցողներին: Արդարև, աշխարհահռչակ գրող, որ պատիվ է բերել մեր ժողովրդին ու գրականությանը: Նրա միակ զավակը՝ Վիգեն Բասիակյանը, ժառանգել է տոհմական տաղանդ, որը բացահայտվեց, երբ նա 75 տարեկանից ավելի էր, գրելով «Հայրս» սքանչելի հուշագրությունը:

Մեզ քաջաձանթ Ավետիք Բասիակյանը հառնում է դեռևս անհայտ կողմերով, կենսագրական հիշարժան դրվագներով, մարդկային հոգսի, ցավի ու մենակության հուզական շերտերով: Զարմանալի տաղանդով նկարագրում է Բասիակյանին հանդիպած հայտնի և անհայտ մարդկանց: Դիտողականությունը մատնում է կինոյի աշխարհում իր դերն ունեցած Վիգենի հակումը՝ տեսնել մանրուքը, աննշան թվացող դիպվածները և դրանք գումարելով, հասնել ընդհանրացման, կադրի լայնք ու երկայնքով, խոշոր պլանով ներկայացնել ժամանակը, տեղը, Անձը և նրա շուրջ՝ ընտանիք, երկիր, Հայրենիք, աշխարհ, տիեզերք...

Հարկ է ասել, որ Վիգեն անունը պատահական չէ, ընկերներով՝ Շանթ, Աղբալյան, Դեմիրճյան, երբ լսել են Անիի իշխաններից մեկի համանունը, որոշել են, երբ տղա ունենան, անվանակոչեն Վիգեն: Այդպես էլ եղել է: Ահա մեր Վիգեն «իշխանը» արհամարհելով տարիքը, ձեռնարկում է Երվանդ Քոչարի՝ իր ընկերոջ, Շուշի քաղաքից հայրենակցական կապով հարազատի մասին հուշերի գիրք գրելը: Նրան կարելի է վստահաբար ներկայացնել Գինեսի գիրք ներգրավելու՝ 94 տարեկանում սկսում և ավարտում է ծավալուն «Փարիզ, Քոչար, անցած օրեր» մեզանում նմանը չունեցող գիրքը: Քոչարը 20-րդ դարի Փարիզի արվեստական համաշխարհային նշանակության խորապատկերի վրա: Կինոկադրերով անցնում են Պիկասո, Դալի, Մոդեյլանի, Ման Ռեյ, Լե Կորբյուզե, Ստրավինսկի և շատ շատերը: Հատկապես լայնորեն է պատկերված 20-րդ դարի մեծ քանդակագործներից մեկի՝ Զակոմետիի հետ Երվանդի և Վիգենի մերձագույն ամենօրյա ընկերությունը: Գիշերներով շրջել են Փարիզի փողոցներով, բարերով, սրճարաններով, խմել ու թախծել Քոչարի արվեստանոցում: Ճանաչել այդ ժամանակը և

հետո համեմատել Սովետի ստալինյան մթնոլորտի հետ, դա մեզ օգնում է Վիգեն Իսահակյանը, որին Սովետական Միություն էր կանչել Փարիզից ծանոթ մեծ ռեժիսորը՝ Սերգեյ Էյզենշտեյնը: Եկավ, Մոսկվայում հանդիպեց նրան, աշխատեց կինոստուդիայում...

Պիտի կարդալ գիրքը, զարմանալի է նրա լեզուն, երբեք պատմելով աչքի չընկած մարդը, հանկարծ օր ծերության վերցնում է գրիչը ու հրաշքներ պարզևում: Մի օր գլխի ընկա, ախար սովորել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան դպրոցում, ուր ուսումնառել են Վարուժանը, Կոստան Զարյանը, Վահրամ Փափազյանը և շատ անվանի հայեր: Ահա թե որտեղից այդ հարուստ հայերենը, շենշող լեզվամտածողությունը:

Նա իրեն երբեք գրող չերևակայեց, նրա հետ իմ հանդիպումները թողել են պայծառ տպավորություն, ասել ջահել մարդ, խոսում էր աշխարհի տեսարժան վայրերից, հատկապես շատ էր սիրում հիշել Սեն Միշել դղյակը, ազատորեն խոսում էր կանանց նկատմամբ չմարդոթանաստեղծականությամբ, արվեստի աշխարհի տեսած ու լսածն էր պատմում առանց ավելորդ զարմանքի:

«Կազիրոզ» ասված բացօթյա սրճարանի գլխավոր սիրված դեմքերից էր, իրենց շենքի դիմաց, ասես տանը լինեք, աշխատակից Հովհաննես էլ ամեն ինչ անում էր, որ Վիգեն Ավետիքիչը իրեն լավ զգա հարազատ սրճարանում:

Նա մշտապես գնում էր Նկարիչների միության դիմացի մեծահռչակ, տաղանդավոր մարդկանց սրճարան-փեթակը, ուր ոսկեղեն թներով այդ ժամանակի նորարարները բզգում էին նկարչության, պոեզիայի, ճարտարապետության, պետության մասին, և նրանց մեջ՝ Երվանդ Քոչար, Մինաս Ավետիսյան, Մհեր Մկրտչյան, Վաղինակ Մարգունի, Կոստան Զարյան, Շիրազ, ջահել նկարիչ ու գրող տղերք (որոնք հետո դարձան նշանավոր) և, իհարկե, իր խորանն ուներ Լևոն Ներսիսյանը, սոկրատյան ճակատով, հին հունական փիլիսոփաների փառքը կենդանի, իր տեսքով ներկայացնելով բացում և փակում էր խմության սեղանը: Երվանդն ու Վիգենը նստում էին իրար հետ և երբեմն խոսում ֆրանսերեն, որոնց միանում էր Լևոն Հրաչյայի Ներսիսյանը, պարզ՝ Լևոնը, մի քիչ բարդ՝ Լևոն Հրաչնիչը, իսկ ավելի հանրությանը ճանաչելի լինելու համար՝ Լևոն Ներսիսյանը: Ահա այսպիսի Երևան:

Վերոնջալը և գումարած իր կյանքի ահռելի փորձը, այս վերջին տարիներին իր արձակով մեզ է պարզևում Իսահակյան տոհմի երրորդ հզոր ալիքը՝ գրականագետ Ավիկ Իսահակյանը:

Հոր հետքերով՝ տարիքն առավ, սկսեց գրել, տարիքն արհամարհեց Վիգեն Ավետիքիչի պես, շարունակեց պատկերել իր բազմաշերտ, խորդուբորդ ընթացքի գեղարվեստական սրտագիծը՝ կարդիոգրաման: Իհարկե չասել նրա հարուստ գրականագիտության, տեքստաբանության մասին՝ անխղճություն է, Իսահակյան Ավետիքը վստահաբար երջանիկ է իր դասական ճոճքում, որ ունի Ավիկ թոռ, մեծերից քչերն են արժանանում նման բախտի: Ավիկ Իսահակյանն ամբողջ կյանքում ուսումնասիրել, գրքերի է վերածել

տպագրվածն ու անտիպը, ակադեմիական հատորների է վերածում մեծն Իսահակյանի ժառանգությունը:

Ահա այս բազմազբաղ այրը (նաև պաշտոնավարելով նախկինում, որպես գրականության ինստիտուտի տնօրեն, այժմ՝ հիմնադրամի տնօրեն) սրտի թելադրանքով գնում է պապի և հոր բացած ճամփեքով և վախ չունի, քանզի տաղանդը բնածին է և թյուր է այս պարագայում խոսքը, թե հանճարներից հետո արյունը հանգստանում է, ընդհակառակը, Ավիկը տարին տարվա վրա նոր գրքեր է հրատարակում՝ «Երևանը քուն թե արթմնի», «Մեր ախպարները»...

Եվ այժմ՝ սիրային վեպ... ուր պատմում է իր առաջին կնոջ՝ Մաքսիմ Գորկու ծոռնուհի Նինայի հետ ապրած յոթ տարիների մասին:

Երևանի, հատկապես «Արմենիա» հյուրանոցի հանրահայտ ռեստորանում անընդմեջ հավաքվող մեծերի (Հրաչյա Ներսիսյան, Խաչիկ Դաշտենց, Շիրազ, Սևակ, Ժան Էլոյան և այլն) մասին խաղացկուն, վառ դրվագներով պատմելաձևը ձգում է ընթերցողին և դարձնում մասնակից: Մեծերն իրենց զրույցներով, բնավորությամբ ժամանակից դուրս ընթացող կերպարներ են, քանզի սովետական շտամպը չէր կարող նրանց ծրագրավորել: Ավիկը կողքանց չի դիտարկել, նա մշտական սեղանակից է եղել և ջահել էությամբ ներծծել է ամեն հետաքրքրաշարժ, գրի հիշատակման արժանի զրույց, պատկեր, մենախոսություն: Հուշագրությունն առավելապես թեքվել է գեղարվեստի կողմը՝ պատմվածքի կերպարանքով: Երևանի կերպարը ցուանում է նաև քաղաքի այլ վայրերի ու մարդկանց ներառելով, 60-70-ական թվականների մայրաքաղաքն առանց այս գրական ցուցահանդեսի դժվար է պատկերացնել: Այստեղ է, որ մտածում ես՝ ինչքան կարևոր դեմքեր, դեպքեր, մանրամասներ են անհետ կորել մեր կյանքից:

Ավիկ Իսահակյանի հաջորդ գիրքը՝ «Մեր ախպարները», մի ջերմ հոսանք է ներարկում ընթերցողին, հեղինակը, որ պոլսահայ գեղեցկուհի Բելլայի զավակն է, արյունակցական սիրով է «նկարահանում» հայրենադարձների կյանքը, գործը, բնույթը: Նրան միշտ ուղեկցում է նուրբ հումորը, չէ՞ որ Պոլսի պարոնյանական, օտյանական դպրոցից մի թել անցել է նրան:

Ավիկը հետո հրատարակել է «Երթալը ճի՞շտ է» գիրքը, որտեղ նորօրյա գաղթի և այդ թեմայի շուրջ հրապարակախոսական շնչումի և գեղարվեստի շեշտերով հեղինակային մտահոգությունն է:

Իսկ ահա վերջին գիրքը, մի իսկական կինոնկարի նյութ է՝ մոսկովյան կյանք, նշանավոր դեմքեր, աշխարհի հզոր երկրներից մեկի հասարակական, գրական, կենցաղային անցուդարձեր: Պատանի Ավիկի և պարմանուհի Նինայի առաջին հայացքից ծնված սերը տարօրինակ պատմություն է շարադրվում արդեն տարեց Ավիկ Իսահակյանի գրչով: Այնքան անմոռանալի մանրամասն դրվագներ՝ մոսկովյան ցրտին ու մյուս եղանակներին, հանրահռչակ ընտանիքների մինչ այս անհայտ էջերի հրապարակում, երևելի տոհմերի կանանց զարմանալի կենդանի պատկերումներ, ծանոթ և անծանոթ մարդկանց ջերմացնող ներկայություն և գաղտնի պահվող աշխարհին

հայտնի սովետական պաշտոնյայի անանուն ուղեկցում, և այս խորապատկերի վրա և սիրահար սրտերի հեռահար (Մոսկվա-Երևան) և տոնի պես պայծառ հանդիպումների մագնիսացնող շունչ, հեռախոսագանգերի տրոփյուն և նամակների խոստովանքային ջերմ հոսանքներ:

Արտառոց սեր, արտառոց սիրային գիրք, որ ընթերցելիս երբեմն չես հավատում, բայց միշտ հարազատ է դառնում, քանզի անկեղծ ու տաք սրտերը երբեք չեն խաբում:

Իսկ թե ինչպես է ծավալվում նրանց կյանքն ու գրքի պատմությունը, կիմանաք միայն ընթերցելով սույն, այս ժամանակների համար միամիտ թվացող սիրավեպը:

Ավիկ Բահակյանը տոհմական նշանը որպես գրականագետ և իբրև արձակագիր բարձր և բաց ճակատով տանում է և դեռ երկար կտանի (Բահակյանները երկարակյաց են) հայոց գրի սրբազան ուխտի ճանապարհով:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԸ

Ամեն թոռ չէ, որ կրելով մեծանուն պապի անուն-ազգանունը, չի ճկվում հանրահռչակ փառքի ծանրության տակ և դեռ ավելին, խորագույնս ուսումնասիրում, տպագրում և տարածում է տպագիր և անտիպ ստեղծագործությունները, հասնում է գիտական բարձր կոչման, ղեկավարում գրական, մշակութային հիմնարկներ, ինստիտուտ և, էլի հավելենք՝ գրում արձակ տաղանդավոր պատումներ, հիշողություններ պապի և իր կյանքի մասին: Նրա պապը թոռանը ձոնված «Կտակ» բանաստեղծությամբ հաստատապես գծել էր այն ուղին, որով ճշմարտապես անցնում է Ավիկ Բահակյանը:

Ահա այսպես, մինչև 75-ամյա վաստակած տարիք՝ ջինջ, նպատակային, մարդկային ու անվերջ ստեղծարար տոհմիկ հայ:

Սպասենք նոր անակնկալների, չէ՞ որ հայրդ՝ երջանկահիշատակ Վիգեն Բահակյանը, հրաշալի երկու գիրք գրեց 78 տարեկանից սկսյալ, մինչև 95-ամյակը:

Ցանկանում եմ քեզ իսահակյանական երկարակեցություն և ժպիտ ապագա տարիների բարձունքից:

ԳՐԱԿԱՆ ՍԵՐՄԱՑԱՆԸ

Անդրանիկ Կարապետյանը բանաստեղծական միջին սերնդի վառ դեմքերից է, Շիրակի ՀԳՄ բաժանմունքի ղեկավարը: Այս տարի մայիսի 14-ին լրացավ նրա ծննդյան 60-ամյակը, նախապես գրուցել էինք նրա հետ՝ Գյումրիում նշելու հոբելյանը, արժանացել էր Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալի, սակայն Անդրանիկը բնական համեստությունը գումարեց գյումրեցու հումորիկ ժպիտը և ասաց՝ հետո, աշնանը:

Մինչև աշունը գա, Անդրանիկը հրատարակեց մանկական բանաստեղծությունների ժողովածու: Պիտի հավաստեմ՝ սրամտությունն ու պայծառությունն են պեծին-պեծին

տալիս գրվածքների միջից: Հավատացած եմ, մանուկ ընթերցողները հաճույքով կկարդան ու կարտասանեն գրվածքները: Գերմանիայից ստացա ժամանակակից հայ բանաստեղծների ստեղծագործություններն ընդգրկած Մատրիքս ամսագիրը, որի մեջ նաև Անդրանիկի բանաստեղծություններն են: 2023 թվականի հունիս ամսին ամփոփվեց «Մարդ Աստծո» ՀԳՄ-ի և Ամերիկայի Կիլիկիա արևելյան թեմի մշակութային և բարեգործական կենտրոնի համատեղ մրցանակաբաշխությունը, որտեղ պոեզիայի անվանակարգի 2րդ մրցանակի արժանացավ Անդրանիկի շարքը: Ուրախալի էր, որ հոբելյանի տարում տարբեր ուրախալի դրվագներով հարստացավ մեր ընկերոջ գրական կենսագրությունը:

Շիրակի բաժանմունքում նրա աշխատանքային տարիները հագեցած են եղել և են նոր գաղափարներով, գրական միջավայրի ընդարձակմամբ, մրցանակաբաշխությունների կազմակերպմամբ, հոբելյանների նշանավորմամբ և այլն:

Շնորհավոր 60-ամյակդ, սիրելի գրչեղբայր և գրական ընկեր, և Շիրակի դաշտում գրական հունդեր նետող սերմնացան:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ - 70

Հովհաննես Գրիգորյանին ճանաչել եմ Երևանի պետական համալսարանի միջանցքներից, բուֆետից: Հենց նոր էի ընդունվել, 1969 թվականն էր, մեկ-երկու ամիս հետո գրական ստուդիայում, որի պատասխանատուն Հովհաննես Գրիգորյանն էր, դեկավարը՝ Գառնիկ Անանյանը, ինձ ասացին, որ պատի թերթով բանաստեղծություններս ներկայացնեմ բանասիրական ֆակուլտետում: Ես, իհարկե, փորձ ունեի դպրոցական կյանքի պատի թերթերի և հաճույքով համաձայնեցի: Այդ պատի թերթը եղավ ու նաև՝ հետաքրքիր քննարկում համալսարանի գրական ստուդիայում: Հովհաննես Գրիգորյանի հետ, կարելի է ասել, մենք շատ արագ մտերմացանք, և փաստորեն, որպես ավագ ընկեր, որպես ավագ բանաստեղծ միշտ ընթերցում էինք, քննարկում, գնահատում նրա նորարարական ձգտումները, ջիղը, և նաև մեր առտնին հանդիպումները՝ բուֆետում, այլ տեղ կամ քայլելով, ինչ-որ ճանապարհ անցնելով: Յուրահատուկ մարդ էր Հովհաննեսը՝ իր նախընտրած աշխարհի հանրաժանոթ երգչուհիներով՝ Էդիթ Պիաֆը հատկապես շատ սիրելի էր նրան, գրողներով ու նկարիչներով: Կարծես նախանշած անուններ ունեի և ինքը նրանց շրջապատում իրեն շատ լավ էր զգում: Նա, փաստորեն, «գարունականների» սերնդի գլխավոր դեմքերից էր, և տարիների ընթացքում. սովետական տարիներ էին, որոնց մոտ երկու տարին ինքն անցկացրել էր բանակում՝ ծառայելով որպես սպա. այդ տարիները նշանակալի հետք էին թողել նրա գրականության վրա, հատկապես պատերազմական թեմաների

գրվածքներում, և Սովետական Միությունից հետո, երբ անկախ Հայաստան էր. այդ տարիների վերելքը, անկումը, սոցիալական վիճակները Հովհաննեսի պոեզիայում անմիջականորեն գտնում էին իրենց արձագանքը, արտացոլքը, և հիմնականում, նրա հայացքը՝ հումորիկ, կոմեդիական, գտնում էր վիճակներ, դրվագներ, որ և՛ հումորիկ էին թվում, և՛ ցավ ու թախիծ կար դրանց մեջ: Ընդհանրապես, Հովհաննես Գրիգորյանը հումորով ծածկում էր նաև իր ցավը: Ինքը չէր պարտադրում որևէ մեկին իր ներաշխարհի հոլովույթը և գրական իր հարաբերություններում մի ռեպլիկով մթնոլորտ էր ստեղծում: Հովհաննես Գրիգորյանը ժամանակների մեջ ոչ թե դարձավ ժամանակի հայելին, այլ ինքն իր միջի հայելու միջոցով նայեց ժամանակներին, այսինքն ինքնական էր դա և շատ յուրահատուկ: Նրա գրքերը՝ «Երկու ջրհեղեղի արանքում», «Կես ժամանակ», «Երբեք չմեռնես - ահա թե ինչ կասեմ քեզ» և այլն, մնայուն են և ժամանակը դրանց մեջ իր շունչը կգտնի: Չարենցի «Ժամանակիդ շունչը դարձիր», արտահայտությունը ես ջահել տարիներին ձևափոխել էի. «Ժամանակիդ շուն չդարձիր»: այսինքն, ժամանակն ինքը կարող է քեզանից պահանջներ ունենալ, հատկապես սովետական տարիներին, հատկապես երբ ժամանակները պաթետիկ են լինում և ներշնչում են բանաստեղծություններ, որոնք հետո, կարծում եմ, չեն մնալու և չեն մնացել: Հովհաննեսն այն դեմքերից էր, որ ժամանակին հաղորդում էր իր ժամանակը, իր ընկալումների ժամանակը, իր ապրած և ապրելիք՝ ցանկալի ժամանակների գումարումն էր անում: Նրա գրական տեսակը շատ հետաքրքիր էր նաև թարգմանական ասպարեզում՝ Լատինական Ամերիկայի, իսպանալեզու գրականության շատ դեմքերի է ինքը թարգմանել. հիշենք Կորտասարի «Վիճակախաղ»-ը, Խոսե Օրտեգա-ի-Գասեթի «Մշակույթի փիլիսոփայություն»-ը և որոշակի բանաստեղծական շարքեր՝ Վալենտյի և մյուսների: Նա թարգմանել է նաև գերմանացի բանաստեղծ Հանս Մագնուս Էնցենսբերգերին: Թարգմանության ասպարեզում ևս Հովհաննեսն ունի յուրահատուկ ձեռագիր: Մեծ կորուստ էր մեր ժամանակի, մեր գրական հոսանքի համար, և նրա 70-ամյակը նշելով մենք հաստատում ենք, որ այն, ինչ որ գրողը ստեղծել է, կոնկրետ այդ ժամանակի համար չէ, ավելի շատ գրվում է ապագայի համար. այդպիսի գրող էր Հովհաննես Գրիգորյանը:

ԳԻՐՔ ՀԻՇՄԱՍԿԻ

«Այսօր և՛ ուրախության՝ ծննդյան օր է, և՛ ցավի ու ողբերգության. մեր պատմության ամբողջ ընթացքում այս երկու տարբեր, հեռու զգացումների համադրումը մենք բազմիցս ենք ճաշակել, և դա արտահայտվել է մեր գրականության ու երգերի մեջ: Այսօր երկակի զգացումներով է մարդ շնորհավորում և ցավում, շնորհավորում Խաչիկ Մանուկյանի

«Անմահական» գիրքը և նաև ցավ զգում: Ահա այսպիսի ապրումներով ես հիշում եմ օրեր, որ Վաչագանի հետ զրուցել ենք երկար և ես ուրախացել եմ, որ երիտասարդ տարիքում ինքն իր հավատամքն ուներ, հայրենիքի իր ըմբռնումը և դրանք ոչ թե անհատական փորձով էին, այլ այդ ամենը համեմված էր մեր գրականության, հրապարակախոսության և նաև մեր զորականների տեքստերի լավ իմացությամբ: Եվ պատահական չէ, որ նա պատմվածքների գիրք էր հրատարակել, իսկ հրապարակախոսությունների գիրքը հրատարակվեց զոհվելուց հետո՝ գիրքը կար պատրաստի: Խաչիկի գիրքը ամբողջությամբ հագեցած է հոր, որդու, հայրենիքի զգացմունքներով, ցավերգությամբ, ժամանակի գնահատականներով ու ընկալումներով, նաև աստվածաշնչյան «հույս, հավատ, սեր» եռամիասնությամբ:

Բանաստեղծությունները միախառնական չեն կարող լինել: Բանաստեղծությունները երևի նրա համար են, որ մարդը իր ներսում կուտակածը, մտածումները հանձնի ուրիշին, ոչ թե ցավը փոխանցի, այլ հույսը, հավատը, սերը: Գրողի հավատամքը հենց ապրելու ուժը, պայքարելու ուժը, ստեղծարար ուժը փոխանցելն է: Գրականությունն ունի հասցեատեր. դա սիրտն է ու հոգին, որը կրում է մարդը, մարդկանց է ուղղված և մարդուն մարդ դարձնելու ճանապարհին է: Հենց այդպիսին են Խաչիկ Մանուկյանի բանաստեղծությունները: Ասել լավն են, հաջող են, տաղանդավոր են, հանճարեղ են, քիչ բան ասած կլինենք, ուղղակի այստեղ ոգի է խաղում, ցավն է, ապրումների պոռթկումներ են. դա «Ի սկզբանե էր բանն» իմաստի բանն է, որ մակդիր չի ցանկանում, պիտի ընկալել, ապրել դա յուրովի, ապրեցնել, որպեսզի քո մեջ այդ ոգին կարծրանա, թրծվի: Նպատակը բանաստեղծության և գրքի, կարծում եմ, դա է՝ բոլորի մեջ արթուն պահել այդ սերը, հավատը, հույսը և պայքարի ոգին: Գիրքը արժանի է մեր քաջարի զինվորների անմար հիշատակին և այդ ոգին փոխանցվում է մարդկանց, ընթերցողներին:

Շնորհավորում եմ գրքի ծնունդը, նաև Վաչագանի ծնունդն եմ շնորհավորում, և ցավ ենք ապրում, որ հիշատակի և ծննդյան օրը խառնում ենք իրար: Փա՛ռք նրանց ծնողներին, փառք Աստծուն, որ այսպիսի որդիներ է պարգևել մեր ժողովրդին, մեզ, և մենք բոլորս պիտի արժանի լինենք այդ հիշատակին:

ՄԱՍՎԵԼ ԿՈՍՅԱՆ – 75

Սամվել Կոսյան բանաստեղծին ճանաչել եմ համալսարանի միջանցքներից, գրական ստուդիայից: Նրա հետ մտերմանալը շատ անսպասելի և անկաշկանդ էր: Երբեք չեմ զգացել իմ ու նրա տարիքային տարբերությունը, երբ նա ավարտական կուրսում էր, ես՝ առաջին: Բանաստեղծություններին ծանոթ էի «Գարուն» ամսագրում տպագրված

շարքերից: Պարզ, պատմողական, սրամիտ անցումներով բանաստեղծություններ՝ սրտամոտ և անկեղծ, իհարկե, անկեղծությունն էլ այնքանով, որ անձնական տվյալներն ու հույզերը չէր փաթաթում ընթերցողի պարանոցին: Ինձ միշտ թվացել է, թե Կոսյանը առաջին հերթին իր համար է գրում և վերջին հերթին էլ իր համար, իսկ միջակայքում ով ուզում է կարդա՝ Աստված իր հետ, երբեք չի սպասել գովաբանական խոսքերի կամ վերլուծական հոդվածների, այդ ամենը կարծես սահել է նրա վրայով: 75 տարիների ապրումները, նպատակները, բանաստեղծական ըմբռումներն ամփոփված են նրա՝ իր 70-ամյակին նվիրված 70 տողերում և համապատասխանաբար՝ 75-ամյակին նվիրված 75 տողերում, որոնք ավելի խորը, ավելի մարդկային, բանաստեղծական ինքնաներկայացում և ինքնավերլուծություն են, քան որևէ գովասանական խոսք կամ դրական գրախոսություն: Իր սերնդի և ներսում էր, և դրսում: Բանաստեղծ կոչվելու որևէ կեցվածք չի ընդունել, թեև նրա բանաստեղծությունները՝ «Գույներ» առաջին ժողովածուից մինչև վերջին՝ «Բառը հենարան չէ այլևս» ժողովածուն, մաքուր, պարզ և մտածողության շերտերը մղող էներգետիկա ունեն: Եվ այդ շրջանակում են տեղավորվում հայոց կյանքի, պատմության, ապագայի ոգորումներն ու սպասումները: Բնականորեն արժանացել է գրական բարձր մրցանակների, թարգմանվել աշխարհի տարբեր լեզուներով: Նրա հետ ապրել, ընկեր և գրչեղբայր լինելը մշտապես ուղեկցվում է հումորի ու թափանցիկության ոգեշունչ օդով:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԵՐԿԼԵԶՈՒ ՇՈՂԱՐՁԱԿՈՒՄ

Գարնան մի արևոտ օր էր 21-ր դարի 18 թվականի, լեհ բանաստեղծուհի Կալինա Զիսլան հյուրընկալվել էր Հայաստանի գրողների միությունում, հանպատրաստից հանդիպմանը ներկա էին մի քանի հայ գրողներ՝ Գագիկ Դավթյան, Նանե, Գոհար Գալստյան... Լուսանկարվեցինք, իհարկե, ժպտալով, բայց դա սարքովի ժպիտ չէր, քանզի հայ-լեհական գրական կապերը վերջին մի քանի տարիներին ակնհայտ զարգացել են Հայաստանի գրողների միության, Լեհաստանի գրողների միության, Պոզնան և Բիդգոշ քաղաքների գրական կազմակերպությունների համագործակցության շնորհիվ: Նշենք նաև անհատների անուններ՝ Դարիուշ Լեբյոդա, Կալինա Զիուլա, Գագիկ Դավթյան, Վարդան Հակոբյան: Հայաստանի և Լեհաստանի գրական փառատոներին մասնակցել են վերոնշյալ բանաստեղծները ու նաև Էդ. Միլիտոնյանը, Սոնա Վանը, արժանացել են գրական մրցանակների: Այս ամենին գումարենք նախկինում հրատարակված դասականների և ժամանակակիցների գրքերի իրողությունը, մասնավորապես Շանթ Մկրտչյանի թարգմանությամբ լեհական պոեզիայի անթոլոգիան, Բոգդան Գեմբարսկու

նամակների գիրքը, Ադամ Միցկևիչի հատորը և այլն: Այս թերի ցանկը նշանակում է, որ մեր գրական կամուրջը գնալով ամրանում է և կարող է դիմանալ առաջիկա առավել ծանր թարգմանական բեռնվածության:

Կալինայի հետ հանդիպման ժամանակ ես առաջարկեցի տպագրել լեհ գրողներին՝ հայերեն, հայ գրողներին՝ լեհերեն գիրք: Գ. Դավթյանն ու Զիռլան հանձն առան կազմել, իսկ ես՝ խմբագրել, մասնակցել կազմման աշխատանքներին և պատրաստել տպագրության, իհարկե, ՀԳՄ-ի ծախսերով: Ահա այդ երկլեզու ժողովածուն, ի միջի այլոց, նախորդ ձեռնարկների զգալի մասը նույնպես մեր գրական կազմակերպության աջակցության կնիք են կրել և, հավատացած եմ, որ կշարունակվի ապագայում ևս:

Ամեն գրական հանդիպում ծնում է նոր գաղափարներ, որոնց իրագործման ջանքով է լցվում մեր երկու ժողովուրդների բազմանիստ համագործակցության ասպարեզը:

Երևանյան գարնանային պայծառ օրը այսուհետ կհիշվի այս գրքի գոյությամբ, տա Աստված հարատև լինեն հանդիպումները՝ հանուն աստվածային բանի շողարձակման:

ՊՈՆԶԻԱՅՈՒՄ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ ԽԱԶՎՈՒՄ ԵՆ
(«Խաչվող գուգահեռներ» անթոլոգիայի մասին)

Եվրոպայի արևելյան սահմանից ողջուն լեհ ընթերցողներին: Եթե ես լեհ լինեի և բանաստեղծության սիրահար, անշուշտ կցանկանայի համտեսել հայ պոեզիայի ծիրանահամը, նրա խորքերում շաղախված պատմական, փիլիսոփայական, բանահյուսական, գեղարվեստական աստղձր, ճանաչել առաջին պետականորեն քրիստոնյա երկրի ու մուսուլմանական աշխարհի դարավոր շփման արդյունքում ծնված քնարերգության դիմացկունությունը, ինքնատիպ հմայքն ու արևելք-արևմուտք խաչմերուկում անվերջ ալիքվող փորձությունների, ցեղասպանությունների, դժվար ինքնահաստատման ուղի անցած ոգու թրծվածքը:

Ես կուզենայի նաև իմանալ, թե ինչպես է հայ ժամանակակից պոեզիան հաղորդակցվում համաշխարհային քնարերգության ներկա տուրևառությանը: Ես, հարկավ, տեղեկացված կլինեի, որ հազարամյակների ակունքներից է բխում հայ բանավոր երգը, ապա և մեր թվարկության 5-րդ դարի առաջին տասնամյակում է ստեղծվել հայոց այբուբենը և հենց 5-րդ դարում էլ հայերեն է թարգմանվել Աստվածաշունչը:

Լսած կլինեի, որ 2015 թվականին Հռոմի պապը տիեզերական վարդապետի կոչման է արժանացրել 10-րդ դարի մեծ բանաստեղծ Գրիգոր Նարեկացուն:

Եվ հաստատ կլիմանայի, որ հայերի մուտքը Լեհաստան վաղ միջնադարից է սկսվել, նրանցից ոմանք զգալի հետք են թողել լեհական պատմության էջերում, որպես գործիչ ու արվեստագետ: Կուրախանայի, որ այսօր էլ կան համաշխարհային հռչակի տեր լեհեր, որոնց երակներում հոսում է հայի արյուն, ասենք միայն Քշիշտոֆ Պենդերեցկու անունը, նա այսօր լավագույն կամուրջն է մեր երկու ժողովուրդների երաժշտական կյանքը շաղկապող:

Եվ հիմա որպես հայ ընթերցող ասեմ, որ լեհական գրականության և՛ դասական, և՛ ժամանակակից լավագույն դեմքերին թարգմանել ու թարգմանում են հայերեն և հրատարակում: Մեր գրական մտածողության անբաժանելի մասն են Ադամ Միցկևիչը, Հենրի Սենկևիչը, Թադեուշ Ռուժնիչը, Չեսլավ Միլոշը, Զբիգնև Հերբերտը, Կամիլ Բաչինսկին, Վիսլավա Շիմբորսկայան, Յան Տվարդովսկին և շատերը, իսկ վերջին տարիներին Հայաստան են այցելել ժամանակակից բանաստեղծներ Դարիուշ Լեբյոդան, Կալինա Զիոլան, մասնակցել Արցախի պոեզիայի փառատոնին և լեհերեն գրքեր ու բանաստեղծական շարքեր են հրատարակել Հայաստանի մասին, նաև թարգմանել ու հրատարակել ժամանակակից հայ բանաստեղծների՝ Գագիկ Դավթյանի և Էդվարդ Միլիտոնյանի գրքերը, Դավիթ Հովհաննեսի, Վարդան Հակոբյանի, Էդվարդ Հարենցի և ուրիշների բանաստեղծությունները: Դարիուշի և Կամիլայի գրքերն էլ թարգմանվել և հրատարակվել են Հայաստանում ՀԳՄ-ի ու «Ծիծեռնակ» հրատարակչության

միջոցներով և Գազիկ Դավթյանի թարգմանությամբ ու անհանգիստ ջանքերով: Նրանց գրքերն էլ թարգմանվել և հրատարակվել են Հայաստանում:

Եվ Լեհաստանում ահա տպագրված այս անթոլոգիայում ընդգրկված են ավագ, միջին և երիտասարդ սերնդի բանաստեղծներ, որոնք բազմաթիվ գրքերի հեղինակներ են, թարգմանվել են տարբեր լեզուներով և Հայաստանում ճանաչված անուններ են: Նրանք մասնակցել են աշխարհի բանաստեղծական փառատոների, մրցանակակիրներ են և, կարծում եմ, լեհ ընթերցողի համար կբացահայտեն հինավուրց և նորօրյա պոետական գուգահեռների խաչաձևմանը:

Պոեզիայում, այո՛, գուգահեռները խաչվում են, ինչպես և հիմա խաչվում են հայ և լեհ ժողովուրդների լեզուներում հունցված բանաստեղծական հզոր երակները:

Ես ուզում եմ միաժամանակ լինել հայ և լեհ ընթերցող:

Բարի օր, Լեհաստան:

ԻՐ ԹՎԵՐԸ

Ղուկաս Սիրունյանի հետ մենք ծանոթացել ենք 1969 թ.՝ համալսարանում: Այդ տարիներին գրական ստուդիա էր գործում, որտեղ քննարկվում էին ուսանողների ստեղծագործությունները, մրցանակաբաշխություններ էին լինում, և մենք՝ ներհամալսարանական ստեղծագործողներս, իրար ճանաչում էինք: Ղուկասի հետ մեր հարաբերությունները միանգամից խիստ տաք ընկերական է եղել: Նախ նրա գրվածքները, որոնք ես կարդացել էի, հետո տպագրեցին «Իրակուն, բարի դարձիր առավոտ» գրքում, հիմնականում գյուղական պեյզաժային բանաստեղծություններ էին, սակայն, այն ժամանակ տարածված տերմիններ կային գրականագիտական՝ գյուղագրություն, քաղաքագրություն, այդ ամենից դուրս էր, որովհետև կար պոետական ընկալում գյուղաշխարհին, գյուղաշխարհի մարդուն, աշխատանքին, ներհայեցողական բանաստեղծություններ էին, ինչպես, ասենք, Մեծարենցի ստեղծագործությունները մենք չենք համարի գյուղագրություն կամ քաղաքագրություն. դա զուտ մաքուր պեոզիա է: Ղուկասի գրականության ռիթմիկան նրա անշտապ տողերի բնության, լույսի, մութի հարաբերակցությունը, այսինքն բնական մարդու, բնության փոխհարաբերությունը կար և բանաստեղծությունը դա էր իր մեջ հավաքել: Նրա գրքերի շնորհանդեսներն արեցինք և՛ Ուջանում, և՛ տարբեր տեղերում: Նուրբ երգայնությունը, մարդու հոգին ընկալելը, բացարձակ հեռու էր պաթետիզմից, այդ ժամանակ մեր պոեզիան կարծես ազգային հարցի, մեր պատմության խնդիրներով տոգորված որոշակի հրապարակախոսություն էր պարունակում: Ղուկասի պոեզիան և, ընդհանրապես երիտասարդական պոեզիան 60-70-80-ականների բանաստեղծները հիմնականում իրարից չափազանց հեռու

բանաստեղծներ էին. և՛ Հենրիկ Էդոյանը, և՛ Արտեմ Հարությունյանը, և՛ Հովհաննես Գրիգորյանը, և՛ Դավիթ Հովհաննեսը, Արմեն Մարտիրոսյանը, Ղուկաս Սիրունյանը, Հակոբ Մովսեսը, Արմեն Շեկոյանը, մյուսները, փաստորեն, իրարից շատ հեռու բանաստեղծներ էին, որոնց, չգիտես ինչու, ներկայացնում էին մի բոխչայում և ասում, որ նրանք դրսի ազդեցություններ են կրում:

Ղուկասի բանաստեղծական նրբագեղությունը՝ բնություն- մարդ, շատ յուրահատուկ էր, նրա խոսքի մեջ կար առինքնող բարություն և ազնվություն:

«Իմ թվերը» գիրքը, որ հրատարակել է «Ծիծեռնակ» հրատարակչությունը իմ նկարագարում, շատ հետաքրքիր էր իր տարիներին անդրադառնալով: Ամեն տարվա մեջ յուրահատկությունը գտնելը ինչը որ իրեն հարազատ է թվացել, ճակատագրական է թվացել, մարդկայնորեն բանաստեղծություն դարձնելու տենչ է զգացել, այս բոլոր թվականները ներկայացնելով, ինքը ներկայանում էր որպես մի կերպար՝ պատմություն իր մասին: Բանաստեղծությունները որոշակի պատմողականություն կրում էին, բայց նրա լիրիկական ընկալումները ավելի ազդեցիկ էին և չէին դառնում չոր ու ցամաք պատմություններ:

Ղուկասի բանաստեղծական ամբողջ կենսագրությունը լիրիկայով շաղախված էր, նրա էությունն էր լիրիկայով շաղախված: Մարդկանց հետ հարաբերությունները, սեղանակցությունը, պարզ էին, երբեք նա կտրուկ, կոշտ, կոպիտ, ագրեսիվ չի եղել ու այդ առումով նա առինքնող էր. Նա ավելի շատ սիրում էր լռությամբ ասել, լռությամբ լսել, և եթե պիտի միջամուխ լիներ, իր խոսքն ասեր, ապա շատ դիպուկ, ընդհանրական կարողանում էր ամփոփել: Եվ նրա բանաստեղծական աշխարհը ձևավորվում էր ոչ միայն մեր ժամանակակից կամ դասական պոետներով, այլ նաև գերմանական, որովհետև ինքը գերմաներենից թարգմանել էր Շամիսոյի «Առանց ստվերների մարդը» գիրքը, նա համալսարանում սովորելուն զուգահեռ, ո՞նց էր հաջողացրել, սովորում էր նաև Բրյուսովում՝ գերմաներենի բաժնում: Գերմաներենից թարգմանություններ արեց նրանց ժամանակակից գրականությունից, իսկ հետո «Նիբելունգների երգը», որ Արա Առաքելյանն էր թարգմանել, Ղուկասի հետ աշխատում էին պոետականության վրա: Ղուկասը շատ ժամանակակից մտածողություն ուներ, ինքը բնութթվով հայ մարդու տեսակ էր, գյուղի մարդու տեսակ էր, սակայն երբեք չփորձեց լինել քաղաքացու կամ գյուղացու տիպ: Չէ: Ինքն այդ ամենը կրում էր իր մեջ, ինչ-որ ընկալել էր, ներկայացնում էր առանց անուն դնելու: Նա նաև մանուկների համար շատ լավ պատմվածքներ, բանաստեղծություններ գրեց, հրատարակեց գրքեր:

Ղուկասի մահից տարիներ են անցել և ես ամեն օր զգում եմ, թե ինչ մեծ պակասություն կա իմ օրվա մեջ, իմ կյանքում, որովհետև մենք, կարելի է ասել,

ամենօրյա, ամենշաբաթյա հարաբերություններով էինք մեր կյանքը լրացնում: Նրա մարդկային տեսակը, բնույթը շատ ձգող էր՝ առանց արտաքին փայլերի, շատ մարմանդ կրակի նման էր: Ես Ղուկասին հենց այդպես եմ ընկալել: Նրանց ցեղը, որ 1915 թվականից հետո հասել էր Ուջան և Ուջանում իր պապը՝ Մովսեսը, իր հայրը՝ Տիգրանը, մայրը՝ Մարիամը, հորեղբայրները՝ Ֆրենը, Մայիսը ինձ հարազատ են եղել, այս ամենը գալիս գումարվում էր մի մարդու, որը Ղուկաս Սիրունյանն էր: Շատ տեղեր ենք միասին եղել և՛ Հայաստանում, և՛ Հայաստանից դուրս: Մենք հիմա որ խոսում ենք մեր կյանքից հեռացածների մասին, ապրում ենք իրենց հետ: Այդ հոգևոր ապրումները մշտական են, ինչպես գրականությունն է ապրում, այդպես էլ մենք ապրում ենք իրար մեջ: Ես դիտարկում եմ կյանքը այդ հայացքով. Երբեք չկա մահ, երբեք չկա հեռացում, այդ մեծ ոգիները կուտակվել են մեր հոգու մեջ, և դրանով մենք շարունակում ենք երկխոսել և այն, ինչ մենք գրում ենք, գրում ենք իրենց հետ, ոչ թե իրենց փոխարեն: Մենք գրում ենք մեզնից առաջ եղած աշխարհի գրողների հետ:

Աստված օրհնել էր նրա գրիչը և նրա գրքերը ապրելու են, ուժ են տալու այն մարդկանց, ովքեր սիրում են բանաստեղծություն, ովքեր սիրում են գրականություն:

ՌԱՖԱՅԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ ԱՍՍՑՈՂԸ

Մեր երգերը ոգել են հին ասացողները, ներշնչանքով փոխանցել գալիքներին, երբեք իրենց չհամարելով շնորհալի, տաղանդավոր, հանճարեղ, նրանք սիրում էին երգը և ոչ՝ իրենք իրենց, այդպես եղել են և բազմաթիվ պատմիչներ, ծաղկողներ, բանաստեղծներ:

Ահա նման էակ է գրող, երգիչ-երգասեր, Արմավիր մարզի պատմական անցյալն ու ներկան ամփոփող գրքի հեղինակ Ռաֆայել Սահակյանը: Երկար տարիներ ղեկավարել է մարզի գրական բաժանմունքը, նպաստել դասական և ժամանակակից գրողների ստեղծագործությունների տարածմանն ու ճանաչմանը:

Նրա հետ պարզ սեղանակցությունն անգամ վերածվում է խրախճանքի, հանդեսի:

Բազմաշնորհ մարդու տեսակը գիտակցելու համար շատ ժամանակ է արկավոր՝ կարդալ արձակ և քնարերգական էջերը, լսել նրա պատմությունները և մարդկային հարազատ ելևէջներ:

Նա նաև ապրելու կերպ է ուսուցանում և՛ սրտով, և՛ մտքով, և՛ հիշատակների կրակն ու մոխիրը պահելով:

ՖՐԱՆՍԻՍԱՅՈՎ ՆԵՐՇՆՉՎԱԾ

«Ֆրանսիայի մագնիսական ուժը» անթոլոգիան «Մենք և աշխարհը» շարքի երկրորդ գիրքն է, որն ամփոփում է Ֆրանսիայի պատմության, մշակույթի և գրականության մասին հայ դասական և ժամանակակից գրողների ստեղծագործություններ, հոդվածներ, գրախոսականներ:

Ընտրությունը իմն է և, իհարկե, հնարավոր են նաև բացթողումներ:

Հայտնագործություն արած չեմ լինի, եթե ասեմ՝ Ֆրանսիան մշտապես ձգել է աշխարհի արվեստասեր, արվեստաստեղծ հոգիներին, այստեղ են ծնվել բազմաթիվ ուղղություններ, գաղափարներ, և երկար ժամանակ Փարիզն է եղել երկրագնդի արվեստի կենտրոնը, այստեղից են հռչակվել և մեծափառ ճանաչում ստացել բազմաթիվ գրողներ, նկարիչներ, երաժիշտներ...

Բացառություն չեն կազմել հայ մշակույթի և գրականության բարձր դեմքերը:

Հավելենք, որ 1915 թվականից եղեռնապորձ հազարավոր հայեր բնակություն են հաստատել Ֆրանսիայում, նրանց ժառանգներից ոմանք դարձել Ֆրանսիայի փառքերից՝ Շարլ Ազնավուր, Անրի Վերնոյ, Գառզու, Ժանսեմ, Վահե Քաչա...

Ֆրանսիայում են առժամանակ ապրել և իրենց հաստատել մեծ մրցակցության մեջ Մարտիրոս Սարյանը, Երվանդ Քոչարը, Հակոբ Գյուրջյանը...

Նկարիչներ ու քանդակագործներ, որոնց դյուրին է ներկայանալ, իսկ գրողներին հարկ է թարգմանել, ոմանք գրեցին ֆրանսերեն, ինչպես Շահան Շահնուրը, Ռուբեն Մելիքը, Անրի Թրուայան:

Փարիզում և տարբեր քաղաքներում երկար և կարճ տարիներ ստեղծագործել են Ալեքսանդր Շիրվանզադեն, Ավետիք Իսահակյանը, Արշակ Զոպանյանը, Կոստան Զարյանը, Նիկողոս Սարաֆյանը, Հարութ Կոստանդյանը...

Ֆրանսիական ներշնչանքը չի շրջանցել Հայաստանի երիտասարդ և ավագ գրողներին, գրել են և ոմանք բազմիցս տպագրվել են Ֆրանսիայում: Փորձել ենք լինել աշխարհի գեղարվեստական մտածողության կրողը և ներկայանալ հայոց գույնով ու պատմական փորձով:

Կարելի է կարդալ Վիգեն Իսահակյանի գիրքը՝ «Փարիզ, Քոչար, անցած տարիներ» և նրա աչքերով ու հոգով կրկին զգայել Ֆրանսիայի մեծանուն դեմքերի ընկերությունը, մշակույթի գունագեղ դաշտը, կախարդական ճարտարապետական կոթողների հմայքը, ապա երկնքից ողկույզների պես կախված աստղերը կրել հուր-հավիտյան, հիշենք Վան Գոգի աստղազարդ երկնքի հրաշագեղ նկարը:

Այս գիրքն ամփոփել է մի փոքր մասն այն հզոր ֆրանսիական ներշնչանքից ծնված գործերի, որոնք կխոսեն ընթերցողի սրտի հետ և նա էլ կհամաձայնի՝ բոլորիս առեղծվածի ուժով ձգում է ֆրանսիական մագնիսը:

ԱՄԵՐԻԿԱՆ ՈՒ ՆՐԱ ՄԱՐԴԻԿ ԳՐՈՂՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ

«Ամերիկյան հեռու և մոտ» գիրքը «Մենք և աշխարհը» շարքի 5-րդ գիրքն է: Ամերիկայի կերպարը պատանեկան տարիքից ուղեկցում է մեզ, քանզի հայ ընթերցողների տներում և ապա, իհարկե, գրադարաններում զինվորների պես զգաստ շարված ամերիկացի գրողներ Մարկ Տվենի, Ջեյմս Լոնդոնի, Թեոդոր Դրայզերի, Էդգար Պոյի և հետո Էռնեստ Հեմինգուեյի, Ջոն Սթեյնբեքի, Վիլյամ Սարոյանի, Ուիլյամ Ֆոլկների, Ուիթմանի, Թոմաս Էլիոթի և այլ մեծերի գրքեր բացել են ամերիկյան կյանքի ու էությունների, երազանքների շքեղ ցուցահանդես: Այդ գրական աշխարհն ու աշխարհն իրական, որ մեզ են հրամցրել այնտեղ ապրող մեր հայրենակիցները, հարազատական թելեր ու կամուրջներ են գցել Եվրոպայի ու Ատլանտիկ օվկիանոսի վրայով դեպի Ազատության արձան: Այդպես և մեր հայ դասական և ժամանակակից գրողները լինելով Ամերիկայում, կամ ոգեշնչված նրա կերպարով, գրել են հիշարժան գրքեր ու ստեղծագործություններ, որոնք սիրված և հայտնի են մեր երկրում և որոշները թարգմանվել են այլ լեզուներով:

Ինչպե՞ս չհիշենք Կոստան Զարյանի «Ամերիկայի միացյալ նահանգները» գիրքը, Վահան Թոթովենցի, Հակոբ Կարապենցի, Ադասի Այվազյանի պատմվածաշարերը, մեր բանաստեղծների գրվածքները:

Չենք մոռանա ասել, որ Ամերիկայում բնակվել են և աշխարհում հայտնի դեմքեր են դարձել Վիլյամ Սարոյանը, Քրիս Բոեջալյանը, Պիտեր Բալաքյանը, նրանք գրել ու գրում են անգլերեն, բայց ինչպես Սարոյանն է ասել՝ ոգին հայերենն է: Այսօր էլ ԱՄՆ-ում ապրում են հայագիր տաղանդավոր հայ գրողներ, որոնց գրվածքներից զետեղված են այս գրքում:

Հետաքրքիր է, ինչպե՞ս են իրար հետ խոսելու հայ և ամերիկացի գրողների աչքերով ընկալված ու գեղարվեստ դարձած ամերիկյան պատկերները, բազմազգ բնակիչները, վերջապես լուռ ու ջերմ ժպիտները:

ՍԱՀՄԱՆՆԵՐ ՉՃԱՆԱՉՈՂ ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԹՌՉՈՒՆԸ

«Մենք և աշխարհը» շարքից մինչ այժմ լույս են տեսել Իրանին, Ֆրանսիային և Վրաստանին նվիրված անթուղգիաները, որոնք ընդգրկում էին հայ դասական և ժամանակակից գրողների բանաստեղծական և արձակ էջերը: Այս գրքերը լավ ընդունվեցին ոչ միայն Հայաստանում, այլև Իրանում, Ֆրանսիայում և Վրաստանում: Տեղյակ եմ, որ Թեհրանում և Թբիլիսիում թարգմանվում են իրենց երկրի պատմությանն ու գրականությանը նվիրված հայ գրողների ստեղծագործությունները: Ինքս մասնակցել եմ Թբիլիսիում Հովհաննես Թումանյանի տուն թանգարանում կազմակերպված շնորհանդեսին, որին ներկա էին և ելույթ ունեցան վրաց գրողներ, մասնավորապես

Վրաստանի գրողների միության նախագահ Մադվալա Գոնաշվիլին և անձամբ հայտնեց, որ պատրաստվում են գիրքը հրատարակել «Մերանի» հրատարակչությունում:

Ահա տպագրվել է 4-րդ անթոլոգիան, որն ամփոփում է հայ ժամանակակից գրողների գրվածքները Ռուսաստանի վերաբերյալ: Իհարկե, հիմնականում գրական փոխկանչեր են, առնչություններ, նաև պատմական ակնարկներ ու հայ-ռուսական գրական կապերի մեկնաբանություն: Հատկապես Մագդա Ջանփոլադյանի ուսումնասիրությունը լայնորեն ներկայացնում է հայ դասական գրողների անժխտելի հաղորդությունն ու ազդեցությունը ռուս մեծ գրողներից: Ավետիք Իսահակյանի խոստովանությամբ իմանում ենք, թե որքան լուրջ ազդեցություն է կրել նրա ներաշխարհը Գոգոլի «Մեռած հոգիները» վեպից, ապա և Լերմոնտովի քնարերգությունից:

Կարդալով ուսումնասիրությունը, մենք կնշենք Հ. Թումանյանի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Ջորյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Գ. Մահարու և մյուս հայ մեծերի փոխկանչերն ու կապերը, նաև իրենց թարգմանություններով հայ ընթերցողին են մատուցել աշխարհահռչակ ռուս վարպետների: Սա մի փոքր նախաբանի նյութ չէ, հուսով եմ կընթերցեք գիրքը, և Մ. Ջանփոլադյանի հոդվածը մանրամասն ձեզ կհրամցնի վերնոշյալ և այլ հայ գրողների կապերի էությունը:

Դա այնքան մեծ դաշտ է, որ այս անթոլոգիայում անհնար էր պարփակել:

Այդ իսկ պատճառով ներկայացված են միայն ժամանակակից հայ գրողների բանաստեղծություններն ու արձակ էջերը: Նաև կա բաժին, որտեղ տպագրվել են հայ ռուսագիրների տեքստեր:

Հավելենք, որ այդ գրվածքների մի մասը հրապարակվել է «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրում: Այդ մասն տեղեկացրել է գլխավոր խմբագիր Ալբերտ Նալբանդյանը: Ամսագիրը շարունակում է լույս ընծայել այսօր իսկ ստեղծվող, երկու ժողովուրդներին հետաքրքրող բազմազան նյութեր, բնականաբար առավելապես գեղարվեստական գրականություն: Այս կամուրջը հարկ է պաշտպանել ոչ միայն հայ-ռուսական, այլև աշխարհի ոգին, խիղճը և միմյանց ճանաչելու դաշտը անթառամ ծաղիկներով տարածելու համար:

Դարերից եկող ներշնչանքը

«Մենք և աշխարհը» շարքի հերթական՝ «Իրանի արևը» ժողովածուն նվիրված է մեր հնագույն հարևան Իրանի ժողովրդին, նրա պատմությանն ու գրականությանը:

Հայ դասական և ժամանակակից գրողների ստեղծագործություններում յուրովի արտացոլված են համաշխարհային պատմության ու գրականության մեջ:

Իրանի անգուգական, փառավոր ներդրումը և, ի մասնավորի, հայ և պարսիկ ժողովուրդների դարավոր հոգևոր առնչությունները, նիստ ու կացը, բարեկամության ծիածանը, որ կապել է երկու ժողովուրդների հրեղեն խոսքի վարպետներին, պատմության խորքից ու նաև ներկայում պարսիկ գրողների ներշնչանքն է մղել հայ գրողներին ստեղծելու առինքնող ջերմ և անկեղծ արձակի ու բանաստեղծության էջեր: Պատմականորեն խաչաձևել են երկու ազգերի ճակատագրերը, լեզուներն են ընդունել բառեր, որոնցով խոսել և գրել են, խոսում և շարունակում են գրել արևելյան իմաստնությամբ ու զգացմունքով տոգորված և, չգիտես ինչու, հասարակ կոչված մարդիկ և արվեստագետները, գիտնականները: Հայ գրողներն այդ և գումարած բուն հայերեն բառերով մեր էական սիրո և բարեկամության ալիքներն են հղում մեր հարևան ու բարեկամ պարսիկ ժողովրդին:

Հատկապես ուզում եմ նշել, որ վերջին երեսուն տարում հայ գրողներին ամենաշատն են թարգմանել ու հրատարակել պարսիկ և իրանահայ թարգմանիչներն ու հրատարակիչները: Փոխադարձաբար Հայաստանում տպագրվել են դասական և ժամանակակից պարսիկ գրողների գրքեր:

Աշխարհում տիրող պատերազմական դավադիր, սպառնալիքներով հագեցած մթնոլորտում, կարծում եմ, մշակույթն ու գրականությունն են լինելու այն շանթարգելները, որոնք իրենց վրա կկրեն սարսափի ու նախնադարյան արյունոտուշտ մոլուցքի կայծակները:

Այս հավատով, նվաստս և Հայաստանի Հանրապետությունում Իրանի դեսպանության մշակույթի կենտրոնի խորհրդական, հարգարժան պարոն Հոսեյն Թաբաթաբային նախաձեռնեցինք այս ժողովածուի հրատարակումը, հուսով եմ, այն կթարգմանվի և կտպագրվի նաև Իրանում:

Աստված թող հովանի լինի:

Խոսքս ավարտեմ բանաստեղծությամբ:

ՀԱՖԵԶԻ ՇԻՐՄԱՔԱՐԻ ՄՈՏ

Շիրմաքար մարմար, թափանցիկ որպես բառ,
Ծածկել ես մարմինը, իսկ հոգին՝ թափառ:
Արևելք, երգերդ ոսկեփայլ մեղր,
Հոսում են վերից վար, սիրուց մինչ ծաղր:
Լերդացողն արյունն է, թևավորը՝ գիրք,
Քառյակի պես ձույլ եք, երկիր ու երկինք:
Թվայնացվում են աննյութն ու իրը,

Քո ծուռ ժպիտն է կրկնում այս գիրը:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ

Երևանի մեր թաղամասում փոքրուց լսել եմ արաբերեն լեզուն, երաժշտությունը, որովհետև մեր փողոցում ապրում էին հայրենադարձ ընտանիքներ, որոնք եկել էին Իրաքից, Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից: Այնտեղ էին հայտնվել Հայոց մեծ ցեղասպանությունից մազապուրծ, և ապա Հայաստանը ընդունել էր նրանց:

Մեր հայրենակիցները ռադիոներով բարձրաձայն լսում էին արաբական երգեր, նվագներ, իրար հետ երբեմն խոսում էին արաբերեն, իրենք էլ էին երգում մերթ ընդ մերթ, և հայերենն ու արաբերենը իմ լսած առաջին լեզուներն են՝ իրար հետ հաշտ ու ջերմ: Արաբական երկրների անուններն ու քաղաքանունները մեզ են հաղորդվում հայոց «Սասնա ծռեր» էպոսից, պատմական և գեղարվեստական գրքերից: Արևելքի հեքիաթային ու դյուրիշ կերպարը ձգում է հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի «Աբու լալա Մահարի» հոչակավոր պոեմից, որը թարգմանված է բազմաթիվ լեզուներով: Հպարտ եմ, որ Սիրիայում, ուր եղել եմ բազմիցս, տեսել եմ հզոր բանաստեղծ Մահարու շիրմաքարն ու թանգարանը: Եղել եմ նաև երազային Միջերկրականի ափին շողշողացող Բեյրութում, Լաթաքիայում, նաև Դամասկոսում, ապա Եգիպտոսում...

Արաբական հնագույն և նորագույն մշակույթը տարածվել է աշխարհով մեկ: Գրել եմ արաբական երկրների մասին, հանդիպել եմ շատ արաբ գրողների հետ և ուրախ եմ, որ հոչակավոր Ադոնիս բանաստեղծին հյուրընկալել ենք Հայաստանում և նրա հանդիպումներն ենք կազմակերպել տարբեր քաղաքներում:

Այս ժողովածուում մասամբ ընդգրկվել են վերոհիշյալ թեմաներով գրվածքներ, որոնց մեջ իմ և իմ հայրենակիցների (արաբական երկրներում ապրող) մեծ հարգանքն ու երախտագիտությունն եմ հայտնում արաբ ընթերցողներին, հղում եմ բանաստեղծական ուղերձ՝ սիրենք իրար, և աշխարհը կլինի արևելյան դրախտի իրական վայր:

ԱՄԵՆԱԻՐԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԸ

Հայերն ու վրացիները հանդիսավոր կամ պարզ, սովորական հանդիպումների ժամանակ հաճախ հիշատակում են Հայոս ու Քարթլոս եղբայրների լեգենդը, որը սակայն երկու ժողովուրդների պատմության օրինական և իրական ծնունդն է և շարունակվում է

այդպիսին լինել հիմա և, վստահ եմ, ապագան ևս կապացուցի՝ լեզենդի կենսական և հավիտենական հիմքերը:

Երբեմն գոյել են առանձին-առանձին, երբեմն միևնույն պետականության սահմաններում, հաճախ թև-թիկունք են եղել իրար և, զարմացնելու համար չեմ ասում, եղբայրասպան պատերազմներ չեն եղել երկուսի միջև:

Գուցե այս ամենին իր հզոր ավյունն ու արյունն է ներարկել երկու ժողովուրդների մարդասեր, լուսավոր, հյուրասեր և խրախճանական երգասեր մշակույթի բնույթը: Հարազատ են ճարտարապետական ու գրական մտածողության ընկալումները՝ հիմնավորապես կանգնած նախաքրիստոնեական և քրիստոնեական վեմերի վրա:

Մշտապես ապրեցնող զվարթ, հոգեշահ հացն ու գինին ներշնչել են երգ, պար, անեղծ ու անդավաճան կենացներ:

Գրական եղբայրությունը մաքուր անդրադարձն է դարավոր ավանդների: Միայն հիշատակելով Հովհաննես Թումանյանի և Իլյա Ճավճավաձեի և մյուս անվանի վրաց գրողների բարձր ընկերությունը, պիտի ճանաչենք ու համոզվենք՝ Վրաստանի և Հայաստանի գրողների միությունների հարազատաբար համագործակցությունը ճշմարիտ շարունակությունն է հզոր ավանդների:

Հայ մեծ գրողներից ոմանք ապրել և ստեղծագործել են Վրաստանում, 20-րդ դարի սկզբին Թիֆլիսում Հովհաննես Թումանյանի տանը գործում էր Վերնատուն գրական համայքը, որը մեծ դեր է խաղացել հայ գրականության զարգացման ծիրում: Պատահական չէ, որ նրա անդամներից Ղազարոս Աղայանի, Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի ստեղծագործություններում դժվար չէ գտնել Վրաստանի պատմության, գրողների ու մշակույթի մասին երևելի գրվածքներ:

«Բազմաձայն երգի երկիրը» ժողովածուն շարունակում է «Մենք և աշխարհը» շարքի ուղին, և ընթերցողները կծանոթանան ոչ միայն հայ դասական գրողների Վիրքին նվիրված գրվածքներին, այլև ժամանակակից բանաստեղծների ու արձակագիրների ստեղծագործություններին, նույնքան տարողունակ ու ջերմ:

Եթե խոսքս մի քիչ նմանվի կենացի, չեմ շեղվի, իբր ձգտեմ ավելի լուրջ և ոչ քաղցր-մեղցր խոսքերի տիրույթ մտնեմ:

Բազմաթիվ գրող ընկերներ ունեմ Վրաստանում, փոքրուց տեսել եմ այդ երկրի բնության ու մարդկային գեղեցկությունը և չեմ կարող հավատարիմ չլինել Հավլաբարի հարևանությամբ հանգչող մեր մեծերի ավանդական ոգուն ու չշարունակել կենաց-խոսքի ելևեջով չասել՝ կեցցե՛ն Հայոսն ու Քարթլոսը մեր պարզ, առտնին և բարձր դիվանագիտական սեղանների շուրջ, մշտապես ներկա լինեն որպես լեզենդ դարձած հարատևության և լեզենդից վերադարձած կյանք այժմ և հավիտյան:

ՅԱՎՈՐՈՎԸ՝ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԿԱՄՈՒՋ ՈՒ ՀԻՄՔ

Հունվարի 12-16-ը Բուլղարիայի Սլավոնական գրականության և արվեստի ակադեմիայի հրավերով ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը Բուլղարիայում մասնակցեց հայ ժողովրդի բարեկամ, բուլղար նշանավոր բանաստեղծ Պեյո Յավորովի ծննդյան 140-ամյակին նվիրված միջոցառումներին:

Ծննդյան 140-ամյակի առթիվ տպագրվել է Յավորովին նվիրված «Ես չեմ ապրում՝ այրվում եմ» խորագրով բանաստեղծությունների ժողովածուն, որի առաջաբանը գրել է ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը: «Խղճի բանաստեղծը» խորագրով առաջաբանում մասնավորապես ասվում է. «Ես շատ եմ ուզում ճշգրիտ ասել, թե մարդու և մարդկության պատմության ոչ երկար ընթացքում երբ է սկզբնավորվել մարդկային խղճի պատմությունը, ինձ թվում է՝ առաջին արտահայտությունը սրտահույզ երգն է, այսինքն՝ առաջին խղճի հրեշտակը երգիչն է, բանաստեղծը: Դրա լավագույն ապացույցը մեծ բանաստեղծների փառանգն է և դրանց շարքում՝ երևելի շարքում, բուլղար ժողովրդի հանրահայտ զավակ Պեյո Յավորովը՝ մաքառողը, խիզախողը և վեհապանծը: Նա առաջինն էր, որ դառնորեն արձագանքեց Օսմանյան Թուրքիայից հալածված, իրենց հայրենի հողից զրկված և Բուլղարիայի Ստրալջու քաղաք հասած հայորդիների տառապանքին՝ գրելով «Հայերը» հանճարեղ բանաստեղծությունը: Հիշենք, որ Յավորովը նույն ցավով արժարժել է հրեաների ճակատագրի կնճիռները: Նա կարծես կանխագուշակել է այս երկու ազգերի ապագա ցեղասպանությունը: Ահա թե ինչ հզոր տաղանդով էր օժտված երգիչը, մարտիկը, մարդասերը: Ափսոս, աշխարհի ոչ բոլոր բանաստեղծներն են այդքան աչալուրջ, այլապես կկանխվեն բազում չարիքներ: Սա էլ իմ՝ բանաստեղծի ռոմանտիկ ու միամիտ հավատը: Լինել Յավորովի նման, սա է իմ հավատամքը:

«Հայերը» բանաստեղծությունը ոտքի հանեց երախտապարտ 200 հայ ռազմիկների, որոնք Անդրանիկ և Գարեգին Նժդեհ զորավարների հրամանատարությամբ կռվեցին Բուլղարիայի ազատագրության համար: Եվ հենց Գարեգին Նժդեհը 1936 թ. գուշակեց, որ Անկախ Հայաստանում կբարձրանա Պեյո Յավորովի արձանը: Ասեմ՝ նրա անվան դպրոցի դիմաց: Մանուկների հոգում փողփողում է Բուլղարիա, Պեյո անունները: Այսպես է պոետն ապրեցնում իր երկրի ու մարդկության փառքը»:

Գրքում ընդգրկված է Յավորովի «Հայերը» բանաստեղծությունը, որը թարգմանվել է աշխարհի տարբեր լեզուներով, ինչպես նաև այդ բանաստեղծության հայերեն և ռուսերեն

տարբերակները՝ Համո Սահյանի և Գևորգ Էմինի, Միլվա Կապուտիկյանի և Գուրգեն Բարենցի (բուլղարերենից ռուսերեն) թարգմանությամբ:

Սոֆիայի Բուլղարական մշակութային կենտրոնում տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը, որին մասնակցեց և ողջույնի խոսք ասաց Բուլղարիայում ՀՀ դեսպան Արմեն Սարգսյանը: Միջոցառմանը մասնակցեցին ճանաչված գրականագետներ Սերբիայից, Ռուսաստանից, Մեծ Բրիտանիայից: Էդվարդ Միլիտոնյանը իր ելույթում անդրադարձավ հայ ժողովրդի հիշողությանը՝ կապված Յավորովի հետ: Սոֆիայում նա հանդիպեց Բուլղարիայի գրողների միության քարտուղար Խրիստո Դիմիտրենի հետ, քննարկվեց համագործակցության ծրագիր:

Առաջիկայում կներկայացվի համագործակցության նախագիծը:

Հունվարի 13-ին միջոցառումները շարունակվեցին մեծ բանաստեղծի ծննդավայրում՝ Չիրպան քաղաքում, որտեղ ողջույնի խոսքով ելույթ ունեցավ Բուլղարիայի փոխնախագահ Իլիյանա Յոտովան: Ողջույնի խոսք ասաց նաև Էդ. Միլիտոնյանը և վառեց Յավորովի պոեզիան խորհրդանշող ճրագը: Յավորովի պոեզիան հանրահռչակելու գործում ունեցած ավանդի համար Միլիտոնյանը պարգևատրվեց Չիրպան քաղաքի հուշամեդալով:

ՀԳՄ նախագահը Չիրպան թանգարանին նվիրեց քարակերտ հայկական խաչքար և եղեռնագոհ գրողների ռուսերեն ժողովածուն՝ նշելով, որ Յավորովի «Հայերը» բանաստեղծությունը՝ գրված 19-րդ դարի 90-ականների վերջին, կարծես կանխագուշակում էր ցեղասպանությունը:

Պլովդիվի գրադարանում տեղի ունեցավ հանդիպում քաղաքի գրասեր հասարակության, արվեստագետների հետ, որտեղ Էդ. Միլիտոնյանը ելույթից հետո ներկայացրեց Յավորովի մասին իր գրած բանաստեղծությունը: Պլովդիվի գրողների միության ղեկավարները ՀԳՄ-ին նվիրեցին դիպլոմ՝ Յավորովին հանրահռչակելու, հայ և բուլղար գրականություններին ծառայություն մատուցելու համար: Պլովդիվյան հանդիպումներին ներկա են եղել տարբեր քաղաքների գրական կազմակերպություններ, քննարկվել են համատեղ համագործակցության ծրագրեր: Փոխհամագործակցության ծրագիր է առաջարկել նաև Սլավոնական գրականության և արվեստի ակադեմիան: Էդ. Միլիտոնյանի հավաստմամբ՝ հետագայում գործունեության մեջ անպայմանորեն կներառվեն գրական հանդիպումներ, թարգմանական ծրագրեր, գրական հանդեսների, թերթերի փոխհամարների հրատարակում: Էդ. Միլիտոնյանը հանդիպեց նաև Պլովդիվի հայ համայնքի ներկայացուցիչների, քաղաքի մտավորականության հետ, քննարկվեցին հետագա փոխհամագործակցության ծրագրեր:

Յավորովի անձը մեր երկու ժողովուրդների կամուրջն է ու հիմքը, որը ապագայում էլ կապելու է մեր ժողովուրդներին: Մենք պետք է սկեռվենք այն գաղափարի վրա, որ գրական մարդը մեծ դեր է խաղում աշխարհում խաղաղություն և բարեկամություն հաստատելու մեջ», – ասաց ՀԳՄ նախագահը:

Պլովդիվում հայկական պատվիրակությունն այցելեց Սուրբ Գևորգ հայկական եկեղեցի ու թանգարան:

Այս հանդիպումներին անձնական նախաձեռնությամբ մասնակցեց նաև «Ծիծեռնակ» հրատարակչության տնօրեն, մանկագիր Անուշ Վարդանյանը: Պլովդիվ քաղաքի գրադարանին, Յավորովի տուն-թանգարանին, հայկական համայնքին և գրադարանին ՀԳՄ պատվիրակությունը նվիրեց բուլղարերենից թարգմանված, «Ծիծեռնակ» հրատարակչության հրատարակած չորս գրքերը և ՀԳՄ հրատարակած գրքերից: Առանձնահատուկ նշվեց թարգմանչուհի Մարգարիտ Թերզյանի մեծ ավանդը բուլղարերենից հայերեն կատարած թարգմանությունների գործում:

Միջոցառումների ընթացքում տեղի ունեցավ նաև մեծ բանաստեղծին նվիրված գիտաժողով:

«ԳԹ», թիվ 1, 02.02.2017 թ.

ԽՂՃԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Ես շատ եմ ուզում ճշգրիտ ասել, թե մարդու և մարդկության պատմության ոչ երկար ընթացքում երբ է սկզբնավորվել մարդկային խղճի պատմությունը, ինձ թվում է առաջին արտահայտությունը սրտահույզ երգն է, այսինքն՝ առաջին խղճի հրեշտակը երգիչն է, բանաստեղծը: Դրա լավագույն ապացույցը մեծ բանաստեղծների փաղանգն է և դրանց շարքում՝ երևելի շարքում բուլղար ժողովրդի հանրահայտ գավակ Պեյո Յավորովը՝ մաքառողը, խիզախողը և վեհապանծը: Նա առաջինն էր, որ 1898 թվին դառնորեն արձագանքեց Օսմանյան Թուրքիայից հալածված, իրենց հայրենի հողից զրկված և Բուլղարիայի Ստրալջու քաղաք հասած հայորդիների տառապանքին, գրելով «Հայերը» հանճարեղ բանաստեղծությունը: Հիշենք, որ Յավորովը նույն ցավով արծարծել է հրեաների ճակատագրի կնճիռները: Նա կարծես կանխագուշակել է այս երկու ազգերի ապագա ցեղասպանությունը: Ահա թե ինչ հզոր տաղանդով էր օժտված երգիչը, մարտիկը, մարդասերը: Ափսոս, աշխարհի ոչ բոլոր բանաստեղծներն են այդքան աչալուրջ, այլապես կկանխվեն բազում չարիքներ: Սա էլ իմ՝ բանաստեղծի ռոմանտիկ ու միամիտ հավատը: Լինել Յավորովի նման, սա է իմ հավատամքը:

«Հայերը» բանաստեղծությունը ոտքի հանեց երախտապարտ 200 հայ ռազմիկների, որոնք Անդրանիկ և Գարեգին Նժդեհ զորավարների հրամանատա-րությամբ կռվեցին Բուլղարիայի ազատագրության համար: Եվ հենց Գարեգին Նժդեհը 1936 թվին գուշակեց, որ Անկախ Հայաստանում կբարձրանա Պեյո Յավորովի արձանը: Ասեմ՝ նրա անվան դպրոցի դեմ: Մանուկների հոգում փողփողում է Բուլղարիա, Պեյո անունները: Այսպես է պոետն ապրեցնում իր երկրի ու մարդկության փառքը:

ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆԻ ՉՈՐՍ ՏԱՄԱՄՅԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Մեր կյանքում միշտ աշխատելով երիտասարդական ամսագրերում, շփվել ենք երիտասարդների հետ, հետո երբ միջին սերունդ էինք՝ միջին սերունդից նայում էինք ջահելներին, հետո երբ ավագ էինք ավելի էինք նայում ջահելներին, և միշտ սպասել ենք նոր, հետաքրքիր անունների, և մշտապես ցանկություն ենք ունեցել տեսնելու կիրթ, խորը գրականագետների: Ցավոք սրտի մեր կյանքում քաղաքական վայրիվերումները բերեցին նրան, որ գրականագետների սերունդը, որ պիտի իննսունականներին կայանային, նրանց մի մասը անցավ քաղաքական ասպարեզ, մի մասը դիվանագիտական ասպարեզ, մի մասը մեկ-երկու գիրք գրեց և բավարարվեց դրանով: Լավ անուններ եղան, և հետո եկավ հաջորդ սերունդը, ու մտածեցինք՝ կկայանան, կբարձրանան, և եղան հեղաշրջումներ, փոփոխություններ, կյանքի փոթորկուն ալիքների մեջ գիտությունը ետ է մղվում, առաջ են գալիս կենցաղային, սոցիալական հարցերը: Եվ հիմա, երբ նայում ենք, մենք ուզում ենք պահպանել այն հատուկենտ անուններին՝ ժամանակակից գրականությունն ուսումնասիրող գրականագետներին, որոնք իսկապես շնորքով և տուրքով տրված են այդպիսին լինելու: Նրանցից մեկը Արմեն Ավանեսյանն է, որի հետ աշխատել եմ գրահրատարակչական տնօրինությունում, և տեսել եմ նրա աշխատասիրությունը, տեսել եմ նրա արտաքո ոչ գիտական ժամանակը օգտագործելու հմտությունը, սակայն ուրախացել եմ, որ տեսել եմ՝ ինքը կարողացել է և՛ դրամատուրգիայի, և՛ ժամանակակից գրականության արձակի, պոեզիայի մասին խորագնա հոդվածներ տպագրել և հետո առանձին գրքեր հրատարակել: Նաև սկզբնավորեց «Արմավ» հրատարակչությունը՝ մեր գրականության ժամանակակից, անցյալ, ինչպես նաև արվեստագիտական, այլ տիպի աշխատություններ հրատարակել և տարածել: Այսօր, մեր իրականության մեջ դա երևելի հրատարակչություններից է: Արմենից շատ

սպասելիքներ ունենք: Դժվար է: Գիտության ասպարեզը ամեն մարդու բանը չէ, բայց ում տրված է՝ նա պետք է ինքն իրենից բարձր թոշի, ինքը իրեն պետք է ստիպի՝ իր ծանր, կարճ ժամանակը այնպես խտությամբ վերածի գրականագիտության: Իսկ սպասելիքները շարունակական են: Ես Արմենից շատ եմ սպասում, որովհետև ասված է՝ ում որ շատ է տրված, նրանից շատ են սպասում: Ես Արմենից սպասում եմ հենց այդ բազմաճյուղ, խորը գրականագիտությունը, որի հիմքերը ինքն արդեն դրել է:

Քանի որ քառասուն տարեկան է դարձել, հիշեմ Թումանյանի գրած քառասունամյակի խոսքը՝ վերելք, վայրէջք ընկալումներով: Քառասունն իր մեջ կրում է ն՝ վերելք, ն՝ վայրէջք, բայց վերելքն ու վայրէջքն այստեղ հավասարազոր են. մեկըմիայն բարձունք, կամ մեկը միայն անդունդ չի տանում, երկուսը միասնական են, և մեր կյանքի յուրաքանչյուր տարին է այդպիսին: Ամեն ինչ հանրագումար է: Ես ուզում եմ, որ այդ հայացքով Արմենը նայի մեր գրականությանը:

ՌԻԺԳԻՆ ՀԱՐՎԱԾԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՄԲ

Հիշում եմ Սարի թաղի երկհարկանի հայրական մեր տունը, որ հիմա ստորգետնյա ջրերի պատճառած ճաքերից անբնակիչ կանգնել է շվար ու, երևի հետագա տողերիս շշուկները լսելով, մի քիչ էլ դիմանա:

Ախ, նրա դարպասով ներս էին մտնում բազմաթիվ ջահել ու ահել գրողներ, գրքեր ընթերցող հարևաններ, որոնք գիրք էին խնդրում շտապ վերադարձնելու պայմանով, բայց չեմ հիշում, որ մեկը կամովի ետ բերեր:

Գրողների խմած խոսքերում մշտական թևածում էին Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց:

Մայրս երբեմն ականջիս տակ շնչում էր Նարեկ, Սայաթ-Նովա, Րաֆֆի, Վերֆել, Չարենցի թափ... Քույրս հաճախ երեկոներին մեր մեծ սենյակում նստած կարդում էր Տերյանի հատորը, կազմի վրա գունավոր տերևներ:

Ավագ եղբայրս՝ բանաստեղծ Ռազմիկ Տոնյանը, կիրակի օրերին երբեմն պառկած՝ մատիտով գրում էր բանաստեղծություն, քթի տակ եղել է մրմնջացել է տողեր, որոնք ես հետո կարդում էի:

Մեր տան գրադարանը մշտապես լրացվում էր: Գրքերի գունավոր կազմերը, իրար կողք զինվորների պես շարված հատորները զգաստ կանչում էին իրենց գիրկը, ավելի ճիշտ՝ իրենց գիրքը:

Հատկապես ինձ ձգում էին Դանթեի եռահատոր «Աստվածային կատակերգություն» ստեղծագործության Գյուստավ Դորեի նկարազարդումները և այն խորհուրդը, որ չէի ընկալում, բայց վեհանում էի եռատողեր կարդալով՝ Մեր այս կյանքի կես ճամփին...

Ամբողջական չըմբռնելով իմաստները, լցվում էի վստահությամբ, ապագայում կան հասկանալի դառնալու կոթողներ: Եվ պատանուս աստղազարդ գիշերների հանգույն ձգում էին գրականության կուռքի պես նայող մեծերը:

Առաջին անգամ պիտի ասեմ՝ վեց-յոթ տարեկան հասակում արթմնի երագում էի բանաստեղծ դառնալ ու մի անգամ իրական երագում մի երկայնաշոր, ճերմակ, երկար մազերով ծերունի ձեռքը դրեց գլխիս: Լուռ էր, ես էլ՝ սսկված: Ինձ թվաց Նարեկացին է:

Ոչ մեկի, անգամ մորս չեմ պատմել, նա շատ կուրախանար և երևի կասեր՝ ախր ընչի՞ ոչ մի բառ չի ասել: Նարեկացու տաղերով ցնծացել եմ, գրաբարի ծնծղաձայնը ուղեկցել է:

Մի անգամ, ինչքան հիշում եմ 13-14 տարեկանում ձեռքս առա սևաթունդ կապտագույն հսկա հատորը Եղիշե Չարենց հեղինակի, տպագրված 1955 թվին:

Հետո իմացա դա նրա ողբերգական մահից հետո տպագրված առաջին ժողովածուն է:

Կարող եմ ասել մեկ-երկու օրում կարդացի բանաստեղծական մասը և, պարզ հիշում եմ, դոշիս մեջ հայտնաբերված հոգի զգալով վազեցի մեր ֆուտբոլի դաշտը և ինձնից ու գնդակից արագ ու թափով սրընթանալով մտածում էի հզոր բանաստեղծի ու նրա հասցրած ուժգին հարվածի մասին, որը ոչ թե գցեց ռինգի հատակին, այլ վեհորեն, ձուլվելով ներսիս, հայտնաբերեց, ինձ ցույց տվեց իմ հոգու տեղը, բանաստեղծության, գրողի ու ընթերցողի, մեր հայրենիքի ու սիրուն աղջիկների տեղը...

Եվ իմ մեծական «Երեք խնձոր» 1977 թ. առաջին գրքից մինչև վերջին «Ժամանակի գիր» 2021 թ. գիրքը և բոլոր թվերին հրատարակած բանաստեղծական ժողովածուներում զետեղել եմ Եղիշե Չարենցին նվիրված բանաստեղծություններ, շարքեր կամ նրան փոխկանչով ձայնակցող գրվածքներ:

Դրանք իմ տուրքն են աշխարհի մեծագույն բանաստեղծներից մեկին, որն այնքան թափ հաղորդեց նվաստիս, որ չգիտեմ, կարողացել եմ մի փոքր հոսանք վերադարձնել՝ նրա հանճարի առջև խոնարհ ու շնորհակալ: